

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ - 2003

ՍՋՄՎԵԼ ՍՈՒՐԱԴՅԱՆ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔ**

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 347  
ԳՄԴ 67.99(2)2  
Մ 992

երաշխավորված է տպագրության ԵՊՀ իրավաբանական  
ֆակուլտետի գիտխորհրդի կողմից

Խմբագիր՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Եղյան

Մուրադյան Ս.:  
Մ 992 Ֆինանսական իրավունք:– Եր.: Ասողիկ, 2003, 285 էջ:

Ուսումնական ձեռնարկում համակարգված և ամբողջական  
տեսքով շարադրված է ՀՀ ֆինանսական իրավունքի դասընթացը:

Ֆինանսական հարաբերությունների իրավական կարգավորման  
հարցերը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քա-  
ղաքական կյանքի առավել կարևոր և արդիական խնդիրներից են: Դա  
պայմանավորված է նոր տնտեսական համակարգի ձևավորմամբ, շու-  
կայական հարաբերությունների հաստատման, սեփականաշնորհման և  
ապապետականացման գործընթացի խորացմամբ: Այս ամենը առաջնա-  
յին է դարձրել ֆինանսական օրենսդրության կատարելագործումը, ֆի-  
նանսական հարաբերությունների նոր բովանդակության ձևավորումը:  
Սեր նորանկախ Հանրապետության համար առաջնակարգ նշանակու-  
թյուն ունի ֆինանսաիրավական նորմերի ուսումնասիրությունը, դրանց  
գործունեության մեխանիզմի արդյունավետության բարձրացումը: Ներ-  
կայացվող ուսումնական ձեռնարկում խնդիր չի դրված քննադատական  
վերլուծության ենթարկելու գործող ֆինանսաիրավական նորմերը: Սեր  
խնդիրն է ցույց տալ ֆինանսական իրավունքի բովանդակությունը նոր  
ֆինանսական օրենսդրության հենքի վրա:

Մ  $\frac{1203020300}{0136(01) - 2003}$  2003

ԳՄԴ 67.99(2) 2

ISBN 99941-30-61-9

© Մուրադյան Ս., 2003

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ .....

§ 1. Ֆինանսների հասկացությունը և ՀՀ ֆինանսական համակարգը .....	8
§ 2. Պետության ֆինանսական գործունեությունը և նրա իրականացման մեթոդները .....	10
§ 3. Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների իրավական վիճակը.....	12

ԳԼՈՒԽ 2.  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՀԱՍՎՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ .

§1 Ֆինանսական իրավունքի կարգավորման առարկան	16
§2 Ֆինանսական իրավունքի մեթոդը	17
§3 Ֆինանսական իրավունքի աղբյուրները	18
§4 Ֆինանսական իրավունքի սահմանազատումը հարակից իրավունքի ճյուղերից	19

ԳԼՈՒԽ 3.  
ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 1. Ֆինանսիրավական նորմեր, դրանց ընդհանուր բնութա- գիրը	22
§ 2. Ֆինանսաիրավական նորմերի տեսակները	24
§ 3. Ֆինանսական իրավահարաբերության բովանդակությու- նը, առանձնահատկությունները	25
§ 4. Ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավունքների իրավական պաշտպանությունը	28

ԳԼՈՒԽ 4.  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՍԿՈՂՈՒԹՅԱՆ .....

ԴԵՐՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	
§ 1. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը և նշանակությունը	33
§ 2. Ֆինանսական վերահսկողության տեսակները: Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները	49
§ 3. Հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումը	62

§ 4 Աուդիտորական գործունեության իրավական կարգավորումը 66

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 5.  
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....

§ 1. Պետական և տեղական բյուջեի դերը և նշանակությունը 70  
§2. Բյուջետային իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը 71

.....

ԳԼՈՒԽ 6.  
ՀՀ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....

§ 1. Պետական բյուջեի եկամուտները 77  
§ 2. Պետական բյուջեի ծախսերը 81  
§3 Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե 84

ԳԼՈՒԽ 7.  
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ 88

ԳԼՈՒԽ 8.  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ.....

§ 1. Համայնքի բյուջեի հասկացությունը և կառուցվածքը 98  
§2. Համայնքային բյուջեի գործընթացի փուլերը 105

ԳԼՈՒԽ 9.  
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 114

ԳԼՈՒԽ 10.  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ .....

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

§1. Հարկի հասկացությունը 117  
§ 2. Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար 127  
§ 3. Հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը 132

ԳԼՈՒԽ 11.  
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ 134

ԳԼՈՒԽ 12.  
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ 140

ԳԼՈՒԽ 13.  
ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿ 149

ԳԼՈՒԽ 14.  
ԵԿԱՄՏԱՀԱՐԿ 154

ԳԼՈՒԽ 15.  
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ 159

ԳԼՈՒԽ 16.  
ՀՈՂԻ ՀԱՐԿ 165

ԳԼՈՒԽ 17.  
ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՐԿԵՐ

§ 1. Հաստատագրված վճարներ 170  
§ 2. Պարզեցված հարկ 174

ԳԼՈՒԽ 18.  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ .....

§1 Ոչ հարկային եկամուտների հասկացությունը և համակարգը 178

§2 Մաքսային վճարներ..... 180

§3 Պետական տուրք 184

§4 Տեղական տուրքեր և վճարներ 193

§5 Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ 196

§6 Բնապահպանական և բնօգտագործման վճարներ 201

§6 Գանապարհային վճարներ..... 202

ԳԼՈՒԽ 19.  
ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ .....

§ 1.Նախահաշվային բյուջետային ֆինանսավորման հասկացությունը ..... 204

§ 2. ՀՀ պետական բյուջեի ծախսերի հաշվառման և ֆինանսավորման կարգը..... 207

§ 3. Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների իրավական կարգավորումը..... 211

ԳԼՈՒԽ 20.  
ԱՊԱՅՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

§ 1. Ապահովագրության տեղը ՀՀ ֆինանսական համակարգում.....	214
§ 2. Ապահովագրական գործունեությունը իրականացնող մարմինների համակարգը.....	219

ԳԼՈՒԽ 21.  
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

§ 1. Արժեթղթերի հասկացությունը, դերը և նշանակությունը: Արժեթղթերի տեսակները.....	223
§ 2. Արժեթղթերի շուկայի հասկացությունը և նրա մասնակիցների կարգավիճակը.....	225

ԳԼՈՒԽ 22.  
ԲԱՆԿԱՎԱՐԿՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

§1. ՀՀ Բանկային համակարգի ընդհանուր բնութագիրը....	233
§2 ՀՀ վարկային մարմինների իրավական վիճակը.....	242
§2.ՀՀ Կենտրոնական բանկի տեղը ՀՀ բանկային համակարգում.....	244

ԳԼՈՒԽ 23.  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

§ 1. Օտարերկրյա ներդրումների հասկացությունը, տեսակները, դրանց իրականացման ձևերը.....	254
§ 2. Օտարերկրյա ներդրումների իրավական երաշխիքները և պաշտպանությունը.....	258

ԳԼՈՒԽ 24.  
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

.....§1 Դրամաշրջանառության հասկացությունը և էությունը	262
§2 Դրամարկղային գործառնությունների իրավական կարգավորումը.....	268

ԳԼՈՒԽ 25.  
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....

§ 1. Արժույթի և արժույթային արժեքների հասկացությունը.	273
---	-----

§ 2. Արժույթային կարգավորման հասկացությունը և բովանդակությունը.....	275
§ 3. Արժույթային վերահսկողությունը և պատասխանատվությունը արժույթային օրենսդրության խախտման համար.....	282
§ 4. Պատասխանատվությունը արժույթային օրենսդրության խախտման համար.....	283

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ 1

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

#### § 1. Ֆինանսների հասկացությունը և ՀՀ ֆինանսական համակարգը

Ֆինանսական իրավունքին վերաբերող հարցերը քննարկելիս, նախ և առաջ, անհրաժեշտ է պարզաբանել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ֆինանսները, ֆինանսական համակարգը, ֆինանսական գործունեությունը:

Ֆինանսները տնտեսական կատեգորիա են, ինչպիսիք են գինը, շահույթը, վարկը և այլն: Այն արտահայտում է իրական հասարակական հարաբերություններ, որոնց անվանում են ֆինանսական: Այդ տեսակետից «ֆինանսները» և «ֆինանսական հարաբերությունները» նույնական են:

Ֆինանսները, որպես հասարակական կյանքի երևույթ երևան են եկել պետության և փողի առաջացման պահից: Փողը կատարելով շրջանառության միջոցի գործառույթ, ֆինանսների որպես փողային հարաբերությունների ինքնուրույն ոլորտի առաջացման կարևորագույն նախապայմանն է:

Ֆինանսները հասարակությունում առկա ոչ բոլոր փողային հարաբերություններն են, այլ դրանց մի մասը, նրանք, որոնք կապված են պետության խնդիրների և գործառույթների իրականացման և ընդլայնված վերարտադրության պայմանների ապահովման նպատակով դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված հիմնադրամների ձևավորման, բաշխման և օգտագործման հետ<sup>1</sup>: Ֆինանսները ներառում են երկու խումբ հարաբերություններ՝ 1) դրամական հարաբերություններ, որոնք կապված են դրամական միջոցների կենտրոնացված հիմնադրամների ձևավորման և օգտագործման հետ, 2) փողային հարաբերություններ, որոնք միջնորդավորում են կազմակերպությունների դրամական միջոցների ապակենտրոնացված հիմնադրամների ձևավորումը և օգտագործումը: Արևմտյան հեղինակները

ֆինանսները բաժանում են հանրայինի և մասնավորի<sup>1</sup>: Եթե կենտրոնացված (հանրային) ֆինանսներն ընդգրկման տեսանկյունից համարժեք են, ապա ապակենտրոնացվածը (մասնավոր) տարբեր են: Առաջինները ներառում են հասարակության կարիքների բավարարման ուղղված ֆինանսները: Ապակենտրոնացված ֆինանսներն ընդգրկում են կազմակերպությունների ֆինանսական միջոցները, իսկ մասնավորն ավելի լայն ընդգրկում ունի՝ քաղաքացիների, կազմակերպությունների ֆինանսական միջոցները:

Ֆինանսական հարաբերություններն ընդգծվում են փողային հարաբերությունների ողջ զանգվածից իրենց յուրահատուկ հատկանիշներով. առաջին, դրանք միշտ փողային հարաբերություններ են, երկրորդ՝ դրանք բաշխիչ հարաբերություններ են, որովհետև դրանք առաջանում են ոչ թե արտադրության և փոխանակման կամ սպառման փուլերում, այլ դրա բաշխման փուլում, երրորդ՝ դրանք անհամարժեք են, քանի որ բաշխման փուլը միակողմանի է, առանց հանդիպակաց համարժեքության, ինչպես դա լինում է փոխանակման ժամանակ: Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում ֆինանսների դերը դրսևորվում է նրա բաշխիչ և վերահսկիչ գործառույթներում:

Լայն առումով ՀՀ ֆինանսական համակարգը հանրային և մասնավոր ֆինանսների ամբողջությունն է: Իսկ նեղ առումով ՀՀ ֆինանսական համակարգ ասելով հասկացվում են հանրային ֆինանսները, որոնք ծառայում են հասարակական բազմատեսակ կարիքների բավարարմանը և կազմված են մի քանի օղակներից՝

1) բյուջետային հիմնադրամներ (ՀՀ բյուջե և համայնքների բյուջեներ),

2) պետական վարկ,

3) ապահովագրական հիմնադրամներ,

4) կազմակերպությունների ֆինանսներ:

Ֆինանսական համակարգի գործառնությունը միջնորդավորում է կանխիկ դրամի շարժմամբ և անկանխիկ դրամական վճարումներով ու հաշվարկներով:

— ՀՀ ֆինանսական համակարգում կենտրոնական տեղ է գրավում ՀՀ պետական բյուջեն, որի միջոցով ստեղծվում և օգտագործվում է հանրապետության կենտրոնացված դրամական

<sup>1</sup> Финансы. Денежное обращение. Кредит. М., 1997.с. 63. :

<sup>1</sup> Խ՝ Muzellec J. Finances Publiques Paris, 1995:

հիմնադրամը: Քաղաքներում և գյուղերում (բացի Երևանից) տեղական ինքնակառավարման ֆինանսական հիմքը կազմում են համայնքների բյուջեները:

Արտաբյուջետային հիմնադրամները հիմնականում նպատակային են: Դրանց միջոցները կազմվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց պարտադիր վճարումների և կամավոր մուծումների հաշվին, որն ընդգրկում է դարձնում այդ հիմնադրամների ֆինանսական բազան:

Պետական վարկը ապահովում է իրավաբանական անձանց և բնակչության ժամանակավոր ազատ ֆինանսական միջոցների կամավոր կուտակումը և դրանց օգտագործումը տարբեր նպատակների համար: Այս դեպքում պետությունը հանդես է գալիս որպես փոխառու, թողարկում է պետական պարտատոմսեր և դրա հետևանքով առաջանում է պետական ներքին պարտք:

Ապահովագրական հիմնադրամները, որպես ՀՀ ֆինանսական համակարգի օղակ ուղղված են նյութաֆինանսական պահուստների ստեղծմանը, որոնք օգտագործվելու են տարերային աղետների, դժբախտ դեպքերի, այլ անբարենպաստ հետևանքների դեպքում:

Կազմակերպությունների ֆինանսները կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք անմիջականորեն կապված են նյութական արտադրության հետ: Այդ բնագավառում է ստեղծվում ազգային եկամուտը: Սա հանրային ֆինանսական համակարգի ապակենտրոնացված օղակն է, որն արտահայտվում է յուրաքանչյուր առանձին կազմակերպության առանձնացված ֆինանսներով:

## § 2. Պետության ֆինանսական գործունեությունը և նրա իրականացման մեթոդները

Պետության խնդիրների իրականացման գործընթացը կապված է ֆինանսների օգտագործման հետ: Դրանով էլ պայմանավորված է պետության ֆինանսական գործունեության անհրաժեշտությունը: Պետության ֆինանսական գործունեությունը դրսևորվում է նրա տարբեր գործառույթներում, որոնք գործում են երեք ուղղություններում՝ ֆինանսական միջոցների կուտակում (պետական դրամական հիմնադրամների կազմում), բաշխում և օգտագործում: Դրանցից յուրաքանչյուրում էլ պարունակվում է վերահսկողության գործառույթը:

Այսպիսով, պետության ֆինանսական գործունեությունը նրա կողմից դրամական հիմնադրամների ծրագրավորված ստեղծման, բաշխման և օգտագործման գործառույթների իրագործումն է, որը նպատակ ունի կենսագործել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պաշտպանունակության ապահովման խնդիրները:

Ֆինանսական գործունեության ընթացքում պետությունը կիրառում է տարատեսակ մեթոդներ: Դրանք կախված են մի շարք գործոններից՝ զարգացման կոնկրետ փուլում պետության խնդիրներից, պետության եկամուտներից, ֆինանսական միջոցների օգտագործման նպատակներից և այլն:

Պետք է ընդունել, որ պետություն կառավարելու լավագույն եղանակը փողի միջոցով կառավարելն է և առավել արդյունավետ եղանակ մարդկությունը դեռ չի հայտնագործել: Կարգավորելով և ուղղորդելով դրամական հիմնադրամների կազմավորման համար նախատեսված փողային հոսքերը, որոնք հետագայում օգտագործվում են հասարակության, պետության կարիքների համար, պետությունն այդ կերպ խթանում կամ ընդհակառակը կրճատում է գործունեության որոշ ուղղություններ<sup>1</sup>:

Պետության ներգործությունը սոցիալ-տնտեսական գործընթացների վրա իրականացվում է ոչ միայն որոշակի ծրագրերի ուղղակի ֆինանսավորմամբ, այլև անուղղակիորեն՝ պետության կողմից առաջնային ճանաչված որևէ գործունեության խթանման համար հարկային արտոնությունների տրամադրմամբ, հարկային վճարումների հետաձգմամբ և այլն:

Պետության ֆինանսական գործունեության կարևոր գծերից է ֆինանսական ռեսուրսների բաշխումը հանրապետական մարմինների, մարզերի, համայնքների միջև: Եվ վերջապես, պետության ֆինանսական գործունեությունն ունի իրավական, կազմակերպական բնույթ:

Դրամական միջոցները կենտրոնացված պետական հիմնադրամներում կուտակելու նպատակով, գործող օրենսդրությանը համապատասխան, օգտագործվում են պարտադիր և կամավոր վճարումների մեթոդները: Այսպես օրինակ, պետական բյուջե մուտքագրվող հիմնական պարտադիր վճարումներն են հարկերը և տուրքերը: Պարտադիր վճարումների մեթոդը կիրառվում է նաև պարտադիր ապահովագրության ժամանակ և

<sup>1</sup> Финансовое право, М., Юристы, 1996 с.11.

այլն: Դրան զուգընթաց օգտագործվում է նաև վիճակախաղերի, փոխառությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանցից նվիրատվությունների և այլ եղանակներով ֆինանսական միջոցների կամավոր ներգրավումը պետական դրամական հիմնադրամներում: Պետական դրամական միջոցների բաշխման ժամանակ օգտագործվում են տարբեր մեթոդներ: Դրանք են՝ ֆինանսավորումը (դրամական միջոցների անվերադարձ և անհատույց բացթողում) և վարկավորումը (դրամի տրամադրում վերադարձնելիության և հատուցանելիության սկզբունքով): Վերադարձնելիության էությունն այն է, որ տրամադրված միջոցները պետք է վերադարձվեն սահմանված ժամկետում: Իսկ հատուցանելիությունը նշանակում է, որ տրամադրված գումարը վերադարձնելուց զատ պետք է վճարել որոշակի գումարներ՝ հաստատուն չափով կամ տոկոսների տեսքով:

Պետական դրամական միջոցների օգտագործման ժամանակ կիրառվում են ծախսերի կատարման նախահաշվային, հաշվապահական հաշվառման, հաշվեկշռային մեթոդները:

### § 3. Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների իրավական վիճակը

Պետության խնդիրների կատարումը նրա յուրաքանչյուր մարմնից պահանջում է որոշակի աշխատանք՝ կապված ֆինանսների օգտագործման հետ:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն մարմինները, որոնք իրենց հիմնական գործունեությունը զուգահեռ իրականացնում են նաև ֆինանսական գործունեություն (Ազգային ժողով, Հանրապետության Նախագահ, կառավարություն, նախարարություններ, մարզպետներ: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն պետական մարմինները, որոնց համար ֆինանսական գործունեությունը հանդիպանում է հիմնական: Այդ մարմինները ստեղծվում են հատկապես ֆինանսական գործունեություն իրականացնելու համար և կազմում են պետության ֆինանսավարկային մարմինների համակարգը՝ ֆինանսների նախարարություն, պետական եկամուտների նախարարություն, մաքսային պետական կոմիտե, ՀՀ կենտրոնական բանկ և այլն:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Կառավարությունը, որպես

միակ օրենսդիր մարմին, ընդունում է օրենքներ, որոնց նորմերով կարգավորում են ֆինանսական գործունեության բնագավառի կարևորագույն հարաբերությունները (հարկային, վարկային, դրամաշրջանառության, արժույթային և այլն):

Ազգային ժողովի կարևորագույն գործառնություններից է պետական բյուջեի նախագծի քննարկումը և պետական բյուջեի ընդունումը: Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է օրենքով: Բյուջեն ինքը, որպես այդպիսին, հաստատվում է խորհրդարանի կողմից ընդունված օրենքով:

ՀՀ Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք ենթակա են կատարման հանրապետության ամբողջ տարածքում: Նա նշանակում և ազատում է վարչապետին և վերջինիս առաջարկությամբ էլ նշանակում ու ազատում է կառավարության անդամներին (այդ թվում նաև ֆինանսների և էկոնոմիկայի և պետական եկամուտների նախարարներին):

Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ այն ընդհանուր իրավասության մարմին է: Նա Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողովին: Կառավարությունը նաև ապահովում է ֆինանսա-տնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը:

Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ կառավարության հանձնարարությամբ կազմում է ՀՀ պետական բյուջեի նախագիծը և այն ներկայացնում է կառավարության հաստատմանը: Այնուհետև նա կառավարության անունից պետական բյուջեի նախագիծը ներկայացնում է Ազգային ժողովի քննարկմանը և հաստատմանը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն ապահովում է բյուջեի ծախսային մասի կատարումը: Պետական եկամուտների նախարարությունը, մաքսային պետական կոմիտեն իրենց իրավասության շրջանակներում ապահովում են եկամուտների մուտքագրումը պետական բյուջե:

Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կազմում գործում է գանձապետարանի համակարգը: Գանձապետարանը ներառում է Կենտրոնական գանձապետարանը և տեղական գանձապետական բաժանմունքները:



Կենտրոնական գանձապետարանը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական ապարատի խնդիրների իրականացման կազմակերպումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների ամբողջությունն է, որը ղեկավարվում է նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետի կողմից:

Գանձապետական բաժանմունքները գանձապետարանի առանձին տարածքային ստորաբաժանումներն են, որոնք սահմանված կարգով ապահովում են գանձապետարանի գործառույթների կատարումը ՀՀ վարչատարածքային միավորումներում: Գանձապետական բաժանմունքը ղեկավարում է բաժանմունքի պետը:

Գանձապետարանի խնդիրներն են՝

1. ՀՀ և համայնքների դրամական միջոցների կառավարման և ծախսերի ֆինանսավորման գործի կազմակերպումը.

2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և համայնքների բյուջեների կատարման կազմակերպումը.

3. ՀՀ և համայնքների բյուջեների կատարման հետ կապված հարաբերությունների նորմատիվ կարգավորման մեթոդական ապահովման կազմակերպումը.

4. ՀՀ և համայնքների տնօրինության ներքո գտնվող դրամական միջոցների նուտքագրման և դրանց հաշվին ծախսերի գանձապետական միասնական հաշվով կատարման կազմակերպումը.

5. պետական հիմնարկների ֆինանսական գործունեության մասին հաշվետվություններ կազմելու, ներկայացնելու և ամփոփելու հետ կապված հարաբերությունների նորմատիվ կարգավորման և բյուջետային հատվածում հաշվապահական հաշվառման նորմերի սահմանման ապահովումը.

6. պետական և համայնքների բյուջեների կատարման պետական հիմնարկների կողմից կատարվող վճարումների նկատմամբ նախնական հսկողության իրականացումը.

7. ՀՀ և համայնքների ֆինանսական հոսքերի սպասարկման կազմակերպումը.

8. պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերով (հաշիվներով) գործառնությունների հաշվառումը.

9. ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների, արտաբյուջետային միջոցներով գործառնությունների կատարման մասին ֆինանսական հաշվետվությունների ստացումը, դրան-

ցում արտացոլված տեղեկությունների արժանահավատության գնահատումը, ամփոփումը և ներկայացումը.

10. ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը.

11. ՀՀ ներքին պետական պարտքի ընթացիկ կառավարումը.

12. օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ տրամադրված ապրանքային վարկերի և դրամաշնորհների դրամայնացման հաշվառումը և դրա հետ կապված գործառույթների համակարգումն ու հսկումը.

13. ՀՀ նկատմամբ առաջացած ՀՀ կառավարության սահմանած պարտավորությունների սպասարկումը.

14. և այլ գործառույթների իրականացումը:

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ բանկային համակարգի կենտրոնն է: Այն որպես պետաիշխանական լիազորություններով օժտված մարմին իր իրավասության շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական ակտեր, որոնք պարտադիր են կատարման համար առևտրային բանկերի կողմից: ՀՀ տարածքում բանկային գործունեություն են իրականացնում միայն Կենտրոնական բանկի լիցենզիայի հիման վրա:

**ԳԼՈՒԽ 2**  
**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**  
**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**§1 Ֆինանսական իրավունքի կարգավորման առարկան**

Ֆինանսական իրավունքը ՀՀ իրավունքի ճյուղերից է, որը այլ ճյուղերի նման ունի կարգավորման առարկա, մեթոդ և աղբյուրներ: ՀՀ ֆինանսական իրավունքի կարգավորման առարկան հասարակական հարաբերությունների այն շրջանակն է, որը կարգավորվում է նրա նորմերով: Դրանք հարաբերություններ են, որոնք առաջանում են պետության ֆինանսական գործունեության ընթացքում: Ֆինանսական իրավունքի առարկա հանդիսացող այդ հարաբերությունները բաժանվում են ըստ ֆինանսական գործառույթների՝ հարաբերությունների, որոնք առաջանում են՝ 1. դրամական միջոցների կուտակման, 2. պետության ֆինանսական ռեսուրսների բաշխման, 3. այդ ռեսուրսների օգտագործման, 4. պետության ֆինանսական ռեսուրսների շարժի վերահսկման, 5. դրամանիշների էմիսիայի բնագավառում: Ֆինանսական իրավունքի առարկա հանդիսացող հարաբերությունները բաժանվում են նաև ելնելով այն սուբյեկտներից, որոնք միջև դրանք առաջանում են՝ առաջին, հարաբերություններ, որոնք առաջանում են մի կողմից ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների, մյուս կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև: Օրինակ, հարկային մարմինների և հարկատուների միջև: Երկրորդ, ֆինանսական գործունեություն իրականացնող մարմինների միջև: Օրինակ, ֆինանսների նախարարության և այլ նախարարությունների միջև պետական բյուջեի ծախսերի մասի կատարման կապակցությամբ:

Պետության ֆինանսական գործունեության ընթացքում առաջացած հարաբերությունները կարելի է բաժանել նաև տնտեսական չափանիշից ելնելով: Այս տեսակետից նրանց կարելի է բաժանել ֆինանսական և ոչ ֆինանսական: Ֆինանսական են հանդիսանում այն հարաբերությունները, որոնք միջնորդավորում են բաշխիչ բնույթ և այլ հատկանիշներ ունեցող դրամա-

կան միջոցների շարժը: Դրանք բնորոշ են ֆինանսներին: Դրանցից են՝ հարկեր և տուրքեր գանձելու, բյուջետային ֆինանսավորման հարաբերությունները և այլն: Պետության ֆինանսական գործունեության բովանդակությունը կազմող այլ հարաբերություններ տնտեսական առումով չեն հանդիսանում ֆինանսական, քանի որ դրանց շրջանակներում չի իրականացվում դրամական միջոցների շարժ, որը ֆինանսների գլխավոր հատկանիշն է: Սակայն այդ հարաբերությունները կոչված են ստեղծելու, կարգավորելու, զարգացնելու ֆինանսական հարաբերություններ: Օրինակ, առանց հարկերի և տուրքերի սահմանման, բյուջեի հաստատման, ֆինանսական վերահսկողության և այլն, որոնք իրականացվում են ոչ ֆինանսական հարաբերությունների շրջանակներում, անհնար են տնտեսական տեսանկյունից ֆինանսական հարաբերությունները:

Ֆինանսական հարաբերությունները բաժանվում են նաև ելնելով ֆինանսաիրավական կարգավորման չափանիշներից ըստ ֆինանսաիրավական ինստիտուտների:

**§2 Ֆինանսական իրավունքի մեթոդը**

Ֆինանսաիրավական կարգավորման հիմնական մեթոդը իշխանական կարգադրագրերի կամ վարչահրամայական մեթոդն է: Դրա էությունը կայանում է նրանում, որ ցանկացած հարցի լուծումն իրագործվում է մի կողմի կամքով: Նրանք կայացնում են որոշումներ, որոնք պարտադիր են իրավահարաբերության մյուս կողմի համար: Ի դեպ իրավահարաբերության մյուս կողմն օժտված չէ իշխանական լիազորություններով: Իշխանական բնույթը, որպես ֆինանսաիրավական կարգավորման մեթոդի էությունն ունի իր դրսևորումները, որոնք բնորոշ են այդ մեթոդին:

Առաջին, ֆինանսաիրավական կարգավորման իշխանական բնույթը բնական է հանգեցնում է նման կարգավորման մեջ դրական պարտադրանքների գերակշռմանը: Դա առավել ակնառու է ֆինանսական իրավահարաբերության կառուցվածքում:

Երկրորդ, իշխանական կարգադրագրերի մեթոդը կարելի է բնորոշել որպես հրամայական (իմպերատիվ): Դա նշանակում է, որ ֆինանսական իրավունքի սուբյեկտները ճնշող մեծամասնության դեպքերում չեն կարող իրենց հայեցողությամբ ձեռք բերել ֆինանսական իրավունքներ և պարտականություններ, հայտնի սահմաններում որոշել դրանց բուխումն ու փոխանցումը սահ-

մանները, իրականացնել և օգտագործել դրանք; Նրանք կատարում են իրենց պարտականությունները, օրենքում, ենթաօրենսդրական ակտում սահմանված դեպքերում: Այդ պարագայում նրանց իրավունքներն ածանցվում են իրենց պարտականություններից: Օրինակ, այդպիսին են սուբյեկտների իրավունքները և պարտականությունները կոնկրետ հարկեր վճարելիս: Դա վերաբերում է նաև իշխանական կարգադրագրեր ընդունող մարմիններին: Պետք է նկատի ունենալ, որ պետական մարմինները, որոնք լիազորված են տալ իշխանական կարգադրություններ, իրենք էլ պարտավոր են ենթարկվել ֆինանսական օրենքների և այլ ակտերի պահանջներին:

Վերջապես, ֆինանսաիրավական կարգավորման մեթոդի բնորոշիչ գիծը ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավաբանական առումով անհավասարությունն է: Դա հիմնականում դրսևորվում է նրանում, որ որոշ սուբյեկտներ օժտված են այլ սուբյեկտների նկատմամբ իրավաբանական-իշխանական լիազորություններով, իսկ վերջիններս ոչ:

### § 3 Ֆինանսական իրավունքի աղբյուրները

Ֆինանսական իրավունքի աղբյուրի տակ հասկացվում է իրավական նորմերի արտաքին դրսևորման եղանակը:

1. Ֆինանսական իրավունքի հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերն են: Այն պետական իշխանության մարմինների իրավաստեղծագործունեության արդյունք է:

1. ՀՀ սահմանադրությունը: Նրա մի շարք նորմեր ունեն հստակ ֆինանսաիրավական ուղղվածություն: Օրինակ, ՀՀ սահմանադրության 46 հոդվածի համաձայն յորաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

2. Ֆինանսական իրավունքի առավել կարևոր աղբյուր են հանդիսանում ՀՀ օրենքները: Դրանք նորմատիվ իրավական կարգավորման են ենթարկում առավել կարևոր ֆինանսական հարաբերությունները: Սահմանադրական նորմերը կոնկրետացվում և մանրամասնվում են ֆինանսական օրենքների նորմերով: Վերջին տաս տարիների ընթացքում ընդունվել են հիշյալ բնագավառ կարգավորող տասնյակ օրենքներ՝ ՀՀ 1997թ. մայիսի 12-ի օրենքը «Հայաստանի Հանրապետության հարկերի մասին», ՀՀ 1997թ. դեկտեմբերի 30-ի օրենքը «Շահութահարկի

մասին», ՀՀ 2000թ. հունիսի 9-ի օրենքը «Ալցիզային հարկի մասին», ՀՀ 1997թ. հունիսի 16-ի օրենքը «Ավելացված արժեքի մասին», ՀՀ 1994թ. ապրիլի 27-ի օրենքը «Հողի հարկի մասին», ՀՀ 1997թ. դեկտեմբերի 30-ի օրենքը «Եկամտահարկի մասին»:

3. Ֆինանսական իրավունքի կարևոր աղբյուր են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը, որոնք օրենքների բացակայության դեպքում արագ, օպերատիվ կերպով լրացնում են իրավական կարգավորման բացը, մինչև համապատասխան օրենքի ընդունումը: Այդպես 1991 թ. դեկտեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով մտցվեց ալցիզային հարկը մինչև 1992 թ. հունիսի 6-ին համապատասխան օրենքի ընդունումը:

4. Ֆինանսական իրավունքի կարևոր աղբյուր են կառավարության որոշումները, որոնք կոնկրետացնում և մանրամասնում են ֆինանսական օրենքների դրույթները: Շատ հաճախ օրենքներում ուղղակիորեն նշվում է, որ տվյալ կարգը սահմանվելու է կառավարության որոշմամբ: Օրինակ, ՀՀ կառավարության 1998 թ. հունվարի 10-ի որոշումը «Հայաստանի Հանրապետությունից օդային ուղևորների ելքի համար պետական տուրքի գանձման կարգը հաստատելու մասին»:

5. ՀՀ 1997թ. մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության հարկերի մասին» օրենքում ուղղակիորեն նշվում է, որ ֆինանսական իրավունքի աղբյուր են հանդիսանում օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման մարմինների ակտերը՝ հարկային օրենսդրությամբ և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում:

### §4 Ֆինանսական իրավունքի սահմանազատումը հարակից իրավունքի ճյուղերից

Ֆինանսական իրավունքը ՀՀ իրավունքի ինքնուրույն ճյուղ է: Իրավունքի համակարգում այն իրավունքի այլ ճյուղից տարանջատվում է իրավական կարգավորման առարկայով և մեթոդով: Այդ չափանիշներից ելնելով առկա է շատ հստակ տարանջատում ֆինանսական իրավունքի և աշխատանքային, ընտանեկան, քրեական, հողային և իրավունքի այլ ճյուղերի միջև:

Ֆինանսական իրավունքը հանրային իրավունքի ճյուղերից է, այսինքն այն կարգավորում է վառ արտահայտված հասարակական շահ ներկայացնող հարաբերություններ: Ֆինանսական իրավունքից բացի հանրային իրավունքին են պատկանում սահմանադրական, վարչական և քրեական իրավունքները:

Սահմանադրական իրավունքը իրավունքի համակարգի առաջատար ճյուղն է: Նրա նորմերը ելակետային նշանակություն ունեն իրավունքի բոլոր ճյուղերի, այդ թվում նաև ֆինանսական իրավունքի համար: Օրինակ, ՀՀ սահմանադրության 46 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այս և մի շարք այլ սահմանադրական հոդվածներ (76, 77, 89) կոնկրետացվում և մանրամասնվում են ֆինանսական իրավունքի նորմերով:

Առավել սերտ է ֆինանսական իրավունքի կապը վարչական իրավունքի հետ: Վարչական իրավունքի առարկան այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են գործադիր իշխանության իրացման ընթացքում: Իսկ ֆինանսական իրավունքի առարկան ինչպես հայտի է պետության ֆինանսական գործունեության ընթացքում առաջացող հասարակական հարաբերություններն են: Վերջիններս ևս շատ հաճախ իրացվում են գործադիր իշխանության գործունեության ընթացքում: Այսպես օրինակ ֆինանսների նախարարությունը նշակում է հանրապետական բյուջեն և կատարում է այն: Այսպիսով որոշակի դժվարություններ են առկա ըստ կարգավորման առարկայի վարչական և ֆինանսական իրավունքները սահմանազատելիս: Սակայն իրավական կարգավորման մեթոդը, այսինքն իրավունքի ճյուղի սահմանազատման լրացուցիչ հատկանիշը վարչական և ֆինանսական իրավունքի մոտ նույնն են: Այն իշխանական կարգադրությունների մեթոդն է: Հետևաբար սահմանազատման հիմքում պետք է դնել կարգավորման առարկան և պետք է հաշվի առնվի դրա դրսևորման յուրահատկությունն իրավունքի այդ ճյուղերում: Ֆինանսական իրավունքի առարկայի յուրահատկությունը կայանում է նրանում, որ ֆինանսիրական կարգավորման ոլորտն են ընգրկվում գործադիր իշխանության մարմինների մասնակցությամբ միայն այն հարաբերությունները, որոնց միջոցով անմիջականորեն իրացվում են պետության ֆինանսական ապահովման գործառույթը: Վարչական իրավունքի առարկան են հանդիսանում ֆինանսավարկային մարմինների մասնակցությամբ որոշ հարաբերություններ, որոնք նաև գործադիր իշխանության մարմիններ են (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, պետական եկամուտների նախարարություն): Սակայն միայն այն հարաբերությունները, ո-

որոնք ներկազմակերպական, ներհամակարգային բնույթի են; Դրանք այն հարաբերություններն են, որոնք կապված են 1. ֆինանսավարկային մարմինների համակարգում կառուցվածքային ստորաբաժանումների կազմավորման, 2. այդ ստորաբաժանումների միջև փոխհարաբերությունների հիմունքների որոշման, 3. ֆինանսավարկային մարմինների աշխատողների միջև պարտականությունների, իրավունքների և պատասխանատվության և այլնի հետ:

Ֆինանսական իրավունքը սերտորեն առնչվում է քաղաքացիական իրավունքի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ պետության ֆինանսական գործունեության ընթացքում առաջացած հարաբերությունների մեծ մասը գույքային են: Իսկ ինչպես հայտնի է քաղաքացիական իրավունքի առարկան գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններն են: Քանի որ ըստ էության նրանց կարգավորման առարկաները հատվում են, այն պետք է տարանջատել կարգավորման մեթոդի օգնությամբ: Եթե ֆինանսական իրավունքի մեթոդը իշխանական կարգադրությունների մեթոդն է, ապա քաղաքացիական իրավական կարգավորումը կառուցված է քաղաքացիական իրավական հարաբերությունների կողմերի հավասարության մեթոդի վրա:

### ԳԼՈՒԽ 3

## ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### § 1. Ֆինանսաիրավական նորմեր, դրանց ընդհանուր ընթացիկը

Ֆինանսաիրավական նորմը պետության կողմից սահմանված և պետական հարկադրանքի միջոցներով ապահովվող վարքագծի կանոն է, որի միջոցով կարգավորվում են այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են պետության դրամական հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման ընթացքում:

Ֆինանսաիրավական նորմերը պարունակում են ինչպես հատկանիշներ, որոնք հատուկ են բոլոր իրավական նորմերին, այնպես էլ հատկանիշներ, որոնք հատուկ են միայն ֆինանսական իրավունքի նորմերին:

Ֆինանսաիրավական նորմի յուրահատուկ հատկանիշները վերջին հաշվով պայմանավորված են ֆինանսաիրավական կարգավորման առարկայի և մեթոդի առանձնահատկություններով:

Նախ և առաջ ֆինանսաիրավական նորմերը տարբերվում են ՀՀ իրավունքի այլ նորմերից իրենց անմիջական նպատակային նշանակությամբ, որը պայմանավորված է ֆինանսաիրավական կարգավորման առարկայով:

Երկրորդ, ֆինանսաիրավական նորմերը հանրային շահերի իրացման միջոց են:

Երրորդ, ֆինանսաիրավական նորմերը տարբերվում են ՀՀ իրավունքի այլ նորմերից իրենց անկայունությամբ, որը պայմանավորված է երկու պատճառով՝

1. պետության ֆինանսական գործունեության ընթացքում առաջացած հարաբերությունները իրենց հիմքում տնտեսական են, ուստի ենթակա են տարբեր տնտեսական տատանումների: Ֆինանսաիրավական կարգավորման առարկա կազմող հարաբերությունների անկայունությունն ըստ էության հանգեցնում է ֆինանսաիրավական կարգավորման անկայունության և ամենից առաջ հին նորմերի վերացման և նոր նորմերի ընդունման:

2. Բյուջետաիրավական նորմերն ի սկզբանե անկայուն են, քանի որ գործում են սոսկ բյուջետային տարվա ընթացքում:

Ֆինանսաիրավական կարգավորման առարկան կազմող հարաբերությունների առանձնահատկությունները պայմանավորում են իրավական նորմերի համակարգում նորմերի շատ հազվադեպ տարատեսակի՝ նորմ-հաշվարկների առկայությունը: Դա պայմանավորված է ֆինանսների փողային բնույթով, հետևաբար հաշվարկի և արձանագրման պահանջով:

Ֆինանսաիրավական նորմերը գերակշիռ մեծամասնությամբ պարտավորեցնող են (կամ հրամայական) են: Դա շատ բնական է, քանի որ իշխանական կարգադրությունների մեթոդը, որպես ֆինանսական իրավունքի հիմնական մեթոդ, ենթադրում է որ ցանկացած խնդիր լուծվում է մի կողմի, այն է պետության կամ քի համաձայն:

Ֆինանսաիրավական նորմերն ունեն նույն կառուցվածքը, ինչ որ այլ իրավական նորմեր՝ հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկիցիա: Հիպոթեզը նշում է այն պայմանները, որոնց առկայության դեպքում սուբյեկտը պետք է ղեկավարվի տվյալ նորմով: Հիպոթեզն առկա է ցանկացած ֆինանսաիրավական նորմում: Օրինակ, «Եկամտահարկի մասին» 1997 մայիսի 12-ի օրենքի 3 հոդվածի համաձայն հարկը զանձվում է հարկատուներից. «հարկային օրենսդրությաբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»:

Դիսպոզիցիան մատնանշում է այն վարքագիծը, որը պետք է տեղի ունենա հիպոթեզում նախատեսված հանգամանքների առկայության դեպքում: Ֆինանսաիրավական նորմի դիսպոզիցիան հաճախ օբյեկտիվ դրսևորում է ստանուն պարտականությունների միջոցով, որոնք պետք է կատարեն համապատասխան սուբյեկտները, իսկ ավելի հազվադեպ՝ իրավունքների միջոցով: Օրինակ, վերը նշված օրենքի 15 հոդվածում սահմանված են հարկ վճարողի իրավունքները և պարտականությունները:

Ֆինանսիրավական նորմի սանկցիան մատնանշում է պետական հարկադրանքի այն միջոցները, որոնք կարող են կիրառվել այն սուբյեկտների նկատմամբ, ովքեր խախտել են տվյալ դիսպոզիցիան: Ֆինանսաիրավական նորմի առանձնահատկությունը գլխավորապես դրսևորվում է նրա սանկցիաների միջոցով: Նախ և առաջ, ֆինանսաիրավական նորմի սանկցիան ունի փողային բնույթ: Նրանով նախատեսվում են տույժ, տուգանք: Երկրորդ, ֆինանսաիրավական սանկցիաներն ունեն հրավավերականգնիչ և պատժիչ բնույթ: Իրավավերականգնիչ սանկցիաներին շարքին են դասվում տույժերը, իսկ պատժիչի

տուգանքները: Հաճախ ֆինանսաիրավական նորմերի խախտման դեպքում կիրառվում են թե մեկը և թե մյուսը: Երրորդ, ֆինանսաիրավական նորմեր սանկցիաների կիրառումից ստացած փողերը մուտքագրվում են պետական բյուջե:

## § 2. Ֆինանսաիրավական նորմերի տեսակները

Ֆինանսաիրավական նորմեր կարելի է դասակարգել ելնելով տարբեր չափանիշներից:

Ֆինանսական իրավունքի գործառույթներից կախված, ֆինանսաիրավական նորմերը բաժանվում են կարագավորողների (ռեգուլյատիվների) և պահպանողների:

Կարգավորող ֆինանսաիրավական նորմերի շարքին են դասվում այն նորմերը, որոնք անմիջականորեն ուղղված են հասարակական հարաբերությունների կարգավորմանը: Ֆինանսաիրավական նորմերի հիմնական զանգվածը կարգավորող են:

Պահպանող ֆինանսաիրավական նորմերի շարքին են դասվում այն նորմերը, որոնք նախատեսում են ֆինանսական իրավախախտումների համար պետական հարկադրանքի կիրառում:

Ֆինանսաիրավական նորմերը կախված նրանց իրավաբանական բովանդակությունից դասակարգվում են պարտավորեցնողների, արգելողների և լիազորողների:

Վարտավորեցնող ֆինանսաիրավական նորմերը սահմանում են սուբյեկտի պարտականությունը կատարել որոշակի դրական գործողություններ: Ֆինանսաիրավական նորմերի մեծ մասը պարտավորեցնող է: Օրինակ, հարկ վճարողը պարտավոր է ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը (ՀՀ Հարկերի մասին օրենքի 15 հոդվածի գ կետ):

Արգելող ֆինանսաիրավական նորմերը սահմանում են սուբյեկտի պարտականությունը ձեռնպահ մնալ ֆինանսաիրավական նորմում նշված որոշակի գործողություններից: Օրինակ, 1996 թ. հունիսի 30-ի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով արգելվում է առանց Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի ՀՀ տարածքում իրականացնել բանկային գործունեություն:

Լիազորող ֆինանսաիրավական նորմերը, այն նորմերն են, որոնք նախատեսում են ֆինանսական իրավունքի սուբյեկտի հնարավորությունը ֆինանսաիրավական նորմերի պահանջների շրջանակներում գործել իր հայեցողությամբ: Օրինակ, 2000 թ.

հունիսի 19-ի «Պարզեցված հարկի մասին» օրենքի 3 հոդվածի համաձայն պարզեցված հարկ վճարող են համարվում իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հայտարարագիր ներկայացրած և որոշակի պայմաններ բավարարող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

Ֆինանսաիրավական նորմերը կախված նրանց բովանդակությունից դասակարգվում են նյութական և ընթացակարգային (պրոցեսուալ) նորմերի:

## § 3. Ֆինանսական իրավահարաբերության բովանդակությունը, առանձնահատկությունները

Ֆինանսական իրավահարաբերությունը իրավահարաբերության տարատեսակ է և նրան բնորոշ են բոլոր այն էական հատկանիշները, որոնք հատուկ են ընդհանրապես իրավահարաբերությանը: Բացի դրանից, ֆինանսական իրավահարաբերությունն ունի յուրահատուկ բնութագրիչներ, որոնք պայմանավորված են ֆինանսաիրավական կարգավորման առարկայի և մեթոդի յուրահատկությամբ:

Առաջին, ֆինանսական իրավահարաբերությունը ծագում և զարգանում է բացառապես պետության ֆինանսական գործունեության ոլորտում:

Երկրորդ, ֆինանսական իրավահարաբերությունն հանրային շահերի իրացման ձևն է: Այդ իսկ պատճառով էլ այն պետք է դիտարկել որպես հանրային-իրավական հարաբերություն:

Երրորդ, ֆինանսական իրավահարաբերությունը իր էության մեջ տնտեսական բնույթի հարաբերություն է: Դրանք ֆինանսական հարաբերությունների, որպես որոշակի տնտեսական հարաբերությունների արտահայտման և ամրագրման իրավաբանական ձևն են:

Այս ամենից կարելի է եզրահանգել, որ ֆինանսական իրավահարաբերությունը հասարակական հարաբերություն է, որը հիմնված է ֆինանսաիրավական նորմի վրա և իր էությամբ տնտեսական հարաբերություն է, որը առաջանում է պետության ֆինանսական գործունեության բնագավառում, ունի գույքախիչ-խանական բնույթ և արտահայտում է հանրային շահեր:

Ֆինանսական իրավահարաբերությունների տարրերն են հանդիսանում են դրանց սուբյեկտը, օբյեկտը և բովանդակությունը:

Ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտները մտնելով կոնկրետ ֆինանսական իրավահարաբերության մեջ կատարում են ֆինանսական պարտավորություններ և իրացնում են ֆինանսական իրավունքներ:

Իրավունքի սուբյեկտը իրավահարաբերության պոտենցիալ սուբյեկտն է, որը անմիջականորեն իրացնում է օրենքով իրեն վերապահված իրավունքները և պարտականությունները: Ֆինանսական իրավունքի սուբյեկտն օժտված է ֆինանսական իրավասուբյեկտությամբ (իրավունակություն և գործունակություն) և դրա շնորհիվ կարող է մասնակցել կոնկրետ ֆինանսական իրավահարաբերությունում: «Ֆինանսական իրավունքի սուբյեկտ» հասկացությունը սերտորեն կապված է «ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտ հասկացության հետ, սակայն դրանք տարբեր հասկացություններ են: Ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտը մասնակցում է կոնկրետ իրավահարաբերությունում և այդ կերպ իրացնում է իրեն պատկանող սուբյեկտիվ պարտականությունները և իրավունքները: Ֆինանսական իրավունքի սուբյեկտը կոնկրետ ֆինանսաիրավական հարաբերության մասնակից չէ, օժտված չէ կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներով և պարտականություններով:

Ֆինանսական իրավունքի սուբյեկտները շատ բազմազան են: Նրանք բաժանվում են երեք խմբի՝ 1. հանրային-տարածքային կազմավորումներ, 2. կոլեկտիվ սուբյեկտներ, 3. անհատական սուբյեկտներ: Հանրային-տարածքային կազմավորումներին են պատկանում Հայաստանի հանրապետությունը, մարզերը և համայնքները: Կոլեկտիվ սուբյեկտների շարքին են դասվում պետական իշխանության մարմինները և կազմակերպությունները: Անհատական սուբյեկտներ են ֆիզիկական, իսկ երբեմն պաշտոնատար անձինք:

Ֆինանսական իրավահարաբերության օբյեկտի տակ պետք է հասկանալ այն, որին ուղղված է ֆինանսական իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը, պատճառաբանված նրանց շահերով, նրանց պատկանող սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների շրջանակներում: Ֆինանսական իրավահարաբերությունների բոլոր օբյեկտները, ելնելով իրավահա-

րաբերության նյութական բովանդակությունից, բաժանվում են երկու խմբի՝ բաժանվողի և չբաժանվողի:

Ֆինանսական իրավահարաբերության բաժանվող օբյեկտներից են՝ հարկերը, տուրքերը, բյուջետային հատկացումները, բյուջետային վարկերը, բյուջետային փոխառությունները, լրավճարները, սուբվենցիաները և այլն:

Ֆինանսական իրավահարաբերության չբաժանվող օբյեկտներից է օրինակ, պետական ֆինանսական վերահսկողությունը:

Ֆինանսական իրավահարաբերության բովանդակությունը կազմում է նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

Ֆինանսական իրավահարաբերության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները շատ բանով կախված է այն բանից թե իրավահարաբերության ո՞ր տեսակին են պատկանում իրավակարգավորիչ թե իրավապահպանիչ:

Ֆինանսական իրավահարաբերություններն իրավունքի հիմնական գործառնություններից ելնելով դասակարգվում են իրավակարգավորիչի և իրավապահպանիչի:

Ֆինանսական իրավահարաբերությունների հիմնական զանգվածը իրավակարգավորիչ է, քանի որ ֆինանսաիրավական կարգավորման գլխավոր խնդիրը պետության մասնակցությամբ իրականացվող ֆինանսական հարաբերությունների անմիջական կանանակարգումը, ամրագրումը և զարգացումն է:

Իրավապահպանիչ ֆինանսական իրավահարաբերություններն ապահովում են իրավունքի իրավապահպանիչ գործառնության իրացումը: Ֆինանսական իրավունքում նրանք օժանդակ դեր են կատարում կարգավորիչ հարաբերությունների նկատմամբ: Դրա համար էլ նրանք ածանցյալ են կարգավորիչ ֆինանսական իրավահարաբերություններից և նրանց տեսակարար կշիռը համեմատաբար փոքր է: Իրավապահպանիչ ֆինանսական իրավահարաբերություններն առաջանում են ֆինանսաիրավական նորմի խախտման կապակցությամբ և ֆինանսաիրավական նորմի սանկցիայի հիման վրա: Դրանք պետք է տարբերել այլ, մասնավորապես վարչական իրավապահպանիչ իրավահարաբերությունից, որն երբեմն առաջանում է ֆինանսաիրավական նորմի խախտման կապակցությամբ:

Ֆինանսաիրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմքն են կազմում իրավաբանական փաստերը: Ֆինանսական իրավունքում իրավաբանական փաս-

տերը կատարում են ֆինանսաիրավական կարգավորման մեթոդի շատ կարևոր տարրի գործառույթի դեր: Դա պայմանավորված է նրանով, որ շատ բարձր է նրա իրավաբանական փաստերով կարգավորվածության աստիճանը:

Ֆինանսական իրավունքում իրավաբանական փաստերը կատարում են ակտիվ տեղեկատվական գործառույթ, որը կապված է իրավունքի նորմի հասարակական հարաբերությունների վրա ունեցած նախնական ներգործությամբ: Ֆինանսական իրավունքում իրավաբանական փաստերը ամրագրված են ֆինանսաիրավական նորմերում և դրանով իսկ ազդում են իրավական հետևանքների վրա: Ֆինանսական իրավունքում նրա մի շարք սուբյեկտներ կողմնորոշվում են դեպի ֆինանսական իրավունքի այն նորմերը, որոնցում ամրագրված են իրավաբանական փաստեր, ձգտում են խուսափել դրանցից, որպեսզի չծագեն ֆինանսական հարաբերություններ: Դրանք հարկատուներն են, որոնք աշխատում են խուսափել այն իրավաբանական փաստերից, որոնք առաջացնում են հարկային իրավախտումներ և այլն:

Ֆինանսական իրավունքում, ինչպես նաև իրավունքի այլ ճյուղերում իրավաբանական փաստերը կատարում են օրինակականության երաշխավորի դեր: Նրանք ոչ միայն ֆինանսական պարտականությունների և իրավունքների առաջացման նախադրյալ են, այլև երաշխիք, որը թույլ է տալիս վերացնել պարտավորություններ ունեցող անձանց կամայականությունները (մասնավորապես հարկատուների խուսափումը հարկերը վճարելուց, բյուջետային միջոցների չհիմնավորված հատկացումը և այլն):

Ֆինանսական իրավունքում իրավաբանական փաստերը կատարում են խթանիչ գործառույթ: Շատ իրավաբանական փաստեր խթանում են ֆինանսական իրավունքի սուբյեկտների գործունեության այն տեսակները, որոնք սոցիալական տեսանկյունից անհրաժեշտ են, նշանակալից, օգտակար տվյալ սուբյեկտի համար: Առավելապես այդ գործառույթը դրսևորվում է այն իրավաբանական փաստերում, որոնք առաջացնում են տարբեր տեսակի արտոնություններ ստանալու հարաբերություններ:

#### § 4. Ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավունքների իրավական պաշտպանությունը

Ֆինանսաիրավական նորմերի պահանջները խախտելու դեպքում, ինչպես նաև ֆինանսական իրավախաբերության սուբյեկտների իրավունքների պաշտպանության համար կիրառվում է ֆինանսիրավական պատասխանատվություն:

Իրավաբանական պատասխանատվության ավանդական տեսակների՝ քրեականի, վարչականի, քաղաքացիաիրավականի, նյութականի կողքին ֆինանսական, մասնավորապես հարկային օրենսդրության բուռն զարգացման հետ կապված, իրավագիտության մեջ որպես իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ սկսել է առանձնանալ ֆինանսաիրավական պատասխանատվությունը:

Ֆինանսաիրավական պատասխանատվությունը պարունակում է իրավաբանական պատասխանատվության բոլոր հատկանիշները՝ ա) այն վրա է հասնում միայն իրավախախտման դեպքում, բ) այն սահմանվում է պետության կողմից և կապված է դրա համար լիազորված սուբյեկտների կողմից իրավախախտների նկատմամբ տուժամիջոցների (սանկցիաների) կիրառման հետ, գ) այն կապված է իրավախախտին որոշակի բացասական հետևանքներ պատճառելու հետ, դ) այն իրականացվում է ընթացակարգային եղանակով: /

Այսպիսով, ֆինանսաիրավական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսաիրավական նորմերի խախտողների նկատմամբ լիազորված պետական մարմինների կողմից պետական հարկադրանքի կիրառում, որն իրավախախտի վրա դնում է լրացուցիչ, գույքային բնույթի պարտավորություն:

Ֆինանսական իրավախախտումը ֆինանսաիրավական պատասխանատվության հիմքն է:

Ֆինանսական իրավախախտումը ֆինանսական իրավունքի նորմերը խախտող հակաօրինական, մեղավոր արարք է, որի համար օրենսդրությամբ սահմանվում է ֆինանսաիրավական պատասխանատվություն: Այն, ինչպես այլ իրավախախտում, ունի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հակաիրավական, հակահասարակական բնույթը, մեղավորությունը և պատժելիությունը:

Հակաիրավական բնույթը նշանակում է, որ անձի գործողությունը կան անգործությունը դառնում են ֆինանսական իրա-



վախախտում, երբ խախտվում են ֆինանսական իրավունքի նորմերը:

Ֆինանսական իրավախախտումը հակահասարակական է, քանի որ վնաս է պատճառում պետությանը, հասարակությանը, և վերջին հաշվով յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացուն:

Պատժելիությունը, որպես ֆինանսական իրավախախտման հատկանիշ, նշանակում է, որ արարքը ֆինանսական իրավախախտում է, միայն այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված է ֆինանսական պատասխանատվություն:

Անձին ֆինանսահրավական պատասխանատվության ենթարկման հիմքը ֆինանսական իրավախախտման կազմն է: Ֆինանսական իրավախախտման կազմն իրավունքում սահմանված հատկանիշների համակցություն է, որոնց առկայությունը արարքը դարձնում է ֆինանսական իրավախախտում: Ֆինանսական իրավախախտման կազմին են պատկանում՝ ա) իրավախախտման օբյեկտը, բ) իրավախախտման սուբյեկտը, գ) իրավախախտման օբյեկտիվ կողմը, դ) իրավախախտման սուբյեկտիվ կողմը:

Ֆինանսական իրավախախտման օբյեկտը, այն հարաբերություններն են, որոնց ուղղված է իրավախախտման սուբյեկտի հակաիրավական, հակահասարակական, վնասակար վարքագիծը: Ֆինանսական իրավախախտման օբյեկտը բաժանվում է հետևյալ տեսակների՝ ընդհանուր, տեսակային և անմիջական:

Ֆինանսական իրավախախտման ընդհանուր օբյեկտը պետության կողմից սահմանված դրամական հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման կարգն է, որը պահպանվում է ֆինանսահրավական պատասխանատվության միջոցներով:

Որպես ֆինանսական իրավախախտման տեսակային օբյեկտ հանդես են գալիս պետության ֆինանսական գործունեության ոլորտի համեմատաբար առանձնացված կանոնների խումբը, որոնց խախտման համար նախատեսված են համեմատաբար յուրահատուկ ֆինանսահրավական պատասխանատվության միջոցներ: Համապատասխանաբար կարելի է տարբերել այնպիսի տեսակային օբյեկտներ, ինչպիսիք են հարկեր և տուրքեր հաշվարկելու և վճարելու, բյուջետային վարկերի օգտագործման և վերադարձման, դրամարկղային գործառնությունների կանոնները:

Ֆինանսական իրավախախտման անմիջական օբյեկտն այն կոնկրետ հարաբերությունները, կանոններն են, որոնք պահպանվում են ֆինանսական իրավունքի նորմերով և ֆինանսահրավական պատասխանատվության միջոցներով: Դրանցից են՝ հարկային մարմնում հաշվառման կանոնները, եկամուտների հաշվառման, բյուջետային միջոցների նպատակային օգտագործման կանոնները և այլն:

Ֆինանսական իրավախախտման սուբյեկտները լինում են կոլեկտիվ և անհատական:

Ֆինանսական իրավախախտման օբյեկտիվ կողմը՝ արարքը դրսևորվում է գործողությամբ և անգործությամբ: Ֆինանսահրավական պատասխանատվություն նախատեսող իրավախախտումների մի մասը, կատարվում է անգործությամբ: Օրինակ, հարկային մարմիններում հաշվառվելուց խուսափելը, հարկ վճարելուց խուսափելը: Շատ ֆինանսական իրավախախտումներ կատարվում են գործողությամբ: Օրինակ, եկամուտների և ծախսերի և հարկման օբյեկտի հաշվառման կանոնների կոպիտ խախտումը:

Ֆինանսական իրավախախտման սուբյեկտիվ կողմը դրսևորվում է հակաիրավական արարքների և դրանց հետևանքների նկատմամբ սուբյեկտի հոգեբանական վերաբերմունքով: Այն արտահայտվում է դիտավորության և անզուշույան տեսքով:

Ֆինանսական իրավախախտումների համար իրավախախտի նկատմամբ կիրառում են ֆինանսական տուժամիջոցներ (սանկցիաներ):

Ֆինանսական տուժամիջոցները ֆինանսահրավական նորմերով նախատեսված պետական հարկադրանքի միջոցներ են, որոնք իրավախախտների վրա դնում են լրացուցիչ ծանրաբեռնություն ֆինանսական տույժի ու տուգանքի տեսքով: Այլ կերպ ասած ֆինանսական տուժամիջոցները ֆինանսահրավական պատասխանատվության միջոցներ են: Այդ տուժամիջոցները ա) բացառապես դրամական բնույթ են կրում՝ տույժեր և տուգանքներ, բ) իրավախախտներից, որպես տուժամիջոց զանձված դրամական միջոցները մուտքագրվում են բյուջե կամ համապատասխան արտաբյուջետային հիմնադրամ, գ) այդ տուժամիջոցները ունեն վերականգնիչ և տուգանային բնույթ:

Իրավավերականգնիչ տուժամիջոցներն ուղղված են պետությանը պատճառած վնասի վերացմանը: Նման տուժամիջոց

է տույժը: Տույժի, որպես ֆինանսաիրավական գործառույթի դերը կայանում է նրանում, որ այն պետք է փոխհատուցի այն վնասը, որը պատճառվել է պետությանը (այն վնասները, որը նա կրում է հարկերի ժամանակին չվճարելու, բյուջետային միջոցները ժամանակին չվերադարձնելու և այլնի համար): Տույժը, որպես ֆինանսաիրավական տուժամիջոց, տարբերվում է տույժի որպես քաղաքացիաիրավական տուժամիջոցից: Ֆինանսաիրավական տուժամիջոցներն ի տարբերություն տույժի որպես քաղաքացիաիրավական տուժամիջոցներից չեն կարող սահմանվել կողմերի համաձայնությամբ: Այդ տույժերի գումարները զանձվում են պետական լիազորված մարմնի հայցով բացառապես հոգուտ պետության, իսկ քաղաքացիաիրավական տույժերը հոգուտ պայմանագրի կողմի:

Տուգանային ֆինանսաիրավական տուժամիջոցները սահմանվում են ֆինանսական իրավախախտումների համար իրավախախտներին պատժելու նպատակով: Դրանք սահմանվում են տուգանքների տեսքով: Ֆինանսաիրավական տուգանքը տարբերվում են վարչական և քաղաքացիաիրավական տուգանքներից:

Ֆինանսաիրավական տուգանքը, ի տարբերություն վարչական տուգանքից՝ 1. ֆինանսական տուգանքը չի կարող փոխարինվել այլ տուժամիջոցով, ինչպես նաև լիազոր մարմինը իր հայեցողությամբ չի կարող ազատել տուգանքի ենթարկելուց, 2. հաճախ ֆինանսական տուգանքը դրվում է ապառքների և տույժերի գանձման հետ միասին:

Ֆինանսաիրավական տուգանքը տարբերվում է քաղաքացիաիրավական տուգանքից նրանով, որ ֆինանսական իրավախախտումների համար հարկատուն, բյուջետային վարկ ստացողը տուգանք վճարում է շահույթի հաշվին, որոնք մնում են հարկերը վճարելուց հետո, իսկ քաղաքացիաիրավական տուգանքը կազմակերպության չիրացված ծախսերի հաշվին: Բացի դրանից, ֆինանսական տուգանքն ի տարբերություն քաղաքացիաիրավական տուգանքի սահմանվում է միայն օրենքով, իսկ վերջինս կողմերի համաձայնությամբ:

## ԳԼՈՒԽ 4

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ

#### ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

##### § 1. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը և նշանակությունը

Վերահսկողության իրականացումը հանրային ֆինանսական միջոցների կառավարման պարտադիր տարրն է: Նրա իրագործումը հասարակության հանդեպ պարտավորություններ է առաջացնում: Վերահսկողությունը ինքնանպատակ չէ: Այն կազմում է կառավարման համակարգի անքակտելի մասը, որի նպատակն է բացահայտել ընդունված չափանիշներից շեղումները և օրինականության խախտումները: Այն նաև նպատակ է հետապնդում առավել կարևոր փուլերում վերահսկել ֆինանսական գործունեության արդյունավետությունը և նյութական ռեսուրսների տնտեսման ուղիները: Դա հնարավորություն է ընձեռում ձեռնարկել ուղղորդող միջոցներ, անհրաժեշտության դեպքում մեղավորներին ենթարկել պատասխանատվության, փոխհատուցում ստանալ պատճառված վնասի համար կամ միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու կամ կրճատելու նման խախտումները ապագայում:

Վերահսկողությունը կառավարման կարևոր հատկանիշն է, նրա կարևորագույն գործառույթներից մեկը: Այն ներառում է ֆինանսական գործունեության դիտարկումներ օրինականության և նպատակահարմարության տեսանկյունից: Բայց բազմաթիվ դեպքերում կազմակերպությունների և քաղաքացիների ազատության ապահովման, նրանց պետության չափից շատ խնամակալությունից գերծ պահելու համար սուբյեկտների վերահսկիչ գործառույթները սահմանափակվում են և նրանց հնարավորություն է տրվում իրականացնել միայն հսկողություն: Այս դեպքում ստուգողի և ստուգվողի միջև չկա կազմակերպական ենթակայություն: Վերահսկողության սահմանազատումը հսկողությունից անհրաժեշտ է սուբյեկտի օպերատիվ գործունեությունը միջամտելը կանխելու համար:

Տնտեսության և ֆինանսական համակարգի բնականոն գործունեության անառարկելի պայմանը ֆինանսական վերահսկողությունն է, որը պետական վերահսկողության բաղկացուցիչ մասն է կազմում:

Ֆինանսական վերահսկողության առկայությունը պայմանավորված է նրանով, որ ֆինանսներին, որպես տնտեսական կատեգորիայի, բնորոշ է ոչ միայն բաշխման, այլև վերահսկման գործառույթը: Ֆինանսական վերահսկողությունը կենսագործվում է իրավական նորմերով սահմանված կարգով, պետական մարմինների միջոցով: Տնտեսության կառավարման ինքնուրույն գործառույթ լինելուն զուգընթաց, վերահսկողությունը հանդիսանում է կառավարման գործընթացի կարևոր փուլ, երբ կառավարվող օբյեկտի վրա անմիջական ներգործության արդյունքները համեմատվում են ընդունված որոշումների և նորմատիվ ակտերի պահանջների հետ, իսկ դրանց խախտումների հայտնաբերման դեպքում կիրառվում են անհրաժեշտ միջոցներ՝ նման շեղումները վերացնելու ուղղությամբ:

Ֆինանսական վերահսկողության կիրառման օբյեկտ են հանդիսանում, նախ, և առաջ դրամական հարաբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման ժամանակ: Նշված հարաբերություններն առաջանում են նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտում, ֆինանսական համակարգի բոլոր օղակներում: Ֆինանսական վերահսկողությունն ընդգրկում է նաև տնտեսական հարաբերությունների համալիր ստուգումը: Մի շարք դեպքերում ֆինանսական վերահսկողությունը դժվար է անջատել տնտեսական վերահսկողությունից, քանի որ ֆինանսական գործողություններից շատերում իրենց արտացոլումն են գտնում տնտեսական գործունեության առանձին տարրեր<sup>1</sup>: Ֆինանսական վերահսկողությունն այնպիսի ֆինանսական ցուցանիշների կազմավորման վերահսկողությունն է, ինչպիսիք են ինքնարժեքը, շահույթը, ֆոնդահատույցը և այլն, որը ենթադրում է կազմակերպության արտադրության, մատակարարման և սպառման բնագավառի գործունեության տարբեր ասպեկտների վերլուծությունը:

Զնայած այն հանգամանքին, որ պետական ֆինանսական վերահսկողությունն անմիջականորեն ներառում է միայն համախառն արտադրանքի հանրային մասը, այն որոշ առումով վերաբերում է նաև մասնավոր ձեռնարկատիրական գործունեությանը

<sup>1</sup> Ств. Белобжецкий И.А. Финансовый контроль и новый хозяйственный механизм. М., 1989, էջ 14:

(հարկային հայտարարագրերի ստուգման, մասնավոր ձեռնարկատերերին սուբսիդիաներ և վարկեր տրամադրելուն և այլն):

Ֆինանսական վերահսկողության էությունն իր արտացոլումն է գտնում նրա խնդիրներում: Դրանցից մեկը ֆինանսական ռեսուրսների վերահսկողությունն է, որը ենթադրում է պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների ժամանակին և լրիվ կատարումը, կենտրոնացված ու ապակենտրոնացված դրամական միջոցների օգտագործման ստուգումը:

Նշված դեպքում ֆինանսական վերահսկողությունը կոչված է ապահովելու հարկման, արժույթային գործառնությունների, արտաքին տնտեսական գործունեության և այլնի վերաբերյալ գործող օրենսդրության կիրառումը: Վերահսկողության գործուն բնույթը սերտորեն կապված է ֆինանսական կարգապահության խախտման համար կիրառվող պատասխանատվության հետ, որը նախատեսում է վարչական և նյութական ներգործության այլ միջոցներ:

Ֆինանսական վերահսկողությունը չի հանգում միայն ֆինանսական բնագավառում օրինականության ապահովմանը: Այն ենթադրում է հետադարձ կապերի առկայությունը, որն ապահովում է վերահսկողության առավել գործուն ազդեցությունը ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման վրա, նպաստում է ֆինանսական համակարգի բոլոր օղակների լավագույն գործառնության խոչընդոտների վերացմանը: Այդ նպատակներին են ծառայում նաև նյութական արժեքների խնայողաբար օգտագործման ռեժիմի ամրապնդումը հիմնարկներում, ձեռնարկություններում և կազմակերպություններում, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և հաշվետվության կատարելագործումը<sup>1</sup>:

Ֆինանսական վերահսկողությունը ֆինանսների վերահսկիչ գործառույթի իրացման ձևն է, այսինքն ֆինանսներին բնորոշ հանրային անբողջական արդյունքի և ազգային եկամտի ստեղծման, բաշխման և օգտագործման վերահսկման միջոց ծառայելն է: Այլ կերպ ասած, ֆինանսների վերահսկիչ գործառնությունը ֆինանսական վերահսկողության օբյեկտիվ հիմքն է, որը նպաստում է ֆինանսների սպառման և դրա առկայության հավասարակշռմանը:

<sup>1</sup> Финансовое право. М., 1996, էջ 17:

Ֆինանսական վերահսկողության գործառնության անհրաժեշտ պայմանը վերահսկիչ գործունեության բոլոր ոլորտների իրավական հստակ կարգավորումն է: Այն է՝ նրա սահմանների, իրականացման ձևերի և մեթոդների որոշումը, վերահսկողության մարմինների իրավական վիճակի, նրանց իրավունքների և պարտականությունների ծավալի սահմանումը:

Ֆինանսական վերահսկողության մեխանիզմի առավել եական թերությունը վերահսկիչ գործունեության կարգավորման ցածր մակարդակն է:

Պետության կողմից իրեն կարիքների համար ֆինանսների օգտագործումն անպայմանորեն ենթադրում է դրանց միջոցով իր խնդիրների կատարման վերահսկողության իրականացումը: Ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է իրավական նորմերով սահմանված կարգով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ողջ համակարգի միջոցով, այդ թվում նաև հատուկ վերահսկիչ մարմինների կողմից:

Ֆինանսական վերահսկողության նշանակությունը կայանում է նրանում, որ դրա իրականացման ընթացքում ստուգվում են, նախ և առաջ, ֆինանսական գործունեության ընթացքում ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից օրինականության պահպանումը, երկրորդ իրականացվող գործողությունների տնտեսական հիմնավորվածությունը և արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը պետության խնդիրներին: Ֆինանսական վերահսկողությունն անցկացվող ֆինանսական գործունեության ապահովման կարևոր եղանակ է:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունը, վերահսկողություն է պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրամական ֆոնդերի կուտակման, բաշխման և օգտագործման բնագավառում իրականացվող գործունեության օրինականության, մասնակառավարման և կատարման:

Ֆինանսական վերահսկողությունը հատուկ է բոլոր ֆինանսաիրավական ինստիտուտներին: Դրա համար էլ, բացի ընդհանուր ֆինանսաիրավական նորմերից, որոնք կարգավորում են ամբողջությամբ վերցված ֆինանսական վերահսկողության կազմակերպումը և կարգը, կան նորմեր, որոնք հաշվի են առնում նրա առանձին ֆինանսաիրավական ինստիտուտների յուրաքանչյուրը:

Ֆինանսական վերահսկողության հիմնական բովանդակությունը հետևյալն է.

ա) կազմակերպությունների, քաղաքացիների, կողմից պետության և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարման ստուգումը,

բ) պետական և համայնքային կազմակերպությունների և հիմնարկների կողմից իրենց տնօրինության կամ օպերատիվ կառավարման ներքո գտնվող դրամական ռեսուրսների (բյուջետային և սեփական միջոցների, բանկային փոխառությունների, արտաբյուջետային և այլ միջոցների) օգտագործման ճշտության ստուգումը,

գ) կազմակերպությունների, հիմնարկների կողմից ֆինանսական գործառնությունների, հաշվարկների, դրամական միջոցների պահպանության կանոնների պահպանման ստուգումը,

դ) արտադրության ներքին ռեզերվների բացահայտումը տնտեսության շահութաբերության բարձրացումը, աշխատանքի արտադրողականության աճը, նյութական և դրամական միջոցների առավել խնայողաբար օգտագործումը<sup>1</sup>,

ե) ֆինանսական կարգապահության խախտման նախագուշանցումը և վերացումը:

Ֆինանսական խախտումների բացահայտման դեպքում կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են ներգործության միջոցներ:

Ֆինանսական վերահսկողության խնդիրների իրականացման արդյունքում ամրապնդվում է ֆինանսական կարգապահությունը, որն օրինականության բաղադրամասերից է: Ֆինանսական կարգապահությունը, դա պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից դրամական միջոցների կուտակման, բաշխման և օգտագործման սահմանված պահանջների և կարգի խստիվ պահպանումն է:

Ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը ենթադրում է ֆինանսատնտեսական գործունեության տնտեսական խորը վերլուծություն, վերահսկող մարմինների կողմից

<sup>1</sup> Финансовое право. М., 1996, էջ 84:

ստուգվող կազմակերպությունների աշխատանքի որակի բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակում:

✦ **Ֆինանսական վերահսկողության ձևերն են իրավական և ոչ իրավական** (կազմակերպչական): Դա պայմանավորված է նրանով, որ միևնույն ֆունկցիան իրագործվում է տարբեր ձևերի և մեթոդների օգնությամբ: Իրավական ձևերը դրսևորվում են իրավական կանոնակարգման ենթարկված գործունեության, իսկ ոչ իրավական ձևերը կազմակերպչական գործողությունների իրականացման, նյութատեխնիկական գործառնությունների կատարման միջոցով:

Մեթոդ ասելով սովորաբար հասկանում ենք առաջադրված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու եղանակները: Ֆինանսական վերահսկողության մեթոդները ցույց են տալիս, թե ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինն ինչպես և ինչ եղանակով է իրագործում վերահսկողությունը:

Գոյություն ունեն վերահսկողության տարբեր մեթոդներ: Այդ մեթոդները կարելի է բաժանել ըստ անցկացման ժամանակի: Այս դեպքում ֆինանսական վերահսկողությունը լինում է նախնական, ընթացիկ և հաջորդող:

Ֆինանսական վերահսկողության հիմնական մեթոդներից են՝ դիտարկումը, ստուգումը, ուսումնասիրությունը, վերլուծությունը և վերստուգումը:

Դիտարկումը ենթադրում է ընդհանուր ծանոթացում վերահսկման օբյեկտի ֆինանսական գործունեության վիճակի հետ:

Ֆինանսական վերահսկողության կարևոր մեթոդներից է ստուգումը, այսինքն ֆինանսատնտեսական գործունեության առավել խորը և լրիվ հետազոտումը՝ դրա օրինականության, ճշտության, նպատակայնության պարզման նպատակով: Ստուգումը ստուգվող օբյեկտին հասցեագրված այս կամ այն որոշման, հանձնարարության, իրացման վիճակի պարզաբանման հուսալի միջոց է: Ստուգման էությունը կայանում է ստուգվողների կողմից օրենքների, օրենսդրական այլ ակտերի ճիշտ կատարման վրա սխտեմատիկաբար հսկելու մեջ: Ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը, վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Ստուգումը վերաբերում է ֆինանսական գործունեության հիմնական հարցերին և իրագործվում է տեղում հաշվեկշռային, ծախսային փաստաթղթերի, հաշվետվությունների օգտագործմամբ, որի նպատակն է բացահայտել ֆինանսական կարգապահության խախտումները և վերացնել դրանց հետևանքները:

Ստուգման նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատության պարզելը, ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելն է: Արգելվում է ստուգումների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ տնտեսական գործունեությանը միջամտելը:

Ստուգումներն իրականացնում է 2001 թ. ապրիլի 3-ի «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Այս օրենքը կարգավորում է հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և ՀՀ տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, դրանց ստեղծած հիմնարկներում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի (այսուհետ տնտեսվարող սուբյեկտներ) գործունեության ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը:

Որոշումների կատարման ստուգումն արդյունավետ է այն ժամանակ, երբ այն անցկացվում է ոչ թե դեպից-դեպ, պատակահանորեն, այլ մշտապես: Կատարման ժամանակին ստուգումը թույլ է տալիս անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել որոշումների որակով կատարման համար: Կատարման ստուգման դեպքում ուշադրություն է դարձվում փաստացի արդյունքների վրա և միջոցներ են ձեռնարկվում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման համար:

Կատարման ստուգման հաջող անցկացման համար հարկավոր է ուսումնասիրել գործի կազմակերպումը, ստուգել, թե որքանով է այն ճիշտ և, եթե անհրաժեշտ է, միջոցներ ձեռնարկել ժամանակին վերացնելու սխալները և թերությունները, չթողնել, որ դրանք ապագայում կրկնվեն: Կատարման ստուգման, որպես

Ֆինանսական վերահսկողության մեթոդի, առավելությունն այն է, որ նախատեսում է նախնական հաշվառման և սխտեմատիկ հաշվետվության տվյալների խորը վերլուծություն, այլ փաստաթղթերի հետ ծանոթացնում, տեղերում գործերի փաստացի վիճակի մանրամասն ուսումնասիրում: Ստուգման իրագործումը ստիպում է ստուգվողներին խստորեն կատարել իրավական ակտերում նախատեսված պահանջները, իրականացնել դրանցում եղած միջոցառումները, անհրաժեշտության դեպքում հնարավորություն է ընձեռում լրացումներ և ճշտումներ կատարել դրանց մեջ:

Ելնելով ստուգման բնույթից՝ այն կարելի է բաժանել համալիր և ընտրովի (թեմատիկ) ստուգումների: Համալիր ստուգումն ուղղված են տնտեսվարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն:

Ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը համալիր բնույթ կարող է կրել և ընդգրկել հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների, հաշվեկշռի, սկզբնական հաշվառման փաստաթղթերը լրացնելու ճշտության պարզումը: Այն նպատակ ունի վեր հանել ստուգվող օբյեկտի ֆինանսատնտեսական վերջնական կամ միջանկյալ արդյունքները կապված սեփական և փոխառու դրամական ու ապրանքային միջոցների օգտագործման նպատակայնության և արդյունավետության հետ: Համալիր ստուգումների բացառիկ իրավունքը պատկանում է տնտեսվարող սուբյեկտի բաժնետերերին, փայտերերին, հիմնադիրներին կամ անդամներին՝ օրենքով իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Թեմատիկ ստուգումներն ուղղված են տնտեսվարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն: Դրանք են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովագրության, բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, պետական բյուջեի հետ փոխահարաբերությունների ճշտության ստուգումները, արժութային գործառնությունների ստուգումը:

Որոշումների կատարման ստուգումն արդյունավետ է այն ժամանակ, երբ նման ստուգում կատարվում է որևէ կոնկրետ հիմնահարցի կապակցությամբ և որոշակի ժամկետում: Նախօրոք նշակվում է գործողությունների ծրագիրը, որոշվում են

ստուգման նպատակները, անցկացվում են նրա մասնակիցների հանգամանալից իրահանգավորում:

Ստուգումները սկսելուց առաջ ստուգումն իրականացնող պետական մարմնի ղեկավարը, վերը նշված օրենքին համապատասխան, իրապարակում է ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր, որի մեջ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսվարող սուբյեկտի լրիվ անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման հարցերը, ստուգմանը ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը: Նշված հրամանում կամ հանձնարարագրում չնշված պաշտոնատար անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակն առնվազն 3 աշխատանքային օր առաջ տրվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Վերջինս պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:

Հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների և հսկիչ ստուգող դրամարկղային մեքենաների կիրառման դեպքերում հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների, տարադրամի փոխանակման կետերի կամ արժույթային դիլերների, ինչպես նաև առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեություն իրականացման դեպքում նման նախօրոք տեղեկացնելու ժամկետ և կարգ չի նախատեսում:

Ստուգում կատարող պաշտոնատար անձը հրամանում կամ հանձնարարագրում նշված նպատակի շրջանակներից դուրս գալու իրավունք չունի: Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ և անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգման նպատակները, շրջանակները կարող է փոփոխել համապատասխան պետական մարմինը՝ ստուգում կատարող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ: Այդ մասին գրավոր տեղեկացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ նրան ներկայացնելով նախկին հրամանին կամ հանձնարարագրին կից նոր հրամանը կամ հանձնարարագիրը:

Ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 15 օրացուցային օրվանից յուրաքանչյուր տարվա համար: Ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը այն է ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը: Տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանը պետք է պարունակի տեղեկություններ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման հարցերի, նպատակի, ժամկետների մասին:

Այդ ժամկետը չպետք է գերազանցի նաև ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի հրամանի կամ հանձնարարագրի մեջ նշված ժամկետին: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ համապատասխան պետական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով այն կարող է երկարացվել մինչև 10 օրացուցային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրա փոխարինող անձին: Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության մարմինների, կամ դատարանի վճռի հիման վրա առգրաված լինելու կամ տարրերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է մինչև կասեցման հիմքի վերացումը: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ և անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգում կատարող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ ստուգման նպատակները և շրջանակները կարող են փոփոխվել համապատասխան պետական մարմնի կողմից: Փոփոխման մասին գրավոր տեղեկացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ նրան ներկայացնելով նախկին հրամանին

կամ հանձնարարագրին կից նոր հրամանը կամ հանձնարարագիրը:

Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ՝ երկու օրինակից, եթե տնտեսավարող սուբյեկտն ունի պետական բաժնեմասերնք օրինակից: Խախտումներ և թերություններ չհայտնաբեկնող դեպքում կազմվում է տեղեկանք, որում արձանագրվում են տեղեկանքը կազմելու ամսաթիվը և տեղը, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները, ակտի դեպքում տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչների բացատրությունները (հատուկ կարծիքը), օրինակների քանակը և հերթական համարը:

Ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտումների թույլ տրման պատճառները, խախտման կոնկրետ ժամանակը, հղում՝ համապատասխան փաստաթղթերին, խախտումների վերցման (ուղղումների) համար անհրաժեշտ գործողությունները, պատասխանատվության կիրառման համատասխան իրավական հիմքերը:

Կազմված ակտը ստուգում իրականացնող անձինք 3 օրվա ընթացքում պետք է ներկայացնեն տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմած ակտը ստորագրում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարածայնություններ առաջանալու դեպքում ստուգող պաշտոնատար անձանց կարծիքները արձանագրվում են ակտում: Ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից ակտն ստորագրելու և տարածայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 3 աշխատանքային օրը: Ակտի պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին: Եթե վերջինս պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա ակտի պատճենի մեկ օրինակն ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմին:

Ստուգումն իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները:

*Ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝*

1) տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ:

2) պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին:

3) անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով ստուգումներին ներգրավել տնտեսավարող սուբյեկտի մասնագետներին տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ:

4) սահմանել ժամկետներ՝ բացահայտված այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն:

5) առաջարկություններ ներկայացնել ստուգում նշանակող պետական մարմնի ղեկավարությանը վարչական կամ քրեական պատասխանատվություն առաջացնող բացահայտված չարաշահումների կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

6) վերցնել փաստաթղթերի կրկնօրինակներ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին,

7) իրականացնել ստուգման նպատակի հետ կապված չափագրումներ, կշռող, չափող և նմանատիպ այլ սարքերի ու սարքավորումների շահագործման ճշտության հսկիչ ստուգումներ:

8) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ:

9) ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարից կամ փոխարինող անձից պահանջել անցկացնելու հիմնական ֆոնդերի, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և հաշվարկների գույքագրումներ: Գույքագրում կատարելիս ներգրավել տնտեսավարող սուբյեկտի համապատասխան աշխատակիցների և մասնագետներին:

10) անհրաժեշտության դեպքում գույքի նկատմամբ իրավունքները գրանցող, հարկային, մաքսային և այլ պետական մարմիններից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահանջել ստուգվող սուբյեկտի գործարքների հաշիվների շարժի մասին տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ:

Ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են՝ 1) պահպանել ՀՀ գործող օրենսդրությունը, 2) առանց տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության չհրապարակել ստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած տնտեսավարող սուբյեկտի գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, գործունեության մասին ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, որը տնտեսավարող սուբյեկտը մտադիր է եղել գաղտնի պահել, և ստուգում իրականացնող անձը տեղյակ է կամ կարող է տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ, ինչպես նաև առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, 3) պահպանել տնտեսավարող սուբյեկտի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու օրինական շահերը: 4) չխոչընդոտել տնտեսավարող սուբյեկտի ստուգվող աշխատանքին, 5) տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց ծանոթացնել իրենց իրավունքներին ու պարտականություններին: 6) ստուգման ընթացքում գրավոր պատասխանել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցման:

Ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է դրանց վերադարձման ժամկետը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի, իրերի փորձանմուշների և այլ անհրաժեշտ նյութերի որակական և քանակական ամբողջականության պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձնելու համար: Արգելվում է ստուգման ընթացքում կապարակնքել պահեստներ, շինություններ,



դրամարկղեր, էներգիայի աղբյուրներ, սարքավորումներ, սարքեր և այլն:

*Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքները և պարտականությունները:*

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝ ա) արգելել ստուգումը (ստուգումն իրականացնող անձանց փաստաթղթեր տրամադրելը), եթե ստուգողները խախտել են ստուգման նպատակը և անցկացման կարգն ու ստուգման ժամկետները այդ մասին նույն օրը գրավոր ծանուցելով ստուգում իրականացնող պետական մարմնին. բ) չժանոթանալ ստուգումների ակտի հետ, գ) ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները. դ) պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում. ե) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասությունից, ինչպես նաև ստուգման նպատակներից և ծրագրերից չբխող պահանջներ. զ) ստուգվող տնտեսավարող սուբյեկտի շահերի պաշտպանության նպատակով ստուգման ցանկացած փուլում ստուգմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների:

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝ ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները. բ) ներկայացնել պահանջվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, գ) անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար, դ) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները՝ այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին:

Ստուգումն իրականացնող անձանց գործողությունները օրենքով սահմանված ժամկետներում կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է ստուգվող անձը (անձինք) կամ դատարան: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը մինչև բողոքի պատասխանը ստանալը կարող է թույլ չտալ շարունակելու ստուգումը: Բողոքները վերադասության

կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված նպատճառաբանությունները համարվում են ընդունված: Ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից: Ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը իրավունք ունի բողոքարկել դատարան:

Ստուգումն իրականացնող մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով տնտեսավարող սուբյեկտին պատճառված վնասները, այդ թվում և բաց թողնված օգուտները, ենթական են հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգվող մարմնում պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է: Այն իրականացվում է ֆինանսական գործունեության առանձին կողմերի նկատմամբ և հենվում է ցուցանիշների ավելի լայն շրջանակի վրա, որով և տարբերվում են ստուգումից: Ուսումնասիրության ժամանակ օգտագործվում են այնպիսի հնարքներ, ինչպիսիք են հարցումը և անկետավորումը: Ուսումնասիրության արդյունքներն, որպես կանոն, օգտագործվում են օբյեկտի ֆինանսական վիճակի գնահատման համար:

Վերլուծությունը, ինչպես նախորդ մեթոդները, նպատակաւղղված է ֆինանսական կարգապահության խախտումների բացահայտմանը: Այն իրականացվում է ընթացիկ կամ տարեկան հաշվետվությունների հիման վրա և բնորոշվում է համակարգային և գործոնային մոտեցումներով, ինչպես նաև վերլուծական այնպիսի հնարքների օգտագործմամբ, ինչպիսիք են միջին և հարաբերական վերլուծությունները և այլն: Սակայն ֆինանսական վերահսկողությունը չի կարող հանգեցվել միայն վերլուծական գործունեության: Խոսք կարող է գնալ միայն ֆի-

նանաստնտեսական վերլուծության մեթոդների սահմանափակ օգտագործման մասին:

Եթե առկա են օրենքով սահմանված վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքերը, ստուգող մարմինն իրավունք ունի մեկ տարվա ընթացքում իրականացնել կրկնակի ստուգում: Եթե տվյալ ժամանակահատվածի համար առկա է ստուգող մարմնի կողմից կազմված ակտ կամ տեղեկանք, ապա ստուգող մարմինն իրավունք չունի նույն ժամանակահատվածի համար միևնույն սուբյեկտի գործունեությունն ստուգել, բացառությամբ վերստուգման համար նախատեսված դեպքերի:

Վերստուգումն ստուգումն իրականացնող մարմնի կողմից նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ տարվա ընթացքում կատարված երկրորդ (կրկնակի) ստուգումն է:

Վերստուգումներ կարող են անցկացվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1. տնտեսավարող սուբյեկտը լուծարելիս. 2. տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի խնդրանքով. 3. ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ. 4. եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված են նախորդ ստուգողի այն հանցավոր գործողությունները, որոնք թույլ է տվել ստուգումը կատարելիս. 5. պետական գույքի մասնավորեցման լիազորված պետական կամ 51 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ տնտեսավորող սուբյեկտի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացմամբ. 6. ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրանական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ:

## § 2. Ֆինանսական վերահսկողության տեսակները: Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները

Ֆինանսական վերահսկողությունը բաժանվում է տարբեր տեսակների: Այդ բաժանումների հիմքում կարող են դրված լինել զանազան չափանիշներ:

Ըստ այն իրականացնող մարմինների ֆինանսական վերահսկողությունը լինում է՝

- 1) օրենսդիր մարմնի կողմից իրականացվող,
- 2) գործադիր մարմինների կողմից իրականացվող,
- 3) ֆինանսների նախարարության կողմից իրականացվող,
- 4) ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող,
- 5) գերատեսչական վերահսկողություն:

ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն, Ազգային ժողովը «վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի օգտագործման նկատմամբ»:

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ: Վերջինիս կարգավիճակը, իրավասությունը, կազմակերպական կառուցվածքը, գործունեության սկզբունքները և ձևերը սահմանվել են 1996 մայիսի 29-ի «ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» օրենքով: Վերահսկիչ պալատը ֆինանսական վերահսկողություն իրականացնող կազմակերպություն է, որը ձևավորվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից և հաշվետու է միայն նրան:

Նրա խնդիրներն են՝

ա) ՀՀ Ազգային ժողովին ներկայացնել աուդիտի արդյունքները, դրանց մասին տեղեկացնել կառավարությանը.

բ) ՀՀ Ազգային ժողովին ներկայացնել եզրակացություններ՝ պետական բյուջեի կատարման մասին կառավարության տարեկան հաշվետվության,

պետական կազմակերպությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետակա-

նացման տարեկան ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվության,

կենտրոնական բանկի տարեկան հաշվետվության վերաբերյալ.

զ) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին յուրաքանչյուր կիսամյակի սկզբում տեղեկանք ներկայացնել նախորդ կիսամյակում պետական բյուջեի կատարման, այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման, սեփականաշնորհման և ապապետականացման տարեկան ծրագրի կատարման ընթացքի մասին:

Վերահսկիչ պալատը նաև Ազգային ժողովի հանձնաժողովներին և պատգամավորներին մեթոդական և մասնագիտական օգնություն է ցույց տալիս:

Վերահսկիչ պալատն իրավասու է վերահսկողություն իրականացնել՝

ա) ՀՀ պետական բյուջեի կատարման, մասնավորապես, եկամուտների և ծախսերի հոդվածների՝ պետական բյուջեի եկամուտների մուտքի, պետական բյուջեի միջոցների, պետական արտաբյուջետային ֆոնդերի օգտագործման, պետական մարմինների պահպանման ծախսերի, պետական բյուջեով նախատեսված և փաստացի կատարման միջև շեղումների նկատմամբ.

բ) պետական ծրագրի և պետական պատվերների համար հիմնարկներին և կազմակերպություններին ( անկախ սեփականության ձևից), պետական սեփականության, ֆինանսական միջոցների տրամադրման նկատմամբ.

գ) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում բյուջետային հատկացումների օգտագործման նկատմամբ.

դ) այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի օգտագործման և մարման նկատմամբ.

ե) պետական կազմակերպությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման տարեկան ծրագրի կատարման, սեփականաշնորհման և ապապետականացման ընթացքում գտնվող կազմակերպությունների, համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունների սահմանափակումների կա-

տարման, 'սեփականաշնորհման սերտիֆիկատների թողարկման, բաշխման և մարման նկատմամբ:

զ) ՀՀ պետական բյուջեի և ՀՀ պետական պարտքի մասով ՀՀ կենտրոնական բանկի գործունեության, մյուս բանկերի համապատասխան փաստաթղթերի նկատմամբ:

Վերահսկիչ պալատը վերահսկողությունն իրականացնում է ուսումնասիրությունների և օրենքով սահմանված այլ ձևերով: Այն ընդգրկում է՝

1) ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հիմնարկներից և կազմակերպություններից իր իրավասության շրջանակներում և կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր պահանջելը, ստանալը, դրանց հետ ծանոթանալը և վերլուծելը.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ֆինանսատնտեսական փաստաթղթերի հետ տեղում ծանոթանալը և իրավիճակն արձանագրելը:

Վերահսկողության արդյունքները և դրանցից բխող առաջարկություններն ամփոփվում են համապատասխան տեղեկանքներում, արձանագրություններում և եզրակացություններում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկների և կազմակերպությունների պաշտոնատար անձինք պարտավոր են ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին ըստ պահանջի տեղեկանքներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր ներկայացնել բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ, աջակցել Վերահսկիչ պալատի պաշտոնատար անձանց իրենց պարտականությունները կատարելիս:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների պաշտոնատար անձինք Վերահսկիչ պալատին կեղծ կամ ուշացումով տեղեկություններ հաղորդելու, նրա պաշտոնատար անձանց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Վերահսկողության արդյունքներին ծանոթանալուց հետո, դրանց առնչվող պետական և տեղական ինքնակառավարման հիմնարկների և կազմակերպությունների պաշտոնատար անձինք, ղեկավարները մեկամսյա ժամկետում Ազգային ժողով և Վերահսկիչ պալատ պաշտոնական տեղեկատվություն են ներ-

կայացնում բացահայտված խախտումները վերացնելու, պետությանը հասցված վնասը փոխհատուցելու և պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: ✓

Կառավարությունն իր լիազորությունների սահմանում քվերահսկում է պետական բյուջեի կազմումը և կատարումը (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 2-րդ կետ), դրամաշրջանառության անրապնդմանն ուղղված միջոցառումների կատարումը, պետության ապահովագրական մարմինների աշխատանքը:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերահսկում է պետական մարմինների, բյուջետային ֆինանսավորում ստացող հիմնարկների, կազմակերպությունների կողմից բյուջետային միջոցների ճիշտ և նպատակին օգտագործումը, վերը նշված մարմինների կողմից ֆինանսական կարգապահության կանոնների պահանջների կատարումը և այլն: Նշված նախարարությունը պարբերաբար անցկացնում է ստուգումներ նախարարություններում ֆինանսական կարգապահության, վերահսկիչ-վերստուգիչ աշխատանքի վիճակի կապակցությամբ: Հիշյալ նախարարությունն իրավունք ունի ստուգվող մարմիններից պահանջել ներկայացնել անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, հաշվետվություններ, նախահաշիվներ, անցկացնել ֆինանսական գործունեության ստուգում և վերստուգում, ստուգել կանխիկ դրամի առկայությունը, ցուցումներ տալ ստուգվող կազմակերպությունների ղեկավարներին կարգապահության վերահանված խախտումների վերացման վերաբերյալ:

Բյուջետային հատկացումների ճիշտ ու նպատակին օգտագործման նկատմամբ վերահսկողությունը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է իր կառուցվածքային ստորոբաժանման՝ վերահսկողության վարչության միջոցով:

5. ՀՀ Կենտրոնական բանկը վերահսկում է առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային մարմինների գործունեությունը: Կենտրոնական բանկի վարգավիճակը և նրա վերահսկիչ ֆունկցիաներն ուղղված են դրամավարկային համակարգի կայունության ապահովմանը, բանկի վարկատուների և ավանդատուների շահերի պաշտպանությանը: Նրա հիշյալ լիազորությունները սահմանված են 1996թ. հունիսի 30-ի «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի համապատասխան նորմերով: Բանկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ

1  
հսկողություն իրականացնելու նպատակով, Հայաստանի կենտրոնական բանկը (կամ, նրա հանձնարարությամբ՝ համապատասխան աուդիտային կազմակերպությունը) իրավունք ունի ստուգումներ իրականացնելու ՀՀ տարածքում գործող բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում: Առևտրային բանկի կամ ֆինանսավարկային մարմնի կողմից օրենսդրությունը խախտելու դեպքում, ՀՀ կենտրոնական բանկը պարտադիր ցուցումներ է տալիս հայտնաբերված խախտումները որոշակի ժամկետում վերացնելու մասին:

6. Գերատեսչական վերահսկողությունն իրականացվում է հիմնարկների, կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Գերատեսչական վերահսկողության հիմնական խնդիրը արտադրության կազմակերպման, նյութերի և ֆինանսական ռեսուրսների խնայողական օգտագործման, հաշվապահական հաշվառման ճիշտ դրվածքի, վերահսկիչ-վերստուգիչ աշխատանքի վերահսկումն է: Այն իրականացվում է համակարգի ներսում, որի համար էլ նաև անվանվում է ներտնտեսական վերահսկողություն:

Ներտնտեսական ֆինանսական վերահսկողությունն իրականացնելու գործում կարևոր դեր է խաղում հիմնարկի, կազմակերպության գլխավոր հաշվապահը և նրա կողմից ղեկավարվող հաշվապահությունը: Գլխավոր հաշվապահի ստորագրությունը, ղեկավարի ստորագրության հետ միասին, պարտադիր է բոլոր այն փաստաթղթերի համար, որոնք հիմք են հանդիսանում դրամական միջոցների և նյութական արժեքների ընդունման ու հանձնման, ինչպես նաև վերահաշվարկային պարտավորությունների համար:

Վերահսկողությունն, ըստ իրականացման ժամանակի, կարելի է բաժանել նախնական, միաժամանակյա և հետագա վերահսկողության:

Նախնական վերահսկողությունը կանխիչ բնույթ ունի: Այդ մեթոդի էությունն այն է, որ վերահսկողությունն իրականացվում է նախքան տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի օպերատիվ գործողության կատարումը: Վերահսկողության այս մեթոդն ուղղված է ֆինանսական օրինականության պահանջներից անեն մի շեղման նախագուշացմանը և կանխմանը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության զանձապետարանն իրականացնում է նախնական վերահսկողություն ՀՀ և համայնքների բյուջեների կատարման նկատմամբ: Դրա շրջանակ-

ներում, նախքան պետական հիմնարկների անվամբ գանձապետարանում հաշիվներից ֆինանսական միջոցների ելքագրումը, գանձապետարանում գնահատվում է պետական հիմնարկների կողմից իրականացվող ֆինանսական գործառույթների համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին: Անհամապատասխանության հայտնաբերման դեպքում պետական հիմնարկների անվամբ բացված գանձապետական հաշիվներից ֆինանսական միջոցների ելքագրումը ժամանակավորապես դադարեցվում է:

Ֆինանսական վերահսկողության կարևոր մեթոդներից է ընթացիկ (միաժամանակյա) վերահսկողությունը: Այն իրականացվում է ֆինանսական գործունեության ընթացքում և օպերատիվ բնույթ ունի:

Վերահսկողության հետագա մեթոդը կիրառվում է իրավական այս կամ այն ակտի ընդունման պահից որոշակի ժամանակ անցնելուց հետո: Վերահսկողության տվյալ մեթոդը թույլ է տալիս ամփոփել արդյունքները և վերլուծել որոշումների կենսագործման ուղղությամբ կատարած աշխատանքը<sup>1</sup>:

Կիրառման տեսանկյունից ֆինանսական վերահսկողությունը կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ առևտրային հաշվետվություններ, կատարման ստուգման և վիճակագրական տվյալների վերլուծություն, ֆինանսական նախագծերի, ֆինանսատնտեսական գործունեության քննարկումների, տեղեկությունների ստուգում և այլն:

Ըստ իրականացման եղանակի, վերահսկումը լինում է փաստաթղթային և փաստացի:

1. Փաստաթղթային ստուգման ժամանակ ստուգվում են փաստաթղթերը, հատկապես-նախահաշվային, դրամական փաստաթղթերը (հաշիվներ, վճարումների ցուցակներ, օրդերներ), հաշվետվությունները և այլն:

2. Փաստացի ստուգումը նշանակում է ոչ միայն փաստաթղթերի, այլ նաև դրամի, նյութական արժեքների ստուգում:

ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկերի և այլ վճարումների ճիշտ և ժամանակին մուտքը վերահսկելու պարտականությունը դրված է ՀՀ հարկային ծառայության մարմինների վրա: ՀՀ հարկային մարմինների լիազորությունները սահմանված են «Հարկային ծառայության մասին» 2002 թ. հուլիսի 3-ի ,

<sup>1</sup> Слес Вирюков Л.Н., Кирилева М.В. Основы банковского права Российской Федерации. Воронеж, 1996, էջ 32:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքներով:

ՀՀ հարկային ծառայության մարմինը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմինն է: Հարկային ծառայության մարմնի կառուցվածքը և հաստիքները հաստատում, տարածքային (մարզային) հարկային տեսչությունները ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է ՀՀ կառավարությունը:

Հարկային մարմնի գործառույթներն են

1. հարկ վճարողների սպասարկումը (հարկ վճարողներին իրազեկում, հարկային հաշվարկների, հայտարարագրերի հաշվետվությունների, տեղեկանքների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունում, օրենքով նախատեսված դեպքերում հարկերի հաշվարկում ),
2. հարկ վճարողների հաշվառումը.
3. հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպումը.
4. հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը.
5. հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը.
6. հարկ վճարողների բողոքների քննարկումը և որոշումների կայացումը.
7. բյուջեների հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ հաշվառումը.
8. հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթները:

Վերը նշված գործառույթների իրականացման նպատակով հարկային մարմնի ղեկավարը հաստատում է հարկային ծառայության ընթացակարգերը:

Հարկային մարմնին օրենքով նախատեսված դեպքում և կարգով իրականացնում է հետաքննչական գործառույթ: Հարկային մարմինը պարտավոր է

1. պահպանել ՀՀ օրենսդրությունը , հարկ վճարողների իրավունքներն ու օրինական շահերը.

2. իրականացնել հսկողություն հարկային օրենսդրության, պետական տուրքի և պարտադիր այլ վճարումների վերաբերյալ օրենքների ու դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ.
3. հանցագործության հատկանիշներով հարկային օրենսդրության խախտման դեպքեր հայտնաբերելու օրենքով սահմանված կարգով անցկացնել հետաքննություն.
4. իրականացնել հարկ վճարողների հաշվառումը.
5. հարկային օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացնել բացատրական աշխատանքներ, տեղեկացնել հարկ վճարողներին գործող հարկերի և պարտադիր այլ վճարների մասին.
6. իրականացնել օրենսդրությամբ սահմանված չափից ավելի վճարված (զանձված) հարկերի և պարտադիր այլ վճարումների հաշվանցումը (կամ վերադարձման համար անհրաժեշտ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների, տեղեկանքների տրամադրումը).
7. պահպանել հարկային գաղտնիքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունցող պետական մարմիններին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով.
8. սահմանված ժամկետներում քննարկել հարկ վճարողի ներկայացրած բողոքը հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունների (անգործության) դեմ և ընդունված որոշման մասին տեղյակ պահել հարկ վճարողին.
9. իրականացնել ծառայողական քննություն հարկային ծառայողի կատարած խախտումների վերաբերյալ:  
Հարկային մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կրում է նաև այլ պարտականություններ:  
Հարկային մարմնի իրավունք ունի՝
1. հարկ վճարողներից, հարկային գործակալներից և հարկային հարաբերություններն առնչվող այլ անձանցից պահանջել փաստաթղթեր, տվյալներ, բացատրություն, տեղեկանքներ, հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման ու վճարման համար հիմք համարվող օրենքի հիման վրա սահմանված հաշվետվություններ, հաշվարկներ.

2. հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման, վճարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով անցկացնել ստուգումներ նախարարությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների աշխատակազմերում, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց մոտ.
3. օրենսդրությամբ սահմանված կարգով վերցնել փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին.
4. ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել սուբյեկտի գրասենյակային, առևտրային, արտադրական, պահեստային և ստուգվող այլ ստորաբաժանումներ, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով կապարակնթել, (կնքել) այդ տարածքները.
5. օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույն հաշվարկել հարկ վճարողի հարկերի և պարտադիր այլ վճարների գծով պարտավորությունները, կատարել չափագրումներ, ինչպես նաև հսկիչ գնումներ, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով.
6. հարկային պարտավորությունները ճշտելու և հարկերի վճարման հետ կապված խնդիրներ քննարկելու նպատակով գրավոր ծանուցմամբ առաջարկել հարկ վճարողներին (հարկ վճարողների ներկայացուցիչներին), հարկային գործակալներին և այլ անձանց ներկայանալ հարկային մարմին,
7. հարկային հսկողության ընթացքում ներգրավել մասնագետներ, փորձագետներ և թարգմանիչներ.
8. պահանջել հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների վերացում և վերահսկել առաջադրված պահանջի կատարումը.
9. օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել զենք և զինամթերք.
10. օրենքով նախատեսված կարգով իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներ նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հարկային իրավախախտումների վերաբերյալ առկա տեղեկությունների, ինչպես նաև հարկային

հանցագործության կատարման մասին վկայող այլ փաստերի ու հանգամանքների առկայության դեպքում.

11. օպերատիվ անհրաժեշտությունից ելնելով օգտագործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների փոխադրական և կապի միջոցները՝ օրենսդրությանը սահմանված կարգով փոխհատուցելով ծախսերը.

12. ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրեր ներկայացնել լիազորված մարմիններ.

13. օրենքով նախատեսված դեպքերում հայց ներկայացնել ՀՀ դատարաններ՝

- հարկային պարտավորությունների բռնագանձման վերաբերյալ.

- հարկ վճարողին սնանկ ճանաչելու վերաբերյալ:

Ստուգումները տարբերակվում են՝

ա) ըստ իրականացման վայրի՝ ներքին (կամերալ), որն իրականացվում է ստուգվող օբյեկտի գտնվելու կամ գործունեության վայր այցելության ձևով: Արտաքին ստուգումը ենթադրում է օբյեկտի գործունեության ստուգում նրա սկզբնական հաշվապահական և այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդգրկումով.

բ) ըստ պարբերականության՝ սկզբնական և լրացուցիչ.

գ) ըստ իրականացման՝ համատարած (բոլոր սկզբնական և հաշվետվական փաստաթղթերի դիտարկմամբ) և ընտրանքային.

դ) ըստ ընդգրկման աստիճանի՝ ֆինանսատնտեսական գործունեության համալիր և մասնակի ստուգումներ:

Հարկային մարմինների կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների նպատակը կազմակերպությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման ստուգումն է, որն իրականացվում է ըստ անհրաժեշտության և իրենից ներկայացնում է արտաքին փաստաթղթային ստուգում, որի ժամանակ իրականացվում է (համատարած կամ ընտրանքային ձևով) կազմակերպության արտադրական, առևտրական ողջ գործունեության և տնտեսական բոլոր տիպի գործառնությունների ստուգում՝ օգտագործելով փաստաթղթային ու փաստացի

ստուգումների այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են նորմատիվալիզն համալրումը, հանդիպակաց ստուգումները, գույքագրումը, չափագրումները, փաստաթղթերի տրամաբանական ու փորձագիտական վերլուծությունը և այլն:

Մասնակի ստուգումը հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հիմնական տեսակն է և իրենից ներկայացնում է արտաքին փաստաթղթային ստուգում, ստուգվող օբյեկտի կողմից իրականացվող գործունեության կամ գործառնությունների մի մասի, որոշակի պարտավորությունների ստուգում:

Հարկային մարմինների կողմից ուսումնասիրություն անցկացվում է միայն կոնկրետ հարցերով և ընտրանքային ձևով՝ պետական բյուջեի պարտավորությունների կատարման նկատմամբ օպերատիվ և ռեալ վերահսկողության ապահովման համար:

Հարկային մարմինների լիազորությունների ծավալը համապատասխանում է «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» օրենքով ստուգումներ իրականացնող մարմիններին տրամադրված լիազորություններին:

Ուսումնասիրության անցկացման դեպքում հարկային մարմնի ղեկավարը հրապարակում է ուսումնասիրության մասին հանձնարարագիր, որտեղ նշվում են ուսումնասիրության ժամկետը, նպատակը, հարկային մարմնի անվանումը, հարկային պետական տեսուչի ազգանուն, անուն, հայրանունը: Այն, ծանոթացման նպատակով, ցույց է տրվում ստուգվող օբյեկտի ղեկավարին:

Ստուգման ընթացքում հարկային տեսուչի կողմից փաստաթղթերը և այլ գույք ժամանակավորապես վերցնելու ու (կամ) սահմանված կարգով առգրավելու դեպքում, այդ մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտի ղեկավարին: Հարկային տեսուչը պատասխանատվություն է կրում ժամանակավորապես վերցված կամ առգրավված փաստաթղթերի և իրերի պահպանման համար: Ստուգման ու ուսումնասիրության ընթացքում արգելվում է կապարակնքել պահեստները, շինությունները, դրամարկղները, էներգիայի աղբյուրները, սարքավորումները, սարքերը, եթե դրա հետևանքով խաթարվելու է ստուգվող օբյեկտի բնականոն աշխատանքը: Գույքագրման նպատակով և դրա ընթացքում կա-

պարակնքված պահեստների, դրամարկղերի և այլնի ամենօրյա հաշվառման ու շահագործման համար ստեղծվում է ժամանակավոր հանձնաժողով՝ ստուգվող տնտեսավարող սուբյեկտների և ստուգումն իրականացնող անձանց մասնակցությամբ: Ստուգման արդյունքները ձևակերպվում են ակտով: Հարկային մարմնում իրականացվող ներքին ստուգումների արդյունքները ձևակերպվում են ՀՀ հարկային տեսչության կողմից սահմանված կարգով: Ստուգման արդյունքներով բյուջեի նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ կամ այլ պարտադիր գործողություններ կատարելու անհրաժեշտություն չառաջանալու դեպքում, կարող է կազմվել համապատասխան տեղեկանք: Ուսումնասիրության մասին հարկային տեսուչի կողմից կազմվում է տեղեկանք կամ արձանագրություն:

Ստուգման ակտի (տեղեկանքի) մեջ արտացոլվում են հետևյալ տվյալները՝

1) ակտի հերթական համարը և ամսաթիվը, 2) հանձնարարագրի համարը և ամսաթիվը, 3) ակտի կազմման վայրը, 4) ակտի օրինակների քանակը, 5) ստուգման ժամկետը, 6) հարկային մարմնի անվանումը, հարկային տեսուչի (տեսուչների) ազգանուն, անուն, հայրանունը, 7) ստուգվող օբյեկտի լրիվ անվանումը, 8) ստուգմանը մասնակցած ստուգվող օբյեկտի ներկայացուցիչների անուն-հայրանուն-ազգանունները, պաշտոնները, 9) ստուգման նպատակը, ստուգման ընդգրկած ժամանակաշրջանը, 10) ստուգվող օբյեկտի ներկայացուցչի բացատրությունները (հատուկ կարծիք), 11) ստուգման արդյունքները:

Ստուգումներն ընդգրկում են նախորդ ստուգման ժամանակահատվածից մինչև տվյալ ստուգման ժամանակն ընկած հերթական հաշվետու ժամանակաշրջանը, եթե հարկային մարմնի հանձնարարականում այլ բան չի նշված: Հարկային տեսուչը, ստուգման արդյունքներն ակտում արտացոլելիս, պետք է պարզորոշ նկարագրի խախտումները, դրանց թույլ տրման պատճառները, խախտման կոնկրետ ժամանակը, համապատասխան փաստաթղթերը և պայմանները, դրանց վերացման (ուղղումների) համար անհրաժեշտ գործողությունները, համապատասխան պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը: Ելնելով ստուգման նպատակից, հարկային տեսուչի կողմից ակտում արձանագրվում են հարկերի և այլ պարտադիր վճարումների հաշվարկմանն ու վճարմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, դրամական գործառնություններին, հաշվետվություն-

ների և հաշվարկների կազմմանն ու ներկայացմանը, ինչպես նաև նախորդ ստուգումների, ուսումնասիրությունների նյութերին ու դրանց հանձնարարականներին վերաբերող այլ հարցեր:

Սամանած կարգով, հարկային տեսուչի կողմից իրականացված ստուգման նյութերը նախապես քննարկվում են հարկային մարմնում, եթե հանձնարարագրերով այլ բան չի նախատեսված: Ուսումնասիրության տեղեկանքում (արձանագրություններում) նշվում են հանձնարարագրի համարը, ամսաթիվը, տեղեկանքի կազմման վայրը և ստուգվող օբյեկտի լրիվ անվանումը, հարկային մարմնի անվանումը, հարկային տեսուչի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը, ուսումնասիրության նպատակը և արդյունքները, ինչպես նաև համապատասխան առաջարկությունները:

Հարկային տեսուչի (տեսուչների) կողմից կազմված ստուգման ակտը ստորագրվում է տեսուչի և ստուգվող օբյեկտի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ու գլխավոր հաշվապահի կողմից: Տեսուչների միջև ստուգման արդյունքների մասին տարածայնություններ լինելու դեպքում, նրանց կարծիքներն ակտում արձանագրվում են առանձին-առանձին: Ստուգվող օբյեկտի ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում, հարկային տեսուչն այդ մասին ակտում կատարում է համապատասխան գրառում: Ակտի առաջին օրինակը հանձնվում է ստուգվող օբյեկտին, երկրորդ օրինակը՝ հարկային մարմնին: Եթե ստուգվող օբյեկտը պետական (պետական բաժնեմաս ունեցող) կազմակերպություն է, ապա ակտի օրինակի պատճենն ուղարկվում է համապատասխան պետական վերադաս մարմնին:

Ուսումնասիրության տեղեկանքը (արձանագրությունը) ներկայացվում է ստուգվող օբյեկտին՝ ստորագրության համար: Ստուգվող օբյեկտի ղեկավարի խնդրանքով, նրան կարող է տրամադրվել տեղեկանքի օրինակ: Կազմակերպություններում ուսումնասիրության անցկացումը (և դրա արդյունքներով տեղեկանքի կազմումը) բյուջեի նկատմամբ պարտավորությունների կամ այլ պարտադիր գործողությունների անմիջականորեն կատարում չի կարող առաջացնել:

Հարկային տեսուչի կողմից կազմված ստուգման ակտում նշված փաստերի հետ համաձայն չլինելու դեպքում, ստուգվող օբյեկտի ղեկավարը և գլխավոր հաշվապահը պարտավոր են



գրավոր բացատրություն մերկայացնել հարկային տեսուչին՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու պատճառի մասին:

Ստուգվող օբյեկտի ղեկավարի կողմից հարկային տեսուչի գործողությունները կարող են բողոքարկվել այն հարկային մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է հարկային տեսուչը: Բողոքները քննության են առնվում, և դրանց վերաբերյալ հարկային մարմինը որոշում է ընդունում ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից երեսնօրյա ժամկետում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ որոշում չընդունելու դեպքում, բողոքում բերված պատճառաբանությունները համարվում են ընդունված:

Հարկային մարմնի կողմից երեսուն օրյա ժամկետում բողոքը մերժելու դեպքում, ստուգվող օբյեկտի ղեկավարն իրավունք ունի բողոքարկել ՀՀ հարկային տեսչություն կամ դատարան՝ այդ որոշման կրկնօրինակը ստանալու պահից՝ երեսուն օրվա ընթացքում:

Ստուգվող օբյեկտին պատճառված վնասը, այդ թվում նաև բաց թողնված օգուտը, ենթակա են հատուցման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

### § 3. Հաշվապահական հաշվառման իրավական կարգավորումը

ՀՀ-ում հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու միասնական հիմունքները, հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերությունները կարգավորվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ 2003 թ. դեկտեմբերի 26-ի օրենքով:

Հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնում է Կառավարության լիազորված պետական մարմինը՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, իսկ բանկերում ՀՀ կետրոնական բանկը՝ կառավարության լիազորված պետական մարմնի հետ համատեղ:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինն իր իրավասության սահմաններում հաստատում է կազմակերպությունների համար պարտադիր կատարման ենթակա՝

1. հաշվապահական հաշվառման ստանդարտները,
2. հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները.

3. հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների կատարման, հաշվապահական հաշվառման քաղաքականության, արտադրական ծախսումների (ինքնարժեքի) վերաբերյալ մեթոդական ցուցումներ, հրահանգներ:

Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

Բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և կազմակերպության իրականացրած գործառնությունների համակարգված ֆինանսական ներկայացումն են:

Ֆինանսական հաշվետվությունների տարրերն են՝ կազմակերպության ակտիվները, սեփական կապիտալը, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը:

Ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովելն է, որը նրանց օգտակար է տնտեսական որոշումներ կայացնելու համար:

Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը (այսուհետ կազմակերպության ղեկավար) պատասխանատվություն են կրում հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար:

Հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել՝

- կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով.
- կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով.

- հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ ֆիզիկական անձանց միջոցով:

- անձամբ:

Կազմակերպության ղեկավարը պարտավոր է՝

ա) սահմանել կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջությունը:

բ) ապահովել հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառում վարելու դեպքում այդ կազմակերպության լիազորված անձը, գլխավոր հաշվապահը հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու համար:

Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը, կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար:

Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարածայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

Չրապարակվող ֆինանսական հաշվետվություններն ստորագրելու իրավունք ունի հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից սահմանված կարգով որակավորված գլխավոր հաշվապահը:

Չրապարակվող ֆինանսական հաշվետվություններն ստորագրելու իրավունք ունի որակավորված գլխավոր հաշվապահը,

ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտի որակավորում ունեցող ֆիզիկական անձը: Այդ նպատակով գլխավոր հաշվապահի որակավորումն իրականացնում է կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը, կամ նրա կողմից սահմանված չափանիշների համաձայն ընտրված մասնագիտական կառույցը:

Հաշվապահական հաշվառումը վարվում է դրամով, կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան: Այն անընդհատ բնույթ ունի և իրականացվում է կազմակերպության պետական գրացման պահից մինչև նրա վերակազմավորումը կամ լուծարումը: Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է ժամանակին գրանցվեն հաշվապահական հաշվառման հաշվվետրում:

Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարման փաստը: Դրանք կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են դրանք ստորագրող անձինք:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում: Տնտեսական գործառնությունները գրանցամատյաններում գրանցվում են ժամանակագրական կարգով:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը կարող է սահմանել գրանցամատյանների օրինակելի կամ պարտադիր կիրառման ենթակա ձևեր:

Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով յուրաքանչյուր կազմակերպություն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Այն պարտադիր է հետևյալ դեպքերում՝

1. տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ.

2. կազմակերպության վերակազմավորման և լուծարման.

3. տարրերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների.

4. գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման.

5. նյութական պատասխանատու անձի փոփոխման:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար կազմված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք: Դրան կարելի է ծանոթանալ միայն կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

Առևտրային գաղտնիքին ծանոթացած անձինք և կազմակերպությունները պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը:

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերը կազմակերպության կողմից պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի:

#### §4 ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ-ում աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով: Աուդիտորական գործունեությունը ֆինանսական հաշվետվությունների և (կամ) ֆինանսական հաշվետվություններ ներառող

փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության աուդիտի և (կամ) աուդիտին հարակից ծառայությունների (աուդիտորական դիտարկումն, համաձայնեցված ընթացակարգերը, (կոմպիլացիա) իրականացումն է:

Աուդիտը և աուդիտորական դիտարկումն աուդիտ իրականացնող անձին հնարավորություն են ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու իր հավաստիացումը, իսկ համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլացիան նման բան չեն նախատեսում:

Աուդիտորական ծառայությունն իրականացվում է լիցենզիայի հիման վրա:

Աուդիտը աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգումն է, որի արդյունքում տրամադրվում է աուդիտորական եզրակացություն:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին կարծիքն արտահայտելու այն մասին, թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով կազմված են ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

Աուդիտ իրականացնելիս կազմակերպությանը հնարավորություն է ընձեռնվում որպես վերստուգիչ ընտրել անկախ, որևէ գերատեսչության հետ կապ չունեցող մասնագետի, իսկ պետությունը հնարավորություն է ստանում ապահովել ֆինանսական հաշվետվության և հարկման հավաստիության և ճշտության վերահսկողությունը, առանց պետական բյուջեի միջոցների ծախսման: Ընդ որում պետք է նշել, որ այն չի փոխարինում ֆինանսատնտեսական գործունեության պետական վերահսկողությանը<sup>1</sup>:

Բացի վերահսկիչ ստուգումներից, աուդիտ իրականացնողները կարող են խորհրդատվական ծառայություններ մատուցել հարկերը հաշվարկելու, հաշվառում և հաշվապահական հաշվառումներ իրականացնելու ուղղությամբ:

Աուդիտորական ստուգումները լինում են *կամավոր* և *պարտադիր*: ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 58-րդ հոդվածը նախատեսում է բանկի պարտադիր աու-

<sup>1</sup> Стен Финансовое право. М., 1996, էջ 68-69:

դիտային ստուգում: ԴՅ Կենտրոնական բանկը կարող է պարտադրել առևտրային բանկին վեց ամսվա ընթացքում հրավիրել աուդիտային գործունեություն իրականացնող անկախ կազմակերպություն և հրապարակել նրա եզրակացությունը: Այն ԴՅ Կենտրոնական բանկին է ներկայացվում բանկերի տարեկան հաշվետվությունները ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

Աուդիտային գործունեությունը, կապված այն բանից, թե ով է իրականացնում, լինում է *ներքին* և *արտաքին*:

Ներքին աուդիտն իրականացվում է ներկազմակերպական աուդիտային ծառայության կողմից: ԴՅ “Բանկերի և բանկային գործունեության մասին” օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, առևտրային բանկն ունի վերստուգիչ հանձնաժողով, որը ներքին աուդիտ իրականացնող մարմին է: Այն կազմված է առնվազն երեք անդամից, որոնք նշանակվում են բանկի մասնակիցների (հիմնադիրների) ընդհանուր ժողովի կողմից: Բանկի խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Վերստուգիչ հանձնաժողովը.

ա) բանկում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ;

բ) բանկի խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետներում կատարելու մասին;

գ) եզրակացություններ է տալիս բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ;

դ) իրականացնում է “Բաժնետիրական ընկերությունների մասին” ԴՅ օրենքով և բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել բանկի խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամների պահանջով:

Ներքին աուդիտը նման է գերատեսչական վերահսկողությանը: Տարբերությունը նրանում է, որ աուդիտային վերահսկողությունը չի իրականացվում գլխավոր հաշվապահի կամ հաշ-

վապահության կողմից, այլ հատուկ մասնագիտական վերահսկողության մարմնի կողմից, որի ղեկավարը ենթարկվում է բանկի կառավարչին կամ ընդհանուր ժողովին: Ներքին աուդիտի հարաբերական ինքնուրույնությունը պայմանավորված է նրանով, որ

ա) վերստուգիչ հանձնաժողովը նշանակվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից,

բ) ներքին աուդիտի ծառայության աշխատանքների ծավալը և ֆինանսավորումը չպետք է հաստատվեն այն ստորաբաժանման աշխատակիցների կողմից, որի գործունեությունը պետք է ստուգի աուդիտորը:

Արտաքին աուդիտն իրականացնում են առանձին աուդիտորներ կամ աուդիտորական կազմակերպություններ՝ պայմանագրերի հիման վրա:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ 5

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ:  
ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ:  
ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՐԳԸ

### § 1. Պետական և տեղական բյուջեի դերը և նշանակությունը

Պետական և տեղական բյուջեները ՀՀ ֆինանսական համակարգի կենտրոնական մասն են կազմում: Դրանց միջոցով ստեղծվում են պետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների դրամական ֆոնդերը, որոնք ապահովում են նրանց կողմից իրենց խնդիրների կատարումը: Բյուջեները պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման ֆինանսական հիմքն են կազմում: Պետական և համայնքի բյուջեները՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են: ՀՀ բյուջետային համակարգը բաղկացած է երկու մակարդակից՝ պետական և համայնքների բյուջեներից: Այդ բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա: ՀՀ ունի բյուջետային համակարգը հիմնվում է. 1. բյուջեների նախագծերը կազմելու, 2. բյուջեների եկամուտների (մուտքերի) և ծախսերի բյուջետային դասակարգման, 3. հաշվառման, 4. հաշվետվություններ տալու 5. բյուջեների կատարման ընդհանուր սկզբունքների վրա: ՀՀ պետական և համայնքների բյուջեները և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն կազմում են ՀՀ համախմբված բյուջեն: Բյուջետային համակարգի միասնականությունն ապահովվում է ընդհանուր իրավական հիմքով, բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքներով, բյուջետային դասակարգմամբ, բյուջետային հաշվառման հաշվետվության և բյուջեների կատարման միասնական մեթոդաբանությամբ ու դրամական համակարգով: Բյուջեների ինքնուրույնությունն ապահովվում է օրենքով ամ-

րագրված եկամտի սեփական աղբյուրների առկայությամբ և այդ բյուջեները հաստատող մարմինների կողմից իրենց լիազորությունների սահմաններում բյուջետային ծախսերի ուղղությունները որոշելու իրավունքով: Բյուջեի հիմնական հատկանիշներն են՝ 1) այն ծառայում է որպես դրամական միջոցների համապետական ֆոնդ, որն ստեղծվում է պետական և համայնքային ծախսերի ծածկման համար: Բյուջեն դրամական կենտրոնացված միջոցների ֆոնդի ստեղծման և օգտագործման ծրագիրն է:

Այն նախահաշիվ է՝ պետության, համայնքի եկամուտների և ծախսերի ցանկ: Բյուջեի եկամուտները և ծախսերը, միմյանց հետ համաձայնեցված են ինչպես ըստ իրենց ծավալի, այնպես էլ ըստ ստացման և օգտագործման ժամկետների: Բյուջեի, երկրորդ, և, կարևոր հատկանիշն այն է, որ դա հիմնական ֆինանսական ծրագիր է, քանի որ դրանից բացի առկա են նաև ֆինանսական այլ ծրագրեր (կազմակերպությունների ֆինանսական ծրագրերը, նախահաշիվները, հաշվեկշիռը): Երրորդ, եթե վերը նշված հատկանիշները բյուջեն բնորոշում են նրա տնտեսական բովանդակության տեսակետից, ապա բյուջեի իրավաբանական բնույթը նշանակում է, որ այն իրավաբանական ձևակերպում է ստանում օրենքի տեսքով և օրենքով սահմանված կարգով: Չորրորդ, բյուջեն նաև քաղաքական փաստաթուղթ է: Մի շարք դեպքերում այն քաղաքական պայքարի արդյունք է (հատկապես բազմակուսակցական խորհրդարանում, երբ առկա է ուժեղ ընդդիմություն):

### §2. Բյուջետային իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը

Բյուջեն (պետական և համայնքի) ֆինանսական իրավունքի կենտրոնական ինստիտուտն է: Նրան հարում և նրա հետ անմիջականորեն շփվում են ֆինանսաիրավական մնացած բոլոր ինստիտուտները: Բյուջեի կազմավորումն իրականացվում է հարկային իրավունքի և բոլոր այն նորմերի մասնակցությամբ, որոնք կարգավորում են պետական եկամուտները, իսկ նրա օգտագործումն իրականացվում այն նորմերի հաշվի առնմամբ, որոնք որոշում են բյուջետային ֆինանսավորման կարգը: Այնպես որ լայն առումով բյուջետային իրավունքը ներառում է բոլոր այն նորմերը և ինստիտուտները, որոնք կարգավորում են պետական եկամուտները և ծախսերը:

Հարկային իրավունքը և ուրիշ այլ ինստիտուտներ, որոնք կարգավորում են պետական եկամուտները, բյուջետային իրավունքի կողմից ներառվում են ոչ թե ամբողջապես, այլ այնքանով, որքանով նրանք որոշում են բյուջեի եկամուտների բնույթը, կազմը, ծավալը և նրանց մուտքագրման կարգը: Ինչ վերաբերում է այն նորմերին, որոնք կարգավորում են հարկերի սահմանումը, հարկատուների շրջանակի որոշումը, հարկերի չափերը, դրանց հաշվարկման կարգը, վճարման ժամկետները և այլն, ապա դրանք անշուշտ չեն մտնում բյուջետային իրավունքի մեջ: Նման կապ էլ առկա է բյուջետային իրավունքի և պետական ծախսերի ինստիտուտի միջև: Դա ներառում է միայն այն նորմերը, որոնք սահմանում են բյուջեի ծախսերի ուղղությունները, դրանց սահմանազատումը բյուջետային համակարգի տարբեր օղակների միջև: Բյուջետային հատկացումների անմիջական օգտագործման կարգավորումը մտնում է այլ իրավական ինստիտուտների ոլորտը: Այսպիսով, ֆինանսական իրավունքի ներսում բյուջետային իրավունքը հարաբերակցվում և միահյուսվում է միայն բյուջեի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ինստիտուտների հետ: Բնութագրելով ՀՀ բյուջետային իրավունքի առարկան, անհրաժեշտ է նշել, որ այն կարգավորում է միայն պետական և համայնքային մարմինների միջև ծագող հարաբերությունները և որևէ իրավունք կամ պարտականություն չի սահմանում առանձին քաղաքացիների համար: Բյուջետային իրավունքի նորմերը բաժանվում են նյութականի և պրոցեսուալի (գործընթացային): Առաջինները որոշում են բյուջեի կառուցվածքը, եկամուտների կազմը, պետական բյուջեի ծախսերի ուղղվածությունը, բյուջետային համակարգի տարբեր օղակների միջև բաշխումը: Երկրորդները կարգավորում են բյուջեի կազման, քննարկման, հաստատման ինչպես նաև դրա կատարման մասին հաշվետվության հաստատման, նաև հանրապետական և տեղական բյուջեների իրացման կարգը: Նյութական նորմերը նպատակ ունեն ներգործել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների վարքագծի վրա, կարգավորել նրանց միջև ծագող հարաբերությունները: Պրոցեսուալ նորմերը չունեն ինքնուրույն նշանակություն: Նրանք համաձայնեցված են ինչպես ըստ իրենց ծավալի, այնպես էլ ըստ ստացման և օգտագործման ժամկետների: Նրանք ծառայական դեր են խաղում նյութական իրավունքի նորմերի համար և դրանց իրականացման ձևը և միջոցն են: Բոլոր պրոցեսուալ նորմերն ունեն ընթա-

ցակարգային բնույթ: Դրանք սահմանում են համապատասխան պետական մարմինների գործունեության իրավական ձևերը և կարգը: Բոլոր դեպքերում դրանք երբեք հիմնական նպատակներ են հետապնդում, լուծում երբեք փոխկապակցված հարցեր: Առաջին, կազմակերպում են համապատասխան մարմինների աշխատանքը, դրանում ներդնում են առավել ռացիոնալ ձևեր և ապահովում են առավելագույն արդյունավետություն, ժամանակի և միջոցների նվազագույն ծախսումներով: Երկրորդ, ապահովում են պրոցեսի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ստեղծում դրանց ապահովման երաշխիքներ: Երրորդ, ամրագրում են այնպիսի կարգ և աշխատանքի այնպիսի ձևեր, որոնք ապահովում են քննարկվող հարցերի բազմակողմանի, խորը և հետևողական վերլուծությունը և դրանց ճիշտ լուծումը: Վերոհիշյալ նպատակներին համապատասխան բոլոր պրոցեսուալ նորմերը՝ ա) սահմանում են այս կամ այն գործունեության մասնակիցների կազմը բ) մատնանշում են անհրաժեշտ գործողությունների տեսակները և դրանց կատարման հերթականությունը: գ) նախատեսում են յուրաքանչյուր գործողության կազմակերպման ձևը, դ) սահմանում են գործունեության մասնակիցների իրավունքները և պարտականությունները ե) սահմանում է որոշումների ընդունման կարգը: Այս ամենը բնութագրում է բյուջետային գործընթացի նորմերը և դրանց տարբերությունը նյութական նորմերից: Բյուջետային իրավունքի համար հիմնարար նշանակություն ունեն, այն նորմերը, որոնք սահմանում են բյուջեի կառուցվածքը: Դրանք տալիս են այն ելակետային դրույթները, որոնք կարևոր նշանակություն ունեն բյուջետային իրավունքի բոլոր ինստիտուտների համար: Բյուջետային հարաբերությունների կարգավորումը՝ բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում իրականացվող գործունեությունն է:

Բյուջետային իրավունքի առարկան կազմում են ֆինանսական իրավունքի նորմերով կարգավորվող բյուջետային համակարգում առաջացող հարաբերությունները:

Բյուջետային իրավունքը կարգավորում է հարաբերությունների տարբեր խմբեր, որոնք ծագում են՝

1. Բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման առնչությամբ.

2. Բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջետային ծախսերի սահմանազատման ժամանակ.

3. բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների և լրացումների կատարման ընթացքում.

4. բյուջեի կազմավորման և կատարման առնչությամբ:

Բյուջետային հարաբերությունների կարգավորումն իրավասու մարմինների կողմից օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմաններում իրականացվող գործունեությունն է: Բյուջետային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված՝ 1. բյուջետային համակարգի միասնականության, 2. բյուջետային համակարգի մեջ մտող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատման. 3. ինքնուրույնության, 4. բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության, 5. հաշվեկշռվածության, 6. բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածության, 7. բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության, 8. հրապարկայնության, 9. բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության, 10. բյուջեների իրատեսության սկզբունքներով:

1. Բյուջետային համակարգի միասնականության սկզբունքը նշանակում է իրավական հիմքի, դրամական համակարգի, բյուջետային փաստաթղթերի ձևերի, բյուջետային դասակարգման, բյուջետային գործընթացի սկզբունքների, բյուջետային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցների միասնություն, ինչպես նաև բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների ելքերի ֆինանսավորման և բյուջեների միջոցների բյուջետային հաշվառման վարման միասնական կարգ:

2. բյուջետային համակարգի մեջ մտող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատման սկզբունքը նշանակում է պետական և համայնքների բյուջեներին բյուջետային մուտքերի համապատասխան տեսակների, ինչպես նաև բյուջեներից ելքերի իրականացման գծով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների ամրագրում:

3. Բյուջեների ինքնուրույնությունն ապահովվում է օրենքով ամրագրված սեփական աղբյուրների առկայությամբ և այդ բյու-

ջեները հաստատող մարմինների կողմից իրենց լիազորությունների սահմաններում բյուջետային ծախսերի ուղղությունները որոշելու իրավունքով:

4. բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեների մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեներում: Պետական և համայնքների բյուջեների բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին:

5. հաշվեկշռվածության սկզբունքը նշանակում է, որ բյուջեով նախատեսված ելքերի ծավալը չպետք է գերազանցի մուտքերի ծավալին:

6. բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածության սկզբունքը նշանակում է, որ բյուջեի բոլոր ելքերը պետք է ծածկվեն բյուջեի մուտքերով: Մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ, բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի, կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում դրանց մուտքերի:

7. բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է բյուջեների կազման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

8. հրապարակայնության սկզբունքը կայանում է նրանում, որ բյուջետային գործընթացը բաց է հասարակության բոլոր անդամների համար, այն լայնորեն մեկնաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:

9. բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնության նշանակում է, որ բյուջետային միջոցներն օրենսդրությամբ համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:

10. բյուջեի իրատեսության սկզբունքը նշանակում է համապատասխան տարածքի զարգացման կանխատեսման և դրա հիման վրա բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման իրատեսություն:

## ԳԼՈՒԽ 6

### ՀՀ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

#### § 1. Պետական բյուջեի եկամուտները

Ցանկացած բյուջե բաղկացած է երկու ինքնուրույն մասերից՝ մուտքերից և ելքերից, որոնք հաստատվում են առանձին առանձին: Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները (ընթացիկ ու կապիտալի գործառնություններից եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները), բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և այլ ներգրավված միջոցները: Բյուջեի եկամուտները, բյուջեի մուտքերի հիմնական մասն են: Դրանք իրենցից ներկայացնում են պետական եկամուտների որոշակի մաս և ունեն կենտրոնացված բնույթ, քանի որ դրվում են պետության ամբողջական տնօրինության ներքո և օգտագործվում են նրա խնդիրների ու գործառնությունների իրականացման համար: Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով և օրենսդրությամբ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են: Բյուջեի եկամուտները ձևավորվում են տարբեր աղբյուրների հաշվին: Բյուջեի մուտքերի մասը համալրվում է բյուջեի դրամական մուտքերի հաշվին: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» 1997 թ. հուլիսի 21 օրենքի համաձայն, դրանք ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, փոխառու և ներգրավված այլ միջոցներ:

Բյուջեի մուտքերը կարելի է բաժանել ներքին և արտաքին մուտքերի: Ներքին մուտքերի թվին են դասվում մուտքերի բոլոր այն աղբյուրները, որոնք կապված են ներքին նյութական արտադրության և սոցիալական սպասարկման ոլորտի հետ:

Արտաքին աղբյուրները, նախ և առաջ, այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրվող փոխառու միջոցներն են: Ըստ իրենց կազմի բյուջեի եկամուտները լինում են ամրագրված և կարգավորվող: Ամրագրված եկամուտներն այն եկամուտներն են, որոնք ամրագրված են բաժնեմասով կամ տոկոսադրույքով, մշտապես կամ երկարաժամկետ հիմքի վրա սահմանված կարգով մուտք են արվում համապատասխան



բյուջե: Այսպես, օրինակ, ներկայումս հողի հարկի և գույքահարկի 100%, մուտքագրվում է համայնքի բյուջե: Կարգավորվող եկամուտները այն եկամուտի աղբյուրներն են, որոնք բյուջեների միջև բաշխվում են ամեն տարի՝ բյուջեն հաստատելիս և միայն նրա գործողության ժամկետի ընթացքում: Որպես կանոն, սկզբում պետք է հաստատվի բյուջեի եկամուտների մասը, ապա միայն դրա հիման վրա էլ՝ նրա ծախսերի մասը: Բյուջեի երկու մասերը պետք է հավասարակշռեն միմյանց: Սակայն մի շարք դեպքերում ելքերը գերազանցում են մուտքերին: Այս դեպքում գործ ունենք բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) հետ: Այդ պակասուրդը ծածկելու համար բացի կարգավորող եկամուտներից, օգտագործվում են նաև այլ միջոցներ: Դրանք են լրավճարները (դոտացիաներ), սուբվենցիաները: Լրավճարն այն գումարն է, որը պետական բյուջեից տրվում է տեղական բյուջեներին՝ իրենց բյուջետային պակասուրդը ծածկելու համար: Սուբվենցիան այն գումարն է, որը որոշակի ժամկետով և կոնկրետ նպատակների համար վերադաս բյուջեից տրվում է տեղական բյուջեին: Սուբվենցիաները լինում են երկու տեսակի՝ ընթացիկ և ներդրումային:

Պետական վարկը պետական եկամուտների մեջ դրամական միջոցների ներգրավման գործընթացն է, որն ի տարբերություն լրավճարների և սուբվենցիաների, իրականացվում է վերադարձելիության, հատուցանելիության հիման վրա: Պետական վարկը եկամտի լրացուցիչ տեսակ է: Ըստ էության, այն պետության կողմից կատարվող փոխառություն է և չի համարվում վերջնական եկամուտ:

Փոխառությունների միջոցով պետությունն իրեն ապահովում է դրամական միջոցներով ոչ թե հարկադրանքի, այլ իր վրա որոշակի պարտավորություններ վերցնելու միջոցով: Պետական վարկի բնագավառում ծագող հարաբերությունները համալիր բնույթ են կրում: Դրանք կարգավորվում են թե ֆինասսահրավական և թե քաղաքացիաիրավական նորմերով:

Ֆինասսահրավական նորմերով կարգավորվում են պետական վարկի տնօրինման հարաբերությունները, իսկ քաղաքացիաիրավական նորմերով՝ արժեթղթերի ձեռք բերման և օգտագործման հարաբերությունները: Պետական վարկի առաջացման աղբյուրներն են պարտատոմսերը, կառավարության մուրհակները եվ այլն: Պետական վարկը կազմում է պետական ներքին պարտքի հիմնական մասը:

Պետական ներքին պարտքի մյուս մասը կազմում են բանկային վարկերը (փոխառությունները): Սա վերաբերում է հանրապետության ռեզիդենտ եվ ոչ ռեզիդենտ բանկերի վարկերին: Բյուջետային վարկերը վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման և վճարովիության սկզբունքով պետական բյուջեից համայնքներին և Երևան քաղաքին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դրամական տեսքով տրվող միջոցներն են: Բյուջետային փոխառությունները վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման սկզբունքով առանց վճարովիության սկզբունքի պետական բյուջեից համայնքներին և Երևան քաղաքին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրվող դրամական միջոցներն են: Համայնքներին բյուջետային փոխառությունները տրվում են մինչև 6 ամսից ոչ ավելի տևողությամբ և նշված փոխառությունների կողմից ենթակա են վերադարձման նույն բյուջետային տարում: Պարտադիր ապահովագրության բյուջեին պետական բյուջեից կարող են տրամադրվել փոխառություններ վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման սկզբունքով, առանց վճարովիության սկզբունքի:

Բյուջետային վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը: Պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների հաշվին: Պետական բյուջեից դեֆիցիտի չափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

Բյուջետային տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չի կարող գերազանցել տվյալ տարվա համախառն ներքին արդյունքի 10 տոկոսը: Տվյալ բյուջետային տարվա ընթացքում պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

Բյուջետային պակասուրդից բացի, բացառիկ դեպքերում կարող է առաջանալ նաև բյուջետային հավելուրդ: Դա բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումն է: Երբեմն այս կամ այն պատճառով կարող է առաջանալ բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ: Տվյալ տարվա բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, նախորդ տարվա բյուջեների կատարման ընթացքում իրականացված ելքերի

նկատմամբ մուտքերի գերազանցումն է, որն առաջանում է ա) հավելուրդով հաստատված բյուջեների նկատմամբ բ) բյուջեներով սահմանված մուտքերի կատարման համեմատ տարեկան մուտքերի գերակատարմամբ: գ) բյուջեներով սահմանված մուտքերի կատարման համեմատ տարեկան ծախսերի թերակատարմամբ: Բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը տվյալ տարվա համապատասխան բյուջեի մուտքն է:

Պետական բյուջեի եկամուտների աղբյուրները դասակարգվում են 1. հարկային եկամուտներ 2. պետական տուրքեր 3. ոչ հարկային այլ եկամուտներ 4. եկամուտներ՝ կապիտալի գործառնություններից 5. մուտքեր՝ պաշտոնական տրանսֆերտներից: Հարկային եկամուտները ներառում են 1. ավելացված արժեքի հարկը 2. ակցիզային հարկը 3. շահույթհարկ 4. եկամտահարկը 85 տոկոսի չափով, 5. հողի հարկը 5 տոկոսի չափով, 6. գույքահարկ 5 տոկոսի չափով 7. հաստատագրված վճարները 8 պարզեցված հարկ: Տուրքերը ներառում են 1. մաքսային տուրքը 2. պետական տուրքը, բացառությամբ համայնքների բյուջեներ մուտքագրվող պետական տուրքի տեսակների: 8) Հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տուրքերը՝ բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տուրքերի: Ոչ հարկային եկամուտներն են 1) ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքը, 2) բանկերում և ֆինանսական հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և ղեպագիտներից ստացվող տոկոսավճարները, պետական մարմինների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով գործառնություններից ստացվող եկամուտները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, 3) պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարները, 4) պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսները), 5) պետության սեփականություն համարվող, ինչպես նաև տիրագուրկ և ժառանգության իրավունքով, ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած

հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարացումից եկամուտները, 6) պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող եկամուտները, 7) իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը, 8) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները: Կապիտալ գործառնություններից եկամուտներն են 1) պետությանը պատկանող հիմնական միջոցների (ֆոնդերի) մուտքերը, այդ թվում լուծարված պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց լուծարումից հետո մնացած գույքի օտարումից պետական մասնակցության չափին համապատասխան մուտքերը, 2) պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի մուտքերը, 3) պետության պահուստներում պահվող ասպանքանյութական արժեքների իրացումից մուտքերը, 4) պետական սեփականություն համարվող հողի և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը: 5) եկամտի ստացման կամ պետական բյուջեի դրամական միջոցների կառավարման նպատակով պետության կողմից երկրորդային շուկայում գնված արժեթղթերի օտարումից եկամուտները:

Պաշտոնական տրանսֆերտներն են 1) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրված տրանսֆերտները, 2) այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները:

## § 2. Պետական բյուջեի գլխերը

Բյուջեի ելքերը ներառում են բյուջետային ծախսերը (ընթացիկ և կապիտալ ծախսեր, ինչպես նաև բյուջետային վարկերի և փոխատվությունների տրամադրման ծախսեր) և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

Բյուջետային ծախսերը պետության և տեղական ինքնակառավարման խնդիրների և գործառնությունների ֆինանսական ապահովմանն ուղղվող դրամական միջոցներն են:

Բյուջեների ծախսերը բաժանվում են կապիտալ և ընթացիկ ծախսերի:

Կապիտալ ծախսերը ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատես-

վող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռք բերման կամ դրանց արժեքի ավելացմանը: Բյուջեների միջոցների հաշվին կապիտալ ծախսերի իրականացման կարգը սահմանում է կառավարությունը: Այդ կարգով սահմանվում են՝ 1) ծախսերի կատարման իրավական հիմքը պետական կապիտալ ներդրումների ծրագրերի, նպատակային ծրագրերի, գործադիր իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների առկայությունը 2) ծախսերի կատարման հիմնավորման տեխնիկա-տնտեսական չափանիշները, նախագծման ախտահաշվային փաստաթղթերը 3) ծախսերի կատարման փուլերը և ժամկետները 4) օբյեկտների ցանկի ներկայացման, քննարկման և հաստատման կարգը 5) բյուջեների նախագծերում և բյուջեների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ ծախսերի կատարման այլ դրույթներ:

Ընթացիկ ծախսերը ներառնում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

Պետական ծախսերի շարքում կարևոր տեղ են զբաղեցնում բյուջետային երաշխավորագիրը (երաշխիքը), որոնք կազմվում են առանձին փաստաթղթի ձևով և ստորագրվում է միայն պետական լիազորված մարմնի ղեկավարի կողմից: Բյուջետային երաշխավորագիրը պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխավորագիրը ստացող անձի նկատմամբ պարտքային պարտավորությունների պատշաճ կատարում պետական բյուջեի միջոցների հաշվին: Բյուջետային երաշխավորագրերի (երաշխիքների) տրամադրման դիմաց պետական բյուջեի օգտին գանձվում է վճար: Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեով նախատեսված պահուստների ֆոնդի միջոցների հաշվին և արտացոլվում են առանձին տողով: Այդ երաշխավորագրերի տրամադրման կարգը - սահմանում է կառավարությունը: Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը: Նշված կարգով հաշվարկված չափաքանակը յուրաքանչյուր հաջորդ տարի կարող է ավելացվել մինչև 5 տոկոսով բացառությամբ նախորդ տարվա նկատմամբ

հարկային եկամուտների նվազման դեպքերի: Բյուջեի պակասուրդի դեպքում առաջին հերթին ֆինանսավորվում են բյուջեի ընթացիկ ծախսերը: «ՀՀ բյուջետային համակարգի» մասին օրենքում տրված են պետական և համայնքային բյուջեների եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները:

Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերը և ծախսերը՝ հետևյալ հիմնական ուղղություններով՝ 1) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ, 2) պաշտպանություն, 3) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, 4) կրթություն և գիտություն, 5) առողջապահություն, 6) սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն, 7) բնակարանային, կոմունալ տնտեսություն, 8) մշակույթ, սպորտ և կրոն, 9) վառելիքաէներգետիկ համալիր, 10) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն, 11) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ, վառելիքի) վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն, 12) տրանսպորտ, կապ, ճանապարհային տնտեսություն, 13) պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող այլ ծախսեր, որոնց շարքին դասվում են նաև 1) կառավարության պահուստային ֆոնդ, 2) համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ: 14) համայնքների բյուջեներին պատվիրակված լիազորությունների համար, տրամադրվող հատկացումներ, համայնքների կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ:

Պետական բյուջեի ծախսերում կարող են առանձին տողով նախատեսվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հարկային տեսչության և ՀՀ մաքսային պետական կոմիտեի աշխատակիցների խախուսման նպատակային ֆոնդեր, որոնց ձևավորման և օգտագործման կարգը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով:

### ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդը

Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը տվյալ տարվա պետական բյուջեում կանխա տեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուրն է: Պետական բյուջեի ծախսային մասում կառավարության պահուստային ֆոնդը ներկայացվում է առանձին հոդվածով: Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա պետական բյուջեի մասին՝ օրենքով նախատեսված ծախսերի 10 տոկոսը: Այս ֆոնդի միջոցներից ծախսերը կատարվում են կառավարության որոշումների հիման վրա:

### § 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՀ Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագիծը ներառում է՝

- ա) պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բացատրագրի բաղկացուցիչ մաս կազմող արտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի բացատրագիրը.
- բ) պետական բյուջեի մասին օրենքի բաղկացուցիչ մաս կազմող պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին վերաբերող առանձին հավելվածը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագծի բացատրագիրը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի՝ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին վերաբերող մասը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերի աղբյուրներն՝

- 1) պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները.
- 2) ոչ հարկային եկամուտները.

ա) քաղաքացիներից և իրավաբանական անձանցից (բացառությամբ պետության, համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով ստացվող միջոցներ.

բ) պարտադիր սոցիալական ապահովագրության բնագավառում օրենսդրությունը խախտելու համար տուգանքները և տույժերը.

գ) օրենքով և իրավական այլ ակտերով մուտքագրվող այլ եկամուտները.

3) կապիտալի գործառնություններից եկամուտները.

4) պաշտոնական տրանսֆերտները.

ա) պետական և համայնքների բյուջեներից տրամադրվող պաշտոնական տրանսֆերտները.

բ) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող պաշտոնական տրանսֆերտները.

5) դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ (րենքով սահմանված կարգով ներգրավվող փոխառու միջոցները և բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեից ֆինանսավորվում են օրենսդրությամբ պարտադիր սոցիալական ապահովագրություն իրականացնող մարմիններին վերապահված գործառնությունները:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագի մշակումն ու քննարկումը կազմակերպում է կառավարություն՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ և հիշյալ օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում:

Նշված բյուջեի նախագիծը կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի կազմում, քանի որ այն հանդիսանում է պետական բյուջեի բաղկացուցիչ մասը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարվումն իրականացվում է գանձապետական համակարգի միջոցով:

Ազգային ժողովի հաստատած պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության առաջարկությամբ օրենսդրական

նախաձեռնության կարգով: Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի: Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեում այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները կամ ավելացնում են նրա ծախսերը, Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ և ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Եթե պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել, ապա մինչև այդ օրենքի ընդունումը արտադիր սոցիալական ապահովագրության բյուջեից շարունակվում է օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների և նպաստների ֆինանսավորումը՝ ամբողջ ծավալով:

Բյուջեից կարող են չֆինանսավորվել այն ծախսերը, որոնք չեն նախատեսված պարտադիր սոցիալական ապահովագրության տվյալ տարվա բյուջե նախագծում:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման ընթացքում կառավարությունը կարող է տվյալ պետական բյուջեի մասին օրենքով հիմնադրամի հաստատված ծախսերի ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում վերաբաշխել տվյալ օրենքով պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեով սահմանված ծախսային ծրագրերի միջև՝ դրանց գծով օրենքով հաստատված հատկացումների գումարը (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ):

Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրվա ընթացքում, կառավարությունը սահմանում է պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները: Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է:

Չի թույլատրվում պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե միջոցների ուղղումը պետական բյուջե:

Կառավարությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից 40 օրվա ընթացքում Ազգային ժողով է ներկայացնում պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագիծը կազմելու, քննարկելու, կատարելու և դա նկատ-

մամբ վերահսկողության հրապարակայնություն ապահովելու համար՝

ա) պետական բյուջեի մասին նախագիծն Ազգային ժողով ներկայացնելուց հետո կառավարությունը եռօրյա ժամկետում պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագիծը հրապարակում է մամուլում:

բ) Ազգային ժողովում պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի նախագիծի քննարկումը լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:

գ) պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները հրապարակվում են կառավարության կողմից հաստատվելուց հետո մեկամսյա ընթացքում:

դ) կառավարությունը բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո 45 օրվա ընթացքում, հրապարակում է տեղեկատվություն պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եռամսյակային կատարման մասին:

## ԳԼՈՒԽ 7

### ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ

Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու, դրանց կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

ՀՀում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվար 1-ից և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսավա ընթացքում կառավարության որոշմամբ կարող է շարունակվել նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը: Սա կոչվում է եզրափակիչ շրջանառություն: Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործառնացքը սկսվում է բյուջեների նախագիծը կազմելու ժամանակաշրջանից և ավարտվում է տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման մասին հաշվետվությունը հաստատելու օրը (բյուջետային շրջան):

Բյուջետային գործընթացը բաժանվում է փուլերի 1) բյուջեի նախագծի կազմում 2) բյուջեի նախագծի քննարկում 3) բյուջեի հաստատում (ընդունում) 4) բյուջեի կատարում 5) բյուջեի կատարման մասին հաշվետվությունների քննարկում և հաստատում:

Բյուջետային գործընթացի փուլերը քննարկելիս, կվերլուծենք այդ գործընթացի հիմնական գծերը՝ հատկապես ՀՀ պետական բյուջեի տեսանկյունից: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներին, դրանց կանրադառնանք հատուկ զվիտում:

Բյուջեի նախագծի կազմումը

Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

Պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

ա) առաջիկա տարվա բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում:

բ) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակում:

Առաջիկա երեք տարվա ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ընձեռնել կառավարությանը կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Այս ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի մշակման աշխատանքների համար: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման փուլն սկսվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում է նրա հրապարակման օրը: Ծրագրի մշակումն իրականացվում է օրենքով և բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Պետական մարմինները կազմում և պետական լիազորված մարմին (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը) են ներկայացնում իրենց ոլորտային համապատասխան ծրագրերը առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում: Պետական լիազորված մարմինը մշակում է ծրագրի նախագիծը և առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում է կառավարություն: Վերջինս քննարկում և մինչև ընթացիկ տարվա 20-ը հաստատում է ծրագիրը և այն հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը:

Պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները կազմակերպում է կառավարությունը առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման հիման վրա, այդ որոշմամբ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով նախատեսված ժամկետներում:

Պետական բյուջեի նախագիծը կազմելիս, կառավարությունը կան նրա լիազորած պետական կառավարման մարմինը «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 31 հոդվածին համապատասխան, խորհրդակցում է կենտրոնական բանկի հետ՝ պետական բյուջեի նախագծին առնչվող հարցերի շուրջ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պետական բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով մինչև ընթացիկ տարվա հունիսի 20-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում բյուջեները կազմելու համար անհրաժեշտ հաշվարկների կատարման մեթոդական ցուցումները, բյուջետային ֆինանսավորման կադրերի, բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշվի ձևերը և ներկայացման կարգը: Պետական կառավարման մամիններն իրենց և համակարգի ֆինանսավորման հայտերը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 20-ը: Բյուջետային ֆինանսավորման հայտին կցվում է նախատեսվող ծախսերի նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը օրենքով սահմանված կարգով հաշվարկում և մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 20-ը պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում պետական բյուջեից համայնքների բյուջեին տրվող հատկացումների չափերը:

Բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կազմում է հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը և ներկայացնում կառավարություն: Օրենքով սահմանված է ՀՀ պետական բյուջեի նախագծի կառուցվածքը և բովանդակությունը:

Պետական բյուջեի նախագիծը ներառում է՝ 1) կառավարության բյուջետային ուղերձը 2) պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը:

Կառավարության բյուջետային ուղերձը ներառում է՝ 1) կառավարության գեկույցը բյուջետային տարվա սոցիալ տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այդ բյուջեի կատարում և ապահովող օրենքների նախագիծը: Այդ օրենքները հիմնականում հարկերի և տուրքերի մասին օրենքներն են. 2) պետության սոցիալտնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումն առաջիկա երեք տարվա համար. 3) պետական բյուջեի մասին օ-

րենքի նախագծի բացատրագիրը: Այն պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է՝ ա) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորումը այդ թվում դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող վարկերի տոկոսադրույքները և հատկացման ժամկետները, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային և սպասվելիք համապատասխան ցուցանիշների նկատմամբ: բ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների, ծախսերի գծով նախատեսված եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) համեմատական վերլուծությունը նախորդ տարվա փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված ցուցանիշների նկատմամբ գ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված բյուջետային տարին ընդգրկող հաջորդ եռամսյա ժամանակաշրջանի բյուջետային ցուցանիշների կանխատեսումները դ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումն ըստ օրենքով սահմանված հարկային, ոչ հարկային և այլ եկամտատեսակների. ե) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով առաջարկվող հատկացումների հիմնավորումն ըստ բյուջետային դասակարգման, այդ թվում՝ բյուջետային տարում տրամադրվող վարկերի և բյուջետային երաշխիքների ծավալները և ուղղությունները, բյուջետային ծախսերի հաշվարկները հիմնավորող նորմատիվները. զ) պետական բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի հարկային հիմքը, բովանդակությունը, խնդիրները, նպատակները կատարման փուլերը, ժամկետները ինչպես նաև ՀՀ արտաքին և ներքին պարտքի կառուցվածքը, դրա համեմատական վերլուծությունը՝ նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ. է) կառավարության պահուստային ֆոնդի և պետական պահուստների ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը. թ) տեղեկություններ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին օրենքով սահմանված կարգով տրամադրվող հատկացումների մասին. թ) հաջորդ բյուջետային տարում սպասվելիք դրամա-

կան և նյութական օգնություններից, նվիրատվություններից և այլ մուտքերից զոյացող միջոցներից կատարվող հատկացումների հիմնավորումը. ժ) տեղեկություններ պետական բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների թվաքանակի մասին. ժա) այլ տեղեկություններ, որոնք ՀՀ կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հիմնավորման համար: Իսկ պետական բյուջեի նախագիծը ներառում է՝ 1) պետական եկամուտները և ծախսերը՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված դասակարգմամբ. 2) պետական բյուջեի դեֆիցիտը կամ հավելուրդը նշված օրենքով սահմանված դասակարգմամբ. 3) օրենքով սահմանված այլ դրույթներ և ցուցանիշներ:

## 2. Բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը

ՀՀ Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն, պետական բյուջեի նախագիծը կառավարությունն Ազգային ժողովի քննարկման է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն վաթսուներկու օր առաջ:

Ազգային ժողովում բյուջեի նախագծի քննարկումով սկսվում է բյուջետային գործընթացի երկրորդ փուլը: Կառավարության կողմից ներկայացված պետական բյուջեի նախագիծը, նախ և առաջ քննարկվում է Ազգային ժողովի ֆինանսավարկային բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում:

Այդ հանձնաժողովում պետական բյուջեի նախագծի քննարկմանը կարող են մասնակցել նաև այլ մշտական հանձնաժողովների անդամներ՝ իրենց բնագավառին վերաբերող հարցերով: Այդ քննարկումների հիման վրա ֆինանսավարկային բյուջետային և տնտեսական հանձնաժողովը Ազգային ժողովին ներկայացնում է պետական բյուջեի վերաբերյալ իր եզրակացությունը: Այս եզրակացությունը ներկայացվում է ԱԺ ում՝ պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ֆինանսների նախարարի զեկուցումից հետո: Պետական բյուջեի վերաբերյալ իրենց կարծիքները կարող են հայտնել նաև Ազգային ժողովի պատգամավորները:

Բյուջեի ընդունումը բյուջետային գործընթացի երրորդ փուլն է: Ազգային ժողովը կառավարության ներկայացրած պե-

տական բյուջեն հաստատում է նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ:

ՀՀ Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարությունը կարող է պահանջել, որ իր կողմից ընդունված ուղղումներով պետական բյուջեն քվարկության դրվի մինչև 60 օրյա ժամկետի ավարտը: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը:

Եթե ՀՀ Սահմանադրության 74 -րդ հոդվածով նախատեսված կարգով Ազգային ժողովն անվստահություն չի հայտնում կառավարությանը, ապա ընդունված ուղղումներով պետական բյուջեն վերջինիս կողմից համարվում է հաստատված: Բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում, նոր կառավարությունը քսան օրվա ընթացքում բյուջեի նոր նախագիծ է ներկայացնում, որն օրենսդիր մարմնի կողմից քննարկվում և հաստատվում է երեսուներկու օրվա ընթացքում:

## 3. Բյուջեի կատարումը

Բյուջեների կատարումը պետական և տեղական իքնակառավարման լիազորություններն իրականացնող իրավաբանական անձանց համապատասխանաբար պետական և համայնքների բյուջեների եկամուտների (մուտքերի) ձևավորման ու ծախսերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է:

Բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է բյուջեների բոլոր եկամուտների (մուտքերի) մուտքագրումը և ծախսերի կատարում:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միասնական գանձապետական հաշվով:

Բյուջեների կատարման կազմակերպումն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Բյուջեների կատարման կարգը սահմանում է կառավարությունը:

Բյուջեների կատարման կարգով սահմանվում են՝ 1) բյուջեների կատարման հիմնական սկզբունքը. 2) բյուջեների կատարման ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը, փաստաթղթաշրջանառության կարգը, ժամկետները, ծավալները:



րը. 3) բյուջեների կատարման ժամանակ բյուջետային համակարգի սուբյեկտների պարտականությունները և իրավունքները. 4) հաստատված բյուջեների հիման վրա եռամսյակային համամասնությունների սահմանման կարգը. 5) բյուջեների կատարման ժամանակը ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքին համապատասխան, սեկվեստորի և ինդեքսացիայի կիրառման և դադարեցման դրույթները, դրանց կիրառման կարգը. 6) օրենքով սահմանված թույլատրելի չափաքանակների շրջանակներում, բյուջեների կատարման ընթացքում դրանցում կատարվող փոփոխությունները կատարելու կարգը. 7) բյուջեների պահուստային ֆոնդի ֆինանսավորման կարգը. 8) բյուջեների կատարման գործընթացի այլ դրույթներ:

Բյուջեների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, նրա գանձապետարանը իրականացնում են՝ ա) բյուջեների, դրամարկղային սպասարկումը. բ) բյուջեների կատարման ապահովումը դրանց բյուջեների փաստացի եկամուտների և ծախսերի ուղղություններին համապատասխան. գ) պետական դրամական միջոցների ներառյալ պետական և համայնքների բյուջեների միջոցների համախմբումը միասնական, գանձապետական հաշվում. դ) գանձապետական հաշիվներում արտացոլված բյուջեների և բյուջետային հիմնարկների դրամական միջոցների կառավարման ապահովումը. ե) պետական պարտքի կառավարման ապահովումը. զ) բյուջետային հաշվառման և հաշվետվության մեթոդական ղեկավարումը. է) բյուջեների կատարման ապահովման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

Բյուջեների մուտքերը կուտակվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միասնական գանձապետական հաշվում:

Պետական և տեղական ինքնակառավարման լիազորություններ իրականացնող մարմինների և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների բյուջետային միջոցների մուտքերը և ծախսերն արտացոլվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և նրա տեղական գանձապետական բաժանմունքների յուրաքանչյուր այդպիսի սուբյեկտի համար բացված գանձապետական հաշիվներում: Բյուջետային հիմնարկների գանձապետական հաշիվներից գումարների վճարումը կատարում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը և նրա տե-

ղական գանձապետական բաժանմունքները՝ վերջիններիս, սպասարկող բանկերի միջոցով: Բյուջետային հիմնարկների գանձապետական հաշիվներում բյուջետային միջոցների առկայության դեպքում, վճարումները կատարվում են անվերապահորեն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց ենթակա բյուջետային հիմնարկները կարող են բանկային հաշիվներ բացել միայն ՀՀ կառավարության որոշմամբ: Բյուջեների կատարման ընթացքում մուտքերի նվազման դեպքում գործադրվում է ծախսերի սահմանափակման (սեկվեստորի) մեխանիզմը: Սահմանափակումը բյուջետային տարվա տվյալ ժամանակահատվածում բյուջեներով նախատեսված ծախսերի տնտեսագիտական բոլոր հոդվածներով օրենքով սահմանված կարգով և չափով համամասնական նվազեցումն է բացառությամբ պետական բյուջեից համայնքների բյուջեների ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիների և օրենքով պաշտպանված այլ ծախսերի: Բյուջեների պաշտպանված ծախսատեսակները սահմանվում են տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով:

Այժմ անրադառնանք պետական բյուջեի կատարման կարգին, որը սահմանում է ՀՀ կառավարությունը: Պետական բյուջեի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմինների ղեկավարները կարող են պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով սահմանված չափաքանակը:

Պետական բյուջեի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմինների ղեկավարները կարող են պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև կատարել բաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով նախատեսված չափաքանակը: Ազգային ժողովի հաստատած պետական բյուջեում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության առաջարկությամբ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով: Պետական բյուջեում այն փոխությունները և լրացումները, որոնք նվազեցնում են պետական բյուջեի եկամուտ-

ներ կամ ավելացնում են ծախսերը, Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ և ընդունում է պատգամավորների թվի ճայների մեծամասնությամբ: Պետական բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարվում են օրենքով: Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրվա ընթացքում կառավարությունը սահմանում է պետական բյուջեի կատարման եռամսյակային համաձայնությունները:

Պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է: Նա յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քառասուն օրվա ընթացքում տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողով պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Կառավարությունը իր կողմից սահմանված կարգով հսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման վրա:

#### 4. Բյուջեի կատարման հաշվետվություն

Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը կառավարությունը յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը ներկայացնում է Ազգային ժողով:

Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է 1. տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականություն և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա: 2. պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ 3. տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով: 4. տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ 5. այլ տեղեկություններ, որոնք կառավարությանն անհրաժեշտ է համապետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

Ազգային ժողովը պետական բյուջեի կատարման հաշվետվությունը քննարկում և հաստատում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ: Այն պարու-

նակում է (ա) պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությամբ արտացոլված թվերի արժանահավատության գնահատականը բ) հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման գնահատականը: Ազգային ժողովի նիստում վերոհիշյալ հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված կարգով: մինչև ընթացիկ տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթի:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ

§ 1. Համայնքի բյուջեի հասկացությունը և կառուցվածքը

Հայաստանի Հանրապետությունը բաժանված է հետևյալ վարչատարածքային միավորների մարզերի և համայնքների:

Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից:

Մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

Կառավարությունը մարզերում նշանակում և ազատում է մարզպետներ, որոնք իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մարզերը չունեն սեփական բյուջե և ֆինանսավորում են հանրապետական բյուջեից: Երևան քաղաքն ունի մարզի կարգավիճակ: Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է հանրապետության նախագահը:

Համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու համար երեք տարի ժամկետով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմինների համայնքի ավագանի հինգից տասնհինգ անդամով, համայնքի ղեկավար՝ քաղաքապետ, գյուղապետ:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական տուրքեր և վճարներ:

Համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

Համայնքների բյուջեներն ձևավորում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝ 1) համայնքի զարգացման եռամսյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը 2) պահուստային ֆոնդի ստեղծումը՝ որպես տվյալ

տարվա համայնքի բյուջեում չնախատեսված, ինչպես նաև վարկեր և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ծախսերի աղբյուրի և կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական երաշխիք 3) համայնքի բյուջեի հավասարակշռությունը, յուրաքանչյուր բյուջետային տարվա համար համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների (մուտքերի) հանրագումարին 4) խնայողականությունը, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերում: 5) արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերությունը 6) հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հողվածների հիմքում դրվող, հստակ հաշվարկների միջոցով 7) հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

Համայնքների բյուջեների կառուցվածքը, պետական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի. ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե) և բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե): Համայնքի բյուջեի բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը պետք է հաշվեկշռված լինի: Համայնքի վարչական բյուջեն ներառում է՝ մուտքերի գծով համայնքի բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները, այդ թվում՝ 1) հարկային եկամուտներ, 2) տուրքեր, 3) ոչ հարկային այլ եկամուտներ, 4) պաշտոնական տրանսֆերտներ:

Հարկային եկամուտներ և տուրքեր են՝ 1) հողի հարկը 2) գույքահարկը, 3) եկամտահարկը 15 տոկոսի չափով, 4) օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից և պարտադիր վճարումներից կատարվող մասհանումները, 5) հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օ-

րենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը.

Տուրքերն են ա) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մաս քաղաքացիներին կրկնակի վկայականեր, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար. բ) նոտարական գրասենյակային կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակները տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար. գ) տեղական տուրքերը:

Ոչ հարկային եկամուտներն են՝ 1) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները. 2) համայնքային հիմնարկաների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները. 3) վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները. 4) համայնքային սեփականություն համարվող կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթներից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները. 5) տեղական վճարները. 6) պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցները. 7) օրենքով և իրավական այա ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող ոչ հարկային եկամուտները:

Պաշտոնական տրանսֆերտներ՝ հատկացումներ են՝ 1) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները. 2) պետական բյուջեից տրվող այլ դոտացիաներ, 3) պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները սուբվենցիաներ: 4) այլ աղբյուրներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական տրանսֆերտներ:

Դիֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում առաջացող դեֆիցիտի ֆինանսավորման համար համայնքի բյուջեին պետական բյուջեից տրամադրվող բյուջետային փոխատվությունները.

բ) վարչական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:

Համայնքի վարչական բյուջեի ծախսերն են՝ օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը, հետևյալ ուղղություններով՝ 1) ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 2) պաշտպանության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում, 3) հասարակական կարգի պահպանություն և անվտանգության բնագավառում օրենքով վերապահված լիազորությունների իրականացում, 4) կրթություն և գիտություն, 5) առողջապահություն, 6) սոցիալական ապահովություն և ապահովագրություն, 7) մշակույթ, սպորտ և կրոն, 8) բնակարանային կոմունալ տնտեսություն, 9) վառելիքաէներգետիկ համալիր, 10) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն, 11) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն, 12) տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն, 13) համայնքային բյուջեի ծախսերի ընդհանուր ուղղություններին չդասվող այլ ծախսեր (համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից իրականացվող ծախսերը և պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների, իրականացման ծախսերը:

Բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում առաջացող վարչական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար պետական բյուջեից ներգրավված բյուջետային փոխատվությունների մարումները:

Համայնքների բյուջեների ֆոնդային մասը ներառում է մուտքերի գծով Համայնքների բյուջեներին օրենքով և այլ իրավական ակտերով ամրագրվող եկամուտները, այդ թվում ա) ոչ հարկային եկամուտները, բ) կապիտալի գործառնություններից եկամուտները, գ) պաշտոնական տրանսֆերտները:

Ոչ հարկային եկամուտներն են՝ 1) համայնքային սեփականություն համարվող, ինչպես նաև տիրազուրկ, ժառանգության

իրավունքով կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած գույքի օտարումից եկամուտները. 2) ժառանգության իրավունքով ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից (բացառությամբ պետության, հանրապետության այլ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների) նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած դրամական միջոցները. 3) վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող կատարվող հատկացումները. 4) օրենքով սահմանված դեպքում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտից ստացված ստացված տոկոսավճարները:

Կապիտալի գործառնություններից եկամուտներն են՝

ա) համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների (այդ թվում հողերի) և ոչ նյութական ակտիվների օտարումից եկամուտներ, այդ թվում համայնքի սեփականությունը հանդիսացող լուծարված կազմակերպությունների մնացորդային գույքի օտարումից եկամուտները.

բ) համայնքի սեփականություն համարվող պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից եկամուտները:

Պաշտոնական տրանսֆերտներն են՝

ա) պետական բյուջեից կապիտալի ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները.

բ) կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար այլ աղբյուրներից (հանրապետության համայնքներ, միջազգային կազմակերպություններ և օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններ) ստացվող նպատակային տրանսֆերտները:

Դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներն են՝

ա) պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը.

բ) տեղեկական ինքնակառավարման մարմինների թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները:

գ) պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի) այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցները:

դ) ֆոնդային բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:

Ֆոնդային բյուջեն ներառում է հետևյալ ծախսերը, որոնք կապիտալ ծախսեր են և սահմանված են օրենքով: Դրանք են՝ 1) կապիտալ շինարարության ծախսեր, 2) կապիտալ վերանորոգման ծախսեր, 3) վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների մարման ծախսեր, 4) ապրանքանյութական արժեքների պահուստների ձևավորման ծախսեր:

Համայնքների բյուջեներից՝ տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին:

Համայնքային բյուջեների պահուստային ֆոնդը

Համայնքի բյուջեն ունի պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեներով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 5-ից 20 տոկոսի չափով:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասում կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կարող են ֆինանսական միջոցներ ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն ավագանու որոշմամբ:

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, վարչական բյուջեով նախատեսված ծախսերի ժամանակին կատարելու նպատակով համապատասխան պետական լիազորված մարմնի հասձայնությամբ կարող է ստանալ բյուջետային փոխատվություններ:

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, համապատասխան պետական լիազորված մարմնի համաձայնությամբ համայնքի սոցիալական ենթակառույցները զարգացնելու

ներդրումներ կատարելու համար կարող է վարկ ստանալու պայմանագիր կնքել կամ թողարկել համայնքային արժեթղթեր՝ օրենքով կարգով: Համայնքը, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, կարող է վարկային պայմանագիր կնքել կամ արժեթղթեր թողարկել այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջետային տարում վարկի և արժեթղթերի մարման ծրագրով նախատեսված տարեկան գումարը՝ մայր գումարի և տոկոսավճարների հանրագումարը, չի գերազանցում համայնքի բյուջեի համապատասխան տարվա ֆոնդային մասի եկամուտների 20 տոկոսը: Համայնքը նոր վարկ կարող է վերցնել նախորդ վարկային պարտքը ամբողջությամբ մարելուց հետո: Տվյալ վարկային միջոցները (ներառյալ արժեթղթերի թողարկումից ստացված միջոցները) պարտադիր ուղղվում են համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Վարկային պայմանագրի գրավ կախող են լինել միայն համայնքի բյուջեի եկամուտների և ՀՀ կառավարության երաշխիքներ:

Համայնքի բյուջեի միջոցների հաշվին վարկեր և փոխատվություններ չեն տրամադրվում և արժեթղթեր չեն գնվում:

Համայնքների բյուջեների վարչական մասում, որպես եկամտի առանձին տեսակ, նախատեսվում են պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները: Նշված դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով նախորդ բյուջետային տարում եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի փաստացի մուտքերի հանրագումարի ոչ պակաս, քան 25 տոկոսը: Դրանց հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով տրված հարկային արտոնությունները:

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է:

Ֆինանսական համահարթեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ֆինանսական համահարթեցման մասին» 1998 թ. դեկտեմբերի 23ի օրենքով:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեին համահարթեցման սկզբունքով տրամադրվում են դոտացիաներ:

Այդ դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով: Դրանց ընդհանուր գումարի բաշխումն ըստ առանձին համայնքների, հիշյալ օրենքով սահմանված կարգով, ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով:

Դոտացիաների գումարների չափն ըստ առանձին տեղական ինքնակառավարման մարմինների որոշվում է՝ հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները՝

- ա) համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի մակարդակը.
- բ) համայնքի բնակչության թվաքանակը.
- գ) համայնքի՝ պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտությունը:

«Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքի 6 հոդվածում սահմանված է դոտացիաների հաշվարկման կարգը:

Տեղական ինքնակառավարման մարմինների դոտացիաների հատկացումն իրականացնում է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝ ըստ համայնքների:

Տեղական ինքնակառավարման մարմիններին դոտացիաները հատկացվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքների՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով:

## Ֆ2. Համայնքային բյուջեի գործընթացի փուլերը

### 1. Համայնքային բյուջեի նախագծի կազմումը:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման եռամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Այդ նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնակա-նությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպ-

ման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Կառավարության կամ նրա լիազորված պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ: Բացառություն են տեղական ինքնակառավարման մարմինների՝ պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերը:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարը աշխատակազմի համապատասխան ծառայություններին, բյուջետային հիմնարկներին տալիս է համապատասխան հրահանգներ բյուջեի մուտքերի և ելքերի հաշվարկման ու ներկայացման համար: Այնուհետև պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ ստանալու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում նրանց ապահովում է բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համար ամհրաժեշտ համապատասխան ձևերով:

Բյուջետային հիմնարկները համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամկետում համայնքի ղեկավարին են ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

Համայնքի ղեկավարը ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները, կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից: Բյուջետային ուղերձը ներառում է՝ 1) համայնքի բյուջեի նախագիծն ըստ բաղկացուցիչ մասերի, ըստ եկամտատեսակների ու ծախսերի ուղղությունների՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգմանը համապատասխան՝ երեք տարվա կտրվածքով, այդ թվում նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային և կանխատեսվող տարվա համապատասխան ցուցանիշներով, 2) հա-

մայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին, 3) համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի կամ հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային ցուցանիշների հետ, 4) համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի ա) իրավական հիմքը, բ) բովանդակությունը, գ) խնդիրները և նպատակները, դ) կատարման փուլերը և ժամկետները, 5) պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, 6) բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը, 7) հիշյալ օրենքին համապատասխան ստացված տեղեկությունները պետական բյուջեի նախագծում (եթե համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծն ավագանու քննարկմանը ներկայացվում է մինչև առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը) կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին օրենքով նախատեսված հատկացումների մասին, 8) հաջորդ բյուջետային տարում սպասվելիք դրամական և նյութական օգնություններից, նվիրատվություններից և այլ մուտքերից գոյացող միջոցներից կատարվող հատկացումների հիմնավորումը, 9) տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին 10) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի հիմնավորման համար:

Համայնքի բյուջեի մասին ավագանու նախագիծը ներառում է ա) համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը՝ ըստ բյուջեի բաղկացուցիչ մասերի՝ հիշյալ օրենքով սահմանված դասակարգմամբ. բ) համայնքի բյուջեի դեֆիցիտը կամ հավելուրդը և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ օրենքով սահմանված դասակարգմամբ. գ) այլ դրույթները և ցուցանիշներ, որոնք համայնքի ղեկավարը և ավագանին անհրաժեշտ են համարում համայնքի բյուջեի կատարումը և դրա նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար:

2. Համայնքի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը.

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբուքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Համայնքի բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում առնվազն մեկ շաբաթ առաջ: Այդ նախագիծը համայնքի ավագանու նիստում ներկայացնում է համայնքի ղեկավարը: Նա պատասխանում է ավագանու անդամների հարցերին: Նշված նիստում համայնքի բյուջեի մասին որոշման նախագծի քննարկման կարգը սահմանվում է համայնքի օրենքով և համայնքի ավագանու կանոնակարգով: Համայնքի ավագանու անդամները, բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Քննարկումներից հետո համայնքի ղեկավարը կարող է մինչև մեկ շաբաթ ժամանակ վերցնել՝ ներկայացված նախագծի մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատելու բյուջեն: Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի

ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ: Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացված համապատասխան որոշման նախագիծը: Համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը: Սակայն պետական բյուջեի հաստատումից հետո համայնքների մինչև այդ հաստատված բյուջեներում երկշաբաթյա ժամկետում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին: Վերջինս ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունը օրենքին, ելնելով բյուջեների ինքնուրույնության սկզբունքից: Մարզպետի կողմից ստուգվում է նաև հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազման կարգը և ներակայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում, համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների թվի ձայների կեսից ավելիով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ օրենքով սահմանված կար-



գով պաշտոնանկ անելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունելու դեպքում համապատասխան մարգպետը հարցը ներկայացնում է կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Վերը նշված հանգամանքերի հետևանքով համայնքի ղեկավարի լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ ներկայացնում է համայնքի ավագանուն քսան օրվա ընթացքում: Այն քննարկվում է և հաստատվում օրենքով սահմանված կարգով երեսուն օրվա ընթացքում:

Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

### 3. Համայնքային բյուջեի կատարումը

Համայնքի բյուջեի հաստատումից հետո երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, հաստատում բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Նա այդ նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան տեղական զանձապետական բաժանմունքին, որն իրականացնում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումը, տրամադրում է համայնքի ավագանու հաստատված բյուջեն եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները:

Համայնքի ղեկավարը դրանից բացի 1) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, 2) աջակցում է հարկային մարմիններին համայնքի բյուջեի հարկերի մուտքագրման գործում, 3) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Այդ փոփոխությունների կանխագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի եկամուտները կամ ավելացնում են ծախսերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու ընդհանուր թվի ձայների երկու երրորդով: Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, իսկ համայնքի ավագանին վերահսկողություն է իրականացնում բյուջեի կատարման վրա: Տեղական բյուջեի նկատմամբ իրենց լիազորությունների շրջանակներում վերահսկողություն են իրականացնում նաև Ազգային ժողովը և կառավարությունը:

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի անդամների և աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշված պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Այս վերահսկողության հիմնական խնդիրներն են. 1) եկամուտների կանխատեսումների և բյուջետային ծախսերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը, 2) բյուջետային միջոցների, վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը, 3) բյուջետային պարտավորությունների կատարման հաստիքանախահաշվարկային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը, 4) բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը, 5) բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների ապահովումը:

Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պեկան բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազորված մարմնի միջոցով:

Համայնքի ղեկավարը, նրա աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձիք համայնքի բյուջեի կատարման վերահսկողություն իրականացնող անձանց պարտականությունների կատարմանը, խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում, պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

#### 4. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունները

Համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին: Նա բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Իսկ այնուհետև այդ հաշվետվությունը համայնքի ավագանու կողմից հաստատելուց հետո՝ 3 օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան մարզպետին: Տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորիական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը: Կատարման մասին հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե կառավարությունը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունվելու դեպքում համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման վերաբերյալ ավագանին ընդունում է համապատասխան որոշում:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝

1) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև,

2) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով,

3) տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ,

3) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բյուջետային դասակարգումը նպատակ է հետապնդում ապահովել տարբեր տեսակի բյուջեների նախագծերի կազմումը հիմք ընդունելով մուտքների և ելքերի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված դասակարգման միասնական ցուցանիշները:

Բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների մուտքերի ու ելքերի միասնական դասակարգման:

Բյուջետային դասակարգումը բյուջեների կազմման և կատարման համար կիրառվող բյուջեների մուտքերի ու ելքերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների ցուցանիշների համադրելիությունը:

Բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝ 1) բյուջեների եկամուտներ, 2) բյուջեների ծախսեր և տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվություններ միջոցների վերադարձից մուտքեր, 3) բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ (ներգրավված միջոցների մուտքեր և ներգրավված փոխառու միջոցների վերադարձ ). 4) բյուջեների պարտքեր:

Բյուջեների և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները դասակարգվում են՝ 1) ընդամենը եկամուտներ, 2) պաշտոնական տրանսֆերտներ:

Ընդամենը եկամուտներն էլ իրենց հերթին դասակարգվում են՝

2. Բյուջետային ծախսերը հանած տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների մարումները դասակարգվում են՝ ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներ, բ) գերատեսչական բաշխվածություն, գ) ծախսերի տնտեսագիտական բովանդակություն, դ) տարածքային բաշխվածություն:

Բյուջեների ծախսերի՝ հանած մարում գործառնական դասակարգումը պետական տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի և տրամադրված բյուջետային վարկերի ու փոխատվությունների

մարումների խմբավորումն է: Այն ունի հետևյալ կառուցվածքը՝ 1) ընդհանուր բնույթի պետական համայնքային ծառայություններ, 2) պաշտպանություն, 3) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, 4) կրթություն և գիտություն, 5) առողջապահություն, 6) սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն, 7) մշակույթ, սպորտ և կրոն, 8) բնակարանային, կոմունալ տնտեսություն, 9) վառելիքաէներգետիկ համալիր, 10) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն, 11) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերության, շինարարության և բնապահպանություն, 12) տրանսպորտ կապ, ճանապարհային տնտեսություն, 13) այլ տնտեսական ծառայություններ, 14) հիմնական խմբին չդասվող ծախսեր:

Բյուջեների ծախսերի՝ հանած մարում տնտեսագիտական դասակարգումը ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսական բովանդակությանը համապատասխան: Այն ունի հետևյալ կառուցվածքը՝ 1) ընթացիկ ծախսեր, 2) կապիտալ ծախսեր, 3) վարկավորում հանած մարումը:

Բյուջեների ընթացիկ ծախսերն են՝ 1) պետական և համայնքային հիմնարկների աշխատողների աշխատավարձը, 2) տոկոսավճարները, 3) սուբսիդիաները, սուբվենցիաները, դոտացիաները և ընթացիկ այլ տրանսֆերտները, 4) ապրանքների գնման ու ծառայությունների վճարման ծախսերը:

Բյուջեների կապիտալ ծախսերը բաղկացած են՝ կապիտալ ներդրումների ծախսերից և կապիտալ նորոգումների ծախսերից:

Բյուջեների ծախսերի վարկավորում հանած մարումը ներառում է ներքին և արտաքին վարկավորումը:

Բյուջեների ծախսերի գերատեսչական դասակարգումը ծախսերի հանած մարումների խմբավորումն է՝ ըստ բյուջետային միջոցների անմիջական ստացողների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գերատեսչական կառուցվածքների:

Բյուջեների ծախսերի վարկավորում հանած մարումը տարածքային դասակարգումը բյուջետային ծախսերի և տրամադրված բյուջետային վարկերի և փոխառությունների խմբավորումն է ըստ մարզերի և համայնքների:

**ԳԼՈՒԽ 10**  
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**§1. Հարկի հասկացությունը**

ՀՀ-ում հարկերն օգտագործվում են որպես ազգային եկամտի երկրորդական բաշխման և վերաբաշխման իրավական ձև: Հարկերի միջոցով կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների եկամուտների մի մասը մոբիլիզացվում է՝ պետության պահանջների, նրա ներքին և արտաքին խնդիրների լուծման համար:

ՀՀ 1997 թ. ի մայիսի 12-ի «Հարկերի մասին» օրենքով տրված է հարկի հետևյալ բնորոշումը. «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»: Հիշյալ օրենքով սահմանված կարգով հարկերը վճարվում են ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ: Հարկի բնորոշումը ավելի հստակ և համապարփակ է տրված է ՌԴ-ի «Հարկային օրենսգրքում»: Նրա 7 հոդվածի համաձայն. «Հարկի տակ հասկացվում է պարտադիր, անհատականորեն անհատույց վճար, որը գանձվում է կազմակերպությունից և ֆիզիկական անձից սեփականության, տնտեսական տնօրինման և օպերատիվ կառավարման իրավունքով նրանց պատկանող դրամական միջոցների օտարման տեսքով, պետության կամ համայնքային կազմավորման գործունեությունն ապահովելու նպատակով»: Հարկը համալիր կատեգորիա է, որն ունի թե տնտեսական և թե իրավաբանական նշանակություն: Հարկը տնտեսական տեսանկյունից քննարկելիս կարելի է հետևություն անել, որ չի կարելի այն առանձնացնել պետական այլ գանձումներից, ինչպես նաև այն տարբերել տուրքերից և գանձույթներից: Իրավաբանական տեսակետից, հարկերն ունեն մի շարք առանձնահատկություններ,

որոնցով տարբերվում են բյուջե կատարվող այլ վճարումներից: Այդ առանձնահատկություններից առաջինը անհատուցանելիությունն է: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հարկերի գանձումը կապված չէ վճարողին անմիջական նյութական բարիք հատկացնելու կամ ծառայություն մատուցելու հետ:

Հարկային իրավունքն իրավական նորմերի համակցությունն է, որոնցով կարգավորվում են հարկերի գանձման բնագավառում առաջացող հարաբերությունները: Այս հարաբերությունների մի կողմը միշտ էլ պետական լիազորված մարմինն է, որն օժտված է պետական իշխանական լիազորություններով:

Հարկը, որպես համալիր տնտեսաիրավական կատեգորիա, իրենից ներկայացնում է որոշակի, փոխկապված տարրերի համակցություն, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն իրավաբանական նշանակություն:

Հարկի *առաջին տարրը* հարկային-իրավական նորմն է, այսինքն վարքագծի այն համընդհանուր կանոնը, որը սահմանվում կամ սանկցիայի է ենթարկվում պետության կողմից: Հարկային իրավական նորմը կարգավորում է հարկային պարտավորությունների առաջացումը և իրացումը:

*Հաջորդ հիմնական տարրը* հարկ վճարողն է: Հարկերի վճարողը (հարկատուն), իրավաբանական կամ ֆիզիկական անձն է, որը օրենքի ուժով պարտավոր է հարկ վճարել: Նրա հիմնական հատկանիշը եկամտի ինքնուրույն աղբյուրի կամ հարկման ենթակա գույքի առկայությունն է:

*Հարկման առարկա* դեպքերը, իրերը և նյութական աշխարհի երևույթներն են, որոնք պայմանավորում և նախորոշում են հարկման օբյեկտը (բնակարան, հողամաս, ապրանք, փող, օգուտ): Ինքստինքյան հարկման առարկան հարկային հետևանքներ չի առաջացնում, այն դեպքում, երբ դրա նկատմամբ սուբյեկտի որոշակի իրավաբանական առնչությունը համապատասխան հարկային պարտավորությունների առաջացման հիմք է:

*Հարկման օբյեկտ* այն իրավաբանական փաստն է, կամ դրանց համակցությունը, որն առաջացնում է հարկատուի պարտականությունը վճարել հարկեր: Հարկման օբյեկտն են կազմում՝ եկամուտը, շահույթը կամ հողամասը և գույքը, որոնք օրենքի ուժով ենթակա են հարկման: Հարկվող միևնույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն տեսակի հարկով կարող է հարկվել միայն մեկ անգամ:

Հարկման օբյեկտին սերտորեն առնչվում է մեկ այլ *տարր հարկման բազան*, որն իրենից ներկայացնում է, հարկման օբյեկտի քանակական արտահայտությունը: Այլ կերպ ասած, դա այն արժեքային բազան է, որի նկատմամբ կիրառվում է հարկի դրույքաչափը: Հարկման բազան կարող է ինչպես համընկնել, այնպես էլ չհամընկնել հարկման օբյեկտի հետ:

Հարկման բազան սահմանելու համար պետք է որոշել հարկի մասշտաբը, այսինքն օրենքով որոշված հարկման օբյեկտի ֆիզիկական բնութագիրը կամ չափման պարամետրերը:

Միևնույն ժամանակ *հարկման միավոր* պետք է ճանաչել, ընդունված մասշտաբի պայմանական միավորը, որն օգտագործվում է հարկման բազայի քանակական արտահայտման համար: Օրինակ, գույքահարկը որոշելիս փոխադրամիջոցների համար որպես մասշտաբ կարող է ծառայել շարժիչի հզորությունն արտահայտված ձիաուժով:

Հարկման բազայի փաստացի ցուցանիշները ստանալու համար անհրաժեշտ է վարել համապատասխան հաշվառում:

Հարկի գոյության ժամանակային որոշակիությունը որոշելու համար անհրաժեշտ է սահմանել *հարկային ժամանակաշրջան* այսինքն այն ժամկետը, որի ընթացքում ավարտվում է հարկային բազայի ձևավորումը և որոշվում է հարկային պարտավորության ժամկետը: Հարկի գումարի հաշվարկումն անհնար է առանց *հարկի դրույքաչափի*: Այն հարկի չափն է, որը սահմանվում է հարկվող միավորի համար և որոշվում է կամ տոկոսների կամ կայուն գումարի ձևով: Վերջինս ավելի հաճախ արտահայտվում է նվազագույն աշխատավարձի բազմապատիկի տեսքով: Հարկի դրույքաչափի փոփոխությունը, հարկի սահմանումը կամ վերացումը կատարվում է միայն ֆինանսական տարվա սկզբից, եթե առանձին հարկատեսակի մասին օրենքով այլ բան չի սահմանված:

Հարկային պարտավորության չափը գրանցվում է հատուկ հարկային-հաշվետվության փաստաթղթում *հարկային հաշվարկում*, որը պետք է ներկայացվի հարկային մարմիններ նախատեսված ժամկետներում (հարկի հաշվարկի ներկայացման ժամկետ):

Հարկի գումարի հաշվարկումը կատարվում է որոշակի մեթոդիկայով, որը սահմանվում է օրենսդրությամբ:

*Հարկի վճարման կարգը* նրա վճարման եղանակը, ձևը և ժամկետներն են:

Հարկի գումարի հաշվարկումը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել *հարկային արտոնությունները*: Դրանք այն գործոններն են, որոնք նվազեցնում են վճարելիք հարկի գումարը: ՀՀ «Հարկերի մասին» օրենքով սահմանվել են հետևյալ արտոնությունները՝ 1. հարկվող օբյեկտի նվազեցում, 2. հարկի դրույքաչափի նվազեցում, 3. հարկի նվազեցում, 4. հարկի հաշվարկման ժամկետի հետաձգում, 5. հարկի վճարման ժամկետի հետաձգում.

6. հարկային օրենսդրությունը և ՀՀ-ում հարկային իրավահարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված, հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում: Օրինակ, բանկի կողմից հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար նախատեսվում է տուժանքների վճարման հետաձգում ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատերերի պահանջների սառեցման ժամանակահատվածում»

Հարկի վճարման ժամկետի հետաձգման տարատեսակ է *հարկային վարկը*: Այն իրենից ներկայացնում է հարկի վճարման ժամկետի փոփոխումը (հետաձգումը) որոշակի ժամկետով, որոշակի հիմքերի առկայության դեպքում համապատասխանաբար հարկատուի կողմից միանվագ կամ փուլ առ փուլ հարկային պարտքերի վճարումով: Հարկային վարկը տրամադրվում է շահագրգռված անձին նրա դիմումի հիման վրա և ձևակերպվում սահմանված կարգի պայմանագրով: ՌԴ-ի «Հարկային օրենսգրքի» 65 հոդվածում ամրագրված է նշված վարկը: Այն կարող է կնքվել, 1. եթե անձին վնաս է պատճառվել տարրերային աղետի, տեխնոլոգիական վթարի կամ անհաղթահարելի ուժի այլ դրսևորումների դեպքում, 2. եթե ուշացվել է բյուջետային ֆինանսավորումը կամ պետական պատվերի վճարումը, 3. եթե անձին սննանկացում է սպառնում հարկի միանվագ վճարման դեպքում: ՌԴ-ի «Հարկային օրենսգրքի» 66 հոդվածում սահմանված է նաև ներդրումային հարկային վարկը: Այն հարկի վճարման ժամկետի հետաձգում է որոշակի ժամկետով, որոշակի հիմքերի առկայության դեպքում, որոշակի սահմաններում, նվազեցնելով հարկային վճարումները, հետագայում փուլ առ փուլ վարկի գումարը և հաշվարկված տոկոսները վճարելու պայմանով:

Հարկերը դասակարգում են ելնելով տարբեր չափանիշներից՝ ըստ գանձման եղանակի, ըստ հարկատուի և այլն:

Ըստ գանձման եղանակի հարկերը լինում են *ուղղակի և անուղղակի*:

Ուղղակի հարկերը գանձվում են նյութական բարիքների կուտակման ընթացքում անմիջականորեն հարկատուների եկամուտներից կամ գույքից: Այս դեպքում նրանք հարկի չափը ճշգրիտ կերպով հայտնի է: Դրանք են շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ, հողի հարկ:

Անուղղակի հարկերը գանձվում են նյութական բարիքների ծախսման ժամանակ ապրանքի գնի միջոցով: Դրանք յուրահատուկ հավելումներ են, որոնք պետության կողմից ներառվում են ապրանքի և ծառայության գնի մեջ: Դրանք են ավելացված արժեքի և ակցիզային հարկերը:

Ըստ հարկատուի դրանք լինում են իրավաբանական անձանցից, ֆիզիկական անձանցից գանձվող և խառը հարկ:

Իրավաբանական անձանցից գանձվող հարկերն են շահութահարկ, ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ:

Ֆիզիկական անձանցից գանձվում է եկամտահարկ, իսկ շատ երկրներում նաև նվիրատվության և ժառանգության հարկ:

Խառը հարկերը վճարում են թե իրավաբանական և թե ֆիզիկական անձինք՝ հողի հարկ, գույքահարկ:

Ինչպես բոլոր ֆինանսական հարաբերությունները, հարկային հարաբերությունները նույնպես ծագում են ազգային եկամտի վերաբաշխման ընթացքում և ունեն դրամական բնույթ: Նրանք առաջանում են հարկերի սահմանման և գանձման ժամանակ և կարգավորվում են ֆինանսաիրավական նորմերի տարատեսակ հանդիսացող հարկային իրավանորմերով: ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են՝ ա) հարկային օրենսդրությամբ՝ որը բաղկացած է «Հարկերի մասին» օրենքից և առանձին հարկատեսակների մասին օրենքներից, բ) ՀՀ կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում, գ) ՀՀ հարկային մարմինների, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում, պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտերով ՀՀ կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում:

*Եթե ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական և այլ ակտերով սահմանված դրույթները պարու-*

նակում են հակասություններ, երկիմաստություններ կամ դրանցում առկա են տարրընթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են հարկատուի օգտին:

Հարկային իրավունքը ֆինանսական իրավունքի ենթաճյուղ է, որն իրենից ներկայացնում է ֆինանսաիրավական նորմերի հատուկ տարատեսակի, հարկային իրավանորմերի համակցություն, որով կարգավորվում են հարկերի սահմանման և գանձման ժամանակ առաջացող հարաբերությունները:

Այդ հարաբերությունների պարտադիր մասնակից են պետության կողմից հատուկ ստեղծված ֆինանսական մարմինները, իսկ մյուս կողմը իրավաբանական և ֆիզիկական անձինք են: ՀՀ առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել *հարկային գործակալի* վրա: Նա հարկատուներին եկամուտներ վճարող իրավաբանական անձ է, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր, որի վրա օրենքի համաձայն դրված է հարկատուներին եկամուտներ վճարելիս նրանց եկամուտներից հարկերը հաշվարկելու, պահելու և բյուջե վճարելու պարտականությունը: Հարկային հարաբերությունների մասնակիցները գործում են օրենքի պահանջների շրջանակներում: Հարկային հարաբերությունների բովանդակությունը կազմում են հարկային իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Հարկերը վճարվում են Հայկական դրամով: Մեր հանրապետությունում ընդունված է երկակի հարկման սկզբունքը: Դա վերաբերում է հարկատուների Հայաստանի Հանրապետությունում, հանրապետությունից դուրս ստացած եկամտի (շահույթի) գումարին, գույքի արժեքին: Այդ գումարը մտցվում է Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա եկամտի (շահույթի) ընդհանուր գումարի մեջ և հաշվի է առնվում՝ հարկերի չափը որոշելիս:

Հայաստանի Հանրապետությունում գանձվող հարկերը նվազեցվում են հարկերի այն գումարների չափով, որոնք Հայաստանի Հանրապետության վճարողներից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, նվազեցվող գումարների չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից (շահույթից), այլ պետություններում գտնվող գույքի արժե-

քից Հայաստանի Հանրապետությունում վճարման ենթակա հարկի գումարները:

«Հարկերի մասին» օրենքում Հանրապետությունում սահմանվում են հետևյալ հարկերը. 1) շահութահարկ, 2) եկամտահարկ, 3) ակցիզային հարկ, 4) ավելացած արժեքի հարկ, 5) գույքահարկ, 6) հողի հարկ: «Հայաստանի Հանրապետությունում հարկերի մասին» օրենքում ամրագրված են հարկեր վճարողների իրավունքները, պարտականությունները:

Հարկեր վճարողը իրավունք ունի՝

1) ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերի հետ. 2) հարկային մարմին ներկայացնել բացատրություններ՝ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ. 3) օրենքով սահմանված կարգով բողոքարկել հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները. 4) առանձին հարկատեսակների մասին օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով դիմել հարկային արտոնություն ստանալու համար:

Հարկ վճարողը պարտավոր է՝

1) օրենքով սահմանված ձևով իրականացնել հաշվապահական հաշվառում, (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ). կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության մասին. 2) հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքերում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե. 3) սահմանված ժամկետներում հարկային մարմին ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ. 4) ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կարգով կատարել նաև դրանց կանխավճարները:

Բյուջե հարկային վճարների հավասարաչափ մուտքագրումն ապահովելու համար հարկային օրենսդրությունը նախատեսում է որոշակի հարկատեսակներից կանխավճար:

Կանխավճարը հարկ վճարելու եղանակ է, որի ժամանակ բյուջե մուտքագրվելիք գումարները սահմանված կարգով վճարվում են մինչև հարկի վճարման ժամկետը:

*Հարկային կանխավճարի* իրավական բնույթը կայանում է նրանում, որ սեփականատիրոջ գույքը դրամի տեսքով տրվում է պետությանը փաստորեն որպես գրավ, որպես հարկային պարտավորությունների կատարման երաշխիք: Տվյալ գույքն ըստ հարկային օրենսդրության, դեռևս հարկ չի հանդիսանում բառիս բուն իմաստով: Դա բացատրվում է նրանով, որ մինչև վճարման ժամկետը չկա հարկման օբյեկտ, հարկման բազա, հարկման հաշվարկ և այլն: Հետևաբար հարկային կանխավճարը չի հանդիսանում պետության սեփականությունը, այլ իրենից ներկայացնում է դրամական միջոցների ժամանակավոր փոխառություն: 5) անհրաժեշտ պայմաններ ապահովել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների, (ուսումնասիրությունների) համար 6) ներկայացնել հարկային արտոնությունների՝ իր իրավունքը հաստատող փաստաթղթերը: 7) հարկային մարմնի ստուգումների (ուսումնասիրությունների) հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ ճշգրտումներ կատարել հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում նաև այլ հաշվառմանը և (կամ) գրանցումներին վերաբերող). փաստաթղթերում: 8) հարկային մարմնի կազմած ստուգման ակտի փաստերի հետ չհամաձայնելու դեպքում՝ ներկայացնել ակտը չստորագրելու պատճառների մասին գրավոր բացատրություն, որը կազմում է այդ ակտի անբաժանելի մասը:

Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով գրանցում (լիցենզիա) ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են հաշվառման կանգնել հարկային մարմնում և ստանալ հարկ վճարողների հաշվառման համարներ:

ՀՀ կառավարությունն իր 1995թ. հունիսի 7-ի թիվ 321 որոշմամբ սահմանեց «ՀՀ տարածքում հարկ վճարողների հաշվառման համարների համակարգը»:

ՀՀ տարածքում հարկ վճարողների ստույգ հաշվառման, տարբերակման, պետական մարմինների, ինչպես նաև դրանց և հարկ վճարողների միջև տեղեկատվական հոսքերի կանոնակարգման նպատակով ՀՀ կառավարությունը հանրապետության տարածքում սահմանեց, որ հարկ վճարողների հաշվառման համարը միակն է և ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման:

Հարկ վճարողների հաշվառման համարը կազմված է ութանիշ թվից: Հարկ վճարողների հաշվառման համարների միասնացումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, դրանց տրամադրումն ինչպես նաև տրամադրված համարների ընթացիկ ստուգման և մարման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Հարկ վճարողների հաշվառման համարները պարտադիր կարգով ստանում են՝

ա) ՀՀ տարածքում պետական գրանցում ունեցող և ՀՀ հարկային մարմիններում հաշվառման ենթակա բոլոր կազմակերպությունները՝ անկախ սեփականության ձևից և կազմակերպատիրական տեսակից, ըստ գտնվելու վայրի, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը՝ ըստ բնակության վայրի:

բ) հարկային մարմիններում հաշվառման ենթակա ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ ըստ ՀՀ տարածքում բնակության վայրի:

գ) պետական իրավասու մարմինների կողմից գրանցված կազմակերպություններն ու հիմնարկները՝ ըստ գտնվելու վայրի:

ՀՀ տարածքում հարկ վճարողների հաշվառման համարների տրամադրման և հարկ վճարողների հաշվառման համակարգի կիրարկման վերահսկողությունը դրված է հարկային մարմինների վրա:

Առանց հարկ վճարողների հաշվառման համարի ստացման կամ փաստաթղթերում նշումներ կատարելու, բոլոր տեսակի գործողությունները, ըստ սահմանված կարգի չեն իրականացվում համապատասխան իրավասու մարմինների կողմից, մինչև հարկ վճարողների հաշվառման համար ստանալը կամ փաստաթղթերում նշելը:

Հարկ վճարողների հաշվառման համարների համակարգի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պետական մարմինների պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարկ վճարողների հաշվառման համարները պետք է նշվեն նաև շրջանառության մեջ գտնվող մաքսային փաստաթղթերում:

Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար հաշվարկված հարկային օրենսդրութ-



յամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան չի սահմանված: Իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային մարմնի ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմնից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողության կամ անգործության հետևանքով:

Անհատ ձեռնակատիրոջ գործունեության դադարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային մարմնի ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել անհատ ձեռնարկատերի վրա՝ գործունեության դադարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային տեսչությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով:

Հարկային պարտավորության կատարման անհնարինության դեպքում հարկային մարմինն իրավունք ունի հարուցել հայց՝ վճարողի սնանկացման վերաբերյալ:

Հարկերի հաշվարկման, հսկողության և գանձման ժամանակ ապօրինի միջոցներով ձեռք բերված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար: Որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորությունների հաշվարկման գանձման համար, քանի դեռ վճարողը հնարավորություն չի ունեցել դրան ծանոթանալու և այդ առթիվ համապատասխան բացատրություններ տալու:

Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մար-

մինները պարտավոր են հարկային մարմիններին տեղեկություններ հաղորդել հարկատուների հետ կատարված գործառնությունների, ինչպես նաև իրենց կողմից և իրենց հաշվին ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և պահված հարկերի, հարկման նպատակով անհրաժեշտ տվյալների մասին:

## § 2. Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար

1. Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության այլ պահանջները պահպանելու պատասխանատվությունը հարկային օրենսդրությունում այլ բան սահմանված չլինելու դեպքում դրվում է վճարողների և դրանց կազմակերպությունների օրենսդրությամբ նախատեսված պաշտոնատար անձանց վրա:

Եթե հարկատուն չի ներկայացնում հարկվող օբյեկտի գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում, և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կուպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվապահական հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկատուի հարկային պարտավորությունը, ապա հարկային պարտավորությունը հաշվարկում է հարկային մարմինը՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով: Այս դեպքում հարկային մարմինը հիմնվում է 1. հարկատուի ակտիվների, 2. հարկատուի մարմինը իրացման շրջանառության ծավալների, 3. հարկատուի արտադրության և շրջանառության ծախսերի, 4. գույքագրման և չարության և շրջանառության ծախսերի, 5. օրենքով սահմանված կարգով երրորդ փազրման տվյալների, 6. համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, 7. ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ նորմերի վրա:

Հարկային օրենսդրության խախտման համար նախատեսվում են ֆինանսական, վարչական և քրեաիրավական սանկցիաներ:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում վճարողից գանձվում է տույժ, ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ ժամանակին չմուծված հարկի կամ գումարի 0, 15 %-ի չափով: Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների, հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտանաբերված հարկի օբյեկտի գումարի գծով հարկի գումարի նկատմամբ: Տույժը հաշվարկվում է մինչև 365 օր սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից սկսած:

Հարկատուների կողմից հարկային մարմինն ներկայացվող հաշվարկը, (հայտարարագիրը) օրենսդրությամբ սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան հարկի ընդհանուր գումարն է:

Հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում նաև այլ հաշվառում, և (կամ) գրանցումներ) չվարելու կամ սահմանված կարգի խախտումով վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերը ու տեղեկությունները սխալ կազմելու համար վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի 10 տոկոսի չափով:

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տված օբյեկտի համար նախատեսված հարկի ամբողջ գումարը, ինչպես նաև՝ այդ գումարի 50 տոկոսի չափով տուգանք, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում տուգանք հարկի ամբողջ գումարի չափով, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված:

Թաքցված կամ պակաս ցույց տրված են համարվում հարկվող այն օբյեկտները, որոնք ցույց չեն տրվել հարկային մարմիններին ներկայացված հաշվապահական հաշվետվություններում, հայտարարագրերում, ինչպես նաև գործունեություն չիրականացնելու (հարկման օբյեկտ չառաջանալու) մասին կեղծ տվյալների ներկայացումը:

Գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև հարկվող օբյեկտ հանդիսացող գույք չունենալու մասին հայտարարությունը հարկային մարմինն ներկայացված հաշվարկի (հայտարարագրի) ամփոփ ձևն է:

Ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այսինքն առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները, ինչպես նաև կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ամբողջ արժեքի չափով:

Արտադրանքը, ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից բարձր գներով իրականացնելիս հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ տարբերության գումարի չափով, այդ թվում՝ նաև չիրացված արտադրանքի, ապրանքների մնացորդների համար:

Արտադրանքը, ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից բարձր գներով իրականացնելիս հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ տարբերության գումարի չափով, այդ թվում՝ նաև չիրացված արտադրանքի, ապրանքների մնացորդների համար:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների կամ դրանց շահագործման կանոնների խախտմամբ դրամական հաշվարկներ իրականացնելու դեպքում, հարկ վճարողը վճարում է տուգանք հարյուր հիսուն հազար դրամի չափով: 76

Վերոհիշյալ տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում վերը նշված խախտումը կրկնելու դեպքում, հարկ վճարողը վճարում է տուգանք երեք հարյուր հազար դրամի չափով:

Հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար:

Հարկային պարտքի բռնագանձման մասին դատարանի վճռի ապահովման համար հարկային մարմինը հարկատուի գույքի վրա դնում է արգելանք և ապահովում է դրա իրացումը:

Հարկերի վճարումն ուշացնելու համար հարկային մարմինը, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած դեպքերի, հարկերի վճարման սահմանված ժամկետից 183 օրվա ընթաց-

քում սահմանված Կարգով հարկատուին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Ընդ որում, այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն:

Եթե հարկային մարմինն ունի փաստեր այն մասին, որ հարկային պարտավորություններ ունեցող հարկատուները վերացնում (լուծարում) են եկամուտ (շահույթ) առաջացնող իրենց օբյեկտները կամ թաքցնում են եկամուտը (շահույթը), որի հետևանքով հնարավոր չի դառնում գանձել հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերը, ապա հարկային մարմինը կարող է միջոցներ ձեռնարկել մինչև հաշվետու ժամանակը դրանք գանձելու ուղղությամբ: Այդ դեպքում հարկային մարմինը կարող է պահանջել հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված մյուս փաստաթղթերը մինչև հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը:

Առանձին հարկատեսակների մասին օրենքով նախատեսված դեպքերում առանձին հարկատուների կամ դրանց խմբերի համար, ինչպես նաև առանձին հարկատեսակի գծով՝ հարկային օրենսդրության խախտման համար կարող են կիրառվել տուգանքների այլ տեսակներ և չափեր, դրանց հաշվարկման, մուծման այլ կարգ, քան նախատեսված է «Հարկերի մասին» օրենքով:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մի շարք հոդվածներ սանկցիաներ են նախատեսում հարկային օրենսդրության խախտման համար:

1. Անհատ ձեռնարկատերերի, քաղաքացու կամ կազմակերպության պաշտոնատար անձի կողմից եկամուտների հաշվառում չվարելը կամ սահմանված կարգի կոպիտ խախտմամբ հաշվառում վարելը, եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը կամ ժամանակին չներկայացնելը կամ հայտարարագրի մեջ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, ինչպես նաև շահույթը (եկամուտը) կամ հարկվող կամ բյուջե կատարվող այլ պարտադիր վճարումներով հարկվող օբյեկտը թաքցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկից մինչև վեցապատիկի չափով և թաքցված շահույթի բռնագրավումով:

2. Կազմակերպության պաշտոնատար անձի կողմից հարկերը և պետական սոցիալական ապահովագրության մուծումները սահմանված կարգով և ժամանակին չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի լրիվ չափից մինչև կրկնապատիկը (ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքի 170 հոդված):

3. Անհատ ձեռնարկատերի կամ կազմակերպության պաշտոնատար անձի կողմից հարկային կամ կենսաթոշակային ու զբաղվածության ֆոնդի մարմիններում, կամ սոցիալական ապահովագրության մարմիններում մեկ տարվա ընթացքում հաշվառման կանգնելուց խուսափելը առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի լրիվ չափից մինչև կրկնապատիկը (ՀՀ վարչական իրավախախտությունների վերաբերյալ օրենսգրքի 170 հոդված):

ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի համաձայն՝ «Գանձվող հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելը՝ հաշվապահական գրքերում կամ հարկման հիմք համարվող այլ փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալները մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով՝

Պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով»:

Խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը:

ՀՀ քրեական օրենսգրքի 206 հոդվածի համաձայն քաղաքացու կողմից հարկ վճարելուց խուսափելը, որը դրսևորվում է նրա կողմից իր գույքի, եկամուտների մասին հայտարարագիր չարամտորեն չներկայացնելով, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրի մեջ եկամուտների և ծախսերի վերաբերյալ ակնհայտ խեղաթյուրված տվյալները մտցնելը, որը հանգեցրել է խոշոր չափերի հարկերի չվճարման՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգ-

հարյուրապատիկի չափով, կամ կալանքով երկու ամիս ժամկետով:

Տվյալ դեպքում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը:

### § 3. Հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը

Հարկային մարմնի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով հարկատուներին պատճառած վնասը (ներառյալ՝ բաց թողնված եկամուտը) հատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային մարմնի կողմից հաշվանցվում են հարկատուի այլ պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկատուի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Հարկային պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները հաշվանցվում են հարկատուի հաշվարկված տույժերի, տուգանգների՝ ապա հարկերի գումարների հաշվին:

Հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում հաշվարկված հարկային պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները վերադարձվում են այն դեպքերում, եթե հարկատուի կողմից կատարվել են հարկային պարտավորությունները:

Անուղղակի հարկերի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված գումարների և հաշվանցման (պակասեցման կամ վերադարձման) ենթակա հարկի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը հաշվանցվում (պակասեցվում կամ վերադարձվում) է այդ հարկատեսակների մասին օրենքներով սահմանված կարգով:

Եթե գործատուներն աշխատանքային պայմանագրով աշխատող անձանցից (վարձու աշխատողներից) ժամանակին չեն

գանձել հարկի գումարները, ապա դրանք գանձվում են վարձու աշխատողներից այդ մասին հայտնի դառնալուց ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ մնացած հարկային պարտավորությունները դրվում են գործատուի վրա: Հարկերի սահմանված չափից ավելի գանձված գումարները վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք տարիների համար:

Սահմանված չափից ավելի վճարված գումարները վերադարձնելու մասին հարկատուի դիմում տալը կասեցնում է այդ մեկամսյա ժամկետի ընթացքը:

Հարկային մարմինների կողմից իրենց վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով վճարողներից պատճառված վնասը (այդ թվում՝ բաց թողնված եկամուտի) հատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ օրենսդրությամբ հայտնի է օրենսդրությամբ սահմանված հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության երկու եղանակ՝ 1) վարչական (արտադատարանական) և 2) դատական: Հարկերը գանձելիս, հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կարող են բողոքարկվել այն մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք: Բողոքները քննության են առնվում և դրանց առթիվ որոշումներ են կայացվում ոչ ուշ, քան բողոքը ստացվելու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

Այդ որոշումները կարող են բողոքարկվել վերադաս հարկային մարմնին բողոքարկողին որոշման կրկնօրինակը հանձնելու օրվանից մեկամսյա ժամկետում կամ՝ դատարան:

Հարկատու և (կամ) նրա կողմից լիազորված անձն իրավունք ունեն մասնակցել բողոքի քննարկմանը:

Հարկային մարմինների պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը՝ կապված վարչական տուգանք նշանակելու հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

Հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկումը չի դադարեցնում հարկերի գանձումը: Բողոքը քննության առնող հարկային մարմինը (հարկային մարմնի վերադաս մարմնի համաձայնությամբ) իրավունք ունի դադարեցնել հարկի գանձումը՝ մինչև բողոքի լուծումը:

ԳԼՈՒԽ 11  
ՇԱՀՈՒՔԱԿԱՐԿ

ՀՀ-ում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույթաչափերը, հաշվարկման և վճարման կարգը սահմանվել է «Շահութահարկի մասին» 1997 դեկտեմբերի 27-ի օրենքով:

Շահութահարկը հարկ վճարողների կողմից «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե նշված օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Շահութահարկ վճարողները շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում հարկային մարմնին գրավոր տեղեկացնում են իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին, եթե հարկատուին օրենքով կամ այլ իրավական ակտով վերապահված է նման ընտրության իրավունք:

Շահութահարկ վճարողները իրավաբանական անձինք են որոնք բաժանվում են՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների: Ռեզիդենտ են համարվում ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած) իրավաբանական անձինք: Ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից հանրապետության տարածքից դուրս ստեղծած իրավաբանական անձինք:

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ինչպես հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Ոչ ռեզիդենտների հարկվող օբյեկտը՝ միայն հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթն է:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Նշված օրենքի 7 հոդվածում տրված է համախառն եկամտի սահմանումը: Այն հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազեցումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: Սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը: Ակտիվ է համարվում հարկատուին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույք:

Պարտավորություն է համարվում հարկատուի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն):

Եկամուտների թվին են դասվում՝  
ա) ապրանքների, արտադրանքի իրացումից ստացվող հասույթ:

բ) ծառայությունների իրացումից ստացվող հասույթ:  
գ) հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացվող հասույթ:

դ) փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցում

ե) վարձակալության դիմաց ստացվող վճարումները և այլ հատուցում:

զ) շահաբաժինները:  
է) ապահովագրական հատկացումները և հիշյալ հոդվածով նշված այլ եկամուտներ:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թուլաբերվում է կատարել «Շահութահարկի մասին» օրենքի 4-րդ գլխում նախատեսված նվազեցումները: Դրանցից հիմնականներն են՝ ծախսերը, կորուստները և այլն: Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

«Շահութահարկի մասին» օրենքի 10 հոդվածի համաձայն՝

ա) ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը:

բ) անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը: Նշենք հիմնական ծախսերից մի քանիսը 1. նյութական ծախսեր, 2. աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ, 3. պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, 4. ամորտազիացիոն մասհանումներ, 5. ապահովագրական վճարներ, 6. գովազդային ծախսեր, 7. ներկայացուցչական ծախսեր, 8. գործուղման ծախսեր, 9. դատական ծախսեր, 10. ամորտիզացիոն մասհանումներ, 11. հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը և այլն:

Ծախս չեն համարվում՝

ա) հարկատուի սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով

ա) այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները:

գ) հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնենասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը:

դ) արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը:

1. Հարկվող շահույթը որոշելիս, համախառն եկամուտը նվազեցվում է գույքի ՀՀ կառավարության սահմանված կարգով որոշված չափը չգերազանցող փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորստի (բնական կորուստ) մասով՝ տվյալ տարվա ընթացքում:

2. ՀՀ կառավարության սահմանված կարգով որոշված բնական կորստի չափերը գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

«Շահութահարկի մասին» օրենքի իմաստով՝ պատահական կորուստ է համարվում հարկատուի գույքի փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը, ոչնչացումը, վնասումը կամ որակական հատկանիշների անկումը, որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների (ներառյալ օրենքով սահմանված ապահովագրական պատահարների) հետևանքով:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Հարկատուի գործունեությունից վնասը «Շահութահարկի մասին» օրենքի սահմանված նվազեցումների գերազանցում է համախառն եկամտի նկատմամբ:

Շահութահարկի մասին» օրենքի 16 հոդվածում թվարկված են հարկման նպատակով համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը: Դրանք են՝

1. վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող վճարները:

2. ՀՀ տարածքից դուրս գովազդի, կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ՀՀ կառավարության չափը գերազանցող ծախսերը:

3. հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը:

4. ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերի, իսկ ՀՀ տարածքում՝ օրապահիկի ծախսերի համար ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը:

5. ՀՀ կառավարության սահմանած չափը գերազանցող ներկայացուցչական ծախսերը և այլն:

Ռեզիդենտների համար սահմանված են հետևյալ դրույթաչափերը՝


Ներկայումս շահութահարկի արտոնություններ սահմանված են՝

1. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի համար, եթե հարկատուի կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

2. հաշմանդամներին տրվող վճարումները: Այս դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի նոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով:

3. օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններից երկու տարի շահութահարկ չի զանձվում, այնուհետև ըստ «Շահութահարկի մասին» օրենքի 39 հոդվածով նախատեսված ժամանակացույցի շահութահարկը նվազեցվում 50 տոկոսով:

4. «Շահութահարկի մասին» օրենքի 40 հոդվածով նախատեսված է շահութահարկի վճարման ժամկետի հետաձգումը: Բնական գազի, էլեկտրական և ջերմային էներգիայի, խմելու և ոռոգման ջրի արտադրության, տեղափոխման և վաճառքի գործարքների և գործառնությունների, երկաթուղային փոխադրումների իրացման և այլնի գծով շահութահարկի վճարման ժամկետը հետաձգվում է մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը:

 Շահութահարկի հաշվարկման կարգը  
և վճարման ժամկետները

Հարկատուները շահութահարկի գումարները որոշում են յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված դրույթաչափերով:

Ռեզիդենտների համար սահմանված են շահութահարկի հետևյալ դրույթաչափերը՝

Անկախ հարկվող շահույթի գումարից շահութահարկի դրույթաչափն 20 տոկոս է:

Շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպումից ու անցկացումից ստացված եկամուտների դիմաց շահութահարկը վճարվում է 70 տոկոս, բացառությամբ շահութահարկի հաստատագրված վճարների:

Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ մինչև հաշվետու տարվա ապրիլի 15-ը:

«Շահութահարկի մասին» օրենքի 47 հոդվածով նախատեսված է ռեզիդենտներից շահութահարկի կանխավճարների մուծման կարգը:

Հարկատուն պարտավոր է շահութահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ:

Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 7 հոդվածով սահմանված են ԱԱՀ- ով չհարկվող օբյեկտները՝

1. այն ծառայությունները, որոնց համար գանձվում է պետական տուրք.
2. կանոնադրական կապիտալի սահմանված կարգով ձևավորման ու համալրմանն ուղղվող միջոցները.
3. իրավաբանական անձի ՀՀ-ում տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների միջև ապրանքների և ծառայությունների փոխանցումը (ներքին շրջանառություն).
4. դրամական ձևով տրվող ֆինանսական օգնությունը և շահաբաժինները.
5. ՀՀ բյուջետային հիմնարկները և այլն:  
ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում.
2. ՀՀ ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող ակցիզային հարկի գումարը.
3. ԱԱՀ վճարող անձանց կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված վերանշակման կամ նորոգման նպատակով ՀՀ ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերանշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց կամ օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, իսկ այդ արժեքի որոշման անհնարիության դեպքում՝ ապրանքների վերանշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը.
4. ՀՀ-ում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված և հարկ վճարողի հաշվառման համար չունեցող օտարերկրյա իրավաբանական, կամ ֆիզիկական անձանց ապրանքների մատակարարմանը կամ ծառայությունների մատուցմանը ՀՀ-ում ԱԱՀ վճարող անձանց մասնակցելու և նրանց անունից կամ հաշվին հանդես գալու դեպքում՝ (այդ թվում հանձնուղղային (կոմիսիոն), աճուրդային վաճառքի հի-

մունքներով), ՀՀ-ում ԱԱՀ վճարող այդ անձինք համարվում են այդ ապրանքների մատակարարը կամ ծառայություն մատուցողը և նշված անձանց փոխարեն հարկային պարտավորություններ են կրում ԱԱՀ-ի վճարման գծով: Այդ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման ժամանակ հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտմամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարները)՝ առանց ԱԱՀ-ի.

5. միջնորդական ծառայությունների մատուցման դեպքում հարկվող շրջանառություն է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր)՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան չի նախատեսում.

6. ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ մատակարարվող ապրանքների ու մատուցվող ծառայությունների համար նախատեսվում է տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող զներից էականորեն ավելի ցածր զներ. հարկվող շրջանառություն է համարվում այդ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը.

7. փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի.

8. ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկի գումարը:

Ապրանքների կամ ծառայությունների արտահանման և ներմուծման ժամանակ կիրառվում է ըստ նշանակման ( ըստ սպառման) վայրի սկզբունքը: Սա նշանակում է, որ ապրանքների կամ ծառայությունների ավելացված արժեքի հիմքը հաշվարկվելու և գանձվելու է այն երկրում, որտեղ որ հրամք սպառվելու են:

ԱԱՀ-ի հարկի համար սահմանված են հետևյալ դրույքաչափերը՝

1. 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:



ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Այն սահմանվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» 1997 թ. հունիսի 16-ի ՀՀ օրենքով:

Ավելացված արժեքի հարկ վճարողները հիմնականում իրավաբանական անձինք են, որոնք օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն են վարում կամ իրականացնում են որոշակի գործարքներ (գործառնություններ): Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը:

Ֆիզիկական անձինք ԱԱՀ -ը վճարող են դառնում միայն այն դեպքում, երբ ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ տարածք են ներմուծում ապրանքներ, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը չի գերազանցում օրենքով սահմանված չափերը:

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված: «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6 հոդվածում թվարկված են այդ գործարքները (գործառնությունները): Դրանք են՝

1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքի հատուցման դիմաց՝ այլ անձի փոխանցելու միջոցով:

Ֆիզիկական անձանց անձնական գույքի օտարումը, որպես կանոն չի հանդիսանում ապրանքների մատակարարում:

2) ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհանդիսացող գործարք (գործառնություն), որն ի-

րականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատակարարում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը:

3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը: Այն իրենից ներկայացնում է ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում, տվյալ անձանց կամ այլ անձանց, կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ավելի ցածր գներով:

4) ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի: ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է ՀՀ սահմանին մաքսային մարմինների կողմից հանրապետության ներքին տարածք ներմուծվող այն ապրանքներից, որոնց համար օրենքով սահմանված է մաքսատուրք:

1-ին, 2-րդ, 3-րդ կետերում նշված գործարքներ իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը համարվում են ԱԱՀ վճարող՝

-եթե նրանք օրենքի համաձայն չեն համրվում պարզեցված հարկ վճարողներ,

-այն գործարքների (գործունեության) մասով, որոնք ենթակա չեն պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարով հարկման:

Տնտեսական գործունեության իրականացած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց՝ 1-ին, 2-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3 միլիոն դրամ: Այդ անձինք ԱԱՀ վճարում են նշված գումարը գերազանցող մասի համար: Հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ընդհանուր արդյունքը՝ առանց կատարված ծախսերի պակասեցման: Առևտրի ոլորտում այն հավասարեցվում է ապրանքաշրջանառությանը:

2. Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) 16, 67 տոկոս հաշվարկային դրույքաչափով:

ԱԱՀ-ի մասին օրենքով սահմանված են արտոնություններ և գրոյական դրույքաչափով հարկում:

ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

ԱԱՀ-ի մասին օրենքի 15 հոդվածով ԱԱՀ-ից ազատվում են՝

1. քաղաքային մարդատար էլեկտրատրանսպորտով (տրոլեյբուս, տրամվայ, մետրո և ճոպանուղի) ուղևորների փոխադրման ծառայությունները.

2. հանրակրթական դպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով.

3. դպրոցական տետրերի, դասագրքերի, մանկական և դպրոցական գրականության իրացումը, բուհերի, մասնագիտակցված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից հրատարակվող գիտական, գիտամեթոդական գրականության և դասագրքերի իրացումը.

4. գիտահետազոտական աշխատանքները.

5. մանկական սննդի իրացումը.

Չրոյական դրույքաչափով հարկումը՝ ապրանքների ու ծառայությունների արտահանման նկատմամբ արտահանվող երկրի տարածքում ԱԱՀ-ով չհարկելն և ապրանքների ու ծառայությունների արտահանող անձին իր կողմից վճարված ԱԱՀ-ի գումարների լրիվ փոխհատուցումը (հաշվանցումը):

ԱԱՀ-ի մասին օրենքի 16 հոդվածով ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափը կիրառվում է՝

1. ՀՀ մաքսային սահմանից դուրս մատակարարվող (արտահանվող) ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաև միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելիքային ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ.

Նախատեսվում է նաև, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում

վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են մաքսային մարմինների կողմից:

2. օդանավակայաններում մաքսային և անձնագրային հսկողության տարածքից հետո հատուկ առանձնացված վայրերում միջազգային երթուղիներով մեկնող ուղևորներին ապրանքների մանրածախ վաճառքի նկատմամբ, եթե այդ ապրանքների մինչև վաճառքի դրվելը անցել են մաքսային ձևակերպում ներքին տարածքներից ապրանքների արտահանման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

3. սփյուռքահայ համայնքների, օտարերկրյա պետությունների, օտարերկրյա և միջազգային միջկառավարական (միջպետական) կամ ոչ կառավարական (հասարակական կամ այլ համանման բնույթի) ու կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների, կողմից անհատույց տրամադրված միջոցների հաշվին մարդասիրական օգնություն և բարեգործական, այլ սոցիալական ծրագրերի շրջանակներում կատարվող շինարարական և հարակից (նախագծային, հետազոտական և այլն) աշխատանքների նկատմամբ.

4. դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող կամ հանրապետության տարածքում ձեռք բերվող ապրանքների, նրանց մատուցվող ծառայությունների նկատմամբ.

5. հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ և այլն:

### ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման կարգը

ԱԱՀ վճարողները ավելացված արժեքի հարկով հարկվող ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցուման դեպքում պարտավոր են օրենքով սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում հաշիվ-ֆակտուրան կամ ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը հաստատող սահմանված կարգի այլ փասթաթղուղթ, հաշվարկային փաստաթուղթ, որոնցում առանձնացված է ԱԱՀ-ի գումարը:

Հարկային հաշիվների մեջ պարտադիր նշվում են հետևյալ տվյալները՝

ա) հաշվի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.

բ) ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի անվանումը, իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը:

գ) ապրանքներ և ծառայություններ ստացող անձի անվանումը, իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը:

դ) ապրանքների անվանումը և քանակը կամ ծառայությունների տեսակը և ծավալը:

ե) ապրանքների գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինը և հատուցման ընդհանուր գումարն առանց ԱԱՀ-ի:

զ) հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (առանձին տողով):

է) ՀՀ կառավարության կողմից նախատեսված այլ տեղեկություններ:

Որպես հարկային հաշիվ կարող են ծառայել նաև առևտրի և սպասարկումների ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից տրված ապրանքների մատուցված ծառայությունների) գնման չեկերը (կտրոնները), եթե դրանք պարունակում են վերը նշված տվյալները: Առանձին տվյալների բացակայության դեպքում դրանք պետք է արտացոլվեն չեկին կցվող սահմանված կարգով լրացված հարկային հաշիվում:

ԱԱՀ-ի վճարող չհանդիսացող օտարերկրյա ֆիզիկական անձանց համար մանրածախ հարկային հաշիվ (չեկ) դուրս է գրվում կապված ՀՀ-ում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս՝ դրանց համար վճարված ԱԱՀ-ի գումարները նրանց վերադարձնելու հետ:

Մանրածախ առևտրի և սպասարկումների ոլորտում ապրանքների գնման կամ ծառայությունների ձեռք բերման դեպքում գնորդների (հաճախորդների) պահանջով ԱԱՀ վճարող անձ հանդիսացող անձինք պարտավոր են դուրս գրել պատշաճ ձևով հարկային հաշիվ:

Հայաստանի Հանրապետությունում ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ -ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպման ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարային փաստաթղթերով (վճարման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հաստատող այլ փաստաթղթեր):

ԱԱՀ վճարող անձինք պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և դուրսգրման օրվան հաջորդող առնվազն

երեք տարի պահպանել իրենց կողմից տրված բոլոր հարկային հաշիվների պատճենները, ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման ժամանակ ԱԱՀ-ի վճարումը հաստատող հաշիվները, ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին ԱԱՀ-ի վճարումը հաստատող հայտարարագրերը, ինչպես նաև ԱԱՀ-ի վճարումը հաստատող հայտարարագրերը, ինչպես նաև ԱԱՀ-ի հաշվարկմանը և վճարմանը վերաբերող այլ փաստաթղթեր:

ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում են արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, որոնց դիմաց բանկային փոխանցմամբ կատարվել է վճարում:

Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում իրականացված գործարքների մասով ոչ բանկային՝ փոխանցումներով վճարված գումարները հաշվանցվում են, եթե ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գումարը (առանց ավելացված արժեքի հարկի) օրենքով սահմանված համամասնությունները:

Հայաստանի Հանրապետությունում ապրանքների ներմուծման դեպքում դրանց համար ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ներմուծման օրվանից 3 օրվա ընթացքում:

ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված ԱԱՀ-ի հաշվարկման ծագման պահը, երբ տեղի է ունեցել ներքոհիշյալ դեպքերից որևէ մեկը՝

1. ապրանքներն առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին.

2. ըստ վճարման (դրամարկղային) մեթոդ կիրառվող ԱԱՀ վճարողների համար՝ ապրանքների մատակարարման և ծառա-

յությունների մատուցուման գծով գնորդներից, պատվիրատուներից ստացվել է հատուցում.

3. անհատույց (մասնակի հատուցմամբ) գործարքների (գործառնությունների) իրականացման օրը:

ԱԱՀ-ի մասին օրենքի համաձայն, այդ հարկի հաշվարկված գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:

Հաշվետու տարվա համար վճարումները կատարվում են մինչև հաշվետու տարվան հաջորդող փետրվարի 25-ը:

## ԳԼՈՒԽ 13

### ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկը սահմանվել է ՀՀ 2000 թ. հունիսի 27-ի «Ակցիզային հարկի մասին» օրենքով: Ակցիզային հարկն ապրանքի գնի մեջ մտնող անուղղակի հարկ է: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են գարեջուրը, խաղողի գինիները, գինեմյուսը, սպիրտը և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարետ-լաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզին, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազաման ալլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի):

ՀՀ-ում ակցիզային հարկ վճարում են վերոհիշյալ ապրանքները ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շալցնող կամ այլ կերպ տարայավորող) իրավաբանական և ֆիզիկական անձինք:

#### Հարկման օբյեկտը և հարկման բազան

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում

1. «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծում ՀՀ.

2. ՀՀ տարածքում արտադրողների (ներառյալ՝ շալցնողների կամ այլ կերպ տարայավորողների) կողմից ակցիզային օտարումը (այդ թվում՝ անհատույց) ;

3. Հարկով հարկվող օբյեկտ է համարվում նաև գույքի, ծառայությունների, աշխատանքների դիմաց ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարումը (փոխանակումը):

Հարկման բազա է համարվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների քանակը ծավալը՝ արտահայտված «Ակցիզային հարկի մասին» օրենքով սահմանված չափման բնաիրային միավորներով, որի նկատմամբ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է ակցիզային հարկի գումարը:

Ակցիզային հարկը վճարում են հետևյալ դրույթաչափերով՝

ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույթաչափը (դրամ)
2203	գարեջուր	1 լիտր	70
2204	խաղողի և այլ գինիներ, գինեգյուղային թվում՝	1 լիտր	100
220410	փրփրուն գինիներ, շամպայն		180 300
2205	Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500
2206	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրարմպելիք)	1 լիտր	180
2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	600
2208	սպիրտային խմիչքներ այդ թվում՝	1 լիտր	1,500
220820	խաղողի գինում կամ գինեգյուղային թորումից ստացվող սպիրտային թրմեր (կոնյակ, արմնանյակ և այլն)		1,200
220860	օղի, լիկյորներ և մրգօղիներ		300
220870			
2403	Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1,500
2709	Հում նավթ և նավթամթերք	1 տոննա	27,000
2710 00 690	դիզելային վառելիք	1 տոննա	11,500
2711 (բացառությամբ 2711 11 և 2711 21)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)	1 տոննա	1,000

Հայաստանի Հանրապետությունը ներմուծվող բենզինի ծախսերի, ՀՀ-ում արտադրվող ծխախոտի համար սահմանված են ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճարներ: Դրանց հաշվարկման և վճարման կարգը սահմանվել են համապատասխան օրենքներով: Վճարողներ են համարվում բենզին ներմուծվող ֆիզիկական և իրավաբանական անձինք: Վճարողների տնտեսական գործունեության արդյունքների և ներմուծվող բենզինի մաքսային արժեքից անկախ՝ ՀՀ ներմուծվող բենզինի յուրաքանչյուր տոննայի համար սահմանվում է 222 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Հաստատագրված վճարի ընդհանուր մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 39,2 տոկոս:

Հաստատագրված վճարը վճարվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում:

1. Ակցիզային հարկով չեն հարկվում՝

ա) ՀՀ -ից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանումը, եթե առկա է մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված բեռնամաքսային հայտարարագրի պատճեն՝ «Բացթողումը թույլատրված է» նշումով:

բ) «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող՝ ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված մաքսային ռեժիմներով հանրապետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

գ) օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված պետությանը հանձնված տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը և օտարումը:

դ) մաքսային օրենսդրությամբ սահմանված ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

2. Օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկի այլ արտոնություններ:

ՀՀ կառավարությունը 1997 թ. հունիսի 10-ի թիվ 175 և հունիսի 12-ի թիվ 178 որոշումներով սահմանել է ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող և ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման կարգը: Ենթակցիզային ապրանքների ողջ խմբից ընտրվեցին ոգելից խմիչքները և ծխախոտի արտադրանքը: Իմաստն այն էր, որ դրոշմանիշների միջոցով հաշվառվում են արտադրված կամ ներմուծված ենթակցիզային այդ ապրանքները, որպեսզի դրա հետ մեկտեղ նաև հարկերի մուտքը բյուջե:

Հարկ վճարողների համար ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման համար վճարված գումարը համարվում է հաշվարկված ակցիզային կանխավճար, իսկ օրենսդրությամբ սահմանված կարգով ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների համար՝ հաստատագրված վճարներից նվազեցման ենթակա գումար, և չի կարող հաշվանցվել այլ հարկային պարտավորությունների հաշվին:

1. ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող անձանց կողմից ակցիզային հարկ վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով: Այս դեպքում ակցիզային հարկի վերաբերյալ ՀՀ հարկային ծառայության մարմիններին հաշվարկ չեն ներկայացվում:

2. ՀՀ տարածքում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համարի օրենքով սահմանված կարգով հարկ վճարող անձանց համար ակցիզային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Նշված վճարողները մինչև հաջորդող ամսվա 15-ը, վճարում են ակցիզային հարկը և համապատասխան հարկային մարմին են են ներկայացնում ակցիզային հարկի հաշվարկ ՀՀ հարկային ծառայության մարմինը սահմանված ձևով:

«Ակցիզային հարկի մասին» օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկվող բազան թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ակցիզային հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի չափով:

Հարկը վճարողի կողմից ակցիզային հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման և սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով ներկայացված ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 208, 209, 210, 211 հոդվածներով քրեական պատասխանատվություն է սահմանված ակցիզային դրոշմանիշների կեղծման կամ դրանց իրացման, ակցիզային դրոշմանիշների օտարման կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով ապրանքների դրոշմավորման, ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշվավորված ապրանքների իրացման, ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնների խախտման համար:

ԳԼՈՒԽ 14  
ԵԿԱՄԱՏԱՅԱՐԿ

Եկամտահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, հարկատուների շրջանակը, դրույթաչափերը, հաշվարկման և վճարման կարգը սահմանված է 1997 թ. դեկտեմբերի 30-ի «Եկամտահարկի մասին» օրենքով:

Եկամտահարկը հարկ վճարողների կողմից, իսկ օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի միջոցով օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկն է:

Հարկատուները ֆիզիկական անձինք են, որոնք կարող են լինել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ:

Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը 1. հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) սկսվող կամ ավարտվող ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, 2. կամ ուն կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող, բայց ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը (օրինակ, դիվանագետները):

Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան շահի տակ հասկացվում է այն վայրը հանրապետությունում, որտեղ գտնվում է ֆիզիկական անձի տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը և գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը: Իսկ տնտեսական շահի տակ՝ տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ինչպես հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը: Ոչ ռեզիդենտների հարկվող օբյեկտը՝ միայն հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտն է:

Հարկատուներից բացի, օրենքով սահմանված դեպքերում եկամտահարկ են վճարում նաև հարկային գործակալները:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Նշված օրենքի 6 հոդվածում տրված է համախառն եկամտի սահմանումը: Այն հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Այդ եկամուտներն են՝

1. աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված վճարները.

2. փոխառության դիմաց ստացվող տոկոսը և այլ հատուցումը.

3. շահաբաժինները.

4. խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները.

5. ապահովագրական հատուցումները.

6. վարձակալության դիմաց ստացվող վճարը և այլ հատուցումը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացվող եկամուտը.

7. իրավաբանական անձանց կողմից ֆիզիկական անձանց համար արված ապահովագրավճարները, բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների.

9. և այլն:

Եկամուտ չեն համարվում՝

1. ՀՀ օրենսդրության համաձայն վճարվող նպաստները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստների.

2. ՀՀ օրենսդրության համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները.

3. զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին ՀՀ օրենսդրության համաձայն տրվող միանվագ վճարները.

4. ՀՀ օրենսդրության համապատասխան վճարվող ալիմենտները (ապրուստավճարները).

5. արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացած գումարները:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածում տրված է եկամտի նվազեցումների տեսակները, դրանց թվարկումը: Դրանք լինում են երեք տեսակի՝ նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ և ծախսեր:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածում թվարկված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները: Դրանք են՝

1. զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները:

2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

3. ՀՀ օրենսդրությամբ համապատասխան ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները:

5. սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից ֆիզիկական անձանց ստացած գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացված գումարների:

6. և այլն:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածում տրված է անձնական նվազեցման կարգը: Համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 20000 դրամի չափով: Ընդ որում, եկամտի ստացման յուրաքանչյուր ամսում հարկատուի համախառն եկամուտը որոշելիս ստացվող եկամտից հարկային գործակալը սույն նվազեցումն իրականացնում է անկախ տվյալ հարկատուի կողմից ստացվող եկամուտներից մյուս հարկային գործակալների կողմից ստացվող նվազեցումների իրականացումից:

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է նաև ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիաիրավական պայմանագրեր կատարելուց ստացած եկամուտների գծով անհրաժեշտ փաստաթղթերով ծախսերի չափով ֆիզիկական անձի կողմից ներկայացվող հայտարարագրի հիման վրա: Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես եկամտի ստացման հետ կապված ծախսերը: Փաս-

տաթղթերով ծախսերի հիմնավորման պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:

### Եկամտահարկի դրույքաչափերը

Օրենքով սահմանված են հետևյալ դրույքաչափերը՝

1. Բացառությամբ ռոյալթիթների<sup>1</sup> և գույքի վարձակալության տալու եկամուտներից հաշվարկվող եկամտահարկի, հարկային գործակալը եկամտահարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով:

---

Ամսական հարկվող եկամտի չափը, հարկի գումարը

---

մինչև 80000 դրամ հարկվող եկամտի 10 տոկոսը

80000 դրամից ավելի 8000 դրամին գումարած 80000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

---

2. Բացառությամբ ռոյալթիթների և գույքի վարձակալության տալու եկամուտներից հաշվարկվող եկամտահարկի, հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտահարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով:

---

Տարեկան հարկվող եկամտի չափը Հարկի գումարը

---

մինչև 960000 դրամ հարկվող եկամտի 10 տոկոսը  
960000 դրամից ավելի 96000 դրամին գումարած 960000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

---

<sup>1</sup> Հեղինակային և գյուտարարական իրավունքից օգտվելու համար վճարներ:



3. Ռոյալիթիների և գույքի վարձակալության տալու եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները:

4. Տոկոսների համար եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները:

## ԳԼՈՒԽ 15

### ԳՈՒՅՔԱՅԱՐԿ

Գույքահարկը սահմանվել է «Գույքահարկի մասին» ՀՀ 2002 թ. դեկտեմբերի 26-ի օրենքով:

Գույքահարկը հարկատուներին սեփականության իրավունքով պատկանող նշված օրենքով սահմանված գույքի համար այդ օրենքով սահմանված կարգով և չափով վճարվող ուղղակի հարկ է: Այն կախված չէ հարկատուների տնտեսական գործունեության արդյունքներից:

Գույքահարկ վճարողներ են (հարկատուներն են)՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, որոնց սեփականության իրավունքով պատկանում է գույքը:

Գույքահարկ վճարող չեն հանդիսանում ՀՀ պետական մարմինները, հիմնարկները, ՀՀ կենտրոնական բանկը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Եթե հարկման օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկատուների, ապա գույքահարկի և դրանից բխող պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն: Եթե հարկման օբյեկտը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկատուների, ապա գույքահարկի և դրանից բխող պարտավորությունների համար կրում են պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

Հարկման օբյեկտ է համարվում պատկանող՝ շենքերը և շինությունները

1) Բնակելի նշանակության շինությունները՝

ա) անհատական բնակելի տունը հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,

բ) բնակարանը բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,

գ) այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառոցային շինությունը.

- 2) բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.
- 3) բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքը՝ բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
- 4) ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը.
- 5) հասարակական նշանակության շինությունը՝ բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը.
- 6) արտադրական նշանակության շինությունը՝ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը.
- 7) ՀՀ կառավարության սահմանած կարգով բնութագրվող անավարտ (կիսակառույց) շինությունները
- 8) ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շենքերը և շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում:

2. Փոխադրամիջոցները , այդ թվում՝

- 1) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.
- 2) ջրային փոխադրամիջոցները.
- 3) մոտոցիկլետը:

Գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ բնութագրիչը, որի հիման վրա օրենքով սահմանված դույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը:

Շինությունների հարկման բազան գույքահարկի մասին օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը՝

դրամով արտահայտված: Շինությունների գնահատումը (վերագնահատումը) կատարվում է երեք տարին մեկ անգամ անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից:

**Գույքահարկի դույքաչափերը**

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դույքաչափերով.

- 1) հասարակական ու արտադրական նշանակության շինությունների համար՝ հարկման բազայի 0, 3 տոկոսը.
- 2) բազմաբնակարան բնակելի շենքի, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի, ՀՀ կառավարության սահմանած կարգով բնութագրվող անավարտ (կիսակառույց) շինությունների, ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված ու դեռևս իրավունքների պետական գրանցում չստացած շենքերի և շինությունների համար՝  
մինչև 3 մլն. դրամ՝ հարկի դույքաչափը հարկման բազայի 0 տոկոս.
- 3 մլն դրամից մինչև 10 մլն դրամ՝ 100 դրամ գումարած 3 մլն գերազանցող գումարի 0, 1 տոկոսը.
- 10 մլն դրամից մինչև 20 մլն դրամ՝ 7, 100 դրամ գումարած 10 մլն դրամը գերազանցող գումարի 0, 2 տոկոսը.
- 20 մլն դրամից մինչև 30 մլն դրամ՝ 27, 100 դրամ գումարած 10 մլն դրամը գերազանցող գումարի 0, 4 տոկոսը.
- 30 մլն դրամից մինչև 40 մլն դրամ՝ 67, 100 դրամ գումարած 30 մլն դրամը գերազանցող գումարի 0, 6 տոկոսը.
- 40 մլն դրամ և ավելի՝ 127, 100 դրամ գումարած 30 մլն դրամը գերազանցող գումարի 1,0 տոկոսը:

ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունների համար՝ հարկման բազայի 0,2 տոկոսը:

Փոխադրամիջոցների հարկման բազան՝ փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունն է: Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քարշող շարժիչների առկայության դեպքում հարկման բազան բոլոր քարշող շարժիչների գումարային հզորությունն է: Շարժիչի հզորության չափման միավորը ծիաուժն է կամ կիլովատը:

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույթաչափերով՝ ա) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր դիմաց՝ 200 դրամ,

- 121-ից -250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ 1000 դրամ.

- 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ 1000 դրամ.

բ) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1- 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր դիմաց՝ 100 դրամ,

- 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր դիմաց՝ 200 դրամ:

2. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույթաչափով:

Մնացած փոխադրամիջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ դրույթաչափերով՝

3) ջրային փոխադրամիջոցների հարկման բազայի՝

-յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 150 դրամ կամ

երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան հարկի գումարի 50 տոկոսը:

Փոխադրամիջոցների հարկման բազան կիրառվում է արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է համապատասխան դրույթաչափի նկատմամբ կիրառելով 1,36 գործակից:

**Գույքահարկի հաշվարկման և վճարման կարգը**

Գույքահարկի հաշվարկելու և վճարելու պարտավորությունը հարկատուի համար առաջանում է հարկման օբյեկտի կամ

դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսից:

Հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի օտարման դեպքում նախկին սեփականատերը պարտավոր է գույքահարկը հաշվարկել և ամբողջությամբ վճարել մինչև օտարման ամիսը ներառյալ:

Իրավաբանական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույնաբար և հաշվարկները ներկայացնում հարկային մարմիններ: Եռամսյակային հաշվարկները՝ մինչև հաշվետու տարվա յուրաքանչյուր եռամսյակին անմիջապես հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ տարեկան հաշվարկները՝ մինչև հաշվետու տարեկան անմիջապես հաջորդող տարվա փետրվարի 25-ը ներառյալ, ներկայացվում են հարկային համապատասխան մարմիններ:

Ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույնաբար և կարող է մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել հարկային համապատասխան մարմիններ:

Ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի համար գույքահարկը հաշվարկվում է բաժնեմասերին համապատասխան:

Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գույքի գույքագրում և գրանցում իրականացնող համապատասխան պետական մարմինները պարտավոր են գույքահարկի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներ հաղորդել Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին:

ՀՀ կառավարության 1995թ. հուլիսի 6-ի թիվ 490 որոշմամբ հաստատվեց «Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկություններ ՀՀ հարկային տեսչության մարմիններին ներկայացնելու կարգը»:

Այդ որոշմամբ սահմանվեց, որ ՀՀ տարածքում անիվավոր և թրթուրավոր տրակտորների, հացահատիկահավաք, կերահավաք կոմբայնների և մյուս ինքնագնաց մեքենաների հաշվառումը և դրանց պետական տեխնիկական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

2) օդային փոխադրամիջոցների հաշվառումը և դրանց պետական տեխնիկական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ

կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը.

3) ջրային փոխադրամիջոցների հաշվառումը և դրանց պետական տեխնիկական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### Գույքահարկի արտոնություններ

Գույքահարկից ազատվում են՝

1. գծային ինժեներատեխնիկական շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում.

2. անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենա և մեխանիզմ համարվող ճանապարհային և շինարարական տեխնիկական.

3. ջրամբարները

4. ժամանակավոր տնակները.

5. օրենսդրությամբ սահմանված կարգով պատմամշակույթային նշանակություն ճանաչված հարկվող գույքը՝ ՀՀ կառավարության սահմանված ցանկին համապատասխան:

Ծառայության ողջ ընթացքում գույքահարկից ազատվում են ՀՀ զինված ուժերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում ժամկետային ծառայության մեջ գտնվող անձինք:

Առանձին հարկատուների համար համայնք կարող է սահմանել գույքահարկի արտոնություն: Այդ արտոնությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների հինգ տոկոսը:

## ԳԼՈՒԽ 16

### ՀՈՂԻ ՀԱՐԿ

Հողի հարկը սահմանված է ՀՀ 1994թ. ապրիլի 27-ի «Հողի հարկի մասին» օրենքով:

1. Հարկման օբյեկտը և վճարողները

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողերի համար հարկը գանձվում է վարձատուից:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Հողի հարկի դրույքաչափերը և հաշվարկման կարգը

Հողի հարկի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար:

Գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հաստատված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով՝

ա) արդյունաբերության (ներառյալ հանքավայրերը և արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիո-հեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային

շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝

բնակավայրերի ներսում՝ 1 տոկոս.

բնակավայրերից դուրս՝ 0, 5 տոկոս.

բ) անտառային ֆոնդի հողերի (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1 տոկոսի չափով.

գ) ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի 1 տոկոսի չափով:

Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են՝ շենքերով և շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաև օբյեկտների սանիտարապահպանման, տեխնիկական և մյուս գոտիները:

Գյուղատնտեսական գործունեության (գյուղատնտեսական արտադրանքի արտադրության) գծով վճարողներից զանձվում է հողի հարկ: Նրանք ազատվում են շահութահարկից (եկամտահարկից), բացառությամբ արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական այն կազմակերպությունների (ջերմոցային և զազանաբուծական տնտեսություններ, անասնապահական համալիրներ, ագրոկոմբինատներ, թռչնաբուծական ֆաբրիկաներ և այլն), որոնց ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ խորհրդարանի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ:

Այն վճարողները, որոնց հասույթի (եկամտի) 25 տոկոսից ավելին ստացվում է ոչ գյուղատնտեսական գործունեությունից, այդ գործունեության գծով չեն ազատվում շահութահարկերից (եկամտահարկերից): Այդ նպատակով վճարողները պարտավոր են վարել գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության գծով արտադրության և շրջանառության ծախսերի, ինչպես նաև իրացման առանձնացված հաշվառում:

Հողի հարկը հաշվարկվում է սկսած հողակտորի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի ձեռքբերման հաջորդ ամսից:

Հողի հարկը հաշվարկվում է սկսած հողակտորի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքի ձեռքբերման հաջորդ ամսից:

Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի վճարման գծով արտոնություն ունեցող սուբյեկտը հարկի վճարումից ազատվում է այն ամսից, երբ ծագել է արտոնության իրավունքը:

Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի վճարման գծով արտոնությունը դադարելու դեպքում հարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից:

### Հողի հարկի արտոնությունները

Հողի հարկից ազատվում են՝

ա) բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության և ժառայողական օգտագործման տրված հողերի.

բ) հողային ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսվանից սկսած երկու տարվա ընթացքում.

գ) հողի այն սեփանակատերերը, մշտական և ժամանակավոր օգտագործողները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում.

դ) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն).

ե) մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին (պրոֆտեխուսումնարաններին) և դպրոցներին կից ուսումնարտադրական և փորձարարական հողամասերը.

զ) նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում)՝ դրանց տարածքը 0, 1 հեկտար և ավելի լինելու դեպքում.

է) պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարձակալություն տրված հողերի:

Հողի հարակից 50 տոկոսի չափով ազատվում են՝

ա) գյուղատնտեսական և անտառատնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, հողային և սորտափորձարկման կազմակերպությունները, կայանները հենակետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերի համար:

### Հողերի հարկի հաշվարկման և վճարման կարգը

Հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպությունները (բացառությամբ գյուղացիական տնտեսությունների), հիմնարկները, հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, հարկային տեսչության մարմիններին են ներկայացնում հաշվարկներ՝ հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար:

Նոր հատկացված հողամասի հարկման վերաբերյալ հաշվարկները ներկայացվում են հողօգտագործման իրավունքի ձեռքբերման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Քաղաքացիները և գյուղացիական տնտեսությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն, հիմք ընդունելով ՀՀ հարկային տեսչության մարմինների կողմից հաշվարկված և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը իրենց հանձնված վճարման ծանուցագրերը:

Վճարողների հաշվառումը և հողի հարկի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ի դրությամբ:

Հարկային տեսչության մարմիններն իրականացնում են վճարողների հաշվառում, վերահսկողություն են սահմանում

հարկի ճիշտ հաշվարկման և ժամանակին վճարման նկատմամբ:

Հաշվարկված հարկի գումարները քաղաքացիներն ու գյուղացիական տնտեսությունները պետական բյուջե են վճարում հավասար մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը, իսկ կազմակերպությունները, հիմնարկները՝ եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակի հաջորդ ամսվա 25-ը:

Հողի հարկի վճարումը պետական բյուջե կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն օրենքը խախտելու համար վճարողները, ինչպես նաև կազմակերպությունների պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՐԿԵՐ**

**§ 1. Հաստատագրված վճարներ**

Փոխարինող հարկերը (հաստատագրված վճարներ, պարզեցված հարկ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխարինում են մի շարք հարկերի՝ շահութահարկ, եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ: Հաստատագրված վճարները սահմանվել են 1998 թ. հուլիսի 7-ի «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքը կարգավորվում է գործունեության որոշ տեսակների համար հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է հաստատագրված վճարներ վճարողների շրջանակը, հաստատագրված վճարների հաշվարկման և վճարման կարգը, ինչպես նաև պատասխանատվությունը օրենքի խախտման համար:

Հաստատագրված վճարը վերոհիշյալ օրենքով նախատեսված չափերով և ժամկետներում հաստատագրված վճարներ վճարողների կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է:

Հաստատագրված վճարներ վճարողները ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

Ֆիզիկական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և (կամ) եկամտահարկի գումարին:

Իրավաբանական անձանց համար հաստատագրված վճարը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկի գումարին:

Հարկատուների համար հիշյալ օրենքով նախատեսված գործունեության տեսակների մասով կասեցվում են ավելացված արժեքի հարկի և (կամ) շահութահարկի (եկամտահարկի) գծով ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները, ինչպես նաև հաշվի չեն առնվում այդ հարկատեսակների գծով

նվազեցումները և հարկ վճարող համարվելու համար հիմք ընդունվող սահմանները:

«Հաստատագրված վճարների մասին» օրենքի 7 հոդվածի համաձայն հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են համարվում գործունեության հետևյալ տեսակները՝

ա) 30 քառակուսի մետր մակերեսից ոչ ավելի առևտրական մակերես ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության մասով..

բ) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.

գ) ավտոտրանսպորտային գործունեությունը.

դ) վարսավիրական ծառայությունների մատուցումը.

ե) լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունը.

զ) ավտոկանգառների գործունեությունը.

է) խաղատների գործունեության կազմակերպումը.

ը) և այլն:

Հաստատագրված վճարի համար հարկման բազա է համարվում 7 հոդվածում նշված գործունեության տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը դրամական արտահայտությամբ:

Վճարողները մինչև վերոհիշյալ օրենքով նախատեսված ոլորտներում գործունեություն իրականացնելը (սկսելը), իրենց գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանված ձևի տեղեկություններ (հայտարարություն-հաշվարկ)՝ երկու օրինակից՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ:

Հարկային մարմնի կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո հայտարարություն-հաշվարկի մեկ օրինակը վերադարձվում է հարկատուին:

Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ գործունեության դադարեցման, ներառյալ ժամանակավոր) դեպքում վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին՝ նոր հայտարարություն-հաշվարկ (երկու օրինակից) ներկայացնելու միջոցով: Նախկին հայտարարություն-հաշվարկը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում վճարողն այդ մասին գրավոր դիմում-հայտարարություն տալու միջոցով նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին՝ նշելով դադարեցման ժամանակահատվածը:

Դիմում-հայտարարության մեջ գործունեության դադարեցման ժամանակահատվածը նշված չլինելու դեպքում գործունեությունը վերահսկելիս վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին՝ ներկայացնելով ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն-հաշվարկ: Նախկին հայտարարություն-հաշվարկը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Գործունեության դադարեցման կամ կասեցման դեպքում վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին: Վճարողի մոտ առկա հայտարարություն-հաշվարկը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Հարկային մարմնին նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ամսվա համար հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հարկային մարմնի կողմից՝ նախորդ ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման հիմք ընդունված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների կիրառմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ճշգրտվում է հաստատագրված վճարի չափը:

Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն-հաշվարկը վճարողների կողմից պարտադիր կերպով ներկայացվում է հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության դեպքում ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն-հաշվարկը ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա, իսկ ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար:

Ելակետային տվյալները և ուղղիչ գործակիցները, ինչպես նաև դրանց փոփոխությունները գրանցվում, վերագրանցվում

են հարկային մարմնում խիստ հաշվառման փաստաթղթեր հանդիսացող անձնական քարտերում:

Վճարողները օրենքով սահմանված կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ, հարկային հաշվարկներ, հայտարարագրեր հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ:

Բացառապես «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնելու և այլ տեսակի հարկման օբյեկտներ չունենալու դեպքում վճարողները հարկային մարմին շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չեն ներկայացնում:

Հաստատագրված վճարի վճարումը կատարվում է վճարողի կողմից ինքնուրույնաբար՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ:

Հաստատագրված վճարներից կանխավճար չի գանձվում: Հարկատուն այս հարկը վճարում ոչ թե իր ստացած շահույթից (եկամտից) համամասնորեն, այլ որոշակի հաստատագրված (ֆիքսված) գումարի չափով: Այս վճարումները նախատեսվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է խրախուսել որևէ տնտեսական գործունեության իրականացումը, կամ էլ այն դեպքում երբ շատ դժվար է (գրեթե անհնարին) ճիշտ հաշվարկել հարկատուի իրական շահույթը (եկամուտը): Հաստատագրված վճարումների թերությունը կայանում է նրանում, որ այն գանձվում է անկախ շահույթի (եկամուտի) չափից: Լավ աշխատող, հարմարավետ վայրում գտնվող օբյեկտի սեփականատիրոջ եկամուտը անհամեմատ բարձր է՝ անիրագեկ, վատ աշխատող, անբարենպաստ վայրում գտնվող օբյեկտի սեփականատիրոջ եկամտից:

Հաստատագրված վճարումները, որպես հարկային քաղաքականության կարևոր միջոց, կարելի է օգտագործել երկակիորեն: Եթե նախատեսվում է խրախուսել որևէ տնտեսական գործունեություն, ապա սահմանվում են ցածր դրույքաչափերով հաստատագրված վճարումներ և ընդհակառակն, տնտեսական գործունեության սահմանափակման նպատակով սահմանվում են բարձր դրույքաչափեր:



## § 2. Պարզեցված հարկ

Պարզեցված հարկը սահմանվել է «Պարզեցված հարկի մասին» 2000 թ. հունիսի 19-ի օրենքով: Այն կարգավորում է պարզեցված հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափը, հաշվարկման և վճարման կարգը:

Պարզեցված հարկը օրենքով սահմանված չափերով ու ժամկետներում ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է: Այն իրավաբանական անձանց համար փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին, իսկ անհատ ձեռնարկատերերին՝ ԱԱՀ-ին և (կամ) եկամտահարկին:

ՀՀ-ում պարզեցված հարկ վճարող են համարվում իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին հունվարի 1-ից 25 ներառյալ տվյալ տարում հարկ վճարող համարվելու համար ՀՀ Հարկային մարմիններ սահմանված ձևով հայտարարվող ներկայացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Վերջիններս տվյալ հարկի վճարող կարող են համարվել, եթե նրանց կողմից նախորդ տարվա ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 50 մլն դրամը: Պարզեցված հարկ վճարող նշված հարկատուները իրենց գործունեության մասով որևէ եռամսյակում հարկ վճարելու հայտարարագիր են ներկայացնում առաջին ամսվա 1-ից 25 ներառյալ:

Պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել՝

ա) «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն հաստատագրված վճար վճարող անձինք՝ գործունեության այդ մասով:

բ) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները:

գ) անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում ՀՀ ներմուծված և չիրացված՝ մաքսատուրքի գրոյական դրույքաչափով հարկվող ապրանքների մնացորդը գերազանցում է մեկ մլն դրամը:

դ) դիմումի ներկայացման պահին 100 հազար ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ

(այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի տուգանքների գումարը) ունեցող անձինք:

ե) վարկային կամ ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցողները:

զ) այն անձինք, որոնք հայտարարագրի ներկայացմանը նախորդող վեց ամիսների ընթացքում դադարել են համարվել այդպիսիք:

Պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե նա՝

1. գրավոր դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմնին՝ ընդհանուր կարգով հարկման, հաշվառման և հաշվետվությունների համակարգի անցնելու վերաբերյալ:

2. պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում թույլ է տվել հսկիչ- դրամարկղային մեքենաների վարման կամ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին վերաբերող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170/7, 170/8, 170/9, 170/10, 170/11 հոդվածների մեկից ավելի խախտման դեպքեր:

3. ժամկետանց հարկային պարտավորությունները գերազանցում են դիմումի ներկայացման պահին 100 հազար դրամը:

4. իրականացնում են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրություն, վարկային կամ ապահովագրական, ներդրումային, արժեթղթերի շուկայի, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցում:

5. եռամսյակի ընթացքում իր կողմից ՀՀ ներմուծված՝ մաքսատուրքի գրոյական դրույքաչափով հարկվող ապրանքների ներմուծման ծավալը գերազանցում է 250 հազար դրամը:

Այս հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարզեցված հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը:

Հարկվող օբյեկտը որոշելիս իրացման շրջանառության մեջ չի ներառվում պարզեցված հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող՝ գործունեության իրականացումն ապահովելու նպատակով ձեռք բերված և հաշվառված հիմնական միջոցների իրացման շրջանառությունը: Նշված մասով պարզեցված հարկ վճարողները ԱԱՀ և շահութահարկը վճարում են սահմանված ընդհանուր կարգով և վարում են առանձնացված հաշվառում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### Հարկի դրույքաչափերը և հաշվարկումը

Ընթացիկ տարվա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար որոշվող հարկվող օբյեկտի նկատմամբ խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով հարկը հաշվարկվում է իրացման շրջանառության նկատմամբ 4 տոկոս դրույքաչափով:

Մնացած դեպքերում պարզեցված հարկ վճարողները ընթացիկ տարվա համար որոշվող հարկվող օբյեկտի նկատմամբ հարկը հաշվարկում են իրացման շրջանառության նկատմամբ հետևյալ դրույքաչափերով՝

1. մինչև 30 մլն դրամ գումարի նկատմամբ՝ 7 տոկոս.

2. 30 մլն դրամը գերազանցող գումարի նկատմամբ 12 տոկոս:

Հարկի հաշվետու ժամանակաշրջանը համարվում է եռամսյակը: Հարկատուները հարկի գումարները հաշվարկում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով:

Հարկի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոս:

Հաշվետու ժամանակաշրջանում պարզեցված հարկի գումարը նվազեցվում է տվյալ տվյալ ժամանակաշրջանում ձեռք բերված՝ գործունեության իրականացումն ապահովելու նպատակով հիմնական միջոց չհանդիսացող ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև աշխատանքի վարձատրության համար կատարված՝ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը):

ա) 2 տոկոսը կազմող գումարի չափով՝ խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով.

բ) 4 տոկոսը կազմող գումարի չափով մնացած դեպքերում:

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը ՀՀ պետական եկամուտների սահմանված ձևով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում հարկի հաշվարկը:

Պարզեցված հարկ վճարողները հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:

Հարկ վճարողներն այդ գործունեության մասով շահութահարկի (եկամտահարկի) կանխավճարներ չեն կատարում:

Պարզեցված հարկ վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին հունվարի 1-ից 25-ը ներառյալ տվյալ տարում հարկ վճարող համարվելու համար ՀՀ պետական եկամուտների նախարարության սահմանված ձևով հայտարարի մեջ մտցնում են վերոհիշյալ օրենքով սահմանված տվյալներ:

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

§1 Ոչ հարկային եկամուտների հասկացությունը և համակարգը

Դրամական միջոցների մի մասը պետության տնօրինությանն է տրվում ոչ հարկային եկամուտների (վճարումների) տեսքով: Ոչ հարկային եկամուտներն, ինչպես և հարկերը, վճարվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից: Պետության տնօրինությանը տրվող այդ և մյուս վճարումները, սահմանվում են Ազգային ժողովի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ մարմինների կողմից:

Պետության ոչ հարկային եկամուտներին բնորոշ են որոշ առանձնահատկություններ:

Նախ և առաջ, ոչ հարկային եկամուտների (վճարումների) մեծ մասն ունեն երկկողմ բնույթ: Ոչ հարկային վճարումների կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների սուբյեկտներն ունեն փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Այսպես օրինակ, եթե պետությունը, որպես այդ իրավահարաբերությունների պարտադիր սուբյեկտ, գանձում է ոչ հարկային վճարումներ, ապա նա պարտավոր է հոգուտ այդ վճարումները կատարողների իրականանացնել համապատասխան գործողություններ՝ որևէ գործունեությամբ զբաղվելու, ապրանքները սահմանով անցկացնելու, որևէ ծառայության մատուցում և այլն:

Երկրորդ, ի տարբերություն հարկերի, որոնք միշտ հանդիսանում են պարտադիր վճարում ներ, ոչ հարկային եկամուտները կարող են ստանալ պարտադիր և կամավոր վճարումների տեսք: Ոչ հարկային եկամուտների մեծ մասը կազմավորվում է պարտադիր վճարումների հաշվին: Դրանք հարկադրաբար գանձվում են սահմանված կարգով: Սակայն ոչ հարկային և հարկային վճարումների վճարման հիմքերը տարբեր են՝ հարկերը վճարվում են հարկման օբյեկտի առկայության դեպքում, իսկ ոչ հարկային վճարումների գանձման հիմքն իրավասու մարմին-

ների կողմից հոգուտ իրավաբանական և ֆիզիկական անձանց որոշակի գործողությունների կատարումն է:

Պետության ոչ հարկային եկամուտների մեջ մտնող կամավոր վճարումները հիմնված են համապատասխան սուբյեկտների ազատ կամահայտության վրա: Լրացուցիչ դրամական միջոցների կամավոր ներգրավման մեթոդները սահմանված են օրենսդրությամբ: Դրանց թվին են պատկանում պետական արժեթղթերի թողարկումը և տարածումը, պետական վիճակախաղերի անցկացումը և այլ օրինական մեթոդներ:

Երրորդ, ոչ հարկային վճարումների առանձնահատկությունը այն է, որ դրանք հարկերի համեմատ առավել մեծ չափով նպատակային ուղղվածություն ունեն: Ոչ հարկային եկամուտների օգտագործման նպատակային ուղղվածությունը նախատեսվում է ոչ հարկային վճարումների սահմանման ժամանակ, և ամրագրվում են յուրաքանչյուր կոնկրետ վճարման գանձման և հաշվարկման կարգը նախատեսող իրավական ակտերում:

Պետության ոչ հարկային եկամուտները կարելի է դասակարգել տարբեր չափանիշներից ելնելով:

-ըստ տարածքային մակարդակի՝ հանրապետական և տեղական եկամուտների,

-ըստ կազմավորման մեթոդների՝ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացվող պարտադիր և կամավոր հասույթների.

-ըստ դրանց կուտակման աղբյուրների՝ բյուջեներում և արտաբյուջետային ֆոնդերում կուտակվող եկամուտների.

-ըստ պետության ոչ հարկային եկամուտներ կազմող վճարումների գանձման կոնկրետ հիմքերի:

Վերջիններս իրենց հերթին բաժանվում են՝

ա) տուրքերի, որոնք պարտադիր մուծումներ են և գանձվում են կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից, դրանց վճարումը, տուրքերը վճարողների նկատմամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ լիազորված մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների, ներառյալ որոշակի իրավունքներ տրամադրելու կամ լիցենզիաներ տալու պայմաններից մեկն է: Ի տարբերություն հարկերի տուրքերը գանձվում են միայն այն սուբյեկտներից, ովքեր իրենց ազատ կամահայտությամբ մտնում են տուրքի հետ կապված

հարաբերությունների մեջ: Դրանցից կարևորներն են՝ 1) պետական տուրքերը, 2) մաքսատուրքերը:

բ) ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման համար գանձվող վճարներ.

վճարումների այս խումբը բացառիկ կարևոր նշանակություն ունի՝ որպես առկա բնական պաշարների օգտագործման և վերականգնման արդյունավետության բարձրացման խթանման գործոն:

Այս վճարումների թվին են պատկանում՝ ընդերքի օգտագործման համար գանձվող, վարձակալության տրված հողի, ջրօգտագործման վճարները, անտառային եկամուտը: գ) ապահովագրական և այլ վճարները, որոնք ուղղված են կոնկրետ (տնտեսական և սոցիալական) պետական ծրագրերի կատարմանը: Դրանց թվին են պատկանում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից տարբեր սոցիալական և այլ արտաբյուջետային (կենսաթոշակային, բնակչության զբաղվածության և այլն) ֆոնդեր կատարվող վճարումները:

դ) Պետական արժեթղթերի թողարկումից և տեղաբաշխումից, պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող ոչ հարկային եկամուտներ:

ե) Պետական սեփականության սեփականաշնորհումից և ապապետականացումից ստացվող եկամուտներ:

զ) Տուգանքներից ստացվող եկամուտները (տուգանքներ, տույժեր և այլն), այլ եկամուտներ և գանձույթներ (դեբիտորական և կրեդիտորական, հայցային վաղեմության ժամկետը անցկացրած պարտքերի գումարները):

## §2 Մաքսային վճարներ

ՀՀ մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են՝ մաքսային վճարներ, այդ թվում՝

1. մաքսատուրքեր.

2. մաքսավճարներ.

3. մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

Մաքսատուրքերը և մաքսավճարները սահմանվել են 2000 թ. օգոստոսի 9-ին ընդունված մաքսային օրենսգրքով:

Մաքսատուրքերը ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են:

Մաքսատուրքերը կարել է բաժանել հետևյալ տեսակների՝

1. ըստ նրանց գործառնության բնույթի,

2. ըստ հաշվարկման մեթոդի:

Ըստ մաքսատուրքերի գործառնության դրանք լինում են (դա պայմանավորված է ապրանքների և այլ առարկաների բնույթից).

1) արտահանման՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար.

2) ներմուծման՝ վճարվում են ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար.

3) սեզոնային՝ վճարվում են որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ ՀՀ մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար:

Ըստ հաշվարկման մեթոդի մաքսատուրքերն են՝

1) արժեքային (աղվալորային)՝ հաշվարկվում են մաքսատուրքերով հարկման ենթակա ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ տոկոսներով.

2) յուրահատուկ (հաստատագրված), որոնք հաշվարկվում են կայուն դրույքաչափով՝ հարկման ենթակա ապրանքների չափման միավորի համար.

3) խառը՝ երբ զուգակցվում են արժեքային (աղվալորային) և յուրահատուկ (հաստատագրված) մաքսատուրքերը:

ՀՀ տնտեսության շահերը պաշտպանելու և տնտեսական գործունեությունը խրախուսելու նպատակով կիրառվում են հետևյալ մաքսատուրքերը՝

ա) խրախուսման՝ կիրառվում է առանձին երկրներից ներմուծվող ապրանքներից նկատմամբ սահմանված մաքսատուրքերի դրույքաչափերը նվազեցնելու նպատակով.

բ) հակազդման՝ ի պատասխան ՀՀ հանդեպ կիրառվող առանձին անձանց, պետությունների կամ դրանց միությունների խտրական գործողությունների:

Մաքսատուրքը գանձվում է նշված օրենսգրքի 102 հոդվածի դրույքաչափերով:

1. Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի հաշվարկումն իրականացվում է հայտարարագրի ներկայացման օրվա

դրությամբ՝ մաքսատուրքերի գործող դրույթաչափերով: Վճարումն իրականացվում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման օրվանից տասնօրյա ժամկետում՝ ՀՀ կառավարության սահմանած ընթացակարգով:

Վերոհիշյալ օրենսգրքի 104 հոդվածի համաձայն մաքսատուրքի վճարումից ազատվում են՝

1. «տարանցիկ փոխադրում» ռեժիմով բաց թողնվող ապրանքները.

2. «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով բաց թողնվող ապրանքները.

3. «ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» ռեժիմով բաց թողնվող ապրանքները.

4. «ներմուծում ազատ մաքսային պահեստ» ռեժիմով բաց թողնվող ապրանքները.

5. «վերաներմուծում» և «վերաարտահանում» ռեժիմներով բաց թողնվող ապրանքները, բացառությամբ մաքսային օրենսգրքով սահմանված դեպքերի.

6. «ոչնչացում» ռեժիմով բաց թողնվող ապրանքները.

7. «ներմուծում անմաքս առևտրի խանութ» ռեժիմով բաց թողնվող ապրանքները».

8. և այլն

Օրենսգրքի 105 հոդվածի համաձայն ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

Ֆիզիկական անձինք կարող են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով մաքսային սահմանով առանց մաքսատուրք վճարելու տեղափոխել միջազգային փոխադրումներով փոխադրվող ապրանքներ, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

ՀՀ կառավարությունը հաստատում է ապրանքների առանձին տեսակների բնահրային չափերը:

Ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրեր: Որպես այդպիսիք են դիտվում են այն ապրանքները, որոնք՝

ա) չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում.

բ) ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով մաքսային սահմանով միջազգային փոխադրումներով փոխադրվող ապրանքների, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց անձնական օգտագործման գույքը:

ՀՀ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց ժառանգական գույքը՝ մաքսային մարմիններին ժառանգության մասին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

Մաքսավճարը մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով զանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Վերադաս մաքսային մարմինը յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ տարում մաքսավճարի գումարների տնօրինման մասին:

Մաքսային օրենսգրքի 110 հոդվածով սահմանված են մաքսավճարի դրույթաչափերը:

Ապրանքների զննման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների մաքսավճարը զանձվում է՝

1. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների համար մաքսային հսկողության համար՝ 1000 դրամ.

2. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավել քաշ ունեցող ապրանքների համար յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ 300 դրամ.

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արտարժույթի մաքսային ձևակերպումների իրա-

կանացման (բացառությամբ ապրանքների զննման և հաշվառման) համար գանձվում է 3, 500 դրամ մաքսավճար:

Մաքսային մարմինների կողմից ապրանքների պահպանման համար մաքսավճարը գանձվում է՝

1. մինչև մեկ տոննայի համար՝ օրական 1000 դրամ.

2. մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ օրական 300 դրամ և այլն:

### §3 Պետական տուրք

Պետական տուրքի հասկացությունը, դրա տեսակները և դրույքաչափերը, դրա գանձման, վերադարձման, պետական տուրք վճարողների շրջանակը, արտոնությունների տրամադրման կարգն ու պայմանները, պետական տուրքերի հետ կապված այլ հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են 1998թ. հունվարի 10-ին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքի համաձայն, պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված ծառայությունների կամ գործողությունների դիմաց իրավաբանական և ֆիզիկական անձանցից հանրապետության բյուջե, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր գանձույթ է:

#### Պետական տուրքի գանձման օբյեկտները

ՀՀ-ում պետական տուրք գանձվում է՝

1) դատարան տրվող հայցադիմումների, բողոքների, դատարանների վճիռների դեմ բերվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճենները (կրկնօրինակներ) տալու համար.

2) նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար.

3) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերկանգնման կապակցությամբ վկայականներ տալու համար.

4) ՀՀ քաղաքացիություն ստանալու համար.

5) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

6) պետական գրանցման համար.

7) մշակութային արժեքներ արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար.

8) գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների, տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

9) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

10) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

11) «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ ծառայությունների կամ գործողությունների համար:

#### Պետական տուրքերի դրույքաչափերը

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ, «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանված հազար դրամը: ՀՀ օրենսդրությամբ ոչ ռեզիդենտ հանդիսացող վճարողների համար բազային տուրքի չափ է սահմանվում պետական տուրքի վճարման պահին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ սահմանված հաշվարկային փոխարժեքի կրկնապատիկը: Ամենաբարձր դրույքաչափը սահմանված է բնական գազի ներկրման համար՝ բազային տուրքի 10000- պատիկի չափով, բնական գազի փոխադրման բազային համար՝ տուրքի 15000-պատիկի չափով: Գույքային պահանջով հայցադիմումների հա-

մար հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից:

### Պետական տուրքի գծով արտոնությունները

„Պետական տուրքի մասին,, ՀՀ օրենքով սահմանված են մի շարք արտոնություններ՝

1. տուրքի վճարումից ազատում, 2. տուրքի նվազեցում, 3. տուրքի դրույքաչափի նվազեցում, 4. տուրքի վճարման ժամկետի հետաձգում 5.տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» օրենքով նախատեսված են պետական տուրքերից ազատվելու հետևյալ հիմքերը՝

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) բոլոր հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման ու աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով, բ) բոլոր հայցվորները՝ ալիմենտների գանձման վերաբերյալ հայցերով.

գ) բոլոր հայցվորները՝ խեղման կամ այլ վնասվածքների, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով. դ) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներից վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

ե) բոլոր հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

զ) ՀՀ համապատասխան իրավասու մարմինները՝ ՀՀ օրենսդրության խախտման հետևանքով պետությունը պատճառված վնասի փոխհատուցման գումարները պետական բյուջե գանձելու վերաբերյալ հայցերով.

է) բոլոր հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների դեպքում.

ը) ֆինանսական, հարկային և մաքսային մարմինները՝ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի վերաբերյալ հարցերով.

թ) իրավաբանական և ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու վճիռների կատարումն հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- երևան եկած նոր հանգամանքների կապակցությամբ դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

- դատարանի վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.

- դատարանի վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև դատական ակտերի կատարման մարմինների գործողությունները բողոքարարելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանի որոշումների դեմ մյուս բողոքներով.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների կողմից ընդունված որոշման դեմ բողոքներով.

ժ) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

ժա) որպես հայցվոր հանդես եկող ֆինանսական, հարկային և մաքսային մարմինները՝ սեփականաշնորհման և ապապետակացման հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ վճարումները բյուջե գանձելու, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով հիմնարկը, կազմակերպությունը լուծարելու կամ անվճարունակ ճանաչելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրության խախտման համար նշանակված տույժերն ու տուգանքները բռնագանձելու հայցերով:

ձբ) ՀՀ կենտրոնական բանկը.

ձգ) վճռաբեկ բողոք տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ բողոքին միանալու վերաբերյալ հայցերով:

3. Նոտարական գործողություն իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) ֆիզիկական անձինք՝ պետության օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը հաստատելու համար.

բ) ֆինանսական և հարկային մարմինները՝ ժառանգության իրավունքով պետությանը անցած գույքի մասին նրանց վկայագիր կամ վկայագրի կրկնօրինակ տալու, ինչպես նաև դրանց ստացման համար անհրաժեշտ փաստաթղթեր տալու համար.

գ) ֆիզիկական անձինք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝

- գույքը պատկանել է այնպիսի անձանց, որոնք զոհվել են նախկին ԽՍՀՄ-ը կամ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանելիս, պետական կամ հասարակական այլ պարտականություններ կատարելիս կամ այն կապված եղել մարդկային կյանք փրկելու իրավակարգի պաշտպանության գծով նախկին ԽՍՀՄ և ՀՀ քաղաքացու պարտքը կատարելու հետ.

- բնակելի տունը (բնակարանը) կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվում այն անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը և նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ.

- ժառանգության իրավունքի օբյեկտ են հանդիսանում բանկերում եղած ավանդները, անձնական և գույքային ապահովագրության գծով ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտատոմսերը, աշխատավարձի գումարները. դ) ֆիզիկական անձինք՝ թոշակների և նպաստների ստացման վերաբերյալ լիազորագրերի հաստատման համար.

Վե) մայրերը՝ բազմազավակության շքանշաններով և մեդալներով իրենց պարգևատրելու մասին փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար. գ) այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում կազմակերպությունների հաշվին ապահովագրված են եղել դժբախտ պատահարների հատկանքով մահվան կամ զոհվելու դեպքերից՝ ապահովագրման վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր ստանալու համար. տ) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները և այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել ՀՀ-ը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղման կամ ռազմաճակա-

տում գտնվելու հետ կապված հիվանդության հետևանքով, նախկին պարտիզանների թվից հաշմանդամները, ինչպես նաև կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, Հայաստանի Հանրապետությունը, երկրորդ աշխարհամարտում նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար:

4) Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի և մատուցվող ծառայությունների համար գանձվող պետական տուրքի արտոնությունները 1. ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու, ՀՀ մուտքի արտոնագիր ձևակերպելու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության կողմից աշխատանքի հրավիրված օտարերկրյա մասնագետները և նրանց ընտանիքի անդամները.

բ) քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով ապաստան փնտրող անձինք:

գ) քաղաքացիական, քրեական և ընտանեկան գործերով իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ պայմանագրերին համապատասխան, քաղաքացիական և քրեական գործերով որպես կողմ, վկա կամ փորձագետ ՀՀ կամ այլ պետությունների դատարաններ կամ նախաքննական մարմիններ հրավիրվող անձինք.

դ) կացության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք.

ե) և այլն.

5. Քաղաքացիական կացության գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) կրթության համակարգի մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները՝ ծնողագուրկ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բուլդո տեսակի գիշերօթիկ հիմնարկներ և ուսումնական հաստատություններ ուղարկելու



կապակցությամբ ծննդյան վկայականների կրկնօրինակների տալու համար.

բ) քաղաքացիները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ գրանցող մարմնի կողմից թույլ տրված սխալների հետ կապված, գրանցումներում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու դեպքերում՝ նոր վկայականների համար:

գ) և այլն:

6. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքից ազատվում են՝

ա) արտահանվող մշակութային արժեքների հեղինակները կամ նրանց ընտանիքի անդամները. ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, իսկ հեղինակի մահից հետո նրա ժառանգը.

բ) ՀՀ, այլ պետությունների պետական պարգևներով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների պարգևներով պարգևատրված անձինք՝ այդ պարգևների գծով.

գ) և այլն:

7. գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների, տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները:

Պետության կողմից գաղտնի ճանաչված գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան տուրքեր չեն վճարում: Արտոնագրատիրոջ կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքն այլ անձի տալու մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող տարվանից արտոնագիրն ուժի մեջ պահելու դեպքում դրա համար վճարվող տուրքը նվազեցվում է հիսուն տոկոսով:

Նոտարական կարգով վավերացվող այն գործարքների դիմաց, որոնց մի կողմը ազատվում է պետական տուրքի վճարումից, տուրքը լրիվ չափով վճարում է մյուս կողմը: Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար արտոնություններ կարող են սահմանվել՝ ա) ՀՀ կառավարության կողմից՝ պետա-

կան տուրքերի բոլոր տեսակների գծով, վճարողի փոխարեն պետական տուրքը վճարելու միջոցով.

8. դատարանների կամ դատավորների կողմից՝ ա) օրենքով նախատեսված դեպքերում դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, բողոքների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝ ելնելով կողմերի գույքային դրությունից.

բ) և այլն:

### Պետական տուրք վճարողները, նրանց իրավունքները և պարտականությունները

Պետական տուրք վճարողն իրավունք ունի՝

1. պահանջել պետական տուրք գանձող մարմնից՝ կատարելու տուրքի հաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկ,

2. վերադատության ինչպես նաև դատական կարգով բողոքարկելու պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները,

3. դիմել համապատասխան պետական մարմիններին՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար,

4. ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք.

5. օրենքով սահմանված դեպքերում պահանջել և ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

Պետական տուրք վճարողը պարտավոր է՝

1. ժամանակին և լրիվ վճարել օրենքով սահմանված պետական տուրքերը,

2. պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններին կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները,

3. ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը.

4. օրենքով սահմանված դեպքերում վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

Պետական տուրքի վճարման գծով իրավաբանական անձանց պարտավորությունը դադարում է այդ պարտավորության կատարմամբ, պետական տուրքի վճարումից ազատմամբ, պետական տուրքի վերացմամբ կամ օրենքով սահմանված այլ հիմքերով, իսկ ֆիզիկական անձանցը՝ պարտավորության կատարմամբ, պետական տուրքի վճարումից ազատմամբ, պետական տուրքի վերացմամբ կամ վճարողի մահվամբ:

**Պետական տուրքի հաշվարկման, վճարման կարգը և պատասխանատվությունը դրանց պահպանման համար**

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե օրենքով այլ կարգ չի սահմանված կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն չի տրված:

Առանձին դեպքերում ՀՀ կառավարության որոշմամբ պետական տուրքի գանձման լիազորություններն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է պատվիրակվել կազմակերպություններին: Այդ դեպքում դրանց իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով տվյալ կազմակերպությունների կողմից կարող են սահմանվել վճարներ, որոնց չափը համաձայնեցվում են ՀՀ կառավարության լիազոր մարմնի հետ:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների, ինտեգրալ միկրոսխեմաների, տոպոլոգիաների ամբողջական հայտը մի քանի ինքնուրույն հայտերի բաժանելու դեպքում, յուրաքանչյուր զատված հայտի դիմաց պետական տուրքերը վճարվում են որպես առանձին ինքնուրույն հայտի համար: Եթե գյուտի հետ կապված որևէ գործողության համար վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում սահմանված չափերին, ապա պակաս վճարված տուրքը ենթակա է վճարման՝ այդ մասին ծանուցագիր ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու համար, ինչպես նաև ապրանքային ու սպասարկման նշանների գրանցման և վկայական տալու համար, ապրանքի ծագման տեղանվան գրացման և կամ օգտագործման իրավունքի վկայական տալու համար պետական տուրքերը վճարվում են արտոնագիր տալու կամ նշանի գրանցման մասին որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Նշված

տուրքերը կարող են վճարվել նաև այդ ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Այս դեպքերում պետական տուրքի չափերն ավելացվում են ևս 50 տոկոսով:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված տարեկան տուրքերը վճարվում են արտոնագրի գործողության լրիվ տարվա համար: Տարեկան պետական առաջին վճարումը կատարվում է մինչև արտոնագրի գործողության երկրորդ տարվա սկիզբը կամ արտոնագիր տալու համար սահմանված պետական տուրքի հետ միասին: Արտոնագրի գործողության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար պետական տուրքը վճարվում է գործողության ընթացիկ տարվա ընթացքում: Տարեկան պետական տուրքը կարող է վճարվել նաև սահմանված ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում պետական տուրքի չափն ավելացվում է 50 տոկոսով:

Պետական տուրքը գանձվում և հաշվարկվում են օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք, ում վրա էլ դրված է պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը: Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 1 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին: Օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում, բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից պետական բյուջե բռնագանձման՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 1 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին:

Պետական տուրքերի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ պետական լիազորված մարմինները:

#### §4 Տեղական տուրքեր և վճարներ

ՀՀ-ում տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, տեղական տուրք և վճար վճարողների շրջանակը, տեղական տուրքերի և վճարների սահմանման, դրանց գանձման կարգն ու պայմանները, տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 1998 թ. հունվարի 9-ի «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով:

Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց նշված օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղեկան տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար նշված օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

#### Տեղական տուրք և վճար վճարող իրավունքները և պարտականությունը

Տեղական տուրք և վճար վճարող են համարվում որոշակի լիազորությունների իրականացման դիմաց և համապատասխան գործողությունների համար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Տեղական տուրք և վճար վճարողներն իրավունք ունեն

ա) պահանջել տեղական տուրք և վճար գանձող մարմնից՝ կատարելու տուրքի և վճարի հաշվարկ, ինչպես նաև վերջնահաշվարկ:

բ) բողոքարկել տեղական տուրք և վճար գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները:

գ) ստանալ տեղական տուրքը և վճարը վճարելու մասին տեղեկանք:

դ) օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջել և ստանալ վերադարձման ենթակա տեղական տուրքի և վճարի գումարը:

Տեղական տուրք և վճար վճարողները պարտավոր են տեղական տուրքի և վճարի գանձմամբ գործողություններ իրակա-

նացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել տեղական տուրքի և վճարի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 7 հոդվածում սահմանված են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության, շենքերի, շինությունները և քաղաքաշինական այլ (ներառյալ՝ ժամանակավոր) օբյեկտները ամրացնելու, վերականգնելու, արդիականացնելու (բացառությամբ ներքին ընթացիկ վերանորոգման և հարդարման) և արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ սկսելու համար:

2. համայնքի տարածքում շենքեր, շինություններ և քաղաքաշինական այլ օբյեկտներ քանդելու աշխատանքները սկսելու թույլտվության համար:

3. համայնքի տարածքում առևտրի համայնքային կանոններին (Երևանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան ոգելից խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար:

4. համայնքային կանոններին (Երևանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

5. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկօրինակներ տրամադրելու համար:

6. և այլն:

ՀՀ-ում համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները՝

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղեկան ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճար:

բ) տեղեկան ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ տալու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճար:

գ) տեղեկան ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխահատուցման համար՝ մասնակիցների վճար:

Տեղական տուրքերի դրույքաչափերը, հիշյալ օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեի հաստատելուց առաջ: Թաղային համայնքներում տեղական տուրքի դրույքաչափերի սահմանման վերաբերյալ առաջարկությունը համայնքի ավագանուն համայնքի ղեկավարը ներկայացնում է՝ խորհրդացկելով Երևանի քաղաքապետի հետ:

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր: Ընթացիկ տարում տեղական տուրքերի դրույքաչափերը չեն կարող փոփոխության ենթարկվել:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10 հոդվածում սահմանված են տեղական տուրքերի դրույքաչափերը:

Տեղական վճարի դրույքաչափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր: Ընթացիկ տարում տեղական վճարների դրույքաչափերը չեն կարող փոփոխության ենթարկվել:

## §5 Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ

ՀՀ-ում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հասկացությունը, հավաքագրման իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմունքները, դրույքաչափերը և վճարման կարգը սահմանվել են ՀՀ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» 1997 թ. դեկտեմբերի 26-ի օրենքով:

Պարտադիր սոցիալական ապահովագրության պետական վճարները սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանս-

սավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներ են:

ՀՀ-ում իրավաբանական անձինք, ինչպես նաև ՀՀ քաղաքացիները պարտավոր են կատարել սոցիալական վճարումներ, եթե հիշյալ օրենքով այլ բան չի նախատեսված:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վճարումներ են կատարում՝ 1. գործատուները (գործատու է համարվում այս օրենքով քաղաքացիաիրավական հարաբերությունների ցանկացած սուբյեկտ, որն իր գործունեության իրականացման կամ ապահովման համար իրավունք ունի օրենքով չարգելված աշխատանք առաջարկել ֆիզիկական անձանց, այդ նպատակով աշխատողներ վարձել և աշխատանքային պայմանագրեր կնքելու միջոցով նրանց ներգրավել որոշակի աշխատանքների կատարմանը), 2. վարձու աշխատողները, 3. անհատ ձեռնարկատերերը, 4. քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից եկամուտ ստացող ֆիզիկական անձինք, 5. գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը և նրանց միավորմամբ ձևավորված իրավաբանական անձինք:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման օբյեկտներն են՝

ա) գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները.

բ) վարձու աշխատանք կատարող ֆիզիկական անձանց աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները.

գ) անհատ ձեռնարկատերերի տարեկան եկամուտները՝ առանց հաշվի առնելու եկամտահարկով հարկման նպատակով կատարվող անձնական նվազեցումը, քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից եկամուտներ ստացած անձանց՝ աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները.

դ) գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գուտ եկամուտը:

Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված եկամուտների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերը

1. Գործատուները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար սոցիալական վճարներ կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման սոցիալական օբյեկտի ամսական վճարի չափը

մինչև 20000 դրամ 5000 դրամ, պետական կամ համայնքային ենթակայության մշակույթային, դպրոցական, նախադպրոցական հաստատությունների մինչև 20000 դրամ աշխատավարձ սահմանված հաստիքը ոչ լրիվ դրույքով զբաղեցնող վարձու աշխատողի համար սոցիալական վճարը գործատուն հաշվարկում և լիազոր մարմին է փոխանցում վարձու աշխատողի զբաղեցրած ոչ լրիվ դրույքին համամասնորեն:

20000 -ից մինչև 100000 դրամ 5000 դրամ գումարած  
20000 դրամը գերազանցող  
գումարի 15 տոկոսը

100000 դրամից ավելի 17000 դրամ գումարած  
100000 դրամը գերազանցող  
գումարի 5 տոկոսը

Ընդ որում, սոցիալական վճարները հաշվարկում է յուրաքանչյուր գործատու, առանց հաշվի առնելու այլ գործատուի կողմից վարձու աշխատողի համար կատարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները:

Ոչ առևտրային կազմակերպությունների, մշակույթային, կրթական (այդ թվում՝ նախադպրոցական), գիտական, առողջապահական հաստատությունների վարձու աշխատողների համար սոցիալական վճարի նվազագույն չափը կիրառվում է յուրաքանչյուր մեկ լրիվ դրույքի նկատմամբ: Հեղինակային վարձատրությունների նկատմամբ սոցիալական վճարի նվազագույն չափի փոխարեն սոցիալական վճարը հաշվարկվում է հեղինակային վարձատրության նկատմամբ 15 տոկոս դրույքաչափով:

Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով, որոնց պահումները կատարում և լիազոր մարմին են փոխանցում գործատուները:

Գործատուները, գյուղատնտեսական տնտեսությունները, անհատ ձեռնարկատերերը, գիտական և ստեղծագործական աշ-

խատանքով զբաղված անձինք պետական գրանցում ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում պարտավոր են որպես ապահովագրության պետական հիմնադրամում: Այն սոցիալական վճարները հանրապետությունում հաշվարկելու, հավաքագրելու, պետական սոցիալական ծրագրերը ֆինանսավորելու նպատակով որպես ապահովագրության կազմակերպում է հիմնադրամում գործատուների, ինքնուրույն աշխատանքով զբաղված անձանց գրանցման և հաշվառման աշխատանքները: Հիշյալ հիմնադրամը, օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպում և վերահսկում է կենսաթոշակների նշանակման ու վճարման աշխատանքները, ապահովում է վերահսկողությունը սոցիալական ապահովագրության ծրագրերի իրականացման համար հատկացվող ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման և վճարման կարգը

Գործատուները և քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում եկամուտներ վճարող անձինք սոցիալական վճարները հաշվարկում և լիազոր մարմին են վճարում եկամուտների վճարմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերի և նրանց միավորմամբ ձևավորված իրավաբանական անձանց սոցիալական վճարները հաշվարկում է լիազորված մարմինը և նշում դրանց տրվող ծանուցագրերում:

Անհատ ձեռնարկատերերը, գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերը և նրանց միավորմամբ ձևավորված իրավաբանական անձինք տարվա համար հաշվարկված սոցիալական վճարները վճարում են հաջորդ տարվա մարտի մեկից ոչ ուշ:

Գործատուն, յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդ ամսվա 25-ը լիազորված մարմին է ներկայացնում հաշվետվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավել վճարված կամ գանձված սոցիալական վճարների գումարները հաշվանցվում են հաշվարկված տույժերի դիմաց: Ապահովագրի համաձայնությամբ դրանք հաշվանցվում են առաջիկա սոցիալական վճարների դիմաց կամ վերադարձվում են

վճարողին 30 օրվա ընթացքում: Այդ ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար լիազորված մարմին վճարում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0.15 տոկոսի չափով:

**Պատասխանատվությունը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները վճարելու ուշացնելու կամ չվճարելու համար**

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովագրից գանձվում է տույժ՝ ապառքի 0.15 տոկոսի չափով: Վերոհիշյալ տույժը կիրառվում է նաև ստուգմամբ հայտնաբերված (պակաս ցույց տրված) սոցիալական վճարումների, սոցիալական վճարների նվազեցված հաշվարկման օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարների գծով դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար:

Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու, վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում ապահովագրից գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով: Իսկ լիազորված մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում սոցիալական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու, վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում սոցիալական վճարների ամբողջ գումարի չափով:

Վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում գործատուն վճարում է սոցիալական վճար՝ նրա մոտ տվյալ պահին ձևավորված միջին աշխատավարձի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարի 12-պատիկի չափով:

Ապահովագրիները լիազորված մարմնին, վերջինիս կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո տասնօրյա

ժամկետում, վճարում են թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները:

Սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում լիազորված մարմնին իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ ապահովագրի գույքը բռնագանձելու նպատակով: Լիազորված մարմինը, որպես սոցիալական վճարների պարտքը բռնագանձելու մասին դատարանի վճռի հարկադիր կատարման միջոց, ապահովագրի գույքի վրա դնում է արգելանք և ապահովում դրա իրացումը:

**§6 Բնապահպանական և բնօգտագործման վճարներ**

Բնապահպանական և բնօգտագործման վճարները սահմանվել են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 1998 դեկտեմբերի 30-ի ՀՀ օրենքով:

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող վճարն է:

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճարն է:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողները իրավաբանական և ֆիզիկական անձինք են:

Բնապահպանական վճարի տեսակներն են՝

ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար.

բ) արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար.

գ) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար:

Վնասակար նյութերը շրջակա միջավայր արտահանելու համար վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում

շրջակա միջավայր արտանետված վնասակար նյութերի ծավալի հիման վրա:

ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա:

Արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում աղբյուներում և արտադրական հարթակներում տեղադրված արտադրության և սպառման թափոնների ծավալներից և վտանգավորության դասից:

Բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանվել են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» 2000 ապրիլի 29-ի ՀՀ օրենքով:

Բնօգտագործման վճարի տեսակներ են՝

ա) ջօգտագործման համար.

բ) պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար.

գ) կենսապաշարների օգտագործման համար:

Բնօգտագործման վճարների դրույքաչափերը սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

1. Ջրաօգտագործման համար վճարը հաշվարկում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրաղբյուրներից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա.

2. Չկնարուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող վճարողները ջրօգտագործման համար վճարի հաշվարկն իրականացնում են օգտագործված ջրի ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա:

3. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների ծավալների հիման վրա:

4. Անտառանյութի օգտագործման համար վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված պաշարների ծավալների հիման վրա:

Վճարողները վճարների գումարները հաշվարկում են ինքնուրույն, եռամսյակի կտրվածքով, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

## § 6 Ճանապարհային վճարներ

Ճանապարհային վճարի հասկացությունը, վճարողների շրջանակը, վճարի տեսակները, դրույքաչափերը, հաշվարկման և գանձման կարգը սահմանվել է 1998 մարտի 3-ի «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքով:

Ճանապարհային վճարը ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով վերոհիշյալ օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Ճանապարհային վճարի տեսակներն են՝

1. այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը.

2. ծանարաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը.

3. մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը.

4. ավտոմոբիլային ճանապարհներին զովազդ տեղադրելու համար վճարը:

Ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով կամ վերը թվարկված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ճանապարհային վճարի դրույքաչափերը սահմանված են ճանապարհային վճարի մասին ՀՀ օրենքի 5, 6, 7, 8 հոդվածներով:

ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. Նախահաշվային բյուջետային ֆինանսավորման հատկացությունը

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորման էությունը կայանում է նրանում, որ պետական (հանրապետական և մարզային) և համայնքային ու արտադրական ոլորտի հիմնարկները, որոնք չունեն սեփական եկամուտներ, իրենց ընթացիկ գործունեության ընդլայնման բոլոր ծախսերը ծածկում են բյուջեի հաշվին ֆինանսական ծրագրերի՝ ծախսերի նախահաշիվների հիման վրա: Անհրաժեշտ ծախսերի ծավալը նախահաշիվներին համապատասխան ամրագրվում են բոլոր մակարդակի բյուջեներում: Կոնկրետ ճյուղերի և հիմնարկների նախահաշիվներով նախատեսված և բյուջեներում հաստատված ծախսերի ծածկման համար անհրաժեշտ դրամական միջոցները կոչվում են բյուջետային հատկացումներ:

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորումը դրամական միջոցների անվերադարձնելի և անհատույց հատկացումն է ֆինանսավորման ընդհանուր սկզբունքների հիման վրա: Սակայն նա ունի նաև հատուկ սկզբունքներ: Դրանք են՝

1. հիմնարկների և կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման համար բյուջեից միջոցների բացթողումն ըստ դրանց ենթակայության,

2. միջոցների բացթողումը տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերին համապատասխան, յուրաքանչյուր տարի ըստ կատարման աստիճանի,

3. ֆինանսավորումը գիտականորեն հիմնավորված տնտեսական նորմատիվների հիման վրա:

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորման ենթակա են սոցիալական ոլորտի հիմնարկները՝ կրթական, առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի և մշակույթի հիմնարկները:

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորումը բյուջետային միջոցների փոխանցումն է հիմնարկներին և կազմակերպություններին, որոնք զոյատևում են բյուջետային հատկացումների հաշվին:



Ոչ արտադրական ոլորտի պետական հիմնարկների և կազմակերպությունների բոլոր ծախսերը ծածկվում են բյուջետային միջոցների հաշվին: Այդ ծախսերի ծավալը որոշվում են նրանց ֆինանսական ծրագրերով՝ նախահաշիվներով: Ոչ արտադրական ոլորտի բոլոր հիմնարկների և կազմակերպությունների, պետական ապարատի, երկրի պաշտպանության բոլոր ծախսերի ֆինանսավորման կարգը կոչվում է նախահաշվաբյուջետային:

Այն դրամական միջոցների գումարները, որոնք հաստատվում են նախահաշվով կոչվում են բյուջետային հատկացումներ: Նախահաշիվը, դա ֆինանսային-ծրագրային ակտ է, որը որոշում է տվյալ հիմնարկների ծախսերի հոգալու համար բյուջետային հատկացումների նպատակային ուղղվածությունը և ըստ եռամսյակային բաշխումը:

Բյուջեի միջոցների ծախսումը առանց սահմանված կարգով հաստատված նախահաշվի չի թույլատրվում:

Տարբերում են նախահաշիվների հետևյալ տեսակները՝

անհատական, ամփոփիչ և կենտրոնացված միջոցառումների անցկացման համար:

Ծախսերի անհատական նախահաշիվները կազմվում են բյուջետային հիմնարկների կողմից բյուջեի ծախսերի դասակարգման յուրաքանչյուր պարագրաֆով:

Ամփոփիչ նախահաշիվները ներառում են այն բոլոր ծախսերը, որոնք անհրաժեշտ են տվյալ նախարարության, գերտեսչության հիմնարկների կարիքները հոգալու համար: Դրանցում միավորվում են բոլոր անհատական և կենտրոնացված միջոցառումների անցկացման նախահաշիվները:

Նախարարությունները, գերատեսչությունները և տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները), կազմում են ֆինանսական ծրագրեր ծախսերի հաշվարկմամբ և հիմնավորմամբ՝ այսպես կոչված կենտրոնացված միջոցառումների նախահաշիվները (խորհրդակցությունների անցկացում, կոնֆերանսներ և այլն):

Բյուջեից ֆինանսավորվող հիմնարկների ծախսերի նախահաշիվները ֆինանսավորվում են ՀՀ ֆինանսական նախարարության կողմից կազմվող ձևերին համապատասխան:

Անհատական նախահաշիվները բաղկացած են երեք մասից: 1-ին մասում նշվում է հիմնարկի անվանումը և հասցեն, բյուջեն, որից այն ֆինանսավորվում է ծախսերի հավաքակա-

նությունն ըստ հոդվածների և ըստ եռամսյակների: 2-րդ մասում՝ պարունակվում են օպերատիվ ծրագրերի ցուցանիշներ: 3-րդ մասում՝ որը հիմնականն է, պարունակվում են հաշվարկներ և հիմնավորումներ, ծախսեր (յուրաքանչյուր հոդվածով, նրա առանձին տարբերակով):

Նախահաշվային կարգով ֆինանսավորվող բոլոր հիմնարկների ծախսերը բաժանվում են երկու հիմնական մասի

1) Կապիտալ ներդրումների և 2) հիմնարկների ընթացիկ ծախսերի:

Իրենց հերթին ընթացիկ ծախսերը բաժանվում են՝

1. վարչատնտեսական ծախսեր և 2. գործառնությունների ծախսեր: Բյուջետային հիմնարկների գործառնությունների ծախսերի չափերը որոշվում են նորմերով:

Ծախսերի նորմատիվներն իրավասու մարմնի կողմից սահմանված հաշվարկային միավորի համար կատարվող ծախսումների չափն է: Ըստ իրենց բովանդակության այդ նորմերը լինում են՝ նյութական և դրամային: Ըստ իրավաբանական հատկանիշների նորմերը լինում են՝ պարտադիր (աշխատավարձի դրույք, նպաստների չափ) և հաշվարկային՝ հաշվարկային միավորի միջին ծախսերը:

Հաշվարկային նորմերը որոշվում են հիմնարկնարի կողմից ֆինանսական մարմինների հետ համաձայնեցնելով:

Հաշվարկային նորմերը ըստ կառուցման եղանակի բաժանվում են՝ անհատականի և համակցվածի: Անհատական նորմերը կիրառվում են բյուջետային հիմնարկների նախահաշիվները կազմելիս և սահմանվում են ծախսերի առանձին տեսակներ: Հավաքական ծրագավորման ժամանակ կիրառվում են համակցված նորմեր, որոնք միավորում են ծախսերի տարբեր տեսակներ: Անհատական նախահաշիվների քննարկման և հաստատման իրավունքը վերապահված է բյուջետային վարկերի գլխավոր տնօրինողներին կամ էլ նրանց կողմից լիազորված տնօրենների տեղակալներին:

Անմիջականորեն նախարարություններին, գերատեսչություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին չենթարկվող բյուջետային հիմնարկների ծախսերի նախահաշիվները քննարկում և հաստատվում են վերադաս մարմինների կողմից, որոնց ենթարկվում են այդ հիմնարկները:

Կենտրոնացված միջոցառումների ծախսերի նախահաշիվները կազմվում են դրանցից յուրաքանչյուրի համար և հաս-

տատվում են բյուջեի վարկերի գլխավոր տնօրինողների կողմից:

## § 2. ՀՀ պետական բյուջեի ծախսերի հաշվառման և ֆինանսավորման կարգը

Հայաստանի Հանրապետության և համայնքների դրամական միջոցների կառավարման ապահովումն իրականացնում է գանձապետարանը: Այն օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ՀՀ և համայնքների ծախսերի ֆինանսավորման իրականացումը:

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի գանձապետական միասնական հաշիվը: Այն բացվում է կենտրոնական գանձապետարանի անվամբ կենտրոնական բանկում: Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր միջոցները հաշվեգրվում են գանձապետական միասնական հաշվին: Դրանց կողմից բոլոր վճարումներն իրականացվում են գանձապետական միասնական հաշվից: Հիշյալ հաշիվն ունի իր ենթահաշիվները: ՀՀ պետական հիմնարկները չեն կարող ունենալ բանկային հաշիվներ առտևտրային բանկերում:

Պետական բյուջեի ծախսերի հաշվառման և ֆինանսավորման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 1998 թ. փետրվարի 9-ի N 82 որոշմամբ:

Բյուջետային հիմնարկների ստանձնած պարտավորությունները ենթակա են համապատասխան գրանցման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանում՝ այդ պարտավորություններն ստանձնելու պահին:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի առանձին խմբերի ֆինանսավորման ժամանակ գանձապետական համակարգում պարտավորությունների գրանցումը իրականացվում է՝

ա) որոշակի պարբերությամբ կատարվող ծախսերի՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների, աշխատավարձի վրաների, թոշակների, սոցիալական ու փոխհատուցման վճարների, պետական նպաստների գծով պարտավորությունները ՀՀ

ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանում գրանցվում են յուրաքանչյուր պարբերականության սկզբում:

բ) որոշակի ժամանակահատվածում օգտագործման ծավալներին համապատասխան ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ընթացիկ ծախսերի՝ կոմունալ վճարումների, տրանսպորտի վարձակալության կամ պահպանման ծախսերի գծով պարտավորությունները կենտրոնական գանձապետարանում գրանցվում են յուրաքանչյուր պարբերականության սկզբում դրանց համար նախատեսված ֆիզիկական ծավալների օգտագործման չափաքանակի համաձայն:

Նշված չափաքանակի հաշվարկման հիմք են ընդունվում գործադիր իշխանության մարմինների ներկայացրած կանխատեսումները, որոնք համապատասխանեցվում են ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծրագրավորման ցուցանիշներին: Նախատեսված ֆիզիկական ծավալների օգտագործման չափաքանակին համապատասխան գործադիր իշխանության մարմինը հայտ է ներկայացնում կենտրոնական գանձապետարան:

Արդեն հիշատակված ծախսերի գծով ֆինանսավորումն իրականացվում է կենտրոնական գանձապետարանից՝ պարբերականության սկզբում գործադիր իշխանության մարմինների ներկայացրած հայտերի հիման վրա: Եթե յուրաքանչյուր պարբերականության ավարտից հետո 30 օրվա ընթացքում կենտրոնական գանձապետարանը չի բավարարում գործադիր իշխանության մարմինների ներկայացրած հայտը, ապա հիշյալ ծախսերի գծով գրանցվում է բյուջետային պարտք:

Տեղական գանձապետական բաժանմունքում բյուջետային հիմնարկների գանձապետական հաշիվներում միջոցների մնացորդի բացակայության դեպքում բյուջետային հիմնարկները չեն կարող կատարել արդեն նշված ծախսերի գծով վճարումներ:

ՀՀ գանձապետական համակարգում պարտավորությունների գրանցումն իրականացվում է նաև կենտրոնացված կարգով կատարվող վճարումների՝ պետական ներքին ու արտաքին պարտքերի սպասարկման և մարման, միջազգային պայմանագրերին (համաձայնագրերին) համապատասխան, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին անդամակցության համար կատարվող վճարումների, ՀՀ սոցիալական ապահովագրության ֆոնդին կատարվող մասհանումների, համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաների գծով պարտավոր-

րությունները կենտրոնական զանձապետարանում գրանցվում են պլանավորված ժամանակաշրջանին համապատասխան: Նշված ծախսերի գծով ֆինանսավորումն իրականացվում է դրանց վճարման ժամանակացույցին համապատասխան:

ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքում մինչև 100000, 0 դրամ արժողությամբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնում է բյուջետային հիմնարկը՝ տվյալ բյուջետային հիմնարկի գանձապետական հաշվում առկա միջոցների մնացորդի սահմաններում, առանց տեղական գանձապետական բաժանմունքում համապատասխան գրացման: Իսկ 100000,0 դրամ և ավելի արժողությամբ ապրանքների ու ծառայությունների ձեռքբերումն իրականացնում է տվյալ բյուջետային հիմնարկի գանձապետական հաշվում առկա միջոցների մնացորդի սահմաններում, համապատասխան գրանցումից հետո:

Տեղական գանձապետական բաժանմունքում բյուջետային հիմնարկի գանձապետական հաշվում միջոցների մնացորդի բացակայության դեպքում տվյալ բյուջետային հիմնարկը չի կարող ապրանքների ձեռքբերման և ծառայությունների մատուցումն մասին պայմանագրեր կնքել և մրցույթ հայտարարել:

Բյուջետային հիմնարկի գանձապետական հաշվում անհրաժեշտ միջոցների մնացորդի բացակայության դեպքում մինչև 100000,0 դրամ արժողությամբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն ընդհանրապես չի վճարվում, իսկ 100000,0 դրամ և ավելի արժողությամբ ապրանքների ու ծառայությունների դեպքում ծախսերի գծով պարտավորությունների գրանցումը մերժվում է տեղական գանձապետական բաժանմունքում:

Բյուջետային հիմնարկի ֆինանսավորման պահանջները, ինչպես նաև իրականացվելիք կենտրոնացված միջոցառումների և կապիտալ ծախսերի ֆինանսավորման վերաբերյալ առաջարկությունը համապատասխան գործադիր իշխանության վերահաս մարմինների միջոցով մինչև յուրաքնչյուր եռամսյակին նախորդ ամսվա 15-ը ներկայացվում են կենտրոնական գանձապետարան: Կենտրոնական գանձապետարանում մինչև յուրաքնչյուր եռամսյակի սկիզբն ուսումնասիրվում են նշված առաջարկությունները՝ դրանք եռամսյա ֆինանսական ծրագրերում ներառելու նպատակով:

Վերը նշված ծախսերի գծով պարտավորությունները կենտրոնական գանձապետարանում գրանցվում են ընթացիկ ֆինան-

սական ծրագրավորման համապատասխան պլաններում ընդգրկվելուց հետո: Կենտրոնական գանձապետարանում գրանցված պարտավորությունները ֆինանսավորվում են մինչև համատասխան եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը հակառակ դեպքում պարտավորությունը համարվում է չմարված՝ տվյալ ծախսի գծով առաջացնելով բյուջետային պարտք:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանում արդեն նշված կարգի համաձայն համապատասխան գրանցում չստացած բյուջետային պարտավորությունների համար ՀՀ կառավարությունը չի կրում պատասխանատվություն:

Գանձապետարանն իրականացնում է ՀՀ արտաքին պարտքի սպասարկման ծրագրավորումը և այդ ծրագրին համապատասխան արտաքին պարտքի սպասարկումը:

Գանձապետարանի խնդիրների իրականացման ընթացքում այլ մարմինների հետ առաջացող հարաբերությունների կարգավորման նպատակով բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման հողվածներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմնում պաշտոնի է նշանակվում և ազատվում գլխավոր ֆինանսիստ: Նա ղեկավարում է պետական մարմնի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և համապատասխան լիազորությունների դեպքում կարող է կատարել այլ պարտականություններ:

Գլխավոր ֆինանսիստն ապահովում է ֆինանսական հոսքերի կառավարման և ներքին հսկողության համակարգի առկայությունը, գնումների մասին օրենսդրությանը համապատասխան գնումների համակարգի առկայությունը և այլն:

Նա պատասխանատու է պետական և տեղական ինքնակառավարման մարմնի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ և հրապարակային օգտագործման համար և ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված միջոցներ՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական միջոցների հավաքումն ապահովելու համար.
2. միջոցների վատնումը, չնախատեսված ծախսերի կատարումը կանխելու համար.

3. ֆինանսական պարտավորությունների և հիմնական միջոցների կառավարման համար՝ ներառյալ հիմնական միջոցների հաշվառումը, պահպանությունը և շահագործումը:

4. համակարգի պետական հիմնարկներին՝ բյուջետային դասակարգմանը համապատասխան, բյուջեով նախատեսված միջոցների բաշխումն ապահովելու համար:

Գլխավոր ֆինանսիստը պարտավոր է

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմնի և համակարգի որևէ պետական հիմնարկի միջոցներ հատկացնելուց առաջ համոզվել, որ վերջինս շարունակում է ապահովել ֆինանսական միջոցների կառավարման և ներքին աուդիտի կառավարման համակարգը:

2. ապահովել ծախսերի գերակատարումը կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հավաքվող եկամուտների թերակատարումը բացառելու անհնարինության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմնի անունից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը այդ մասին հաշվետվությունների կայացումը:

3. ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների գրանցումները:

4. ապահովել ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության սահմանված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմնի անունից ներկայացնել ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատ և ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

5. ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ:

### § 3. Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների իրավական կարգավորումը

Բյուջեից կատարվող հատկացումներից բացի մի շարք բյուջետային հիմնարկներ ունեն եկամուտների աղբյուրներ, որոնք նրանք ստանում են, ոչ թե բյուջեից այլ տարբեր աշխատանքների և ծառայությունների դիմաց իրավաբանական և ֆիզիկական անձանցից (հատուկ միջոցներ): Բյուջետային հիմնարկների

հաշվին ստացվում են ժամանակավորապես պահպանվող գումարներ (դեպոզիտ գումարներ), որոշակի իրավաբանական անձանց և քաղաքացիների ըստ նպատակային նշանակության վճարելու համար (ըստ հանձնարարության գումարներ): Այսպիսով, բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցները լինում են երեք տեսակի՝ հատուկ, դեպոզիտային և ըստ հանձնարարության գումարներ:

Հատուկ միջոցներին են պատկանում՝ տրանսպորտի շահագործումից, վարձակալությունից (այդ թվում նաև բնակարանային վարձից), ինչպես նաև ենթավարձակալներից միավորված տնտեսական սպասարկման համար (ջեռուցում, սանիտարական մաքրում, հեռախոս և այլն), այսինքն բյուջետային հիմնարկների կողմից միատեսակ գործունեության հետևանքով ստացվող միջոցները:

Բյուջետային հիմնարկները հատուկ միջոցներ են ստանում իրենց հիմնական գործունեության բնույթին համապատասխանող միջոցառումների անցկացումից՝ օրինակ, երաժշտական դպրոցներում, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում որոշակի մասնագիտությունների գծով (պետական պատվերից դուրս) ուսուցման վարձի գանձումից, մանկապարտեզներում երեխաներին պահելու վարձից և այլն:

Ներկայումս շուկայական հարաբերությունների խորացման պայմաններում առավել կարևոր նշանակություն են ձեռք բերում այն արտաբյուջետային միջոցները, որոնք բյուջետային հիմնարկների կողմից ձեռքբերվում են աշխատանքների, ծառայությունների, ձեռնարկատիրական գործունեության միջոցով:

Դեպոզիտ գումարներն այն միջոցներն են, որոնք տրվում են ի պահ բյուջետային հիմնարկներին ժամանակավորապես այդ գումարների տերերի առաջին իսկ պահանջով ետ վերադարձնելու պարտավորությամբ: Դրանց են վերաբերում գրավը, մաքսատանն ի պահ դրված գումարները և այլն:

Ըստ հանձնարարության գումարներն այն դրամական միջոցներն են, որոնք փոխանցվում են կազմակերպությունների և հիմնարկությունների գործող օրենսդրության համապատասխան կոնկրետ առաջադրանք կատարելու համար:

Այդ արտաբյուջետային միջոցների նկատմամբ բյուջետային հիմնարկների ղեկավարների իրավունքները սահմանափակ են: Այսպես նրանք, որպես բյուջետային վարկերի տնօրինողներ իրավունք չունեն անգամ ժամանակավորապես օգտագործել ի-

րենց կարիքների համար դեպոզիտային և ըստ հանձնարարության գումարների դրամական միջոցները: Դեպոզիտային միջոցները վերադարձվում են դրանց տերերի առաջին իսկ պահանջով, իսկ ըստ հանձնարարության գումարները տրվում են հանձնարարության մեջ նշված անձին:

Ներկայումս որոշ բյուջետային հիմնարկների թույլատրված է հատուկ միջոցների մի մասը օգտագործել սեփական կարիքների բավարարման համար, (բուհերի ուսման վարձից գոյացած գումարի մի մասը սեփական կարիքների համար, հարկային մարմինների գանձված հարկի մի մասը, որպես հարկային տեսուչի աշխատավարձի հավելավարձ):

## ԳԼՈՒԽ 20

### ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

#### § 1. Ապահովագրության տեղը ՀՀ ֆինանսական համակարգում

Ապահովագրությունը ՀՀ ֆինանսական համակարգի ինքնուրույն օղակն է:

Ապահովագրությունը կապված է չնախատեսված, արտակարգ իրադրությունների հետ:

Տնտեսագիտական առումով ապահովագրությունն իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների համակարգ դրամական ու նյութական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված պահուստների կազմավորման կապակցությամբ, որոնք անհրաժեշտ են հասարակության և նրա անդամների անկանխատեսելի կարիքների բավարարման համար:

Նյութական առումով ապահովագրության ընթացքում ստեղծվում են մասնագիտացված հիմնարկների՝ ապահովագրողների դրամական (նյութական) ֆոնդեր, որոնք օգտագործվում են տարրերային աղետների, դժբախտ դեպքերի հետևանքով պատճառված վնասների, ինչպես նաև որոշակի իրադարձությունների վրա հասնելու կապակցությամբ հատուցման համար:

Իրավական առումով ապահովագրությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքային և անձնական շահերի պաշտպանության հարաբերություններ են: Որոշակի դեպքերի (ապահովագրական դեպքերի) տեղի ունենալու ժամանակ ապահովագրական հարաբերությունների սուբյեկտների կողմից վճարվող ապահովագրական վճարների գոյացած դրամական ֆոնդերի հաշվին հատուցվում են ապահովադիրների կողմից կրված վնասները, կամ տրվում է որոշակի հատուցում ապահովագրին պայմանագրով նախատեսված իրադարձության առնչությամբ:

Ապահովագրության բնորոշ գծերն են՝

1. Ապահովագրական հարաբերությունների հավանական բնույթը: Ապահովագրման ժամանակ անհնար է նախօրոք նախատեսել ապահովագրական դեպքի տեղի ունենալու ոչ ժամանակը, ոչ էլ հասցված վնասների չափը: Անհնար է նաև նախօրոք

որոշել այն կոնկրետ ապահովադրին, որի շահերը կպաշտպանվեն ապագայի այս կամ այն ժամանակահատվածում:

**2. Միջոցների վերադարձնելիությունը:**

Ապահովագրական վճարները ապահովագրական ֆոնդում միավորելուց հետո ենթակա են վճարման ապահովադրներին ապահովագրողների կողմից ապահովագրական ընկերության սպասարկման ծախսերը հանելուց հետո: Կոնկրետ ապահովադրի վճարման չափերը նման դեպքերում կարող է կախված լինել ոչ միայն կորուստի մեծության հետ, այլև կոնկրետ ապահովագրական պայմանագրից: Ապահովագրման ժամանակ միջոցների վճարումը նախատեսված է ոչ թե ինչ որ կոնկրետ ապահովադրի, այլ կարծես թե բոլոր ապահովադրներին միասին վերցրած: Շատ հավանական է, որ ապահովադրների զգալի մասը չստանան ապահովագրական վճար ապահովագրման ժամկետում ապահովագրական դեպքի տեղի չունենալու կապակցությամբ:

**3. Վերաբաշխիչ հարաբերությունների խստորեն սահմանագծված (ներփակ) բնույթը:**

Ապահովագրման ժամանակ վերաբաշխիչ հարաբերությունների բնույթը կայանում է նրանում, որ ապահովագրական դեպքի տեղի ունենալու ժամանակ հատուցման ենթակա գումարը ենթակա է վճարման այդ հարաբերությունների բոլոր մասնակիցներին: Ապահովագրական ռիսկը վերաբերում է բոլոր ապահովագրողներին:

**4. Ստեղծված ֆոնդի նպատակային օգտագործումը:**

Ապահովագրական ռեսուրսների ծախսումն իրականացվում է բացառապես խստորեն որոշված դեպքերում, որոնք նախատեսված են ապահովագրության պայմանագրով: Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը և պայմանագրի պայմանները կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով (ՀՀ քաղ օր-ի 983- 1025 հոդվածներ) և «Ապահովագրության մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 16-ի օրենքով:

Ապահովագրությանը, որպես ֆինանսական համակարգի ինքնուրույն օղակներից մեկին, բնորոշ են ֆինանսների բոլոր հիմնական գործառնություններն իրենց որոշակի յուրահատուկ դրսևորումներով: Այնպես, ֆինանսների բաշխիչ գործառնությամբ դրսևորվում է այնպիսի յուրահատուկ գծերի միջոցով, ինչպիսինք են, նախազգուշացումը, վերականգնումը և խնայողությունը:

Ապահովագրության նախազգուշացնող գործառնությամբ կայանում է նրանում, որ ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն օգտագործել ապահովադրների ժամանակավորապես ազատ միջոցները կանխարգելիչ միջոցառումների լայն համակարգի կենսագործման համար, որոնք ուղղված են նախազգուշացնելու ապահովադրներին վնասների հնարավոր պատճառումը: Դրանք կարող են ներդրվել հրշեջ, սանիտարահամաճարակային, անասնաբուժական և այլ ծառայությունների վերագինման, անհրաժեշտ տեխնիկայով և շինություններով ապահովելու համար:

Ապահովագրության վերականգնիչ (պաշտպանիչ) գործառնությամբ կայանում է նրանում, որ ապահովագրական դեպքի տեղի ունենալու և պայմանագրով նախատեսված որոշակի դրամական գումարի վճարման ժամանակ տեղի է ունենում վնասների լրիվ կամ մասնակի վերականգնում (հատուցում):

Ապահովագրությունը կարող է իրականացնել նաև խնայողական գործառնությամբ: Դա տեղի է ունենում, երբ այն օգտագործվում է, ոչ միայն որպես վնասի հատուցման միջոց, այլև որպես բուն դրամական միջոց, որոնք ներդրված են, որպես ապահովագրական վճարներ, պաշտպանության համար:

Այս գործառնություն իրականացվում է, օրինակ, որոշակի տարիքի հասնելու դեպքում ապահովագրման ժամանակ:

Ապահովագրությունը, որպես ՀՀ ֆինանսական համակարգի ինքնուրույն օղակ իրենից ներկայացնում է տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որոնք կարգավորվում են իրավական նորմերով (քաղաքացիական, ֆինանսական) և որոնց միջոցով ապահովադրներից կամավոր կամ պարտադիր կարգով վճարներ գանձելու միջոցով ստեղծվում են դրամական միջոցների հատուկ ապահովագրական ֆոնդեր:

Ապահովագրական ընկերությունները ապահովագրական ֆոնդերում գտնվող ապահովադրների ժամանակավորապես ազատ միջոցները կարող են օգտագործել որպես վարկային ռեսուրսներ, կամ կատարել համապատասխան ներդրումներ: Դա պայմանավորված է նրանով, որ ապահովագրական հարաբերությունները հավանական բնույթ են կրում և ոչ բոլոր ապահովադրների համար տեղի կունենա ապահովագրական դեպքը, որի հետևանքով պետք է հատուցվի պատճառված վնասը: Քանի որ ապահովագրության ժամանակ ժամանակավորապես ազատ դրամական միջոցների մի մասը վերցվում է կանխիկ

դրամաշրջանառությունից, ապա այն որոշակիորեն կարգավորում է դրամի շրջապտույտը:

ՀՀ-ում ապահովագրական գործունեությամբ զբաղվում են պետական և մասնավոր ընկերությունները:

Ներկայումս պետության և ապահովագրական ընկերությունների փոխհարաբերություններն արմատապես փոխվել են: Այս բնագավառում պետական կառավարումը փոխարինվել է պետական կարգավորման և վերահսկողության: Պետական ապահովագրության մարմիններն այլևս չեն հանդիսանում, որպես պետական կառավարման մարմիններ:

Ապահովագրական հարաբերությունները կարգավորվում են ինչպես քաղաքացիաիրավական, այնպես էլ ֆինանսաիրավական նորմերով: Քաղաքացիական իրավունքը կարգավորում է այդ բնագավառի պայմանագրային հարաբերությունները, իսկ ֆինանսական իրավունքը՝ պետախիշխանական պահանջների վրա հիմնված հարաբերությունները: Ֆինանսական իրավունքի նորմերը որոշում են ապահովագրության կազմակերպումը և համակարգը, նրա տեսակները, պարտադիր ապահովագրության, ապահովագրական գործունեության լիցենզավորման կարգը և այլն:

Քաղաքացիաիրավական առումով ապահովագրական իրավահարաբերությունները պարտավորական իրավահարաբերությունների տեսակներից են: Ապահովագրական պարտավորության համաձայն մեկ անձը՝ ապահովադիրը պարտավորվում է օրենքի կամ պայմանագրի համապատասխան մուծել ապահովագրական վճարումներ, իսկ մյուս անձը՝ ապահովագրողը պարտավորվում է որոշակի իրադարձությունների առաջացման դեպքում ապահովադիրին կամ վերջինիս կողմից նշանակված անձին վճարել ապահովագրական հատուցում (գումար):

Ապահովագրողի պարտավորության ծագումը պայմանավորված է երկու նսխադրյալներով. Առաջին, ապահովագրական պարտավորվածությունը ձևակերպելիս անհրաժեշտ է ճիշտ սահմանել ապահովագրական ռիսկը, այսինքն ապահովագրական պահպանության օբյեկտին սպառնացող այն հնարավոր վտանգները, որոնց համար պատասխանատու է ապահովագրողը: Հատուցման ենթակա չէ այն վնասը, որը պատճառվել է ապահովագրական ռիսկի սահմաններից դուրս ելնող երևույթների հետևանքով: Երկրորդ, անհրաժեշտ է, որ տեղի ունենա ապահովագրական պատահար, այսինքն՝ իրականության վերած-

վի ապահովագրական ռիսկի բովանդակությունը կազմող հնարավոր վտանգներից որևէ մեկը: Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում (գումար) վճարելու պարտականությունից, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունենում ապահովադիրի կամ երրորդ անձի դիտավորության, նրա հանցավոր գործունեության հետևանքով և այլն:

ՀՀ-ում ապահովագրությունը իրականացվում է պայմանագրով կամ օրենքով: Արտապայմանագրային եղանակով է տեղի ունենում միայն պարտադիր գույքային ապահովագրությունը:

Ապահովագրության օբյեկտների բնույթից ելնելով ապահովագրությունը լինում է գույքային և անձնական: Ըստ ապահովագրման մեթոդի այն լինում է պարտադիր և կամավոր:

Գույքային ապահովագրության օբյեկտը գույքային շահերն են, որոնք կապված են գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ: Անձնական ապահովագրության օբյեկտ են հանդիսանում քաղաքացու անձնական բարիքները, որոնք կապված են նրա կյանքի, առողջության և աշխատունակության հետ: Անձնական ապահովագրության ժամանակ կարող է ապահովագրվել նաև երրորդ անձի համապատասխան շահերը:

Կամավոր ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի և ապահովադրի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Կամավոր ապահովագրության ընդհանուր պայմանները և կարգը սահմանվում են օրենսդրության հիման վրա յուրաքանչյուր ապահովագրողի կողմից ինքնուրույն: Ապահովագրության կոնկրետ պայմանները սահմանվում են յուրաքանչյուր առանձին ապահովագրական պայմանագրում: Վերջինիս կնքման, կատարման և լուծարման կարգը որոշվում է քաղաքացիաիրավական նորմերով: Սակայն որոշ հարցեր, որոնք վերաբերում են, մասնավորապես կամավոր ապահովագրության նախազգուշական միջոցառումների պահուստի ձևավորման և օգտագործման հետ, կարգավորվում են նաև ֆինանսական իրավունքի նորմերով:

Պարտադիր է համարվում օրենքի ուժով կատարվող ապահովագրությունը: ՀՀ քաղ. օր-ի 991 հոդվածի համաձայն «Օրենքում նշված անձանց վրա կարող է պարտականություն դրվել ապահովավագրելու՝

1. օրենքով սահմանված այլ անձանց կյանքը, առողջությունը կամ գույքը՝ նրանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու դեպքերում.

2. իր քաղաքացիական պատասխանատվության ռիսկը, որը կարող է վրա հասնել այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու կամ այլ անձանց հետ կնքած պայմանագիրը խախտելու հետևանքով»: Այն կարող է հանդես գալ որպես պետական պարտադիր ապահովագրություն, որն իրականացվում է բյուջեի հաշվին և պարտադիր ապահովագրություն, որն իրականացվում է ապահովադիրների միջոցների հաշվին:

Գույքային և անձնական ապահովագրությունը կարող է հանդես գալ, և՛ որպես կամավոր և՛ որպես պարտադիր ապահովագրություն:

Պարտադիր ապահովագրության տեսակները, պայմանները և կարգը սահմանվում են համապատասխան նորմատիվ ֆինանսափրավական ակտերով:

Պարտադիր ապահովագրության ժամանակ ծագող հարաբերությունների առանձնահատկությունները թույլ են տալիս դրանք դասելու ֆինանսական իրավունքով կարգավորվող հարաբերությունների շարքին: Այսպես, այդ հարաբերություններում նախ և առաջ պետության կողմից սահմանվում է ապահովադիրների հաշվին իրականացվող պարտադիր ապահովագրության տեսակները, պայմանները և կարգը: Այստեղ առկա է պետական վերահսկողությունը այդ ոլորտի նկատմամբ կամ էլ պետության (նրա լիազոր մարմնի) որպես պարտադիր սուբյեկտի մասնակցությունը պետական պարտադիր ապահովագրական հարաբերություններում: Երկրորդ, այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման կարգավորման ժամանակ կիրառվում է հրամայական մեթոդը:

## § 2. Ապահովագրական գործունեություն իրականացնող մարմինների համակարգը

Ապահովագրական գործունեությունն իրականացվում է համապատասխան կարգով լիցենզիա ստացած ապահովագրական ընկերությունների կողմից:

Ապահովագրողներն ապահովագրական գործունեություն կարող են իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով:

Ապահովագրական գործակալներն ապահովագրական կազմակերպությունների հետ աշխատանքային հարաբերու-

յունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք են, որոնք հանդես են գալիս ապահովագրի անունից և նրա հանձնարարությամբ:

Ապահովագրական բրոքերները ապահովագրության գծով միջնորդային գործունեություն իրականացնող, սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր են, որոնք գործում են ապահովադրի հանձնարարությամբ և նրա անունից:

Նրանք նաև իրականացնում են ապահովագրական գործառնություններ:

Ապահովագրական բրոքերներն ապահովադիրների ապահովագրական ռիսկերը պետք է տեղաբաշխեն ՀՀ-ում լիցենզավորված ապահովագրական ընկերություններում: Նրանք ապահովադիրների ապահովագրական ռիսկերն իրավունք ունեն վերաապահովագրելու նաև օտարերկրյա ապահովագրական կազմակերպությունում:

Ապահովագրողները, կյանքի և այլ ապահովագրական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, ապահովագրավճարներից ձևավորում են ապահովագրական պահուստներ: Համանման կարգով ապահովագրողները կարող են ձևավորվել նաև նախագուշակական միջոցառումների պահուստներ:

Ապահովագրողներն իրենց տրամադրության տակ մնացած այլ միջոցների, ինչպես նաև ապահովագրական պահուստների հաշվին կարող են կատարել ներդրումներ կամ դրանք տեղաբաշխել այլ ձևերով, վարկավորել կյանքի ապահովագրության պայմանագրեր կնքած ապահովադիրներին՝ պայմանագրերում նշված ապահովագրական գումարների սահմաններում:

Ապահովագրողներն ապահովագրական պահուստների 50 տոկոսից ոչ պակաս մասը պարտավոր են տեղաբաշխել ՀՀ կառավարության կողմից նախատեսված առավել հուսալի ներդրումներում:

Ապահովագրական պահուստների ձևավորման և տեղաբաշխման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից:

Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չպետք է պակաս լինի մեկ միլիոն դրամից: Լիազորված պետական կառավարման մարմինը (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) իրավասու է մեծացնել կանոնադրական կապիտալի նվազագույն չափն իր կող-



մից մշակված կարգով, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ կամ մի քանի տարիների ծրագրով:

Իրենց վճարունակությունն ապահովելու համար ապահովագրողները պարտավոր են պահպանել ակտիվների և իրենց կողմից վերցված ա՝ իովագրական արտավորությունների միջև նորմատիվային հարաբերակցությունը: Այդ հարաբերակցության հաշվարկների մեթոդաբան և նորմատիվային չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Վերը նշված նորմատիվային հարաբերակցությունը գերազանցող ապահովագրական պարտավորությունների ծավալներն ապահովագրողները պարտավոր են վերաապահովագրել:

Ապահովագրողների հաշվային պլանները և հաշվապահական հաշվառման կարգը, հաշվետվության, ապահովագրական գործարքների հաշվառման ձևերը և ցուցանիշները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

Ապահովագրողների տարեկան հաշվեկշիռները, եկամուտների և ծախսերի հաշիվները, աուդիտորական ծառայությունների կողմից հաստատելուց հետո, հրապարակվում են ոչ պակաս քան 1000 տպաքանակ ունեցող մամուլում՝ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը:

Ապահովագրական գործունեության նկատմամբ իրականացվում է պետական վերահսկողություն: Այն իրականացվում է լիազորված պետական կառավարման մարմինը (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն), որի հիմնական պարտավորություններն են՝

ա) ապահովագրողին ապահովագրական գործունեության իրականացման համար լիցենզիայի հանձնումը և նրանց՝ մեկ միասնական գրանցամատյանի (ռեեստրի) վարումը:

բ) ապահովագրողների և նրանց միությունների, ինչպես ապահովագրական բրոքերների համար մեկ միասնական գրանցամատյանի (ռեեստրի) վարումը:

գ) ապահովագրողների վճարունակության ապահովման նկատմամբ վերահսկողությունը:

դ) օրենքով սահմանված լիազորված պետական կառավարման մարմնի (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) իրավասության շրջանակներին վերաբերող մասով ապահովագրական գործունեության համար նորմատիվ և մեթոդաբանական փաստաթղթերի մշակումը:

Լիազորված պետական կառավարման մարմինը (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) իրավունք ունի՝

ա) ապահովագրողներից ստանալ սահմանված ձևերի հաշվետվություններ իրենց գործունեության վերաբերյալ և տեղեկատվություն՝ ֆինանսական վիճակի վերաբերյալ:

բ) ապահովագրողների կողմից ապահովագրության մասին օրենսդրության պահանջների կատարման, ինչպես նաև նրանց կողմից ներկայացվող հաշվետվությունների հավաստիության ապահովման համար իրականացնել ստուգումներ:

գ) ապահովագրողների կողմից ապահովագրության մասին օրենսդրության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում դրանց վերացման մասին տալ գրավոր նախազգուշացում, որի չկատարման դեպքում կասեցնել կամ սահմանափակել այդ ապահովագրողների լիցենզիաների գործողությունը՝ ընդհուպ մինչև հայտնաբերված թերությունների վերացումը կամ կայացնել որոշում՝ տրված լիցենզիաների գործողության դադարեցման մասին:

դ) ապահովագրողների կողմից ապահովագրության մասին օրենսդրության խախտումների դեպքում, ինչպես նաև առանց լիցենզիաների ապահովագրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ հայց ներկայացնել դատարան:

Ապահովագրողն իրավունք ունի լիազորված պետական կառավարման մարմնի (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) կողմից լիցենզիայի մերժումը բողոքարկել դատական կարգով:

Լիազորված պետական կառավարման մարմնի (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) գործողությունները, նորմատիվ և անհատական ակտերը, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց գործողությունները կարող են բողոքարկվել դատարան: Վերը նշված ակտերի գործողությունը կասեցվում է միայն դատարանի վճռով:

**ԳԼՈՒԽ 21**  
**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ**  
**ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**§ 1. Արժեթղթերի հասկացությունը, դերը և նշանակությունը:**  
**Արժեթղթերի տեսակները**

Արժեթղթերին վերաբերող հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 146-161 հոդվածներով և «Արժեթղթերի շուկայի կարգավորվման մասին» 2000 թ. հուլիսի 6-ի ՀՀ օրենքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 146 հոդվածի համաձայն «Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս: Արժեթղթի փոխանցմամբ փոխանցվում են դրանով հավաստվող բոլոր իրավունքները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 153 հոդվածով արժեթղթերի թվին են դասվում՝ պարտատոմսը, չեկը, հասարակ մուրհակը, փոխանցելի մուրհակը (վճարարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկ, բանկային սերտիֆիկատ), երկակի պահեստային վկայագիրը, հասարակ պահեստային վկայագիրը և այլ փաստաթղթեր, որոնք արժեթղթերի մասին օրենքներով դասվում են արժեթղթերի թվին:

1. Պարտատոմսը և բաժնետոմսը ինվեստիցիոն (ներդրումային) արժեթղթեր են:

2. Չեկը, հասարակ մուրհակը, փոխանցելի մուրհակը (վճարարագիրը), վճարային արժեթղթեր են:

3. Կոնոսամենտը, երկակի պահեստային վկայագիրը, հասարակ պահեստային վկայագիրը տիտղոսային արժեթղթեր են:

«Արժեթղթերի շուկայի կարգավորվման մասին» օրենքով արժեթուղթ են համարվում նաև շահույթի բաշխման համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը կամ մասնակցություն վկայող փաստաթուղթը, օպցիոնը, ֆյուչերսը, կամ ածանցյալ այլ արժեթուղթը: ~~Օպցիոն պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը (սովորաբար որոշակի գրավի դիմաց)~~

մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետով և իր անունից ձեռքբերել կամ վաճառել որոշակի քանակի ապրանք, արժույթ և արժեթուղթ, այդ թվում նաև ֆյուչերային կամ ֆորվարդային պայմանագիր: Ածանցյալ է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է ներդրողի իրավունքները կամ պարտավորությունների ժամկետային իրականացման (կատարման) իրավունքը: Ֆյուչերային պայմանագիրը արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված քանակով, հաստատված գներով և ժամկետերում մյուս կողմից ձեռքբերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում արժեթուղթը կամ արժույթ: Ֆորվարդային պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված ժամկետներում և մյուս կողմից գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով ձեռքբերել կամ վաճառել որևէ ապրանք, այդ թվում արժեթուղթ կամ արժույթ: Ածանցյալ է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է ներդրողի իրավունքները կամ պարտավորությունների ժամկետային իրականացման (կատարման) իրավունքը: Արժեթուղթ են համարվում նաև արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունքը, դեպոզիտային հավաստագիրը կամ ստացականը՝ անկախ դրանց ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), ինչպես նաև ցանկացած ներդրումային համաձայնությունը, որը ներառում է վերը նշված արժեթղթերի հատկանիշներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը, կապիտալի միջոցների ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած այլ փաստաթուղթ՝ անկախ դրանց ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), ինչպես նաև արժեթղթի նկատմամբ իրավունքը կամ նման իրավունքի կամ դրանում բաժնի կամ մասնակցության վկայականը, հավաստագիրը, ստացականը կամ նման այլ փաստաթուղթ՝ անկախ դրանց ձևից (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), եթե դրանցով նախատեսված իրավունքների իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն դրանք ներկայացնելիս կամ հատուկ գրանցամատյանում սովորական կամ համակարգչային դրանց ամրագրման դեպքում: Արժեթուղթ է նաև այն փաստաթուղթը, անկախ դրա ձևից, որն այդպիսին է համարվում գործարար շրջանառության սովորույթների համաձայն:

## § 2. Արժեթղթերի շուկայի հասկացությունը և նրա մասնակիցների կարգավիճակը

Արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և հրապարակային առուվաճառքի առնչությամբ առաջացող փոխհարաբերությունների համակարգն է:

Արժեթղթերի շուկայում իրականացվում է մասնագիտացված գործունեություն:

Արժեթղթերի շուկան կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» 2000 թ. հուլիսի 6-ի ՀՀ օրենքով:

Արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակն է՝

1. ներդրողի պաշտպանությունը.

2. արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության թափանցիկության ապահովումը.

3. արժեթղթերի շուկայի, արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը, կատարելագործումը և զարգացումը.

4. արժեթղթերի և դրանցով իրականացվող գործարքների համար նախատեսված դրամական միջոցների օգտագործման և վարկային համակարգի անվտանգությունը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցներն են՝ թողարկողները, մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք, ինքնակարգավորող կազմակերպությունները, ֆոնդային բորսաները, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը:

ՀՀ արժեթղթերի Հանձնաժողովը պետական մարմին է, որը գործում է օրենքի, դրան համապատասխան ընդունված որոշումների, այլ իրավական ակտերի հիման վրա և օժտված է օրենքով սահմանված պետական կարգավորման իրավասությամբ: Այն իր խնդիրներն օրենքով սահմանված կարգով իրագործելու նպատակով ՀՀ անունից կցում է պայմանագրեր, ձեռք է բերում գույքային իրավունքներ և ստանձնում պարտավորություններ, դատարանում հանդես է գալիս որպես կողմ կամ երրորդ անձ:

Հանձնաժողովի խնդիրներն են ապահովել արժեթղթերում ներդրողների պաշտպանությունը, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորումն ու պահպանումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմաններ:

Իր խնդիրների իրականացման նպատակով Հանձնաժողովը օրենքով սահմանված իր իրավասության շրջանակներում, կարգավորում և վերահսկում է ՀՀ-ում արժեթղթերով կատարվող գործարքների շուկան և դրա մասնակիցներին սահմանելով կարգավորման և վերահսկողության քաղաքականություն օրենքին համապատասխան: Օրենքով սահմանված խնդիրներն ու գործառույթներն իրականացնելիս Հանձնաժողովն անկախ է պետական այլ մարմիններից: Այն իրավունք չունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեության իրականացնել, արժեթղթեր ձեռք բերել կամ այլ ներդրումներ կատարել:

Հանձնաժողովն իր իրավասության սահմաններում և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով՝

ա) իր որոշմամբ ընդունում է անհատական և համապարտադիր (նորվատիվ) բնույթի իրավական ակտեր՝ կանոններ, կարգեր, կանոնակարգեր, կարգադրություններ, հրահանգներ և այլն.

բ) հաստատում է իր պաշտոնական կարծիքը կամ իր իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի քաղաքականության հայտարարությունները.

գ) հաստատում է իր ֆինանսական և գործունեության տարեկան հաշվետվությունը.

դ) հաստատում է իր կանոնադրությունը, ստորաբաժանումների ցանկն ու կառուցվածքը, իր աշխատակիցների վարքագծի էթիկայի կանոնները, ներքին այլ կանոններ.

ե) նշանակում է լսումներ իրականացնող անձանց: Այդ լսումների արդյունքներով ընդունում է անհատական իրավական ակտեր:

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում վերահսկում է մասնագիտացված անձանց, նրանց տնօրեններին և այլ ղեկավարներին, նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց, թողարկողներին, նրանց խոշոր բաժնետերերին, տնօրեններին և այլ ղեկավարների, ինչպես նաև արժեթղթերի շուկայում կատարվող խոշոր բաժնետերերին, խոշոր գործարքներում ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված անձանց և օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիրառում է տույժեր նրանց նկատմամբ:

Այդ իրավասությունն Յանձնաժողովն իրականացնում է հաշվետվական վերահսկողության և ստուգումների միջոցով:

Հաշվետվական վերահսկողություն իրականացնելու նպատակով Յանձնաժողովն իրավունք ունի որոշել օրենքով և իր որոշմամբ նախատեսված հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և նման այլ փաստաթղթերի ներկայացման կարգն ու ժամկետները: Մասնագիտացված անձի կամ թողարկողի կողմից վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու, ուշացումով, սահմանված կարգի էական այլ խախտումներով կամ ոչ լիարժեք փաստաթղթեր ներկայացնելու դեպքում Յանձնաժողովն անում է նախազգուշացում և կարգադրում՝ ուղղել և հետագայում բացառել նման խախտումը:

Չարամտությամբ կամ ակնհայտ անտարբերությամբ ցանկացած 360 օրվա ընթացքում երկուսից ավելի խախտում թույլ տալու դեպքում Յանձնաժողովն իրավունք ունի նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Անկախ որևէ տույժի կիրառումից Յանձնաժողովը փաստաթղթի ուշացման յուրաքանչյուր օրվա համար մասնագիտացված անձի կամ թողարկողի նկատմամբ նշանակում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով սկսած ուշացման երրորդ օրվանից: Վերը նախատեսված դեպքերում Յանձնաժողովն իրավունք ունի գրկել և մինչև երկու տարի որակավորման չթույլատրել մասնագիտացված անձի տնօրենին ու փոխտնօրենին (անկախ նրանց մեղքից), ինչպես նաև դրա այն ղեկավարներին, որոնք մեղավոր են տվյալ խախտման համար:

Յանձնաժողովը օրենքով նախատեսված դեպքերում իրավասու է կիրառել հետևյալ տույժերը՝ նախազգուշացում և խախտումները շտկելու կամ հետագայում բացառելու կարգադրություն, տուգանք, լիցենզայի կասեցում կամ ուժը կորցրած ճանաչել:

Մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք են բրոքերային (դիլերային) ընկերությունները, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչները, արժեթղթերի պահառուները և օրենքով սահմանված այլ անձինք: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեությունն այն գործունեությունն է, որը ենթակա է լիցենզավորման: Յանձնաժողովի կողմից «Արժեթղթերի շուկայի կարգավորվման մասին» օրենքին համապատասխան:

Մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք պարտավոր են կազմել և վարել հաշվառման գրքեր, գրանցումներ ու հաշվապահական հաշվառում:

Բրոքերային գործունեություն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա այլ անձի կամ անձանց հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու գործունեությունը: Այն իրականացվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (բրոքերային ընկերություն կամ բրոքեր):

Բրոքերն այն ֆիզիկական անձն է, որն իրականացնում է բրոքերային գործունեություն բրոքերային ընկերության, ինչպես նաև բանկի կազմում, նրա անունից:

Դիլերային գործունեություն է համարվում տվյալ անձի հաշվին արժեթղթերի առուվաճառքի գործունեությունը, եթե այն տվյալ անձի գործունեության հիմնական մասն է կազմում: Այն իրականացվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (դիլերային ընկերություն կամ դիլեր):

Դիլերն այն ֆիզիկական անձն է, որն իրականացնում է դիլերային գործունեություն, դիլերային ընկերության, ինչպես նաև բանկի կազմում, նրա անունից:

Վերը նշված գործունեության տեսակները ենթակա են լիցենզավորման որպես մասնագիտացված գործունեություն: Բրոքերը, դիլերը կարող են իրականացնել բրոքերային, դիլերային գործունեություն միայն համապատասխանաբար բրոքերային, դիլերային ընկերության կազմում կամ անունից: Այդ ընկերություններն իրավաբանական անձ են, որոնք գործում են լիցենզիայի հիման վրա:

Արժեթղթերի հավատարմագրային կառավարումը անձի կողմից պարզապես դիմաց իր տիրապետմանը հանձնված այլ անձին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումն է: Հավատարագրային կառավարիչը պարտավոր է սահմանել հավատարմային կառավարման գործունեությունը կազավորող կանոններ, որոնք պետք է համապատասխանեն օրենքին և Յանձնաժողովին որոշմամբ սահմանված պահանջներին: Նա պարտավոր է ունենալ իր հավատար-

մագրային գործունեությունը վերահսկող ծառայություն, որի գործառույթները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ:

Արժեթղթերի պահառության գործունեությունը արժեթղթերի պահպանության, պահառության և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործունեությունն է Արժեթղթերի պահառուն պահառության գործունեության լիցենզիա ստացած ցանկացած իրավաբանական անձը, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտորիան է: Յուրաքանչյուր պահառու համարվում է Կենտրոնական դեպոզիտորիայի ենթապահառու Հանձնաժողովի որոշմամբ սահմանված բացառություններով: Ենթապահառուի գործառույթներն իրականացվում են Հանձնաժողովի որոշումներին համատասխան կնքված պայմանագրի հիման վրա:

Պահառուն Հանձնաժողովի որոշումներին համապատասխան պարտավոր է պայմանագրով իր հաճախորդին առաջարկել հետևյալ ծառայությունները

ա) հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցում:

բ) հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը:

գ) հաճախորդի համար առանձին դեպո հաշիվ վարելը գրանցելով այդ հաշվի հետ կապված յուրաքանչյուր գործարքի ժամկետն ու էական պայմանները:

դ) հաճախորդին արժեթղթերի վերաբերյալ թողարկողից, Կենտրոնական դեպոզիտորիայից և այլ պահառուից ստացված ամբողջական տեղեկատվության տրամադրումը:

ե) հաճախորդին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվությունների տրամադրումը:

Պահառուն իրավունք ունի իր հաճախորդներին լրացուցիչ այլ ծառայություններ մատուցել հանձնաժողովի որոշումներին համատասխան:

Յուրաքանչյուր պահառու պարտավոր է սահմանել պահառության գործունեությունը կազավորող կանոններ, որոնք պետք է համապատասխանեն օրենքին և Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պահանջներին: Նա պարտավոր է ունենալ իր գործունեությունը վերահսկող ծառայություն, որի գործառույթները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ:

Կենտրոնական դեպոզիտորիան ինքնակարգավորվող կազմակերպություն է, որն իրականացնում է կենտրոնացված պա-

հառուի, արժեթղթերի ռեեստրի, ինչպես նաև հաշվանցման և վերջնահաշվարկի գործառույթները:

Կենտրոնական դեպոզիտորիան հիշյալ օրենքով և Հանձնաժողովի որոշմամբ իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է մի շարք գործառույթներ՝

ա) որպես կենտրոնացված պահառու՝

- մատուցում է հաճախորդներին պահառության ծառայություններ:

- օրենքով և դրան համապատասխան ընդունված որոշումներով սահմանված կարգով ապանյութականացնում է արժեթղթերը և վարում դրանց հաշիվները:

բ) որպես արժեթղթերի կենտրոնացված ռեեստր՝ թողարկողի հետ կնքած պայմանագրի հիման վրա իրականացնում է արժեթղթերի սեփականատերերի, անվանատերերի, արժեթղթերի քանակի, տեսակի և դասի վերաբերյալ տվյալների միասնական համակարգի ռեեստրի վարումը:

գ) որպես հաշվանցման (բլիթինգ) և վերջնահաշվարկ իրականացնող գործակալ:

Ֆոնդային բորսա է համարվում ինքնակարգավորվող կազմակերպությունը, որը որոշակի տեղում, օրենքով և այլ իրավական ակտերով և իր կանոններով սահմանված կարգով կազմակերպում է արժեթղթերով իրապարակային առևտուր և արժեթղթերի գնանշում: Ֆոնդային բորսան իրավունք չունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացնել որևէ այլ ձեռնարկատիրական գործունեություն: Այն իրավունք ունի հիմնել մասնաճյուղեր և այլ առանձնացված ստորաբաժանումներ, դառնալ ինքնակարգավորող կազմակերպությունների միությունների անդամ:

Ֆոնդային բորսայի անդամ կարող են դառնալ միայն բրոքերային և դիլերային ընկերությունները: Ֆոնդային բորսայի միջոցների օգտագործմամբ արժեթղթերի և ֆոնդային այլ ապրանքների առևտրին ուղակիորեն կարող են մասնակցել միայն նրա անդամները: Այլ անձինք կարող են մասնակցել ֆոնդային բորսայում իրականացվող գործարքներին միայն նրա անդամների միջոցով:

Ֆոնդային բորսան պարտավոր է ձեռնարկել օրենքով և Հանձնաժողովի որոշմամբ սահմանված միջոցառումներ՝ ֆոնդային բորսայում իրականացվող թափանցիկությունը և արժեթղթերի արդար գնագոյացումն ապահովելու նպատակով:

Արժեթղթերի շրջանառությունը իրականացվում է բորսայական և արտաբորսայական եղանակներով:

Բորսա է համարվում է ցանկացած կազմակերպություն և անձանց խումբ, որն արժեթղթերի գնորդների և վաճառողների հանդիպման վայր կամ միջոց է: Այն կազմակերպում, տրամադրում, գործադրում, ապահովում կամ արժեթղթերի վաճառքի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ է իրականացնում: Բորսան ներառում է նաև այն վայրը կամ միջոցը, որն օգտագործվում է բորսայի կողմից վերոհիշյալ նպատակով:

Արտաբորսային առևտրի ոլորտը ներառում է օրենսդրությամբ սահմանված կարգով ֆոնդային բորսայից դուրս արժեթղթերով կատարվող գործարքները:

Արժեթուղթ թողարկելը (եմիսիան) թողարկողի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն արժեթուղթն առաջին ներդրողին վաճառելն է: Թողարկողն այն անձն է, որն արժեթուղթ է թողարկում կամ, որն արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում: Հաշվետու թողարկող է համարվում այն թողարկողը, որի՝

ա) ցանկացած արժեթուղթը գրանցված է որևէ ֆոնդային բորսայում:

բ) նույն դասի արժեթուղթը հիսուն և ավելի գրանցված սեփականատեր ունի, և որի զուտ ակտիվները գերազանցում են Հանձնաժողովի կողմից սահմանված մեծությունը:

Արժեթղթերի թողարկմանը հետևում է արժեթուղթ վաճառելու հրապարակային առաջարկը կամ արժեթուղթը գնելու առաջարկ անելու հրապարակային հրավերը, կամ նույն դասի արժեթղթերը վաճառելու կամ ձեռք բերելու որևէ այլ առաջարկ, որն արվել է 100-ից ավելի անձանց: Հրապարակային առաջարկի միջոցով իրականացվում է հրապարակային տեղաբաշխումը՝ այն է նշված եղանակով թողարկողի և տեղաբաշխողի կողմից արժեթղթի վաճառքը:

Տեղաբաշխողը (բաժանորդագրողը) այն անձն է, որը տեղաբաշխման նպատակով թողարկողից արժեթղթեր է ձեռք բերում, տեղաբաշխման նպատակով թողարկողի արժեթղթեր է առաջարկում, վաճառում կամ մասնակցում է նման գործ կազմակերպելու կամ իրականացնելու համաձայնությանը կամ պայմանագրին՝ այն բացառություններով, որոնք կարող են սահմանվել Հանձնաժողովի որոշմամբ:

Փակ տեղաբաշխում է համարվում արժեթղթերի ցանկացած ոչ հրապարակային տեղաբաշխումը: Տեղաբաշխումը փակ է համարվում, եթե դրա շրջանակներում առաջարկն արվել է ոչ ավելի քան 100 անձանց, և եթե այն չի հրապարակվել: Վերոհիշյալ անձանց թիվը որոշելիս ինստիտուցիոնալ ներդրողները հաշվի չեն առնվում:

Արժեթուղթը որևէ եղանակով օտարվում է տվյալ արժեթղթի գրանցման հայտարարագիրը օրենքով սահմանված կարգով գրանցվելուց հետո միայն: Արժեթղթերի գրանցման հայտարարագիրը ՀՀ արժեթղթերի հանձնաժողով է ներկայացվում երեք օրինակից, որոնք պետք է ստորագրված լինեն թողարկողի տնօրենների խորհրդի անդամների մեծամասնության, գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից: Եթե թողարկողը օտարերկրյա անձ է, ապա արժեթղթերի գրանցման հայտարարագիրը ստորագրվում է նաև ՀՀ-ում նրա լիազորած ներկայացուցչի կողմից: Գրանցման հայտարարագիրը ներկայացնելիս դիմողը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրք: Գրանցման հայտարարագիրը Հանձնաժողովին ներկայացված է համարվում վերջինիս կողմից այն ստանալու պահից: Հանձնաժողովը պարտավոր է իր կողմից սահմանված կարգով հրապարակել հայտարարագրում ներառված տեղեկությունները և ցանկացած անձի պահանջով տրամադրել հայտարարագրի պատճենը՝ զանձեղով պատճենահանման ծախսերը:

**ԲԱՆԿԱՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**§1. ՀՀ Բանկավարկային համակարգի ընդհանուր բնութագիրը**

ՀՀ բանկավարկային համակարգն ընդգրկում է ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը (այդ թվում դուստր բանկերը), նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը), ինչպես նաև օտարերկրյա բանկերի ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, վարկային կազմակերպությունները:

ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է 1996թ. հունիսի 30-ին ընդունված «ՀՀ Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի սնանկացման մասին» և 1996 թ. հոկտեմբերի 14-ի «Բանկային գաղտնիքի մասին», ՀՀ 2002 թ. մայիսի 29-ի «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով:

Այդ իրավական ակտերի հիմնական խնդիրը բանկային համակարգի զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեության ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելն է:

Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ձիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Արգելվում է առանց ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի ՀՀ տարածքում իրականացնել բանկային գործունեություն:

ՀՀ Կենտրոնական բանկն առևտրային բանկերի հետ քաղաքացիական գործարքներ կնքելիս կենսագործում է իր տնտեսական շահը և շահույթ ստանալու նպատակ է հետապնդում:

ՀՀ բանկային համակարգի ինքնուրույն օղակն են հանդիսանում այսպես կոչված առևտրային բանկերը:

Բացի ՀՀ Կենտրոնական բանկից, հանրապետության տարածքում գործող մնացած բանկերն առևտրային բանկերն են:

Ըստ հիմնադրման կարգի, դրանք լինում են.

1. Բաժնետիրական ընկերություն,
2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
3. Կոոպերատիվ բանկ:

Առաջին երկու տեսակի բանկերի վրա տարածվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի դրույթները, եթե «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքն այլ բան չի սահմանում: Կոոպերատիվ է համարվում այն բանկը, որի մասնակիցները, անկախ բանկի կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության չափից, ունեն մեկ ձայնի իրավունք: Այն ունի առնվազն երեք մասնակից: Եթե հիշյալ բանկի մասնակիցների թիվը նվազում է երեքից, ապա այն ենթակա է լուծարման կամ պետք է վեց ամսվա ընթացքում լրացնի իր մասնակիցների թիվը:

Կոոպերատիվ բանկի շահաբաժինները վճարելու, նոր մասնակիցներ ընդունելու, բանկում մասնակցությունը դադարելու, ինչպես նաև բանկի լուծարման դեպքում բանկի կապիտալը մասնակիցների միջև բաշխելու կարգը սահմանվում է կոոպերատիվ բանկի կանոնադրությամբ:

Բանկի մասնակից են համարվում նրա հիմնադիրները: Բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերում մասնակիցներն այդ բանկերի բաժնետերերն են, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերում և կոոպերատիվ բանկերում՝ դրանց փայտերերը՝ անդամները:

ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները բանկի մասնակից կարող են լինել օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Բանկի մասնակից չեն կարող լինել կու-

սակցությունները և արհեստակցական միությունները: Նրանք կարող են լինել միայն ավանդատուներ:

Առևտրային բանկերը կարող են գործել ինչպես զուտ մասնավոր կապիտալի, այնպես էլ խառը (պետական և մասնավոր) կապիտալի հիման վրա:

Ըստ բանկային գործառնությունների ընդգրկման, բանկերը լինում են.

- ունիվերսալ, որոնք իրականացնում են լայն շրջանակի բանկային գործառնություններ,

- մասնագիտացված, որոնք իրականացնում են որևէ մեկ տեսակի բանկային գործառնություն, օրինակ հիփոթեքային կամ խնայողական գործառնություն:

Հիմնականում ինչպես մեր մոտ, այնպես էլ աշխարհի շատ երկրներում լայն տարածում ունեն ունիվերսալ, բազմապրոֆիլ բանկերը:

Ըստ իրենց կառուցվածքի, բանկերը լինում են.

- մասնաճյուղեր ունեցող և
- մասնաճյուղեր չունեցող:

ՀՀ տարածքում գործող բանկերն օրենքով սահմանված կարգով ՀՀ-ում և նրա տարածքից դուրս կարող են հիմնել մասնաճյուղեր:

Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը: Ներառյալ ներկայացուցչության գործառնությունները: Դրանք իրավաբանական անձինք չեն ու գործում են իրավաբանական անձի կողմից հաստատած կանոնադրության հիման վրա: Նրանց ղեկավարները նշանակվում են իրավաբանական անձի կողմից (ՀՀ Քաղ. օրենսգրքի 66 հոդված):

Բանկի մասնաճյուղը նրա իրավաբանական անձի և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից իրականացնում է բանկային գործունեություն և օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ:

Օտարերկրյա բանկերը կարող են ՀՀ տարածքում հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ օրենքով սահմանված կարգով: Ի տարբերություն ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը բանկային գործու-

նություն և ֆինանսական գործառնություններ են իրականացնում միայն լիցենզիայի հիման վրա: ՀՀ Կենտրոնական բանկի լիտրոլորը կարող է օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից ՀՀ տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմաններ սահմանել: Այդ պայմանները պետք է միևնույնը լինեն բոլոր օտարերկրյա բանկերի, ՀՀ տարածքում գործող բոլոր մասնաճյուղերի համար:

Բացի մասնաճյուղերից, առևտրային բանկերը կարող են ունենալ ներկայացուցչություններ: Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում է դրանց պաշտպանությունը: Բանկի ներկայացուցչությունը բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համաձայն այլ գործողություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

ՀՀ տարածքում գործող բանկերը ՀՀ-ում և նրա տարածքից դուրս կարող են հիմնել ներկայացուցչություններ:

Առևտրային բանկերը կարող են ունենալ նաև գործառնական գրասենյակներ: Այդ գրասենյակները հանդիսանում են բանկի կամ նրա մասնաճյուղի, այդ թվում՝ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված գրասենյակ (կետ), որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից կարող է իրականացնել բանկային և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնությունների մի մասը:

ՀՀ տարածքում առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը գործում են միայն բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա: Այն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրվող բանկային գործունեություն իրականացնելու բույլությունը հավաստող փաստաթուղթ է:

Բանկային գործունեության լիցենզիան անժամկետ է, և դրանում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել



կամ այլ կերպ օտարվել: Այս փաստաթղթում նշվում են լիցենզիայի համարը, տալու ամսաթիվը, լիցենզավորված բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի լրիվ ֆիրմային անվանումը և գրանցման համարը:

Բանկային լիցենզիա տալու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկին, որն էլ սահմանում է լիցենզիայի միասնական ձևը:

Լիցենզավորումը որպես ընթացակարգ ունի իր փուլերը: Այն սկսվում է լիցենզիայի նախնական հավանություն ստանալու միջնորդագիր ներկայացնելու պահից և ավարտվում է լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու դիմումը մերժելու պահին:

*Լիցենզավորման ընթացակարգի փուլերն են.*

ա) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,

բ) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումը,

գ) լիցենզիա տալը:

Լիցենզիա ստանալու նախնական հավանության համար ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. Նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի միջնորդագիրը,

2. Ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը, իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար՝ օտարերկրյա բանկի հիմնադիր փաստաթղթերը և մասնաճյուղի կանոնակարգի նախագիծը,

3. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը, որն իր մեջ է ներառում բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը, նախատեսվող ֆինանսական գործառնություններն ու գործունեության հիմնական ուղղությունները, ակտիվները, պասիվների մոտավոր կազմը, կառուցվածքը, շահույթների և վնասների պլանային հաշվարկն առաջին երկու տարում:

Վերը նշված փաստաթղթերը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով և կարգով ներկայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում ՀՀ Կենտրոնական բանկը քննում է միջնորդագիրը և տալիս է նախնական հավանություն կամ մերժում է միջնորդագիրը:

*Կենտրոնական բանկը կարող է մերժել միջնորդագիրը, եթե.*

1. ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը կհակասի օրենքին և այլ իրավական ակտերին,

2. բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը չի համապատասխանում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևին,

3. օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ օտարերկրյա բանկն իրավասու չէ բանկային գործունեություն իրականացնել իր գրանցման և հիմնական գործունեության վայրում կամ եթե ՀՀ Կենտրոնական բանկը գտնում է, որ օտարերկրյա բանկի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում բանկային վերահսկողության պետական մարմինները տվյալ բանկի և նրա մասնաճյուղերի՝ որպես միասնական համակարգի, գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չեն իրականացնում:

Եթե ՀՀ Կենտրոնական բանկը սահմանված ժամկետում նախնական հավանություն տալու միջնորդագիրը պաշտոնապես չի մերժում, միջնորդագիրը ներկայացնող անձանց տեղեկացնելով մերժման հիմքերի մասին, ապա նախնական հավանությունը համարվում է տրված, ընդ որում միջնորդագիրը ներկայացնող անձի պահանջով Կենտրոնական բանկը պարտավոր է մեկօրյա ժամկետում դիմողին տրամադրել նախնական հավանության մասին իր որոշումը:

Առևտրային բանկի լիցենզավորմանը նախորդում է նրա գրանցումը: ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղը Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու համար ներկայացնվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) գրանցման դիմում, բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ընդհանուր ժողովի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու այլ մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու և բանկի ղեկավարներ ընտրելու (նշանակելու) վերաբերյալ,

բ)՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկանք,

գ) բանկի կանոնադրությունը կամ օտարերկրյա բանկի կողմից հաստատված օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնակարգը,

դ) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների ցուցակը, նրանց վավերացված ստորագրության նմուշները,

ե) բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով հետևյալ հիմքերի բացակայության մասին հայտարարություն: ՀՀ Կենտրոնական բանկը կարող է գրանցման դիմումը մերժել՝ տասնօրյա ժամկետում ծանուցելով դիմողին, եթե.

1. անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունի,

2. անձը դատարանով զրկվել է որոշակի պաշտոններ վարելու իրավունքից,

3. անձը սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,

4. անձի ապօրինի գործողությունները նախկինում հանգեցրել են բանկի կամ այլ անձի սննկացմանը:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանված ամբողջական և բավարար փաստաթղթերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում է բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը: Գրանցման պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Կանոնադրական կապիտալի համալրման համար ՀՀ Կենտրոնական բանկը բացում է գրանցված բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի թղթակցային հաշիվ:

ՀՀ Կենտրոնական բանկը վերը նշված սուբյեկտների գրանցման մասին որոշում ընդունելուց հետո եռօրյա ժամկետում հիմնադիրներին տալիս է գրանցման վկայական: Միևնույն ժամանակ ՀՀ Կենտրոնական բանկը հնգօրյա ժամկետում այդ մասին ծանուցում է կազմակերպությունների գրանցումն իրականացնող պետական լիազորված համապատասխան մարմնին՝ վերջինիս կողմից բանկի մասնաճյուղի գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

Օրենքով սահմանված են լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները: Առևտրային բանկը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում լիցենզիա ստանալու համար դիմել

ՀՀ Կենտրոնական բանկ: Դիմում ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ Կենտրոնական բանկը գրանցված բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին լիցենզիա է տալիս, եթե բավարարվել են հետևյալ պայմանները՝

1. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի լրիվ համալրումը,

2. բանկային գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը և նրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին և բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրերին,

3. ստեղծվել են բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը,

4. բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, որակավորումը, մասնագիտական համապատասխանությունը բավարարում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին: ՀՀ Կենտրոնական բանկը կարող է քննել բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարներին նրանց մասնագիտական համապատասխանությունը պարզելու նպատակով,

5. օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար նաև օտարերկրյա բանկի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում բանկային վերահսկողության պետական մարմնի համաձայնությունը՝ ՀՀ-ում բանկային գործունեություն իրականացնելու համար:

Եթե առևտրային բանկը ՀՀ Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում լիցենզիա ստանալու համար չի դիմում ՀՀ Կենտրոնական բանկ, ապա վերջինիս կողմից տրված նախնական հավանությունը և գրանցումն ուժը կորցնում են:

Այն դեպքում, երբ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը լիցենզիա է ստացել լիցենզավորման ընթացքում ներկայացված կեղծ փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա, ՀՀ Կենտրոնական բանկին իրավունք է վերապահում լիցենզիաներն անվավեր ճանաչելու հայցով դիմել դատարան: Լիցենզիան անվավեր ճանաչելու մասին դատարանի որոշումն

անմիջապես հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներում օրենքով սահմանված կարգով:

Լիցենզիայի անվավեր ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու օրվանից բանկը գրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը: Դատարանի վերը նշված որոշումը դրա կայացման հիմքերի հետ միասին պետք է անմիջապես գրավոր հաղորդվի շահագրգիռ բանկին կամ մասնաճյուղին:

Բանկային գործունեություն սկսելու համար անհրաժեշտ նախապայմաններից է բանկի կանոնադրական կապիտալի առկայությունը: Այն հայտարարվում է բանկը հիմնադրելիս և ամրագրվում է նրա կանոնադրությամբ (հայտարարված կանոնադրական կապիտալում): Փաստացի համալրված կանոնադրական կապիտալը ձևավորվում է բանկի մասնակիցների ներդրումներից:

Առևտրային բանկերի կառավարման մարմիններն են.

1. Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը:
2. Բանկի խորհուրդը:
3. Բանկի գործադիր տնօրենը:
4. Բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում

բանկի վարչությունը:

Եթե բանկի կանոնադրությամբ նախատեսված է վարչություն ունենալ, ապա կանոնադրությամբ պետք է սահմանազատվեն գործադիր տնօրենի և վարչության իրավասությունները: Կախված առևտրային բանկի տեսակից, նրա կառավարման մարմինների կազմավորման, գործունեության կարգը, իրավասությունը որոշվում է ՀՀ Զաղաքացիական օրենսգրքով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և բանկի կանոնադրությամբ:

## §2 ՀՀ վարկային մարմինների իրավական վիճակը

Վարկային կազմակերպությունները բանկավարկային համակարգի մասն են, նրա յուրահատուկ օղակը: Նրանց կարգավիճակը սահմանված է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ 2002 թ. մայիսի 29-ի օրենքով: Վարկային կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կենտրոնական բանկից լիցենզիա ստացած իրավաբանական անձ է որն իրավունք ունի իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այն է փոխառությունների ներգրավումը, ներդրումային (պարտատոմսեր) և վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային հիմնադրման կողմից թողարկված արժեթղթերի) կամ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտադրոջն ապարաքների վաճառման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման հետ, վարկերի տրամադրումը կամ նշված օրենքով սահմանված այլ ներդրումների կատարումը: Վարկային կազմակերպությունները կարող են լինել հետևյալ տեսակի՝ 1) վարկային միություններ, որոնք դրամական միջոցներ են ներագրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում են նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական իրավական ակտերով նախատեսված դեպքերում դրամական միջոցներ են ներգրավում նաև այլ անձանցից կամ դրանք տրամադրում վերջիններիս. 2) խնայողական միություններ, որոնք դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում են նրանց. 3) ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գործարքների կնքումն է. 4) դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող ֆակտորինգային կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգ) գործարքների կնքումն է: Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները կենտրոնական բանկ են ներկայացնում 1. գրանցման և լիցենզավորման դիմումը.

2. վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը 6 օրինակից. 3. վարկային կազմակերպության հիմնադիր ժողովի որոշումը վարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին. 4. վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը կազմված Կենտրոնական բանկի սահմանված ձևով. 5. վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց Կենտրոնական բանկի սահմանված ձևով կազմված հայտարարությունը. 6. վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը: Կենտրոնական բանկը նշված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու պահից մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում դրանց գրանցումը և լիցենզավորումը : Կենտրոնական բանկում գրանցվելու պահից վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և համարվում է լիցենզավորված: Վարկային կազմակերպության լիցենզիան անժամկետ է և չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ գրավ դրվել: Վարկային կազմակերպությունը կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը ա) ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ. բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ. գ) տրամադրել երաշխիքներ. յ) տրամադրել երաշխիքներ. թողարկել, գնել (զեղջել) վաճառել արժեթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ. ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեության (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական) գ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորներ և մետաղադրամ. է ) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ). թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ. ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն. ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն. ժբ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

### § 3. 33 Կենտրոնական բանկի տեղը 33 բանկային համակարգում

33 Կենտրոնական բանկը գլխավորում է բանկային համակարգը: Նրա գործունեությունը կարգավորվում է «33 Կենտրոնական բանկի մասին» 33 1996թ. հունիսի 30-ի օրենքով:

Իրավաբանական տեսանկյունից 33 Կենտրոնական բանկի իրավական վիճակը ձևակերպվում է մի շարք մակարդակներում՝ սահմանադրական, հատուկ օրենսդրական և ենթաօրենսդրական (33 Կենտրոնական բանկի ակտերի մակարդակով):

33 Սահմանադրությունը սահմանել է, որ Ազգային ժողովը հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակում է 33 Կենտրոնական բանկի նախագահ և տեղակալ (33 Սահմանադրություն 83 հոդված, 1 կետ):

Օրենսդրական մակարդակով 33 Կենտրոնական բանկի իրավական վիճակը կարգավորվում է «33 Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի սնանկացման մասին», «Բանկային գաղտնիքի մասին» 33 օրենքներով:

Գործող օրենսդրության համաձայն, կենտրոնական բանկը շատ յուրահատուկ տեղ է գրավում պետական մարմինների համակարգում: Նա բանկային համակարգի կենտրոնն է և այդ բնագավառում նաև պետական իշխանության մարմին է, սակայն չի

ճտնում գործադիր իշխանության մարմինների համակարգի մեջ  
: Նման կարգավիճակը պայմանավորված է "Կենտրոնական  
բանկի մասին" օրենքով և նրա կանոնադրությամբ: Կենտրոնա-  
կան բանկը իրականացնում է կարգավորման և հսկողության  
գործառույթներ:

ՀՀ Կենտրոնական բանկի իրավական վիճակի պարզաբան-  
ման մյուս կարևոր դրույթն այն է, որ դա տարրերի համակցու-  
յուն է, որոնց միջոցով կարելի է նկարագրել այդ իրավական վի-  
ճակը:

Ցանկացած սուբյեկտի իրավական վիճակը ավանդաբար  
քննարկվում են մի շարք տարրերի միջոցով: Դրանք թվում են՝ ի-  
րավասությունը, գույքային բազան և կազմակերպական կառուց-  
վածքը:

Այդ տարրերի մանրամասն և մանրակրկիտ ուսումնասի-  
րությունը ՀՀ Կենտրոնական բանկի առնչությամբ թույլ կտա ա-  
վելի լրիվ կեպով նկարագրել նրա իրավական վիճակը՝ ըստ  
գործող օրենսդրության:

ՀՀ Կենտրոնական բանկի իրավասությունը նպատակահար-  
մար է վերլուծել, ելնելով նրանից, որ այն դրսևորվում է "ՀՀ  
Կենտրոնական բանկի մասին" օրենքում սահմանված հինգ քաղ-  
դություններով:

1) ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության առաջին ուղ-  
ղությունը կարելի է ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկի, որ-  
պես բանկային համակարգի կենտրոնի նկարագրի պարզաբան-  
մամբ, որն օժտված է որոշ աստիճանի ինքնուրույնությամբ:

ՀՀ Կենտրոնական բանկը պետք է լինի այնպիսի մարմին, ո-  
րը կապահովի փոխգիջումը առևտրային բանկերի ու նրանց հա-  
ճախորդների մասնավոր շահերի և հանրային շահերի միջև: Որ-  
պես բանկային համակարգի կենտրոն ՀՀ Կենտրոնական բանկը  
պարտավոր է՝

- լավագույն վիճակում պահել ողջ բանկային համակարգը,  
պաշտպանել նրա շահերը, բարելավել հաճախորդների հետ ու-  
նեցած հարաբերությունները,

- սահմանել վարկային կազմակերպությունների համար  
պարտադիր բանկային գործողությունների իրականացման կա-  
նոններ, հաշվապահական հաշվառման վարման, հաշվապահա-  
կան և վիճակագրական հաշվետվության կազմման և ներկայաց-  
ման կանոններ:

Նշված բնագավառում ՀՀ Կենտրոնական բանկի գործա-  
ռույթներից է նրա նորմաստեղծ գործունեությունը: ՀՀ Կենտրո-  
նական բանկն իր իրավասության սահմաններում իրավունք ու-  
նի ընդունել նորմատիվ և անհատական բնույթի իրավաբանա-  
կան ակտեր: Նրա կողմից ընդունած կարգավորման ռեժիմը  
խստացնող, լրացուցիչ կամ ավելի խիստ պատասխանատվու-  
յուն սահմանող նորմատիվ բնույթի ակտերը հետադարձ ուժ չու-  
նեն:

2) ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության երկրորդ ուղ-  
ղությունը վերացնում է նրա և առևտրային բանկերի միջև  
մրցակցությունը: Այն սահմանափակ գործողություններով բանկ  
է: Դա պայմանավորված է նրանով, որ ըստ էության Կենտրոնա-  
կան բանկի հաճախորդներ կարող են լինել միայն բանկերը և  
պետությունը: Նա որպես վերջին ատյանի վարկատու, կարող է  
իր կողմից սահմանված կարգով վեց ամիս մարման ժամկետը  
չգերազանցող վարկեր տրամադրել բանկերին: Բացառիկ դեպ-  
քերում, ՀՀ բանկային համակարգի ամբողջությամբ վերցրած  
միասնականությունը և սահունությունը պահպանելու նպատա-  
կով ՀՀ Կենտրոնական բանկը կարող է տրամադրել մինչև մեկ  
տարի մարման ժամկետ ունեցող վարկեր:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող  
վարկերը պետք է ապահովված լինեն՝

ա) պետական արժեթղթերով,

բ) ոչ ավելի, քան 9 ամիս մարման հուսալի չեկերով ու մուր-  
հակներով,

գ) ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ  
այլ արժեթղթերով,

դ) ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված  
մետաղադրամներով,

ե) ՀՀ Կենտրոնական բանկում, նրա խորհրդի համաձայ-  
նությամբ այլ բանկում Հայկական դրամով կայուն արտարժույ-  
թով կամ պետական արժեթղթերով, ՀՀ Կենտրոնական բանկի  
խորհրդի համաձայնությամբ այլ արժեթղթերով, ՀՀ թանկարժեք  
մետաղներով ներդրված ավանդներով:

Առանձին դեպքերում ՀՀ բանկային համակարգի ամբող-  
ջությամբ վերցված կայունությունն ու զարգացումն ապահովե-  
լու նպատակով ՀՀ Կենտրոնական բանկն իր խորհրդի կողմից  
սահմանված կարգով կարող է բանկերին տրամադրել այլ մի-

չոցներով ապահոված կամ առանց ապահովման (բլանկային) վարկեր:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է առանձին տեսակի վարկերի համար վարկավորման տարբերակված տոկոսադրույքներ և վարկավորման հատուկ կարգ ու պայմաններ սահմանել:

Առանձին դեպքերում ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երաշխավորել բանկերի պարտավորությունները դրանց զարգացման և հատուկ այլ ծրագրերի իրագործման նպատակով բանկերից և այլ ներդրողներից փոխառություններ ձեռք բերելու համար, եթե՝

ա) տվյալ փոխառության համար բանկի կողմից վճարվող տոկոսադրույքը էականորեն ցածր է ՀՀ-ում, նման փոխառության միջին շուկայական տոկոսադրույքից,

բ) տվյալ փոխառությունը երկարաժամկետ է,

գ) տվյալ փոխառության օգտագործման ծրագիրն արժանացել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի հավանությանը:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երաշխիքների տրամադրման լրացուցիչ պայմաններ սահմանել:

3) ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության երրորդ ուղղությունը նրա որպես դրամավարկային բնագավառում պետական վերահսկողության և հսկողության մարմնի գործունեությունն է: Նա վերահսկում է բանկային գործունեության օրինականության վրա, չմիջամտելով վերահսկվող սուբյեկտների օպերատիվ տնտեսական գործունեությանը:

ՀՀ Կենտրոնական բանկը մշտապես վերահսկում է առևտրային բանկերի կողմից բանկային գործունեության, իրականացման, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի կատարման վրա:

ՀՀ Կենտրոնական բանկը նպաստում է բանկերի և ՀՀ Կենտրոնական բանկից լիցենզիա ստացած այլ մարմինների գործունեությանը, կայուն զարգացմանը և դրանց համար ազատ մրցակցության հավասար պայմանների ստեղծմանը՝ ձեռնարկելով օրենքով նախատեսված միջոցները:

ՀՀ Կենտրոնական բանկը չի կարող միջամտել բանկերի և իրենից լիցենզիա ստացած այն անձանց ընթացիկ գործունեությանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ Կենտրոնական բանկը օրենքին համապատասխան, սահմանում է բանկերի գործունեության նորմատիվները, դրանց հաշվառման կարգը, հնարավոր վնասները ծածկելու համար միջոցների պահուստավորման կարգը և կապիտալի հաշվարկման կանոնները:

ՀՀ Կենտրոնական բանկը օրենքով սահմանված կարգով լիցենզավորում է բանկային գործունեությունը, վերահսկում է ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեությունը, սահմանում է դրանց ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ու տեղեկանքների ձևերը և դրանց ներկայացնելու կարգը: Նա օրենքով նախատեսված դեպքերում կարող է բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել: ՀՀ Կենտրոնական բանկը այլ անձանց լիցենզիա է տրամադրում օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում է բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց, Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը:

Նույնանման գործունեություն իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար սահմանված է պահուստավորման նույն կարգը:

Պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում ՀՀ Կենտրոնական բանկը խախտման յուրաքանչյուր օրվա համար բանկից տույժ է գանձում ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափով, յուրաքանչյուր ուշացված օրվա համար ոչ ավելի, քան չպահուստավորված գումարի 1 տոկոսը:

Բանկային կարգավորման և վերահսկողության գլխավոր նպատակը բանկային համակարգի կայունության պահպանումը, ավանդատուների և վարկատուների շահերի պաշտպանությունն է: ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկողության կարգավորիչ գործունեությունները, որոնք սահմանված են օրենքով, նրա կողմից կարող են իրականացվել անմիջականորեն կամ նրա կողմից ստեղծվող բանկային վերահսկողության մարմնի կողմից:

4. ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության իրացման չորրորդ ուղղությունը դրսևորվում է նրա որպես պետական կազործադիր իշխանության մարմնի գործառնության մեջ:

ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության նախորդ ուղղությունից որպես վերահսկողության մարմնի իրավասություն և միաժամանակ կառավարման գործառույթ, իրավասության այս ուղղությունը տարբերվում է իր դրական ուղղորդվածությամբ:

5. ՀՀ Կենտրոնական բանկի իրավասության հիմնգերորդ ուղղությունը կայանում է նրանում, որ այն պետության գործակալն է:

ՀՀ Կենտրոնական բանկը կառավարության լիազորած մարմնի հետ համատեղ, սահմանված կարգով և պայմաններով կառավարության ֆինանսական գործակալն է:

ա) կառավարության լիազորված մարմնի կողմից թողարկված պարտատոմսերի և այլ արժեթղթերի բաշխման, գրանցման և փոխանցման, ինչպես նաև արժեթղթերի հիմնական գումարի, տոկոսների կամ սահմանված այլ վճարումների իրականացման գծով:

բ) ՀՀ Կենտրոնական բանկի խնդիրներին չհակասող այլ գործառնությունների գծով:

ՀՀ Կենտրոնական բանկի կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնված կարգով տրամադրում է կառավարությանը դրամարկղային և օրենքով իր իրավասությանը վերապահված այլ հարցերին առնչվող տեղեկություններ: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Կենտրոնական բանկն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անվճար իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը կամ այլ պետական մարմիններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարկավորելը կամ այլ կերպ ֆինանսավորելը արգելվում է, բացառությամբ հետևյալ դեպքերի.

ՀՀ Կենտրոնական բանկը կարող է նախատեսված նորմաների սահմաններում հայկական դրամով վարկեր տրամադրել կամ վարկային գիծ բացել կառավարության համար պետական բյուջեի ղեֆիցիտը ծածկելու նպատակով: Այդ վարկերը, որպես

վանոն, տրվում են երեք ամսով, բայց ոչ ավելի, քան մեկ տարով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կառավարությանը տրամադրված բոլոր վարկերի և երաշխիքների հանրագումարը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա պետական բյուջեի տարեկան եկամտի 15 տոկոսը:

Կառավարությանը վարկեր տրամադրում են ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության կամ նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմնի միջև կնքված վարկային պայմանագրերի հիման վրա, որոնք պետք է սահմանեն վարկի հիմնական գումարը, տոկոսադրույքը, մարման ժամկետները, ինչպես նաև էական այլ պայմաններ, ընդ որում վարկի տոկոսադրույքը չի կարող ցածր լինել վարկը տրամադրելու պահին ճյուղություն ունեցող միջին շուկայի տոկոսադրույքից:

ՀՀ Կենտրոնական բանկից ստացված յուրաքանչյուր վարկի դիմաց կառավարությունը կամ պետական կառավարման լիազորված մարմինը հայկական դրամով արտահայտված պետական պարտատոմսեր է թողարկում և տրամադրում ՀՀ Կենտրոնական բանկին՝ վարկի տրամադրման պայմանով:

ՀՀ Կենտրոնական բանկը փոխհարաբերությունների մեջ է գտնվում ՀՀ Պետական մարմինների հետ: Պետական բյուջեի նախագիծը կազմելիս կառավարությունը կամ նրա պետական կառավարման մարմինը խորհրդակցում է ՀՀ Կենտրոնական բանկի հետ պետական բյուջեի նախագծին առնչվող հարցերի շուրջ, այդ թվում նախատեսվող ներքին և արտաքին պետական փոխառությունների, դրանց աղբյուրների, ծավալների, ժամկետների և պայմանների, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների վերաբերյալ: ՀՀ Կենտրոնական բանկը պետական բյուջեի նախագծի վերաբերյալ կառավարություն պաշտոնական եզրակացություն է ներկայացնում: ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը պետական բյուջեի նախագծին կից ներկայացվում է ԱԺ-ի քննարկմանը՝ օրենքով սահմանված կարգով:

Կառավարությունը ՀՀ Կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կարգով ՀՀ Կենտրոնական բանկին է տրամադրում տեղեկություններ:

1. պետական բյուջեի կատարման, դրա ընթացիկ ծախսերի և եկամուտների վերաբերյալ,

2. պետական փոխառությունների մասին, այդ թվում՝ դրանց աղբյուրների, ծավալի, տոկոսադրույքի, մարման ժամկետների, այլ պայմանների, փոխառու միջոցների օգտագործման ուղղությունների և նպատակների վերաբերյալ:

3. վճարային հաշվեկշռի, ֆինանսական և տնտեսական այլ հարցերի վերաբերյալ:

Պետական գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Կենտրոնական բանկն իրավաբանական անձ է: Նա իր խնդիրները իրագործելու նպատակով կարող է իր անունից

1. կնքել պայմանագրեր, ձեռք բերել իրավունքներ և ստանձնել պարտավորություններ, այդ թվում վերցնել վարկեր:

2. հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

3. "ՀՀ Կենտրոնական բանկի մասին" օրենքով նախատեսված դեպքերում ձեռք բերել, տիրապետել, օգտագործել և օտարել գույք, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ:

ՀՀ Կենտրոնական բանկի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է: Նա գործում է ՀՀ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդված): Բանն այն է, որ իրավաբանական անձը խորհրդային իրավաբանության մեջ դիտարկվում էր որպես քաղաքացիական, այսինքն մասնավոր իրավունքի կատեգորիա: Եվ եթե գնանք այդ ուղով, ապա պետք է որոշել, արդյո՞ք ՀՀ Կենտրոնական բանկը հանդիսանում է առևտրային կամ ոչ առևտրային իրավաբանական անձ և արդյո՞ք նրա կազմակերպ-իրավական ձևը համապատասխանում է բանկերին առաջադրվող պահանջներին և այլն: Վաղ թե ուշ այն կարող է հանգեցնել փակուղու, քանի որ մասնավոր իրավունքի կատեգորիաներով ՀՀ Կենտրոնական բանկի իրավական վիճակն արտահայտել չի հաջողվում. քանզի նրա կարգավիճակը ներառում է հանրային-իրավական բաղադրիչներ: Ֆինանսական իրավունքի մասնագետներն ըստ էության չեն քննարկում ՀՀ Կենտրոնական բանկի իրավական վիճակը,

կամ նրա մասին հիշատակում են հսկողության առումով, կամ չնայած նվիրում են մեկ-երկու էջ, վերաշարադրելով ՀՀ Կենտրոնական բանկի մասին օրենքի դրույթները, չվերլուծելով դրան:

Չպետք է նման ինստիտուտ կարելի է դիտարկել հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան, որը քաղաքացին է շատ երկրների բանկային իրավունքին:

Նույնպես, գերմանացի իրավաբանները գրում են. «Գերմանական ֆեդերալ բանկը, չնայած հանդիսանում է անմիջապես ներառված իրավունքի իրավաբանական անձ, սակայն անկախ է քաղաքացիական իրավաբանության ցուցումներից»<sup>1</sup>:

Իրավաբանական անձի քաղաքացիաիրավական հայտնի վերաբերյալ անհրաժեշտ է ավելացնել հետևյալ գծերը

• տվյալ սուբյեկտի, օրենքով սահմանված շրջանակներում, գործունեության հրապարակայնությունը և նրա տեղեկատվության մատչելիությունը,

• հիշյալ սուբյեկտի վերահսկելը և հաշվետու լինելը ներառացուցչական իշխանությանը,

• տվյալ սուբյեկտի վերահսկելիությունը նախնական այլ օրենքով նրա գործունեության ֆինանսավորման հետագա վերահսկման միջոցով,

• տվյալ սուբյեկտին այնպիսի պարտականություններով ծառայելը, որոնց կատարումը անհրաժեշտ է ընդհանուր նպատակներին հասնելու համար:

ՀՀ Կենտրոնական բանկի կապիտալը ներառում է կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստի, արտարժույթի, քանակարժեք մետաղների, արժեթղթերի, հիմնական միջոցների և այլ ակտիվների վերագնահատման պահուստները և չբաշխված չսահույթը:

ՀՀ Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը կազմում է հարյուր միլիոն հայկական դրամ: Այն ՀՀ-ի սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել ՀՀ պարտավորությունների դիմաց:

ՀՀ Կենտրոնական բանկը ազատվում է բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և մաքսային վճարումներից:

ՀՀ Կենտրոնական բանկի վերակազմումը կատարվում է օրենքով: Նրա նկատմամբ սնկկացման վարույթ հարուցվել չի կարող:

<sup>1</sup> Kohls B., Bankrecht, s. 11.



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. Օտարերկրյա ներդրումների հասկացությունը,  
տեսակները, դրանց իրականացման ձևերը

Օտարերկրյա ներդրումը՝ օտարերկրյա ներդրողի կողմից գույքի ցանկացած տեսակի այդ թվում՝ ֆինանսական միջոցների և մտավոր արժեքների, անմիջական ներդրումն է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Օտարերկրյա ներդրողը՝ օտարերկրյա պետությունը, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ է, ՀՀ տարածքից դուրս մշտապես բնակվող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրության համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում:

Օտարերկրյա ներդրումների խրախուսման, դրանց ներդրման հոսքի ուժեղացման համար ցանկացած շահագրգռված երկիր ստեղծում է բարենպաստ պայմաններ: Դրանք հանդիսանում են տնտեսության զարգացման, նրա արդյունավետության բարձրացման կարևոր միջոց, որը կոչված է լրացնելու սեփական միջոցների ներդրումների պակասը: Դրանից բացի այն ապահովում է օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների ներդրումը, առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի ներդրման և արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծումը: Այս առումով կարևոր նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների իրավական կարգավորումը, որի միջոցով սահմանվում է տվյալ երկրում օտարերկրյա ներդրումների իրականացման, իրավական, տնտեսական ու կազմակերպչական հիմքերը և ուղղված է օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը:

Օտարերկրյա ներդրումների իրավական կարգավորումը հանրապետությունում իրականացվում է ՀՀ 1995թ. հուլիսի 31-ի

«Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով: Եթե ՀՀ կնքված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ կանոններ, քան բովանդակում է վերը նշված օրենքը, ապա նրա 2 հոդվածի համաձայն, համապատասխան դեպքերում կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները:

Օտարերկրյա ներդրողները ՀՀ տարածքում կարող են իրականացնել հետևյալ տեսակի ներդրումներ՝ 1.արտարժույթով, արժույթային այլ արժեքներով, ՀՀ ազգային դրամով, 2.շարժական ու անշարժ գույքով (շինություններ, շենքեր, սարքավորումներ և նյութական այլ արժեքներ) և դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով, 3.բաժնետոմսերով, պարտատոմսերով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով, 4.դրամական պահանջների ձևով և պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով, 5.արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով, 6.ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաև բնական ռեսուրսների հետազոտման, արդյունահանման, նշակման կամ շահագործման իրավունքով, 7.վճարովի ծառայություններով, 8.ՀՀ օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով: Այս օրենքով սահմանված օտարերկրյա ներդրումների տեսակների իրականացման արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրողները իրավունք ունեն ներդրումներ իրականացնելու հետևյալ ձևերով. ա) օտարերկրյա ներդրողներին ամբողջությամբ պատկանող կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող կազմակերպությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով, բ) ՀՀ իրավաբանական անձանց, կամ քաղաքացիների մասնակցությամբ նոր կազմակերպություններ հիմնադրելու կամ գործող կազմակերպություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով, գ) ՀՀ օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով, դ) ինքնուրույն կամ ՀՀ իրավաբանական անձանց, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ հողօգտագործման իրա-

վունք և ՀՀ տարածքում ռեսուրսների օգտագործման կոնցեսիաներ ձեռք բերելու միջոցով, ե) գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով, գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով, մասնավորապես՝ ՀՀ իրավաբանական անձանց կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Սահմանված ձևերի օտարերկրյա ներդրումների իրականացման արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրումներն օտարերկրյա ներդրողի ցանկությամբ գնահատվում են ազատ փոխարկելի արտարժույթով կամ ՀՀ ազգային դրամով: Արտարժույթի հաշվարկումը ՀՀ ազգային դրամով իրականացվում է ՀՀ տարածքում արտարժույթի նկատմամբ ներդրման պահին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքից ոչ բարձր:

Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները, դրանց բաժանմունքները, մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, կազմակերպությունների տնտեսական միավորումները հիմնադրվում և գրանցվում են ՀՀ «Պետական գրանցման մասին» օրենքով և օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով: Այդ կազմակերպությունների, դրանց բաժանմունքների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գործունեության դադարումն իրականացվում է այն կարգով և դեպքերում, որոնք նախատեսված են դրանց հիմնադիր փաստաթղթերում և ՀՀ օրենսդրությամբ:

Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները կարող են իրականացնել իրենց կանոնադրությամբ նախատեսված նպատակներին համապատասխանող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած տեսակի տնտեսական գործունեություն: Այդ կազմակերպությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված տնտեսական գործունեության առանձին տեսակներով կարող են զբաղվել միայն սահմանված կարգով լիցենզիա ստանալուց հետո:

Այն գույքը, որն օտարերկրյա ներդրողների կողմից ՀՀ է ներմուծվում, որպես օտարերկրյա ներդրումներով կազմակերպության կանոնադրական կապիտալը, ինչպես նաև սեփական արտադրության համար նախատեսված գույքը (հումք, կիսապատրաստուկներ, լրակազմող իրեր, պահեստամասեր և այլն) ազատվում են մաքսատուրքերի գանձումից: Միջազգային պայ-

մանագրերի հիման վրա, որպես օտարերկրյա ներդրում ՀՀ ներմուծվող գույքը ազատվում է մաքսատուրքերից այն ժամկետներում, որոնք սահմանված են համապատասխան պայմանագրերով: Այդ կազմակերպությունների օտարերկրյա աշխատողների կողմից ՀՀ ներմուծվող՝ անձնական կարիքների համար նախատեսված գույքը ազատվում է մաքսատուրքից:

Օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններն իրավունք ունեն առանց լիցենզիայի արտահանել սեփական արտադրության արտադրանքը (աշխատանքներ, ծառայություններ) և ներմուծել սեփական կարիքների համար արտադրանք (աշխատանքներ, ծառայություններ) բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով: Արտահանվող արտադրանքը (աշխատանքներ, ծառայություններ) որպես սեփական ճանաչվելու կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Նույն կարգով էլ որոշվում է ներմուծվող արտադրանքը, որպես սեփական:

Սեփական արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտահանումից նշված կազմակերպությունների ստացած շահույթը (եկամուտը), այդ թվում արժույթը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկեր վճարելուց հետո, մնում է նրանց տնօրինության տակ:

Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների կողմից այլ արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտահանումն ու ներգործումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ կազմակերպությունները հարկեր են վճարում և հարկային արտոնություններ են ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի համաձայն օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի բացառությամբ բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թ. հունվարի մեկից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա տվյալ ռեզիդենտի ծախսահարկի գումարի նվազեցվում է առաջին երկու տարվա համար 100 տոկոս:

Հաշվեկշռային գնահատման հաշվառման նպատակով օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունն իրականացնում է օտարերկրյա արժույթի վերահաշվարկ ՀՀ դրամի փոխարժեքով ներդրման պահին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքից ոչ բարձր:

Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները չենք ևն բերում գույքային իրավունքներ հողի և բնական այլ ռեսուրսների նկատմամբ: Այն կարգավորվում է ՀՀ համապատասխան օրենսդրական ակտերով: Հողի մասին օրենքի համաձայն նրանք ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն ձեռք բերել հողի սեփականության իրավունք: Հետևաբար օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները չեն օգտվում այդ իրավունքից: Մակայն դրանք կարող են վարձակալել հողը: Այդ կազմակերպություններին իրավունք է վերապահված կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք օտարերկրյա ներդրողների հետ կնքվում են ՀՀ կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ շահագործել վերարտադրող և չվերարտադրող բնական ռեսուրսները՝ կոնցեսիաների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրողներին և օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններին վարձակալությամբ գույքի տրամադրումն իրականացվում է վարձակալական պայմանագրերի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## § 2. Օտարերկրյա ներդրումների իրավական երաշխիքները և պաշտպանությունը

Օտարերկրյա ներդրումների խրախուսման, դրանց առավելագույն հոսքը Հանրապետություն ապահովելու համար կանոնադրություն ունի այդ ներդրումների համար բարենպաստ ռեժիմի սահմանումը: Օտարերկրյա ներդրումների դրանց հետ կապված իրավական ռեժիմը ՀՀ-ում չի կարող նվազ բարենպաստ լինել, քան ՀՀ քաղաքացիների, կազմակերպությունների, գույքի, գույքային իրավունքների և ներդրման գործունեության ռեժիմը: Սոցիալական և տնտեսական զարգացման կարևորագույն բնագավառներում օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով կարող են սահմանվել լրացուցիչ արտոնություններ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ արտոնություններից ամենակարևորը հարկային արտոնություններն են: Օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները կարող են որոշ ժամանակով լրիվ ազատվել հարկերի վճարումից կամ կարող է նվազեցվել դրանց կողմից վճարվող հարկերի տոկոսադրույքները:

Միաժամանակ ելնելով ազգային անվտանգության շահերից կարող են որոշ սահմանափակումներ արվել օտարերկրյա ներդրողների նկատմամբ: Ազգային անվտանգության պահանջներից ելնելով կարող են սահմանվել այն տարածքները, որտեղ ելնելով ազգային անվտանգության ապահովման պահանջներից, օտարերկրյա ներդրողների և օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների գործունեությունը սահմանափակվում կամ արգելվում է:

Օտարերկրյա ներդրողների համար «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով սահմանված են մի շարք երաշխիքներ:

Առաջին՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող ՀՀ Օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած հինգ տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը: Սա նպատակ է հետապնդում հիշյալ ժամկետում պահպանել գործող օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների նախկինում սահմանված բարենպաստ ռեժիմը, արտոնությունները, օրենսդրական փոփոխություններով նախատեսված սահմանափակումների և նույն արգելքի դեպքում: Հինգ տարին օպտիմալ ժամկետ է, որպեսզի հիշյալ կազմակերպություններն հնարավորություն ստանան շահույթ ստանալու իրենց ներդրումներից: Իհարկե նայած ներդրման ծավալից և բնագավառներից մի շարք դեպքերում օբյեկտիվորեն հնգամյա ժամկետը կարող է և բավարար չլինել:

Երկրորդ՝ Պետությունը երաշխավորում է օտարերկրյա ներդրումների պաշտպանությունն ազգայնացումից և բռնագրավումներից: Օտարերկրյա ներդրումները ՀՀ-ում ազգայնացման ենթակա չեն: Պետական մարմինները չեն կարող բռնագրավել օտարերկրյա ներդրումները: ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում, միայն որպես բացառիկ միջոց թույլատրվում է այդ ներդրումների առգրավումը դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

Երրորդ՝ Օրենքով նախատեսվում է օտարերկրյա ներդրումներին պատճառած վնասի փոխհատուցում: Նրանք ունեն նյութական և բարոյական այն վնասների, ներառյալ բաց թողնված օգուտի դատական կարգով փոխհատուցման իրավունքը, որոնք հասցվել են ՀՀ պետական մարմինների կամ դրանց պաշտոնա-

տար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ հակասող գործողությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրումներով կազմակերպության նկատմամբ նշված մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:

Օտարերկրյա ներդրողների կրած բոլոր վնասները, որոնք նրանց հասցվել են հակաօրինական ազգայնացման և բռնագրավման կամ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց արդեն վերը նշված գործողությունների կամ պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով ենթակա են անհապաղ փոխհատուցման ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտորների գնահատումներով որոշված գներով՝ այն արժույթով, որով կատարվել է ներդրումը կամ, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ մեկ այլ արժույթով:

Ավելին նախատեսվում է փոխհատուցման իրավունքի ծագման պահից մինչև դրանց իրացման պահը անցած ժամանակահատվածի համար փոխհատուցման գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկում՝ ՀՀ վարկային շուկայում ժամկետային ավանդների ընթացիկ տոկոսադրույթների չափով:

Չորրորդ, օտարերկրյա ներդրումների շահույթը (եկամուտը), հարկերի վճարումից հետո և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարելուց հետո, մնում է նրա տնօրինության տակ: Հիշյալ ներդրումներն իրավունք ունեն ՀՀ բանկերում բացել ընթացիկ հաշվարկային կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն իրենց օրինական կարգով ստացած միջոցները սահմանված կարգով, օգտագործել ՀՀ ներքին շուկայում արտարժույթ կամ ապրանքներ ձեռք բերելու նպատակով:

Հինգերորդ, օտարերկրյա ներդրողին և օտարերկրյա վարձու աշխատավորին իրավունք է տրվում և երաշխավորվում է ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման հետևանքով արձագրված շահույթը (եկամուտը) և այլ միջոցները, որոնք օրինական կարգով ստացվել են որպես իրենց ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես օրենքով նախատեսված վնասի փոխհատուցում:

ՀՀ օրենսդրությամբ ապահովվում են նաև օտարերկրյա ներդրողների մտավոր սեփականության իրավունքների իրացումն ու պաշտպանությունը: Նրանց գույքի և ռիսկի ապահովագրությունը կատարվում է նրա հայեցողությամբ, եթե այլ կարգ չի նախատեսված ՀՀ օրենսդրությամբ:

Օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը, որոնք ծագել են օտարերկրյա ներդրողների և ՀՀ-ի միջև, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննվում են ՀՀ դատարաններում:

Օտարերկրյա ներդրումների հետ կապված այն վեճերը, որոնցում որպես կողմ հանդես չի գալիս ՀՀ-ը, ՀՀ օրենսդրությամբ համապատասխան քննվում են դատարաններում կամ տնտեսական վեճեր լուծող այլ մարմիններում, իսկ վիճող կողմերի համաձայնությամբ՝ նաև միջնորդ դատարաններում, եթե միջազգային պայմանագրերով կամ վիճող կողմերի նախնական պայմանավորվածությամբ (հիմնադիր փաստաթղթերով, տնտեսական պայմանագրերով և այլն) այլ կարգ չի նախատեսված:

Օտարերկրյա ներդրողի գույքը, ներառյալ ներդրված միջոցները, գույքային իրավունքները կարող են նրա կողմից օգտագործվել որպես իր պարտավորությունների ապահովման միջոց:

Հիշյալ ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության խախտման համար:

## ԳԼՈՒԽ 24

### ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

#### § 1. Դրամաշրջանառության հասկացությունը

Դրամաշրջանառությունը կատարվում է անկանխիկ հաշվարկների և կանխիկ շրջանառության ձևով: Դրամը շարունակ անկանխիկ շրջանառության ոլորտից անցնում է կանխիկ շրջանառության մեջ և ընդհակառակը:

Շրջանապտույտ կատարող դրամի քանակը կախված է երեք գործոններից. ա) ապրանքային զանգվածի ծավալից, բ) ապրանքների գների ամբողջականությունից և գ) դրամի շրջանառության այն արագությունից, որ նրան հաղորդում է ապրանքների շարժումը: Դրամի քանակը (զանգվածը) հավասար է ապրանքների գների գումարին՝ բաժանած համանուն դրամական միավորների կատարած պտույտների թվի վրա:

Դրամաշրջանառության ընթացքում առաջացած հարաբերությունների կարևորությունը պետության տնտեսական և քաղաքական զարգացման համար պայմանավորում է դրանց իրավական կարգավորումը: Դրամաշրջանառության իրավական կարգավորման գլխավոր խնդիրը կայանում է բնակչության դրամական եկամուտների և ներքին շուկայում առաջարկվող ապրանքների ու վճարովի ծառայությունների արժեքի միջև ճիշտ հարաբերակցության պահպանումը, քանի որ միայն այդ դեպքում շրջանառության մեջ գտնվում է բավարար քանակությամբ դրամ, որում շահագրգռված է պետությունը:

ՀՀ-ում դրամաշրջանառությունը ծրագրավորվում և կարգավորվում է պետության կողմից, հիմք ունենալով դրամաշրջանառության հիմնական օրենքի պահանջներն ապահովել անհրաժեշտ համաչափությունը շրջանառության մեջ մտնող ապրանքային և դրամական զանգվածների, ինչպես նաև, ապրանքների ու ծառայությունների առաջարկի և բնակչության գնողական ֆոնդերի միջև:

ԽՍՀՄ փլուզումից հետո, դրա նախկին տարածքի մեծ մասը մտնում էր այսպես կոչված ռուբլու գոտու մեջ, որտեղ վճարման միջոց էր համարվում խորհրդային ռուբլին: 1993թ. հուլիսի 1-ից Ռուսաստանի Դաշնակցային Հանրապետության կենտրոնական բանկը թողարկեց Ռուսաստանի ազգային խորհրդանիշով ռուբ-

լի և սկսեց իր տարածքում հետևողականորեն խորհրդային ռուբլին փոխարինել ռուսական ռուբլով՝ սկզբնական շրջանում շարունակելով նախկին խորհրդային հանրապետություններին տրամադրել միայն խորհրդային ռուբլիներ: Դրանով իսկ Ռուսաստանը ստեղծեց իր սեփական ռուբլու գոտին՝ նախկին հանրապետություններին դուրս թողնելով այդ գոտուց: Դա բխում էր Ռուսաստանի ազգային շահերից և նպատակ էր հետապնդում պաշտպանել իրեն ներքին շուկան: 1993թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունը, Բելոռուսը, Ղազախստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանը և Ռժգբեկստանը կնքեցին պայմանագիր «Նոր տիպի ռուբլու գոտի ստեղծելու ուղղությամբ գործնական միջոցառումների մասին»: Այնուհետև Հայաստանի Հանրապետությունը համաձայնագիր էր կնքել Ռուսաստանի Դաշնության հետ՝ «Հայաստանի Հանրապետության դրամական համակարգը Ռուսաստանի Դաշնության դրամական համակարգի հետ միավորելու մասին»: Այդ երկու համաձայնագրերն էլ վավերացվեցին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ, սակայն տարբեր պատճառներով դրանք գործնական կիրառում չգտան: ՀՀ Գերագույն խորհուրդը ստեղծեց Հայաստանի Հանրապետության դրամաշրջանառության պետական հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին ՀՀ Գերագույն խորհրդի ֆինանսավարկային բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՀՀ ֆինանսների նախարարը և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը: Այդ հանձնաժողովն ընդունեց Հայաստանում դրամաշրջանառության կարգավորմանն ուղղված մի շարք որոշումներ: Դրանցից ամենակարևորը 1993թ. նոյեմբերին ՀՀ-ում ազգային դրամը (դրամ և լումա) շրջանառության մեջ դնելու մասին որոշումն էր: Այն ուժի մեջ մտավ 1993թ. դեկտեմբերի 1-ից: Խորհրդային ռուբլիներն ազգային դրամով փոխարինվեցին 1-ը 200-ի հարաբերությամբ (մեկ դրամի դիմաց երկու հարյուր ռուբլի): Սա խիստ, ժողովրդականություն չվայելող, սակայն ծայրահեղ անհրաժեշտ քայլ էր՝ փրկելու հանրապետության դրամական համակարգը: Դրամը դարձավ հանրապետությունում վճարման միակ օրինական միջոցը: Սահմանվեց նրա ներքին փոխարկման այսպես կոչված լոգացող կուրս:

Ազգային դրամի դրամաշրջանառության մեջ մտցնելու գործընթացում առկա էին մի շարք լուրջ սխալներ: Նախ, Հայաստանը այսպես կոչված, «նոր ռուբլու գոտու» հանրապետություններ

րից նախավերջինն էր, որ մտցրեց իր ազգային դրամը, դրա հետևանքով այլ հանրապետություններից հսկայական քանակությամբ խորհրդային ռուբլիներ ներխուժեցին հանրապետության ներքին շուկա: Դա նպաստեց դրամի արժեզրկման տեմպերի գլխավորույտ արագացմանը, իսկ հետագայում՝ շրջանառության մեջ, մտած նոր դրամանիշի՝ լումայի անկենսունակությանը: Դրան նպաստեց նաև ԱՄՆ-ի դոլարի հետ դրամի ոչ հիմնավորված սկզբնական կուրսի հաստատումը: Հետագայում, ՀՀ կենտրոնական բանկի ճիշտ հիմնավորված քաղաքականության շնորհիվ, դրամի կուրսը կայունացվեց, նրա արժեքազրկման տեմպերը նվազեցին, սակայն լուման փաստորեն դուրս մնաց դրամաշրջանառությունից:

Դրամաշրջանառության կարգավորմանը մասնակցում են մի շարք պետական մարմիններ: Ազգային ժողովը, որպես միակ օրենսդիր մարմին, ընդունում է օրենքներ, որոնք կարգավորում են կարևորագույն դրամավարկային հարաբերությունները: Կարևոր նշանակություն ունի նաև կառավարության գործունեությունն այս բնագավառում. այն ապահովում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի, 4-րդ կետ): Դրամաշրջանառության բնագավառում կենտրոնական տեղ է զբաղում ՀՀ կենտրոնական բանկը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ 1996թ. հունիսի 30-ի օրենքի համաձայն, ՀՀ կենտրոնական բանկը թողարկում է ՀՀ արժույթը, կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը:

ՀՀ կենտրոնական բանկը հանրապետության միակ էմիսոն բանկն է, նրա բացառիկ իրավասությունն է ՀՀ տածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ թողարկելը և շրջանառությունից հետ կանչելը:

ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպում և ապահովում է թղթադրամի տպագրումը և մետաղադրամի հատումը, բանկում առկա թղթադրամի և մետաղադրամի անվտանգ պահպանումը, ինչպես նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դրանց ոչնչացումը:

ՀՀ կենտրոնական բանկն անկանխիկ էմիսիայի կարգավորումն իրականացնում է դրամավարկային լծակների միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկը ինքնուրույն է որոշում շրջանառության մեջ կանխիկ դրամի անհրաժեշտ չափը:

Թղթադրամների շրջանառության մեջ բացթողումը, ՀՀ կենտրոնական բանկի պահուստային (ռեզերվային) ֆոնդերից դրամանիշների փոխադրումն է նրա շրջանառու դրամարկղները: Էմիսիայի չափը որոշվում է որպես ծախսերի գերազանցում կենտրոնական բանկի դրամարկղ մուծվող կանխիկ դրամի նկատմամբ՝ սմբողջ համրապետության մասշտաբով:

Աճող կանխիկ դրամաշրջանառությունը լրացուցիչ քանակությամբ դրամի պահանջ է առաջացնում, իսկ դրամի շրջանառության արագացումը, ընդհակառակը՝ նվազեցնում է այդ պահանջը: Ընդ որում, անթույլատրելի է շրջանառության մեջ դրամի թե՛ ավելացուկը թե՛ պակասորդը:

Դրամաշրջանառությունը կազմակերպելիս, ՀՀ կենտրոնական բանկը՝

1. որոշում է հանրապետության տնտեսության մեջ դրամարկղային գործառնություններ կատարելու կարգը.

2. կազմակերպում է թղթադրամի և մետաղադրամի թողարկումը.

3. սահմանում է կանխիկ դրամի պահպանման, տեղափոխման և ինկասացիայի կարգը,

4. ապահովում է թղթադրամի ու մետաղադրամի պահուստային ֆոնդերի ստեղծումը,

5. սահմանում է դրամի վճարունակության հատկանիշները, փոխանակման և ոչնչացման կարգը:

Կազմակերպությունների և հիմնարկների կողմից պետք է պահպանվեն դրամարկղային գործառնությունների կատարման կարգի հիմնական դրույթները:

Ողջ կանխիկ դրամը, որը մուտք է արվում կազմակերպություններ, հիմնարկներ պետք է պարտադիր կարգով մուտքագրվի փաստաթղթերում: Ողջ կանխիկ գումարը, որը տրվում է դրանց կողմից, պետք է փաստաթղթային ձևակերպում ունենա:

Հիմնական դրամական փաստաթղթեր են՝ մուտքի և ելքի դրամարկղային օրդերները, որոնք ձևակերպվում են նախնական փաստաթղթերի՝ պայմանագրերի, դիմումների այլն հիման վրա:

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեն հաստատվելուց հետո 70 օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ներկայացնում և հրապարակում է առաջիկա տարվա դրամավարկային

քաղաքականության հիմնական ուղղությունները, որը հիմնված է ՀՀ պետական բյուջեյի նախորդ հաշվետետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքների վերլուծության վրա:

Դրամավարկային քաղաքականությունը ներառում է.

1. տնտեսական իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումը՝ կապված ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և պետական բյուջեյի ցուցանիշների հետ;

2. շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի և վարկային ներդրումների սահմանաքանակը;

3. տոկոսադրույթների մակարդակը;

4. դրամավարկային կարգավորման մեթոդները;

5. օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված դրույթները:

Կարևոր նշանակություն ունի ՀՀ կենտրոնական բանկի գործունեությունը արժույթի կարգավորման բնագավառում: ՀՀ արժույթը - հայկական դրամն է (մեկ դրամը հավասար է 100 լումայի): ՀՀ դրամը թողարկվում է (շրջանառության մեջ է դրվում) թղթադրամի և մետաղադրամի, իսկ լուման մետաղադրամի ձևով (լուման հատվեց, բայց այդպես էլ չմտավ շրջանառության մեջ): Գործող օրենսդրության համաձայն թողարկված և շրջանառությունից չհանված թղթադրամը և մետաղադրամը հանդիսանում են ՀՀ կենտրոնական բանկի անվերապահ պարտավորությունը և ապահովված են նրա բոլոր միջոցներով: Հիշյալ թղթադրամը և մետաղադրամը գույքի, գույքային իրավունքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով ՀՀ տարածքում փողով արտահայտված բոլոր արտահայտությունների դիմաց:

ՀՀ կենտրոնական բանկը արտացոլում է իր հաշվեկշռում և կառավարում է ՀՀ արժույթի պահուստները, կազմում է ՀՀ արժույթի թողարկման ծրագիրը և ապահովում է թղթադրամի և մետաղադրամի կանոնավոր մատակարարումը, ելնելով դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրից և տնտեսության պահանջներից: Թողարկված թղթադրամի և մետաղադրամի սմբողջական հանրագումարը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում որպես կենտրոնական բանկի

պարտավորություն: Պահուստում գտնվող թղթադրամը և մետաղադրամը ՀՀ Կենտրոնական բանկի պարտավորություն չեն հանդիսանում և հաշվառում են արտահաշվեկշիռային հաշիվներում:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում է ՀՀ օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամի և մետաղադրամի անվանական արժեքը, չափը, կշիռը, պատկերներով և մակագրություններով էսքիզը պաշտպանական և վճարունակության հատկանիշները: ՀՀ օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամների վրա պետք է լինի ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի և կառավարության լիազորած մարմնի (ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության) ղեկավարի ստորագրությունները:

ՀՀ Կենտրոնական բանկն իր կողմից սահմանված կարգով անվճար փոխանակման է ներկայացնում մետաղադրամը և թղթադրամը առանց գումարային սահմանափակումների: Այդ բանկի կողմից սահմանված թղթադրամի և մետաղադրամի սպառապանության և վճարունակության հատկանիշներին չհամապատասխանող արժույթը հանվում է շրջանառությունից, ոչնչացվում է և փոխարինվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից այլ թղթադրամներով կամ մետաղադրամներով: ՀՀ Կենտրոնական բանկը կարող է թողարկված ցանկացած թղթադրամ կամ մետաղադրամ շրջանառությունից հետ կանչել և հանել փոխանակման համար թողարկելով համարժեք գումարով այլ թղթադրամ կամ մետաղադրամ այն դեպքում, եթե հետ կանչվող կամ շրջանառությունից հանվող թղթադրամը կամ մետաղադրամը չի համապատասխանում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտպանական կամ վճարունակության հատկանիշներին կամ թողարկվում է նոր անվանական արժեքով թղթադրամ կամ մետաղադրամ:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում է շրջանառությունից հետ կանչված փողը փոխանակելու համար ներկայացնելու ժամկետը, որը չի կարող մեկ տարուց պակաս լինել: Փոխանակման համար ներկայացվող թղթադրամի կամ մետաղադրամի քանակը և գումարը չեն կարող սահմանափակվել: Սահմանված ժամկետի ավարտից հետո շրջանառությունից հետ կանչված փողը դադարում է օրինական վճարամիջոց լինելուց, սակայն ենթակա է փոխանակման առանց սահմանափակումների:

ՀՀ Կենտրոնական բանկը հանրապետության և համայնքների դրամական միջոցների կառավարման ապահովման նպատակով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ հաստատած համաձայնագրի շրջանակներում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների համակարգմանն ուղղված գործողություններ է իրականացում: Նա կազմում է դրամական հոսքերի կառավարման եռամսակային, ամսական, շաբաթական և օրական ծրագրերը, պատրաստում է դրամական հոսքերի կառավարման ծրագրերի փաստացի կատարման վերաբերյալ հաշվետվությունները և կատարում հաջորդ ժամանակահատվածի ծրագրերում համապատասխան ճշգրտումներ:

§2 Դրամարկղային գործառնությունների իրավական կարգավորումը

ՀՀ տարածքում ՀՀ արժույթով և արտարժույթով դրամարկղային գործառնությունների իրականացման, ինչպես նաև կանխիկ դրամի պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դրամարկղային գործառնությունների մասին» 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով, ինչպես նաև վերջինիս կողմից նախատեսված դեպքերում կառավարության որոշումները:

Նշված օրենքը տարածվում է ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձանց, պետական և այլ հիմնարկների, դրանց հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), վրա: Նշված օրենքը չի տարածվում բանկերի դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:



Դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի և կամ հաշվետու անձանց միջոցով: Դրամարկղային գործառնությունն իրենից ներկայացնում է կանխիկ դրամի մուտքագրում կազմակերպություն, ելքագրում կազմակերպությունից, ինչպես նաև շարժը դրամարկղների ու հաշվետու անձանց միջև: Հաշվետու անձը կազմակերպության աշխատակիցը կամ կառավարման մարմիններում ներգրավված անձն է, որին գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ կատարելու նպատակով տրվել է կանխիկ դրամ:

Երբ բանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը բանկային հաշվից հանելու հաջորդ օրը: Երբ դրամարկղից ելքագրված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության բանկային հաշվից, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը դրամարկղից հանելու հաջորդ օրը:

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում են մի շարք սահմանափակումները՝

1. ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը ա) մինչև 01.07.2003 – 500 հազ. դրամ , բ) 01.01. 2004 – 300 հազ. դրամ.գ) 01.01.2005- 100 հազ. դրամ:

2. մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների ), ծառայությունների, աշխատանքների գնումների դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը նույն ժամկետներում համապատասխանաբար պետք է լինի 5մլն, 3 մլն, 1մլն դրամ:

Կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները, ներառյալ կանխավճարները, առհաշիվ տրված կանխիկ դրամի հաշվին կատարվող վճարումները:

Վերը նշված սահմանափակումները չեն տարածվում աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների և այլ համանման վճարումների, և «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 3 կետում նախատեսված այլ դեպքերի վրա:

Սիւնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը սահմանված ժամկետում կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել: Առհաշիվ կանխիկ դրամը գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ անելու նպատակով տրվել է կանխիկ դրամ:

Կազմակերպության դրամարկղում պահպանվող արժեքների պահպանման, ինչպես նաև փոխադրման անվտանգության ապահովման պատասխանատվությունը կրում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, եթե կազմակերպության կառավարման կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ այդ պատասխանատվությունը չի դրված այլ անձի վրա:

Գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը ( մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից: Նրան արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխառցել ուրիշ անձանց առանց կազմակերպության ղեկավարի հրամանի:

Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթեր, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

Կառավարությունը սահմանում է դրամարկղային գործառնությունների իրականացման այդ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը:

Դրամարկղային գիրքը գրանցամատյան է, որում գրանցվում է դրամարկղում կանխիկ դրամի մնացորդը ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ, ինչպես նաև կանխիկ դրամի մուտքը դրամարկղ և ելքը դրամարկղից:

Հիշյալ օրենքով *պատասխանատվություն է սահմանված դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների խախտման համար:*

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանված սահմանափակումները ճպահպանելու դեպքում զանձվում է տուգանք կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը

գերազանցող գումարի ( խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և ոչ ավելի քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում դրանք չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը և ոչ ավելի քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Նշված տուգանքը ենթակա է վճարման պետական բյուջե խախտումը հայտնաբերելուց հետո տասնօրյա ժամկետում:

Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքով չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման վարման օրենսդրությամբ սահմանված կանոններ խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Նշված տուգանքները ենթակա են վճարման պետական բյուջե խախտումը հայտնաբերելուց հետո տասնօրյա ժամկետում:

Դրամարկղային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հարկային մարմինները:

## Հաշվարկների իրավական հիմքերը

Կազմակերպությունների և ֆինանսավարկային մարմինների միջև դրամական հարաբերությունները հիմնականում տեղի են ունենում առանց կանխիկ դրամի մասնակցության՝ միջոցների վճարողի և ստացողի հաշիվներում բանկային գրանցումներ կատարելու միջոցով: Այդ դրամաշրջանառությունը և նրան համապատասխան հաշվարկային հարաբերությունները և վճարումները կոչվում են անկանխիկ:

Դրամական միջոցները պահելու համար կազմակերպության, հիմնարկի համար բացվում է հաշիվ բանկերում՝ բանկային հաշվի պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագրային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 912-928 հոդվածներով: Բանկային հաշվին են մուծվում կազմակերպության, հիմնարկի բոլոր եկամուտները, այդտեղից են կատարվում անկանխիկ փոխանցումները, ինչպես և կանխիկ դրամ է տրվում ընթացիկ ծախսերի համար:

Դրամական միջոցները հանելու և հաշվարկներ կատարելու նպատակով կազմակերպությունների ու հիմնարկների համար նրանց գործունեության բնութիւն և ֆինանսավորման աղբյուրներից համապատասխան բանկը բացում է հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ:

Հաշվարկային հաշիվ բացվում է բանկում կազմակերպությունների համար: Հաշվարկային հաշվին են գրանցվում հաշվի տիրոջ կողմից մուծված գումարները: Այդ գումարները հիմնականում գոյանում են դրանց շրջապտույտի ընթացքում միջոցների ազատման հետևանքով և ի հաշիվ այլ կազմակերպություններից առաքված վճարումների:

Ընթացիկ հաշիվներ բացվում են բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների համար:

Հաշվարկային կամ ընթացիկ հաշիվ բացելու համար հիմնարկը կամ կազմակերպությունը բանկի հիմնարկին ներկայացնում է դիմում, կանոնադրության մի օրինակը հաստատված նոտարական կարգով, տնօրենի և գլխավոր հաշվապահի (հաշվապահի) ստորագրությունների և կազմակերպության, կնիքի դրոշմի նմուշները: Հաշիվը բացվելուց հետո համապատասխան

կազմակերպությունները դառնում են բանկի հաճախորդներ (կլիենտ):

Հաշվարկների տեսկաները և իրականացման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 929-953 հոդվածներով և օրենսդրական այլ ակտերով:

## ԳԼՈՒԽ 25

### ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

#### § 1. Արժույթի և արժութային արժեքների հասկացությունը

ՀՀ-ում արժութային գործառնությունները կարգավորվում են ՀՀ 1993թ. սեպտեմբերի 2-ի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքով:

Այդ օրենքը սահմանում է ՀՀ-ում արժութային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժութային վերահսկողության մարմինների լիազորությունները, արժութային արժեքների տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը արժութային օրենսդրությունը հաստատելու համար:

#### *ՀՀ արժույթը՝*

ա) շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, փոխանակման ենթակա ՀՀ դրամներն են՝ ՀՀ կենտրոնական բանկի բանկային տոմսերի (թղթադրամների) տեսքով, և մետաղադրամները, զանձատան տոմսերը:

բ) ՀՀ բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

գ) ՀՀ արժույթն որպես վճարման օրինական միջոց օգտագործելու մասին ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա պետության համապատասխան մարմինների հետ կնքված համաձայնագրերի հիման վրա տվյալ պետության տարածքում գտնվող բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

դ) ՀՀ դրամով վճարման փաստաթղթերը:

2) *Արժեթղթերը՝* ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, սերտիֆիկատները, մուրհակները և այլ արժեթղթեր՝ արտահայտված ՀՀ դրամով:

*Արժուքային արժեքներն են*

1) արտարժույթ. 2.արտարժույթով արտահայտված արժեքները. 3. թանկարժեք մետաղները՝ ոսկի, արծաթ, պլատին և պլատինի խմբի մետաղներ. 4. բնական թանկարժեք քարերը (ալմաստ, սուտակ, գմրուխտ, շափյուղա, ալեքսանդրիտ, ինչպես նաև մարգարիտ) անմշակ և մշակված տեսքով և վիճակում, բացառությամբ այդ քարերից պատրաստված ոսկերչական և կենցաղային այլ իրերի ջարդոնի. 5. համաշխարհային շուկայում գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերը և իրերը:

*Արտարժույթը (տարադրամ)՝*

1. օտարերկրյա դրամանիշները՝ արտահայտված բանկային տոմսերի, գանձատան թղթադրամների մետաղադրամների ձևով. որոնք համապատասխան օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում գտնվում են շրջանառության մեջ և օրինական վճարման միջոց են, ինչպես նաև հանված կամ հանվում են շրջանառությունից, բայց ենթակա են փոխանանման շրջանառության մեջ գտնվող դրամանիշներով.

2) բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական կամ հաշվարկային միավորներով արտահայտված միջոցները և վճարման փաստաթղթերը:

*Արժուքային կուրսը* երկու և ավելի երկրների արժույթների փոխհարաբերություններն են:

Արժուքային կուրսը որոշվում է արժուքային շուկայում եղած առաջարկի և պահանջարկի հիման վրա, սակայն նույնը կարող է ֆիքսվել միակողմանիորեն պետության կողմից: Այս տեսակետից արժուքային կուրսը լինում է լողացող և հաստատագրված: Արժույթները լինում են ազատ(լրիվ փոխարկելի, օր. ԱՄՆ-ի դոլարը, եվրոն և այլն), մասնակի(ներքին) փոխարկվող (օր. ՀՀ դրամը) չփոխարկվող:

*Արժուքային գործառնությունները* այն գործառնություններն են, որոնք կապված են.

ա) արժուքային արժեքների սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների փոխանցման հետ, այդ թվում այնպիսի գործառնությունների, որոնք կապված են որպես վճարման միջոց արտարժույթով վճարման փաստաթղթերի օգտագործման հետ.

բ) որպես վճարման միջոց արտարժույթի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության արժույթի օգտագործման հետ.

գ) *արժուքային արժեքների՝* արտասահմանից ՀՀ փոխադրման, ներմուծման և առաքման, ՀՀ-ից դրանց փոխադրման, արտահանման և առաքման, ինչպես նաև դրամական փոխանցումների հետ:

**§ 2. Արժուքային կարգավորման հասկացությունը և բովանդակությունը**

Արժուքային կարգավորումը պետական մարմինների գործունեությունն է ուղղված արժուքային գործառնությունների կանոնակարգմանը:

ՀՀ-ի արժուքային հարաբերությունը կարգավորում են ելնելով նրա տնտեսական խնդիրներից:

Արժուքային իրավական կարգավորումն իրականացվում է երկու մակարդակով՝ նորմատիվ և անհատական:

Նորմատիվ իրավական կարգավորումն իրականացվում է իրավական նորմերի միջոցով: Դրանցով կարգավորվում են արժույթի հետ կապված հասարակական հարաբերությունները:

Անհատական կարգավորումը իրենից ներկայացնում է իրավական նորմերի կիրառումը կոնկրետ հանգամանքների նկատմամբ, որն առաջացնում է կոնկրետ արժուքային հարաբերությունների ծագում, փոփոխում և դադարեցում:

ՀՀ 1993թ. սեպտեմբերի 2-ի «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» օրենքով կարգավորված են արժուքային հարաբերությունները:

Արժուքային իրավահարաբերության սուբյեկտներն են իրավաբանական և ֆիզիկական անձիք: Այս սուբյեկտներն էլ իրենց հերթին բաժանվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների:

*Ռեզիդենտները՝* ա) ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները քաղաքացիություն չունեցող անձիք, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող, բայց ժամանակավորապես արտասահմանում գտնվող ֆիզիկական անձիք.

բ) իրավաբանական անձիք, որոնք ստեղծված են ՀՀ-ի օրենսդրությամբ համապատասխան և գտնվում են ՀՀ-ի տարածքում: Այս ռեզիդենտների ՀՀ-ի սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցիչները.

գ) ՀՀ-յան դիվանագիտական և պաշտոնական այն ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ-ի սահմաններից դուրս:

*Ոչ ռեզիդենտներն են՝*

ա) արտասահմանում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձիք, այդ թվում՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձիք:

բ) իրավաբանական անձինք, որոնք ստեղծված են օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ սահմաններից դուրս:

գ) ՀՀ-ի տարածքում գտնվող օտարերկրյա դիվանագիտական և պաշտոնական այլ ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ֆիրմաների ներկայացուցչությունները:

դ) վերոհիշյալ ոչ ռեզիդենտների մասնաճյուղն ու ներկայացուցիչները, որոնք գտնվում են ՀՀ-ում:

Ռեզիդենտների միջև հաշվարկները ՀՀ-ի արժույթով իրականացվում են առանց սահմանափակումների: ՀՀ-ի տարածքում ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթ ձեռք բերելու և օգտագործելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը՝ ՀՀ-ի օրենսդրությանը համապատասխան:

Բացի արժույթից ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների սեփականությունը կարող են լինել արժույթային արժեքները: ՀՀ-ում արժույթային արժեքների սեփականության իրավունքը երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից:

Թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող գործերի և իրերի ներմուծման, արտահանման հետ կապված գործարքների կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ-ում արժույթային գործառնություններ իրականացնող ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, ինչպես նաև ՀՀ-ի արժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնություններ իրականացնող ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն՝

1) վարել իրենց կողմից կատարվող արժույթային գործառնությունների հաշվառում և կազմել հաշվետվություն՝ ապահովելով դրանց պահպանությունը հինգ տարուց ոչ պակաս ժամանակով:

2) ծանոթանալ արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների կազմած ստուգման ակտերին:

3) ՀՀ օրենսդրության համապատասխան բողոքարկել արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների գործողությունները:

4) օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

ՀՀ-ում արժույթային գործառնություններ իրականացնող ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, ինչպես նաև ՀՀ արժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնություններ իրականացնող ոչ ռեզիդենտները պարտավոր են՝

1. արժույթային վերահսկողության մարմիններին և գործակալներին ներկայացնել արժույթային գործառնությունների իրականացման մասին պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:

2. արժույթային վերահսկողության մարմիններին և գործակալներին ներկայացնել բացատրություններ վերջիններիս կողմից կատարվող ստուգումների կապակցությամբ:

3. արժույթային վերահսկողության մարմինների և գործակալների կողմից կատարված ստուգումների ակտերում շարադրված փաստերին չհամաձայնվելու կամ ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ներկայացնել գրավոր պարզաբանումներ:

4. կատարել օրենսդրության խախտումների վերացման մասին արժույթային վերահսկողության մարմինների պահանջները (ցուցումները):

5. կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Ռեզիդենտներն իրավունք ունեն արտարժույթով հաշիվներ ունենալ լիազոր բանկերում: Ռեզիդենտ հանդիսացող կազմակերպությունների կողմից ստացվող օտարերկրյա արժույթը ենթակա է պարտադիր հաշվեգրման ՀՀ տարածքում գտնվող լիազոր բանկերում ունեցած նրանց հաշիվներում, եթե այլ կարգ չի սահմանված ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ռեզիդենտներն օտարերկրյա բանկերում կարող են արժույթային հաշիվներ ունենալու դեպքում այն պայմաններով, որոնք սահմանում են ՀՀ կենտրոնական բանկը:

Լիազոր բանկերի կողմից արտարժույթով ռեզիդենտների հաշիվներ բացելու և վարելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Կապիտալի շարժման հետ կապված արժույթային գործառնությունները ռեզիդենտների կողմից իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Ռեզիդենտներն իրավունք ունեն պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունն առանց սահմանափակումների արժույթային արժեքներ փոխադրել, առաքել և ներմուծել ՀՀ:

Ռեզիդենտներին պատկանող արտարժույթի և դրանով արտահայտված արժեթղթերի՝ ՀՀ փոխադրելու, առաքելու և ներմուծելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը, իսկ ռեզիդենտներին պատկանող թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի ու իրերի ՀՀ փոխադրելու, առաքելու և ներմուծելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ռեզիդենտներն իրավունք ունեն ՀՀ ներքին արժույթային շուկայում արտարժույթ վաճառել օրենքով սահմանված կարգով:

Ֆիզիկական անձ հանդիսացող ռեզիդենտներն իրավունք ունեն պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը Հանրապետությունից փոխադրել, առաքել, արտահանել նախկինում Հանրապետություն ներմուծված, փոխադրված կամ առաքված արժույթային արժեքներ՝ դրանց ներմուծումը, փոխադրումը և առաքումը հաստատող հայտարարագրերում կամ այլ փաստաթղթերում նշված կարգերով:

Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն լիազոր բանկերում արտարժույթով և ՀՀ արժույթով հաշիվներ ունենալ:

Լիազոր բանկերի կողմից արտարժույթով և ՀՀ արժույթով հաշիվներ բացելու և վարելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն, պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը, առանց սահմանափակումների ՀՀ փոխադրել, առաքել և ներմուծել արժույթային արժեքներ: Ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ՀՀ արժույթով արտարժույթ գնել կամ վաճառել: Նրանք նաև իրավունք ունեն պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը, Հանրապետությունից փոխադրել, առաքել

և արտահանել արժույթային արժեքներ, եթե դրանք ավելի վաղ փոխադրվել, առաքվել, ներմուծվել են ՀՀ կամ հանրապետությունում ծեռք են բերվել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը արժույթային կարգավորման հիմնական մարմինն է ՀՀ-ում:

«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքների համաձայն ՀՀ կենտրոնական բանկը՝ իրավունք ունի.

ա) սահմանել արժույթային գործառնությունների իրականացման կարգը և պայմանները, ընդունել արժույթային գործառնությունները կարգավորող որոշումներ և կանոններ,

բ) հսկել և կարգավորել արժույթային գործառնություններ իրականացնող դիլերների, ներառյալ բանկերի գործունեությունը,

գ) սահմանել արժույթային դիլերների ներառյալ բանկերի արտարժույթի տնօրինման նորմատիվը,

դ) սահմանել հայկական դրամի փոխարժեքի որոշման մեթոդները:

ՀՀ կենտրոնական բանկը կարող է տիրապետել, օգտագործել և տնօրինել

1. ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտացված ձուլակտորներ,

2. արտարժույթ,

3. այլ պետությունների կենտրոնական և այլ առաջնակարգ բանկերի միջազգային ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի թողարկած կամ երաշխավորված արժեթղթեր:

ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել այն փոխարժեքը, որով գնում կամ վաճառում է արտարժույթը կամ այլ գործարքներ է իրականացնում արտարժույթով:

ՀՀ կենտրոնական բանկի կառավարության լիազորած մարմնի լիցենզավորված արժույթային դիլերներից, ներառյալ բանկերից, ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել պարբերական հաշվետվություններ նրանց գործառնությունների վերաբերյալ, այդ թվում արտարժույթի տնօրինման չափը ամեն մի արժույթի գծով:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է արտարժույթային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ձևեր և դրանց ներկայացնելու կարգը:

ՀՀ Կենտրոնական բանկն իր հաշվեկշռում արտացոլում է ՀՀ միջազգային պահուստները, որոնք կարող են ներառել հետևյալ միջոցները՝

ա) ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտված ձուլակտորներ,

բ) արտարժույթով արտահայտված թղթադրամ և մետաղադրամ, ինչպես նաև օտարերկրյա առաջնակարգ բանկերի հաշվեկշիռներում պահվող արտարժույթային մնացորդներ,

գ) այլ պահուստային միջոցներ, ներառյալ միջազգային արժույթային հիմնադրամի փոխառության հատուկ իրավունքները,

դ) արտարժույթով արտահայտված հասարակ և փոխանցվող մուրհակներ,

ե) այլ պետությունների կենտրոնական կամ այլ առաջնակարգ բանկերի, կամ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված, կամ երաշխավորված պարտատոմսեր, ինչպես նաև արտարժույթով արտահայտված նրանց կողմից կնքված, կամ երաշխավորված ֆորվարդային կամ հետադարձ գնման համաձայնագրեր: Պահուստային միջոցների տեղաբաշխման առաջնային չափանիշը տեղաբաշխվող միջոցների անվտանգությունն ու իրացվելությունն է:

ՀՀ Կենտրոնական բանկը միջազգային պահուստները պահպանում է այն մակարդակի վրա, որը համապատասխանում է դրամավարկային քաղաքականության իրականացմանն ու ապահովում է ՀՀ միջազգային պարտավորությունների անխոչնդոտ կատարումը:

ՀՀ Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությանն է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկություն և հրապարակում է այն: Եթե ՀՀ միջազգային պահուստների մակարդակը նվազում է կամ ըստ Կենտրոնական բանկի առկա է դրա նվազման այդպիսի միտում, որի հետևանքով կարող է վտանգվել դրամավարկային քաղաքականության իրականացումը կամ ՀՀ միջազգային պարտավորության անխոչնդոտ կատարումը, ապա ՀՀ Կենտրոնական բանկը արտահերթ տեղեկություն է ներկայացնում կառավարությանը միջազգային պահուստների վիճակի, դրանց մակարդակի նվազման կամ հնարավոր նվազման պատճառների, ինչպես նաև ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրա-

ժեշտ միջոցառումների վերաբերյալ և այդ մասին տեղյակ է պահում ՀՀ Նախագահին և Ազգային ժողովին:

Ֆինանսական տարվա ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխության հետևանքով ոսկու, հատուկ փոխառությունների իրավունքների, արտարժույթի և դրանցով արտահայտված արժեքների ՀՀ Կենտրոնական բանկի հաշվեկշռում վերագնահատման արդյունքը արտացոլում է ՀՀ Կենտրոնական բանկի պահուստների վերագնահատման հաշվում:

Ֆինանսական տարվա վերջում պահուստների վերագնահատման հաշվառումից առաջացած բացասական մնացորդը արտացոլվում է ՀՀ Կենտրոնական բանկի վնասների հաշվում:

ՀՀ Կենտրոնական բանկը՝

1. սահմանում է արտարժույթի և դրանով արտահայտված արժեթղթերի շրջանառության կարգը ՀՀ-ում.
2. հրապարակում է ՀՀ-ում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի կողմից կատարման համար պարտադիր նորմատիվ ակտեր.
3. իրավասու է իրականացնելու արժույթային գործառնությունների բոլոր տեսակները.
4. սահմանում է ՀՀ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի կողմից արտարժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնությունների կատարման կանոնները, ինչպես նաև ՀՀ-ում ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթով և դրանով արտահայտված արժեթղթերով գործառնությունների կատարման կանոնները.
5. սահմանում է ռեզիդենտներին պատկանող արտարժույթը և դրանով արտահայտված արժեթղթերը ՀՀ փոխադրելու, առաքելու և ներմուծելու կարգը, ինչպես նաև ռեզիդենտների կողմից ՀՀ սահմաններից դուրս գտնվող բանկերում արտարժույթով հաշիվներ բացելու կարգը.
6. սահմանում է բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից արժույթային գործառնություններ կատարելու լիցենզավորման կանոնները և տալիս է այդպիսի լիցենզիաներ, ինչպես նաև իրականացնում է դրանց գործունեության վերահսկողությունը.
7. սահմանում է արժույթային գործառնությունների հաշվառման, դրանց վերաբերյալ հաշվետվության, փաստաթղթերի և վիճակագրության միասնական ձևերը (այդ թվում լիազոր բանկերի կողմից), ինչպես նաև դրանք ներկայացնելու կարգն ու ժամկետները.
8. ընդունված միջազգային չափանիշներին համապատասխան նախապատրաստում և հրապարակում է ՀՀ արժույթային վիճակագրությունը.
9. կատարում է օրենքով նախատեսված այլ ֆունկցիաներ:

### § 3. Արժուքային վերահսկողություն

Արժուքային վերահսկողության նպատակն է ապահովել արժուքային օրենսդրության պահպանումը՝ արժուքային արժեքներով գործառնություններ իրականացնելիս:

Արժուքային վերահսկողության հիմնական ուղղություններն են՝ ա) գործող օրենսդրության արժուքային գործառնությունների համապատասխանության և դրանց համար անհրաժեշտ լիցենզիաների առկայության ստուգումը, բ) պետության հանդեպ ռեզիդենտների կողմից արտարժույթով պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ ներքին արժուքային շուկայում արտարժույթի, թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի և իրերի վաճառքի գծով պարտավորությունների կատարման ստուգումը, գ) արտարժույթով վճարումների օրինականության ստուգումը, դ) արժուքային գործառնությունների, ինչպես նաև ՀՀ արժույթով, դրանով արտահայտված արժեթղթերով ոչ ռեզիդենտների հաշվառման և հաշվետվության լրիվության ստուգումը:

ՀՀ արժուքային վերահսկողությունն իրականացվում է արժուքային վերահսկողության մարմինների և գործակալների կողմից:

ՀՀ-ում արժուքային վերահսկողության մարմիններն են ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Արժուքային վերահսկողության գործակալներ են այն կազմակերպությունները, որոնք վերահսկողության մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան լիազորված են իրականացնելու արժուքային վերահսկողություն: Արժուքային վերահսկողության գործակալները հաշվետու են արժուքային վերահսկողության համապատասխան մարմիններին: Լիազոր բանկերը հանդիսանում են արժուքային վերահսկողության գործակալներ և հաշվետու են ՀՀ կենտրոնական բանկին:

Արժուքային վերահսկողության մարմիններն իրենց իրավասության սահմաններում հրատարակում են նորմատիվ ակտեր, որոնց կատարումը պարտադիր է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար:

Արժուքային վերահսկողության մարմինները և գործակալներն իրենց իրավասության սահմաններում՝ 1. վերահսկողություն են իրականացնում ՀՀ-ում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից կատարվող արժուքային գործառնությունների, ՀՀ օրենսդրությանն այդ գործառնությունների համապատասխանությանը, լիցենզիաների պայմանների պահպանման նկատմամբ: 2. ստուգում են ՀՀ-ում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների արժուքային գործառնությունների օրինականությունը, 3. արժուքային վերահսկողության մարմինները որոշում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժուքային գործառնությունների հաշվառման, հաշվետվության և փաստաթղթերի լրացման (ծևակերպման) կարգը և ձևերը:

### § 4. Պատասխանատվությունը արժուքային օրենսդրության խախտման համար

Գործող օրենսդրության համաձայն, արժուքային օրենսդրության խախտումներ են համարվում

ա) Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին օրենքի 15 հոդվածով ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթ ձեռքբերելու և օգտագործելու կարգը խախտելու,

բ) Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթի և դրանով արտահայտված արժեթղթերի փոխադրման, արտահանման ու առաքման կարգը խախտելու,

գ) Թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական ու պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի և իրերի ներմուծման, արտահանման հետ կապված գործարքների կարգը խախտելու,

դ) Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ ներքին շուկայում արտարժույթ գնելու և վաճառելու կարգը խախտելու,

ե) ՀՀ արտարժույթի առուծախի կարգը խախտելու,

զ) Ռեզիդենտներ հանդիսացող կազմակերպությունների կողմից ստացվող օտարերկրյա արժույթը ՀՀ տարածքում գտնվող լիազոր բանկերում ունեցած նրանց հաշիվներում չհաշվեգրելու համար,

է) Ռեզիդենտների օտարերկրյա բանկերում արտարժույթով հաշիվներ ունենալու ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգը խախտելու.



ը) Ռեզիդենտների կողմից կապիտալի շարժման հետ կապված արժութային գործառնությունները խախտելու համար ռեզիդենտների, ներառյալ լիազոր բանկերի և ոչ ռեզիդենտների նկատմամբ կիրառվում են հետևյալ պատժամիջոցները:

1. Հիշյալ օրենքով անվավեր ճանաչված գործարքներից ստացվածն անբողջությամբ բռնագանձվում է պետական բյուջե,

2. առանց գործարք կնքելու, այլ անօրինական գործողությունների հետևանքով ձեռք բերվածը բռնագանձվում է պետական բյուջե:

Արժութային գործառնությունների հաշվառման բացակայության, արժութային գործառնությունների հաշվառումը սահմանված կարգի խախտումով վարելու, արժութային վերահսկողության մարմիններին և գործակալներին փաստաթղթեր չներկայացնելու կամ ժամանակին չներկայացնելու համար ռեզիդենտները, ներառյալ լիազոր բանկերը և ոչ ռեզիդենտները պատասխանատվություն են կրում տուգանքների ձևով այն գումարների սահմաններում, որոնք հաշվառված չեն կամ հաշվառված են ոչ պատշաճ ձևով կամ որոնց վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկանքները սահմանված կարգով չեն ներկայացվել:

Արժութային օրենսդրությունը կրկնակի խախտելու դեպքում, ինչպես նաև արժութային վերահսկողության մարմինների պահանջները (ցուցումները) չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում ներառյալ լիազոր բանկերի, և ռեզիդենտների նկատմամբ կիրառվում են հետևյալ պատժամիջոցները:

1. Անվավեր ճանաչված գործարքներից ստացվածն անբողջությամբ բռնագանձվելուց, առանց գործարք կնքելու, այլ օրինական գործողությունների հետևանքով ձեռք բերվածը պետական բյուջե բռնագանձվելուց բացի պետական բյուջե է գանձվում նաև տուգանք այդ գումարների մինչև հնգապատիկ չափով, որն իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2. Արժութային վերահսկողության մարմինների կողմից ռեզիդենտների, ներառյալ լիազոր բանկերի, և ոչ ռեզիդենտների լիցենզավորող գործունեության կասեցում կամ լիցենզիայից զրկում:

Տուգանքի և որպես պատժամիջոց նախատեսված գումարների բռնագանձումը ռեզիդենտներից կատարվում է արժութային վերահսկողության մարմինների հայցով դատական կարգով: